2861

529
5-39

1914

2002

2010

0.0

АМ-537

# ԷՖԻՄԵՐՏԷ



ԳԻՆՆ Է 70 Կ.

Арм.
2-3901a
АМ-537

# ԳԻՐՔ
# ԷՖԻՄԵՐՏԷ

529
5-99
2-3901a

## ԿՈՉԵՑԵԱԼ.

## ՀԱՐՈՒՍՏ ԵՐԱԶԱՀԱՆ
*ԵՒ*
## ԸՆԴԱՐՁԱԿ ՅԱՒԵԼՈՒԱԾ

---

*Տարբեր ընագիրների համեմատութեամբ*
*կազմեց՝* **Խ. Տ. Ե.**



**ԹԻՖԼԻՍ**
*Տպարան «ԷՊՕԽԱ» Մուղէյսկի պերեուլ. № 8*
**1914**

Инв. № 22709

44829-ան.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
им. А. Мяс…

29468-63

## ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Համարեա ամենք լսած կլինեն «Էֆիմերտէ» գրքի մասին, որին հներր մեծ նշանակութիւն էին տալիս, համարելով նրան աշխարհիս բոլոր գիտութիւններն իր մէջ պարունակող մի խորհրդաւոր ու սուրբ շտեմարան. իսկ նորերը համարել և համարում են նրան որպէս մի անմիտ, տգէտ ժողովրդին իր նախապաշարումների մէջ ամրապնդող՝ և նրա առաջադիմական ոգին մթագնեցնող գիրք։

Վերջին տարիներս գրքերի առուծախով յարաբերութեան մէջ լինելով ժողովրդի յետամնաց խաւերի հետ, նկատեցի որ՝ չնայելով մեր անցած տասնեակ տարիների մտաւոր առաջադիմութեան, այնուամենայնիւ «Էֆիմերտէն» պահում է իր նշանակութիւնը։ Նրանով հետաքրքրւում են ոչ միայն ռամիկ գիւղացիներն, այլև քաղաքացի արհեստաւորներ, գիւղական տէրտէրներ և եկեղեցու այլ սպասաւորներ։ Գրաւվելով այդ հետաքրքրութիւնից, փորձեցի հիմքից ծանօթանալ այդ գրքի հետ, և տարիների ընթացքում ձեռք բերած մի քանի տարբեր թւականներում ու տեղերում տպագրւած էֆիմերտէներ, կարդալով և համեմատելով՝ եկայ այն եզրակացութեան, որ երկու դէպքում էլ այդ գրքի մասին տարածւած կարծիքը սխալ է։

Ձեռքիս տակ եղած բնագիրներից մէկը, որը հաւանօրէն աւելի մօտ է բնագրին, և որի կողերի թերթեր թափւած լինելով՝ դժւար է տպագրութեան տեղ և թիւ ճիշտ որոշել, այլ միայն մշտնջենական գուշակութեանց թւից կարելի է եզրակացնել, որ 1830 թւի տպագրութիւն է. ենթադրել է տալիս, որ էֆի-

մերտէ ոչ թէ գրքի այլ հեղինակի անունն է, (որի պատկեր արտատպում ենք), մի հեղինակ, որ բացի եկեղեցական տօմարագիտութեան, հմուտ է եղել նաև ժամանակի աստղաբաշխութեան, որն երևի կամենալով իւ ժողովրդին ևս մասնակից անել իր գիտութեան, կամ գուցէ տար աշխարհներ թափառող հայ առևտրականներին դիւրութիւն ընձեռնելու դիտաւորութեամբ զետեղել է մի գրքի մէջ՝ տալով նրան իր անունը «Գիրք Էֆիմերտէ կոչեցեալ», որ զերծ է մոգական արւեստին կամ հմայութեան վերաբերեալ որև է տեղեկութիւնից։

Կրկնում ենք, բուն Էֆիմերտէն ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ հայ եկեղեցական տօմար, որ այժմս միայն մասնագէտներին է հետաքրքրում, և երկրորդ աստղաբաշխական-օդերևոյթաբանական գիտութեան վերաբերեալ համառօտ և ամփոփ տեղեկութիւններ, որ հետաքրքիր և ուսանելի է նոյնիսկ նորերի համար, իսկ թէ ճները նրան խորհրդաւոր և սուրբ են համարել, դա նոյնպէս հասկանալի է, այն պարզ պատճառաբանութեամբ, որ հայ ժողովուրդն ընդհանուր առմամբ՝ այնքան տգէտ և անգիտակ էր ընդհանրապէս գիտութեան՝ և մասնաւորապէս բնութեան երևոյթների վերաբերմամբ, որ ուրիշ կերպ չէր էլ կարող երևակայել, Էֆիմերտու գրքի օդերևոյթաբանական գուշակութեանց ճիշտ կատարումը տեսնելով, որոնք այժմս մեզ այնքան բնական են թւում...

Իսկ թէ նորերն աննպաստ կարծիք ունեն Էֆիմերտու մասին, այդ էլ վերագրում եմ այն հանգամանքին, որ յետագայ տպագրութիւններն՝ իրենց մէջ բովանդակում են զանազան մարդկային բաղդի վերաբերեալ գուշակութիւններ, երազահաններ, աստղերի և կենդանակերպների անուամբ վիճակարաններ և այլն, որոնք յամենայն դէպս՝ Էֆիմերտու գրքին չեն պատկանում, այլ նորագոյն հրատարակիչներն իրենց նիւթական շահի համար, ով գիտէ ինչ աղբիւրներից քա-



ղել և Էֆիմերտու գրքին միացնելով՝ նրան են վերագրել, որով գիրքը կորցնելով իր գիտական նշանակութիւնը, համարւել է մի կախարդական վիժուածք։

Հրատարակել այս գիրքը՝ իմ տեսակէտով արժէր և չարժէր, արժէր նրա համար այն պատճառով, որ աստղաբաշխական - օդերևոյթաբանական գիտութիւնները նոյնքան անհրաժեշտ են ընթերցողների համար, որքան բոլոր միւս գիտութիւններ, և չարժէր նրա համար, որ այս գրքով հետաքրքրւում են գլխաւորապէս ժողովրդի այն շրջաններն, որոնք նախ քան աստղաբաշխական գիտութեան անցնելը, շատ տարրական գիտելիքների կարիք ունին։

Բայց ինկատի առնելով այն հանգամանք, որ եթէ մէկը փորձում է ժողովրդին բարձրացնել, ինքը պիտի ցածրանայ, ուստի ես ձեռնարկեցի այս՝ «Գիրք Էֆիմերտէ կոչեցեալի» հրատարակութեան, նրա յաւելուածական բաժնում զետեղելու համար՝ այնպիսի տարրական գիտելիքներ և առօրեայ կեանքին վերաբերեալ տեղեկութիւնները, որոնք իմ կարծիքով անհրաժեշտ են ռամիկ և յետամնաց շրջաններին։

Ցանկանում էի գիրքս տպագրել առանց նորամուտ գուշակութիւնների և երազի մեկնութեանց, բայց ինկատի առնելով այն, որ ընթերցող չի կարող երևակայել «Էֆիմերտէ» առանց այդ՝ իր կարծիքով անհրաժեշտ մասերի, գրքիս տարածման չխանգարելու համար ստիպւած եղայ, իբրև գրածախ՝ չխորշել նաև այդ մասերից։ Կարծում եմ, որ ընթերցողը ներողամիտ կը լինի...

Խ. Տ. Յ.



Էֆիմերտեն կազմում է իր գուշակութիւնները

## ԾՐՋԱՆ ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՒՇԱԿՄԱՆՑ

*Աստղաբաշխական գիտութեան մէջ կարգ մը աստղերի անուններ են դրւած, որոնցից մի քանիսը մոլորական և մի քանիս անմոլար են ասւում։ Մոլորական աստղեր կոչւում են նրանք, որոնք իրենց սեփական տեղից միշտ փոփոխւում են երբեմն դէպի հիւսիս, երբեմն դէպի հարաւ և որոնք թւով եօթն են։*

| | | |
|---|---|---|
| *Զօհալ* | *Երեակ* | *Արճիճ* |
| *Մուշթարի* | *Լուսնթագ* | *Կլայեկ* |
| *Մառեխ* | *Հրատ* | *Երկաթ* |
| *Շէմս* | *Արեգակն* | *Ոսկի* |
| *Զօհրէ* | *Լուսաբեր* | *Պղինձ* |
| *Օտարիտ* | *Փայլածու* | *Սնդիկ* |
| *Ղամէր* | *Լուսին* | *Արծաթ* |

*Այս եօթ մոլորակներն իրենց համար ունին խակական տուն և աթոռներ, որտեղ աւելի զօրաւոր և իշխանաւոր են լինում։ Եօթն մոլորակների տներ սրանք են, Արեգակի տունը Առիւծն է, Լուսնին՝ Խեցգետին, Երեակին՝ Ջրհոսն ու Այծեղջիւր, Լուսնթագին՝ Աղեղնաւոր ու Ձուկ, Հրատին՝ Խոյն և Կարիճ, Լուսաբերին՝ Կշիռն ու Ցուլն, Փայլածուին՝ Երկաւորն ու Կոյս։*

*Մոլորակների աթոռ և բարձրութիւններն են՝ Խոյն Արեգակի, Ցուլն՝ Լուսնի, Կշիռն Երեակի, Խեցգետինը Լուսնթագի, Այծեղջիւրը Հրատի, Ձուկը Լուսաբերի, Կոյսը Փայլածուի։*

1. Երեւակն արճճագոյն է, սաստիկ ցուրտ և միջակօրէն չոր, է պետ Այծեղջեր, ուր իսկապէս իշխում է։ Թագաւորում է ընկոռջ։ Տիրում է հողայինների, փայծիղների, ոսկորների, ծերութեան, աշնան եղանակին, թանձր, թթու և ցուրտ բաների։ Բարեկամ է Լուսնթագին, Արեգակին և Լուսնին։ Թշնամի է Հրատին ու Լուսաբերին։ Եթէ միայն իշխէ, կպատճառէ սաստիկ ցրտութիւն և ամպերի թանձրութիւն, որից առաջ կգայ մառախուղ, ձիւն, հողմահոսութիւն, ծովի ալէկոծութիւն, մրգերին վնաս, զեռուններին, սողուններին, որդերին և գորտերին ծնունդ և աճումն. իր ընթացքը կատարում է 30 տարում։

2. Լուսնթագ, որն ասւում է նաև փայէտոն. է պայծառ, բարեխառն, միջակ, խոնաւ և ջերմ։ Իշխում է մանաւանդ այն ժամանակ՝ երբ Աղեղնաւոր կենդանակերպումն է։ Տիրում է արիւնին, շունչերին, երիտասարդութեան, թոքին, կողերին, անուշութեան և կարմրութեան։ Իր բարձրութիւնն ունի Խեցգետնի 15 աստիճանի վրայ։ Բարեկամ է Երեւակին, Արեգակին, Լուսաբերին և Լուսնին։ Թշնամի է Հրատին։ Եթէ ինքը միայնակ լինի տանուտէր՝ տարւայ խաղաղութիւն և յաջող նաւարկութիւն. իր ընթացքը կատարում է մօտաւորապէս 12 տարում։

3. Հրատը կարմրաշաղ, ջերմ և չոր է, իշխում է մանաւանդ այն ժամանակ՝ երբ Կարիճ կենդանակերպումն է. իր բարձրութիւնն ունի Ցուլի 28 աստիճանի վրայ։ Բարեկամ է միայն Լուսաբերին։ Երբ ինչպէս տանուտէր տիրում է տարւոյն, ջերմութեան ու չորութեան համար, պատճառում է ջերմ քամիներ, փայլատակներ, կայծակներ, ալիքների կատաղութիւն, ջրերի ցամաքութիւն, պտուղների նւազութիւն կամ մարախահարութիւն, իր ընթացքը կատարում է 2 տարում։

4. Արեգակն որ և Փէբոս ունի ջերմութիւն և չորութիւն, բարեխառն, լուսաւոր, արական և բարեբաղդ բնութիւն։



Երբ Լուսնի հետ ունենայ վեցանկիւնի և երեքանկիւնի հայեցուած, նշանակում է բարեբաղդութիւն, իսկ երբ մուղաբիլայ, թարբիղ կամ քառանկիւնի հայեցուածով, այլ և ծնունդով նայէ դէպի լուսինը, նշան է վատաբաղդութեան։ Երբ լինի Խոյ, Ցուլ և Երկաւոր կենդանակերպերում, կաւելացնէ թացութիւն և ջերմութիւն, որից առաջ է գալիս գարուն։ Երբ լինի Խեցգետին, Առիւծ և Կոյս կենդանակերպերում, կպատճառէ ջերմութիւն և չորութիւն, այս է ամառն։ Երբ շրջի ինկշռինջ Կարիճ և Աղեղնաւոր կենդանակերպերում, կպատճառէ չորութիւն և ցրտութիւն, որով կլինի աշունն։ Իսկ երբ լինի Այծեղջիւր, Ջրհոս և Ձուկ կենդանակերպերում, կաւելացնէ ցրտութիւն և խոնաւութիւն, որով կլինի ձմեռ։ Իշխում է արիութեան, սրտի կենդանութեան, աջ աչաց, շնչերակների և միղրագոյնների։ Երբ լինի Խոյի 19-րդ աստիճանի վրայ, արդէն իր աթոռի վրայ է։ Բարեկամ է Լուսընթագի և Լուսաբերի, իսկ թշնամի Հրատի, Փայլածուի և Լուսնի։ Ունի կենդանագործ բնութիւն, և երբ բարձրանայ երկնամիջակ կէտը՝ բոլոր արարածները կզւարթանան, կկայտռին, կընձիւղին, կշառաւիղեն, կբցւոնեն և կբողբոջեն։ Իսկ երբ ցածրանայ սուզական կէտը բոլորը կթուլանան, կթարշամին, կընքթին և կնւաղին։ Ուղղիչ և լուսաւորիչ է երկնից ժամանակաց և աստեղաց, մեր երկրից մեծ է մօտաւորապէս 166 անգամ։ Արեգակի գնդի թանձրութիւնը մօտաւորապէս ունի 339,202 մղոն։ Շրջան և պարառութիւնը պարունակում է 27,361,875 մղոն, հեռու է երկրից մօտաւորապէս 4,353,025 մղոն, իւրաքանչիւր տարի կատարում է իր ընթացքը։

5. Լուսաբերն որ կոչւում է Արտեմեայ ցուրտ է և գէջ բարեխառնօրէն։ Իշխում է սերմերին, ցանկութիւններին, համերին, հոտերին, շօշափմունքներին, կանաչութեան և սպիտակութեան։ Թշնամի է միայն

Երևակին. երկրից փոքր է. իր ընթացքը կատարում է արեգակի հետ. որից 44 կամ 60 աստիճան աւելի չի հեռանայ։

6. Փայլածուն երկրնակ է. այսինքն բարեաց հետ բարի է, վատթարաց հետ՝ վատթար, քաջաբաղդից հետ բարեբաղդ, իսկ վատաբաղդից հետ՝ թշուառաբաղդ, երբ արևելքում լինի, կտաքացնէ, երբ արևմուտքում կցուրացնէ։ Իշխում է օդի փոփոխութիւններին, մարմնին, յիշողութեան, երևակայութեան, լեզուին, կոկորդին և ջլերին։ Բարեկամ է Երևակին, Լուսնթագին և Լուսաբերին, թշնամի է Արեգակին և Լուսնին։ Եթէ միայն իշխէ՝ ամպերում որոտմունք, փայլակներ և կայծակներ կպատճառէ։ Փայլածուի ծագելու ժամանակ՝ ջրերը կառատանան, իսկ աներևոյթանալուն՝ կնուազին։ Իր ընթացքը կատարում է Լուսաբերի հետ. Արեգակէն 30 աստիճանից աւելի չի հեռանայ։

7. Լուսինն է ցուրտ և խոնաւ, ջրային, գիշերային, իգական և չարահատ։ Իշխում է մաղձին, ուղեղին, կզակին, ձախ աչքին, փոքրափորին և ուրիշ խոնաւ ու ցուրտ առարկաներին։ Իր աթոռն ունի Ցուլի երրորդ աստիճանի վրայ, բարեկամ է Երևակին, Լուսաբերին և Լուսնթագին. իսկ Հրատին, Փայլածուին և Արեգակին թշնամի։ Լուսնի մինչև 15-ը բարձրանալուն՝ ծառերի, բոյսերի և կենդանիների մէջ հիւթեր կաճին, ծովը կվերանայ, կուռի և կփքուի, Լուսնի նուազելուն՝ ուռուճացածները և զօրացածները կնուազին։ Երկրից հեռու է մօտաւորապէս 229,687 մղոն. իր ընթացքը կատարում է մօտաւորապէս 27 աւուր և 7 ժամու մէջ։

## Յաղագս անմոլար աստեղաց

Կան նաև անմոլար աստղեր, որոնք ոչ կփոփոխին, ոչ կմոլորին և ոչ մոլորակների պէս իրենց սեփական ճանապարհից կը ծռին, այլ միշտ միևնոյն



ճանապարհով կկատարեն իրենց ընթացք։ Սրանցից գլխաւորներն 12 հատ են, որ կկոչուին կենդանակերպներ, և որոնց անուններն են.

| | | |
|---|---|---|
| Խոյ | Համել | գլուխ |
| Ցուլ | Սէվիր | պարանոց |
| Երկաւոր | Ճէվզա | բազուկ և ուս |
| Խեցգետին | Սէրէթան | կուրծք և ստամոքս |
| Առիւծ | Էսէտ | սիրտ և փայծեղ |
| Կոյս | Սիւմպիւլէ | փոքրափոր |
| Կշիռ | Միզան | երիկամունք |
| Կարիճ | Աքրէպ | ամորձիք |
| Աղեղնաւոր | Գավիս | ճուռք |
| Այծեղջիւր | Ճէտի | ծունկք |
| Ջրհոս | Դուլջիտէվլ | ոլոքք |
| Ձուկն | Հութ | ոտք։ |

1. Խոյն ջերմ է և չոր, հրային, մաղձոտ, արևելեան, արական, ցերեկեայ և դառն։

2. Ցուլն է ցուրտ և չոր, հողային, սևամաղձ, իգական, գիշերային, սուր և թիւր։

3. Երկաւորն ջերմ է և խոնաւ, օդային, արիւնարար, արական, արևմտեայ, հասարակ, քաղցր և թիւր։

4. Խեցգետինն է ցուրտ և խոնաւ, ջրային, հիւսիսային, շարժուն, մաղձոտ, իգական, գիշերային, անհամ և ուղիղ։

5. Առիւծն է ջերմ և չոր, հրային, շիկամաղձ, արևելեան, արական, սևեռուն ուղիղ, ցերեկեայ, գիշերային և դառն։

6. Կոյսն է ցուրտ և չոր, հողային, սևամաղձ, գիշերային հասարակ, իգական, սուր, միջօրեայ և ուղիղ։

7. Կշիռն է ջերմ և խոնաւ, օդային, արիւնոտ, արևմտեան, արական, դժուար շարժելի, ուղիղ և քաղցր։

8. Կարիճն է ցուրտ և խոնաւ, ջրային, մաղձոտ,

հիւսիսային, իգական, սևառուն, գիշերեայ, անհամ և ուղիղ:

9. Աղեղնաւորն է ջերմ և չոր, հողային, շիկամաղձ, արևելեան, արական, ցերեկւայ, հասարակ, ուղիղ և դառն:

10. Այծեղջիւրն է ցուրտ և չոր, հողային, սևամաղձ, միջօրեայ, իգական, շարժուն, թիւր գիշերեայ և տտուր:

11. Ջրհոսն է ջերմ և խոնաւ, օդային, արիւնոտ, արևմտեան, արական, ցերեկեայ սևեռուն (հաստատուն). թիւր և քաղցր:

12. Ձուկն է ցուրտ և խոնաւ, ջրային, մաղձոտ, իգական, գիշերեայ, հասարակ, անհամ և թիւր:

### Յաղագս հայեցուածոց մոլորակաց

Մոլորակների հայեցուած կամ նազարը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի կերպ՝ որով մոլորակներն որևիցէ մերձաւորութեամբ և կամ հեռաւորութեամբ իրար են նայում: Հայեցուածները թւով հինգ են՝ ծնունդ, լրումն, վեցանկիւնի, քառանկիւնի և եռանկիւնի:

Ծնունդ, որ և բորբոք է ասւում, երբ մի կամ շատ աստղեր ուրիշ աստղերի հետ միևնոյն տեղում և միևնոյն աստիճանի վրայ են գտնւում, մերձաւորութիւն, զուգաւորութիւն և կապակցութիւն կլինի:

Լրումն կամ հակադիր տրամաչափ և լրական հայեցուածը հանդիպում է այն ժամանակ՝ երբ աստղերը 180 աստիճանով իրարից հեռանում են, արաբերէն մուզաբելայ է ասւում:

Վեցանկիւնի հայեցուածն որ թասդիս է ասւում, այն է, երբ աստղերը 60 աստիճանով իրարից հեռու են լինում:

Քառանկիւնի կամ թարբիզնազար է ասւում, այն է՝ աստղերն 90 աստիճանով իրարից հեռու են լինում:

Եռանկիւնի կամ թադլիդ հայեցուած կլինի այն



ժամանակ երբ աստղերը 120 աստիճանով իրարից հեռանում են:

Քառանկիւնին, անկատար թշնամութեան և ատելութեան հայեցուած է, լրումն կատարեալ թշնամութեան և ատելութեան: Եռանկիւնին կատարեալ բարեկամութեան, վեցանկիւնին՝ անկատար սիրելիութեան: Ծնունդն է երկընակ, բարիների հետ բարի է, չարերի հետ չար է: Այս հայեցուածից մի քանիսը ասւում են աջակողմեանք և մի քանիսը՝ ձախակողմեանք: Աջակողմեանները կենդանակերպերի կարգին հակառակ նայում է դէպի Խոյն: Ձախակողմեանները կենդանակերպերի կարգին համաձայն նայում են իրար, ինչպէս Երկաւորից դէպի Առիւծը կամ դէպի Կոյսն ու Կշիռը: Աջակողմեան հայեցուածները ձախակողմեաններից աւելի ուժեղ են:

### Հայեցւածք 12 կենդանակերպից

Խոյն՝ նայում է դէպի Ջրհոսը վեցանկիւնի, դէպի Այծեղջիւրը՝ քառանկիւնի, դէպի Աղեղնաւորն՝ եռանկիւնի հայեցուածով: Դէպի ձախ կողմը նայում է Երկաւորին՝ վեցանկիւնի, Խեցգետնին՝ քառանկիւնի և Առիւծին՝ եռանկիւնի հայեցուածով. իսկ դէպի Կշիռը հակադիր և լրական հայեցուածով:

Ցուլը նայում է դէպի աջ կողմը Ձուկին՝ վեցանկիւնի, Ջրհոսին՝ քառանկիւնի և Այծեղջիւրին՝ եռանկիւնի հայեցուածով: Դէպի ձախ կողմը նայում է Խեցգետնին՝ վեցանկիւնի, Առիւծին քառանկիւնի և Կոյսին եռանկիւնի, իսկ Կարիճին հակադիր հայեցուածով:

Երկաւորն նայում է դէպի աջ կողմը Խոյին՝ վեցանկիւնի, Ձուկին՝ քառանկիւնի, Ջրհոսին՝ եռանկիւնի: Դէպի ձախ կողմը՝ Առիւծին՝ վեցանկիւնի, Կոյսին՝ քառանկիւնի, Կշիռին՝ եռանկիւնի, իսկ Աղեղնաւորին՝ լրական հայեցուածով:

Խեցգետինը նայում է դէպի աջ կողմը՝ Ցուլին վեցանկիւնի, Խոյին՝ քառանկիւնի և Ջուկին՝ եռանկիւնի, ձախ կողմը՝ Կոյսին վեցանկիւնի, Կշիռին՝ քառանկիւնի, Կարիճին՝ եռանկիւնի, իսկ Այծեղջիւրին՝ հակադիր և լրական հայեցւածով։

Առիւծը նայում է դէպի աջ կողմը Երկաւորին՝ վեցանկիւնի, Ցուլին՝ քառանկիւնի և Խոյին՝ եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը՝ Կշիռին՝ վեցանկիւնի, Կարիճին, քառանկիւնի, իսկ Ջրհոսին՝ լրական հայեցւածով։

Կոյսը նայում է դէպի աջ կողմը Կարիճին՝ վեցանկիւնի, Երկաւորին՝ քառանկիւնի, և Ցուլին եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը Կարիճին, վեցանկիւնի, Աղեղնաւորին, քառանկիւնի Այծեղջիւրին, եռանկիւնի, իսկ Ջուկին, լրական և Մուղաբիլայ հայեցւածով։

Կշիռը նայում է դէպի աջ կողմը Առիւծին վեցանկիւնի, Խեցգետնին քառանկիւնի և Երկաւորին, եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը Աղեղնաւորին, վեցանկիւնի, Այծեղջիւրին, քառանկիւնի և Ջրհոսին, եռանկիւնի, իսկ Խոյին հակադիր և լրական հայեցւածով։

Կարիճը նայում է դէպի աջ կողմը Կոյսին՝ վեցանկիւնի, Առիւծին՝ քառանկիւնի և Խեցգետնին՝ եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը Այծեղջիւրին՝ վեցանկիւնի, Ջրհոսին՝ քառանկիւնի և Ջուկին՝ եռանկիւնի, իսկ Ցուլին լրական և հակադիր հայեցւածով։

Աղեղնաւորը նայում է դէպի աջ կողմը Կշիռին՝ վեցանկիւնի, Կոյսին՝ քառանկիւնի, Առիւծին եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը Ջրհոսին՝ վեցանկիւնի, Ջուկին՝ քառանկիւնի և Խոյին՝ եռանկիւնի, իսկ Երկաւորին՝ լրական հայեցւածով։

Այծեղջիւրը նայում է դէպի աջ կողմը Կարիճին՝ վեցանկիւնի, Կշիռին՝ քառանկիւնի, Կոյսին եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը Կոյսին վեցանկիւնի, Խոյին քառանկիւնի և Ցուլին եռանկիւնի, իսկ Խեցգետնին լրական հայեցւածով։



Հայեցւածք 12 կենդանակերպից

ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

Ջրհոսը նայում է դէպի աջ կողմը Աղեղնաւորին վեցանկիւնի, Կարիճին քառանկիւնի, Կշիռին եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը Խոյին վեցանկիւնի, Ցուլին քառանկիւնի և Երկաւորին եռանկիւնի, իսկ Առիւծին լրական հայեցւածով։

Ձուկը նայում է դէպի աջ կողմը Այծեղջիւրին՝ վեցանկիւնի, Աղեղնաւորին՝ քառանկիւնի և Կարիճին եռանկիւնի։ Դէպի ձախ կողմը, Ցուլին վեցանկիւնի, Երկաւորին քառանկիւնի, իսկ Կոյսին լրական և մուղաբիլայ հայեցւածով։

Խոյն, Առիւծն և Աղեղնաւորը հայրենիք են, արական, ցերեկւայ, ջերմ և չոր, գտնւում են Արեգակի և Լուսնթագի իշխանութեան տակ։

Ցուլը, Կոյսը և Այծեղջիւրը հողայինք են իգական, գիշերեայ, ցուրտ և չոր, գտնւում են Լուսնի և Լուսաբերի իշխանութեան տակ։ Երկաւորը, Կշիռը և Ջրհոսը օդայինք են, արական, ցերեկւայ, ջերմ և խոնաւ, գտնւում են Երեւակի և Փայլածուի իշխանութեան տակ։

Խեցգետինը, Կարիճը և Ձուկը ջրայինք են, իգական, գիշերեայ, ցուրտ և խոնաւ, գտնւում են Հրատի և Լուսաբերի իշխանութեան տակ։

Կենդանատեսակ գօտին բաժանւում է 12 զուգահաւասար մասերի, և այս մասեր կոչւում են նշանք և կենդանակերպք, որովհետև ձևակերպում են կենդանիների պատկերները։

Ամեն մի կենդանակերպ ունի 30 մասեր, բաժիններ կամ աստիճաններ և երեք տասնապետ մոլորակներ, այս կարգով՝ սկսած Խոյից։

Խոյի առաջին 10 աստիճանները, Հրատին են, երկրորդ 10 աստիճաններն Արեգակին, երրորդ 10 աստիճանները Լուսաբերին են։

Ցուլն ունի առաջին տասնապետ Փայլածուն, երկրորդ՝ Լուսինը, երրորդ՝ Երեւակ։



Երկաւորի առաջին տասնապետը՝ Լուսնթագն է, երկրորդ՝ Հրատը, երրորդը Արեգակը։

Խեցգետնի առաջինը Լուսաբերն է, երկրորդ Փայլածուն, երրորդ՝ Լուսինն է։

Առիւծի 1-ինը Երեւակն է, 2-ը Լուսին, 3-ր Հրատը։

Կոյսի 1-ին Արեգակն է, 2-ը Լուսաբերն, 3 ը Փայլածուն։

Կշիռի 1-ն Լուսինն է, 2-ը Երեւակն, 3-ը Լուսնթագ։

Կարիճի 1-ն Հրատը, 2. Արեգակը, 3. Լուսաբերը։

Աղեղնաւորի 1. Փայլածուն. 2. Լուսին, 3. Երեւակ։

Այծեղջիւրի 1. Լուսնթագ, 2. Հրատը, 3. Արեգակ։

Ջրհոսի 1. Լուսաբեր, 2. Փայլածուն, 3. Լուսին։

Ձուկի 1. Երեւակն է, 2. Լուսնթագը, 3. Հրատը։

29468-63

## Ցաղագս երկնային համաստեղութեանց

Համաստեղութիւնը և աստղաբաշխական ձևակերպութիւնները, հնում հաշւում էին 48. իսկ նորերումս 73 ից աւելի, որոնցից 12-ը կազմում են Զոդիակոսեանք՝ որոնց մենք կոչում ենք կենդանակերպներ, 33-ը կոչւում են Հարաւայինք, իսկ 28-ը Հիւսիսայինք։

## Երկոտասան համաստեղութիւնք Զոդիակոսեանք որոնք կոչւում են կենդանակերպք

Խոյն կազմւում է 20 աստղերից՝ որոնցից վեցը պայծառ և տեսանելի են։ Ցուլը կազմւում է 53 աստղերից, որոնցից 12-ը պայծառ են։ Երկաւոր 33, պայծառ 13։ Խեցգետինը 41, պայծառ 8։ Առիւծը 44, պայծառ 12։ Կոյսը 50, պայծառ 9։ Կշիռը 17, պայծառ 8։ Կարիճը 36, պայծառ 14։ Աղեղնաւորը 32, պայծառ 12։ Այծեղջիւրը 35, պայծառ 12։ Ջրհոսը 86, պայծառ 10։ Ձուկը 66, պայծառ 9։ Մնացած 61 համաստեղութիւններից 33 կոչւում են Հարաւայինք, իսկ 28 Հիւսիսայինք, որոնք կազմւում են զանազան թւով աստղերից։

| Հարաւայինք | | Հիւսիսայինք | |
|---|---|---|---|
| Կէտ ձուկն | 38 | Փոքր արջ | 18 |
| Հայկ | 63 | Մեծ արջ | 39 |
| Երասխ | 45 | Վիշապ | 38 |
| Նապաստակ | 13 | Կեփէոս | 33 |
| Մեծ շուն | 19 | Ընձուղտ | 29 |
| Աղաւնի | 11 | Յորդանան | 31 |
| Շնիկ | 11 | Արջպան | 37 |
| Միեղջերու | 23 | Պսակ հիւսի | 19 |
| Օձ ջրային | 55 | Վահագն | 53 |
| Տակառ | 11 | Քնար | 17 |
| Ագռաւ | 11 | Տիգրիս գետ | 37 |
| Խաչ | 4 | Կարապ | 41 |
| Ջիացուլ | 35 | Գաւազան | 15 |
| Գայլ | 21 | Կասսիոպէ | 38 |
| Սեղան | 9 | Պէրէոս | 15 |
| Պսակ հարաւ | 12 | Կառավար | 41 |
| Ձուկն հարաւ | 17 | Օձակալ | 27 |
| Կռունկ | 13 | Օձ | 41 |
| Փիւնիկ | 15 | Նետ | 8 |
| Հնդիկ | 13 | Արծուի | 24 |
| Սիրամարգ | 15 | Անտինոս | 12 |
| Հնդկաց հաւ | 12 | Դլբին | 11 |
| Ճանճիռն | 5 | Փոքրիկ ձի | 7 |
| Գետնառիւծ | 10 | Երիվար | 22 |
| Եռանկիւնի հաւ. | 5 | Ագրոմետ | 34 |
| Ձուկն Թռուցեալ | 8 | Եռանկիւնի հիւս | 5 |
| Թրաձուկն | 6 | Շուշան | 7 |
| Ամպ մեծ | 3 | Բրինիկեան | 12 |
| Հաւալուսն | 9 | | |
| Հիդրա | 13 | Այս բոլոր համաստեղու- | |
| Ամպ փոքրիկ | 3 | թիւնները կազմում են | |
| Քառանկիւնի | 4 | 1332 աստղերից։ | |
| Նաւ արգոսական | 56 | | |






Յաղագս խաւարման արեգական եւ լուսնոյ

Առաջ գիտենալու է, որ Արեն երկրից մեծ է 166 անգամ, կամ փոքր ինչ աւելի։ Լուսինն երկրից փոքր է 39 անգամ, կամ փոքր ինչ աւելի։

Երկրորդ, Արևը վեց մոլորակների մէջ լուսատու և լուսաւոր մարմին է, իր լոյս տալիս է աստղերին, մանաւանդ լուսնին, որ լոյսից զուրկ լինելով՝ իր լոյսն արևից է առնում։ Արևը տեղ-տեղ լուսնի ծննդեան ժամին խաւարում է. երբեմն մասնաւոր և երբեմն բոլորովին, սակայն տեսանելի երկրի մի մասին։ Արևը լոյսի աղբիւր լինելով՝ ինքը երբէք չի խաւարի, այլ երբ լուսինը ծննդեան ժամին վիշապի գլխի կամ տուտի մօտ՝ տրամագծօրէն և ուղղակի արևի ցածրում գտնուի, իր թանձր ու խաւար մարմինը, արևի և երկրի մէջ տեղը ձգէ, որով արևի լոյսը կարգելէ երկրի վրայ ընկնելու. բայց ոչ երբէք երկրի բոլոր մասերի. այլ միայն երկրի զանազան մասերից մէկի վրայ. ուրեմն

Արևի խաւարումը լուսնի ուղիղ գծով երկրի և արևի մէջ տեղը ընկնելն է։

Լուսինը խաւարում է այն ժամանակ, երբ երկիրը ուղիղ գծով ընկնում է արևի և լուսնի մէջ տեղը։ Եւ այսպէս լուսինը իր լրման ժամանակ՝ երբ տրամագծօրէն և ուղղակի գտնւի արևի և երկրի ցածրում, երբեմն բոլորովին և երբեմն մասնաւոր կխաւարի։ Արևը որ կենդանակերպների գօտումը միշտ և անշեղ պտոյտ է գալի, լուսաւորում է երկրի կիսագունդը. երբեմն առաւել և երբեմն նւազ, իսկ երկրի մնացած միւս կիսագունդը, որ արևի դիմացն է՝ իր պիրամիդեայ, բոցաձև և ծայրասուր ստւերը կարձակէ մինչև Լուսարերի կամարը։ Լուսինը վեց կենդանակերպներով՝ այսինք 180 աստիճաններով արևից հեռանալով, եթէ լինի ուղղակի արևի դիմացը՝ բայց չլինի վիշապի գլխի կամ պոչի մօտ չի խաւարի. եթէ լինի վիշապի գլխի կամ պոչի մօտ՝ կխաւարի. որքան վիշապի գլխի կամ պոչի մօտ լինի, այնքան մեծ կերևի լուսնի խաւարումը։ Ձմռան եղանակում կարճ՝ ամռան ժամանակ երկար կլինի խաւարումը. և երբ արևը լինի վիշապի պոչին և լուսինը վիշապի գլխին, այն ժամանակը լուսինը բոլորովին կխաւարի։ Որովհետև լուսինը բոլորովին մտնում է կիսագնդի թանձր ստւերի մէջ, այսինքն կիսագնդի կողմը, որ արևի ճառագայթների դէմ ընդդէմ է ձգում, արձակում և հասցնում մինչև Լուսարերի կամարը։ Երկու ստւերների խաւարումն՝ թէ արևի և թէ լուսնի չի հանդիպի, եթէ ոչ վիշապի գլխի կամ պոչի մօտ, այսինքն երկու կէտում, արևի կիրճումը և կապումը, որի միջովը կտրում է լուսնի հաւասարաընթաց բոլորակը, այն կէտը, որ լուսնի անւաձև բոլորակի միջով կտրում և բարձրանում է դէպի հիւսիս՝ ասւում է կիրճ, կապ, բարձրութեան հանգոյց և կամ վիշապի գլուխ. իսկ այն կէտը, որ լուսնի անւաձև շրջանակի միջով կտրում և խոնարհւում է դէպի հա-



րաւ, կոչւում է կիրճ, կապ, ցածրութեան հանգոյց, և կամ վիշապի տուտ, պոչ։ Լուսնի խաւարումը երբեմն լինում է ընդհանուր և հանդիպում է միմիայն լրման ժամանակ։



Լուսնի խաւարումները. երևակայեցէք անհուն տարածութեան մէջ դէմ առ դէմ երկու գունդ, մէկ լուսատու արևը, միւսը անթափանցիկ երկիր։ Երկիրն էլ արևի հակառակ կողմը, մի ահագին ստւեր է ձգում, որ ձգւում է նրա յետևի տարածութեան մէջ նա նոյն տրամագիծը, նոյն լայնքն ունի ինչ որ երկրագունդը բայց գնալով նեղանում է և վերջանում սուր ծայրով՝ մեզնից 1,300,000 վերստ հեռաւորութեամբ։ Լուսինը պտտւում է երկրի շուրջը մօտաւորապէս 360,000 վերստ հեռաւորութեամբ։ Երկրի ստւերը ուրեմն աւելի հեռու է տարածւում, այնպէս որ լուսինը պտտելու ժամանակ արևի հակառակ կողմն անցնելիս, և երկրի յետև մտնելիս, կարող է ընկնել այդ ստւերների մէջ։ Այսպէս պատահած ժամանակ՝ լուսինը կորցնում է արևից

ստացած լոյսը, այդ երևոյթը կոչւում է խաւարումն լուսնի: Դիտողը տեսնում է, որ լուսինը փոքր առ փոքր մտնում է խաւար տարածութեան մէջ, որքան աւելի է յառաջանում լուսինը, այնքան աւելի է ծածկւում նրա ստւերը: Եթէ նա ամբողջապէս է թաղւում ստւերի կոնի մէջ, խաւարումը բոլորական է լինում: Փայլուն լուսինը, աստիճանաբար ստւերներով ծածկւելով աներևոյթանում է, մարդը հազիւ է նշմարում նրա սկաւառակը, թոյլ շառագոյն ցոլքով: Մի քիչ անցած լուսինը հակառակ կողմից աստիճանաբար դուրս է գալի ստւերի տակից, սկզբում նրա եզրում երևում է լոյսի մի շերտ, որ սկսում է տարածւել նրա մակերևոյթի վրայ և քիչ ժամանակից յետոյ գիշերւայ լուսատուն նորից ստանում է իր առաջւայ փայլը:

Յաճախ լուսինը ստւերի ամբողջ լայնքովը չի անցնում և ամբողջապէս չի մտնում նրա մէջ, այլ կողքից անցնելով միմիայն ճեղքում է ստւերը, աւելի կամ պակաս խորութեամբ: Այդ դէպքում լուսնի միայն այն մասն է խաւարում, որ անցնում է ստւերի միջով, իսկ մակերևոյթի մնացեալ մասը շարունակում է փայլել, սակայն աւելի թոյլ քան սովորաբար. որովհետև գտնւում է խաւար կոնը շրջապատող կիսաստւերի մէջ: Այդ ժամանակ մասնական խաւարումն է լինում: Մենք տեսնում ենք երկրի բուն ստւերը լուսնի վրայ, ինչպէս որ մարդը տեսնում է մի որև է առարկայի բուն ստւերը պատի վրայ և այդ ստւերը մեզ միանգամայն կլոր եզերագծով է երևում, որ ի միջի այլոց, մի նոր ապացոյց է երկրիս կլորութեանը: Լուսինը կարող է խաւարել, երբ նա հակադրութեան մէջ լինի արևի վերաբերմամբ: Բայց այդ ժամանակ նրա լրումն է լինում: Կնշանակի լուսնի խաւարումները միշտ տեղի են ունենում նրա լրման ժամանակ: Լուսինն ամեն ամիս անցնում է արևի հակադիր կողմը: Եթէ նա միշտ երկրի իսկ և իսկ յետևն ընկնէր, ամեն պտոյտ-



անելիս նա կանցնէր ստւերի միջով և կխաւարէր ամեն լրման ժամանակ, ամեն ամիս: Սակայն այդպէս չի լինում, որովհետև լուսինը փոխանակ անցնելու ստւերի միջով կամ գոնէ կողքահան կտրելու ստւերի կոնը, նրանից մի քիչ վեր կամ մի քիչ ցածրն է անցնում և չէ խաւարում:

Արևի խաւարումը լինում է ըստ մասին, և հանդիպում է միմիայն լուսնի ծննդեան ժամանակ, ուստի արևի այն խաւարումը, որ եղաւ Քրիստոսի խաչելութեան ժամանակ, որովհետև լուսնի լրման ժամանակն էր, այս պատճառաւ բնական չէր՝ այլ հրաշական, որ և այս անբնական դէպքի վրայ Դիոնէսիոս Արիսպագացին զարմանալով ասաց «կամ բնութեան հեղինակը չարչարւում է, կամ աշխարհի շինւածքը աւերւում»:

## Ձեկուցմունք՝ սակս գիսաւոր աստեղաց

Գիսաւոր աստղը գոյանում ու բորբոքւում է օդի ամենաբարձր մասումը ժողոված գոլորշիներից. ոմանց կարծիքն ուղիղ չէ, թէ գիսաւորը գոյանում է լուսնական երկնքից բարձր մասումը: Եւ որովհետև երկինքը հաստատուն և անապական մարմին է, այս պատճառով գոլորշիքը չեն կարողանում նրա մէջ հաւաքւել և բորբոքւել, գիսաւորին նիւթ լինելու համար: Ուստի նրանք որ ասում են, թէ գիսաւորին տեսել են լուսնից բարձր, նրանք կամ խաբւել են, և կամ թէ տեսածները ստոյգ գիսաւորներ չէին, այլ ուրիշ նոր երևցած աստղեր: Գիսաւորի մէջ չորս բաներ են տեսնըւում, ձև, շարժումն, գոյն և նշանակութիւն: Ձևը նիւթերի տրամադրութեան համեմատ փոփոխւում է, որ իսկապէս երեք են հաշւում: Որովհետև նրբագոյն նիւթը գիսաւորի գէսը երկար է ցոյց տալիս, երբ միակերպ երկարում է, այն ժամանակ ասում է

գիսաւոր։ Եւ երբ գոլորշիներից դէպի մի կողմն է տարածւում մորուքի նման. այն ժամանակ ասւում է մօրուքաւոր (թէև շատերը այս երկուք իրարից չեն զանազանում)։ Այլ և երբեմն գիսաւորի շուրջ տարածւում են ամեն կողմերից նրբագոյն գոլորշիներ մազերի նման, այն ժամանակ ասւում է վարսաւորեալ կամ գիսաւորեալ։

Ցտաւորաց շարժումը՝ աւելի արևելքից արևմուտքն է, որովհետև օդի ամենավերին մասումն են, հաստատութեան մշտական շարժումովը յափշտակւում են, որի սաստկութիւնը հասնում է մինչև օդի սահմանը, բայց երբեմն վերանում ու կորանում և թեքւում են դէպի բևեռը, ըստ որում նոցա յօժարութիւնը պահանջում է նիւթ որոնել։

Գիսաւորի գոյնը՝ նոցա նիւթի յատկութեան համաձայն տեսակ տեսակ է, ինչպէս մեզ մօտ բոյսի գոյն զանազան է, որովհետև զանազան նիւթերից է վառւում։ Այս պատճառով ինչպէս երևում է ծծումբից՝ կապոյտ, ռետինից՝ (զամխ, այլև խիստ անուշահոտ խնկեղէն) սև, իսկ մաքուր իւղից՝ սպիտակ, այնպէս էլ այն գիսաւորներն՝ որոնք հաստ և մառախլապատ նիւթ ունին՝ տգեղ են երևում, որոնք անօսր նիւթ ունին՝ արծաթագոյն են երևում և նրանք թէև նուրբ նիւթեր ունին՝ բայց միջական գոլորշիների հետ խառնըւած լինելով տեսնւում են արիւնային։ Փլինոսը նրանց անւանում է զարհուրելի աստղեր, որոնք գուշակում են ալէկոծութիւններ, քամիներ, տեղերի փոփոխումներ և ուրիշ ձախորդ պատահմունքներ։ Գիսաւորի երևալովը՝ կարող են սրանք գուշակել, մի մասը բնականաբար, և մի մասը Աստծու բարեհաճութիւնից։

Բնականաբար, որովհետև գիսաւոր աստղը՝ պարարտ տակմկացութիւնների և գոլորշիների առաւելութիւնից է սնւում, և նրանով երկրի պարարտութիւնը ծծում, նաև փչացնում ու ոչնչացնում է այն տակմկա-



ցութիւնը (խոնաւութիւնը), որ ամպերի ու աղբերային ջրերի հետ խառնւելով՝ երկիրը պէտք է պտղաբերէին, որի համար ամլութիւն է պատճառւում։ Եւ այսպիսի տակմկացութիւնների և գոլորշիների չորագոյն մասերը՝ դառնում են քամիներ, մրրիկներ, որոնցից ալէկոծութիւններ են առաջ գալի։ Իսկ այն գոլորշիքն՝ որոնք հաստագոյն են՝ օդն ապականում են, որից առաջ են գալիս հիւանդութիւններ և մահեր։ Այլ և երբոր գիսաւորը ծագում է՝ նշան է թէ՝ ջերմ և չոր աստղ իշխում է, որից մաղձոտ մարդիկ գրգռւում են, այս պատճառով առաջ են գալիս կռիւներ և պատերազմներ։ Եւ որովհետև բնութեան այնքան այլայլումն է բերում. այլև մարդկանց մէջ խոնաւութիւնների ու ջանքերի այլայլումներ և փոփոխումներ, ուստի հետևում է իրենց կացութիւնը փոխելու ցանկութիւն. այլ և առաջ են գալի թագաւորութիւնների բարքերի փոփոխութիւններ։

Աստծու բարեհաճութիւնից, գիսաւորներն այսպիսի դէպքեր նախագուշակում են, մանաւանդ մեծերի մահը, որոնք առանց մի ճշմարիտ բնական հիման գուշակւում են. որովհետև այս բնութեան օրէնքին հակառակ է, թէ ինչու համար արդեօք մահաբեր գոլորշիքը մանաւանդ թագաւորներին և իշխաններին են մահ գուշակում քան ուրիշ մարդկանց։ Որովհետև, Աստուած ինչպէս որ երկնային աղեղն ընտրեց ի նշան հաշտութեան և ուխտի երկնքի և երկրի մէջ, այսպէս յարմար է տեսնում, որ այն զարհուրելի նշաններն, այն է գիսաւոր աստղերը գոյացնում է ի նշան իր բարկութեան և պատիժների։ «Քեզնից վախեցողներին նշան տուիր, որ ապրին աղեղի երեսից». Սաղմ. 59—6։ Այլ և Յովհան Դամասկոսացին գրում է թէ, Երուսաղէմի աւերումից առաջ, մի գիսաւոր աստղ երևեցաւ, և երկար ժամանակ տևեց, որն եղաւ նախագուշակ ապագայ սրածութեան։

## ՄՇՏՆՋԵՆԱՒՈՐ ՏԱՐԵԿԱՆ ՓՈՓՈԽՄԱՆՑ ԳՈՒՇԱԿՈՒՄՆ

### Ի թւին Քրիստոսի

### *1915, 1943, 1971, 1999 2027, 2055*

*Երբ արևը մարտի 21 ին մտնի Խոյի առաջին աստիճանը, տարւայ իշխողը կլինի Լուսնթագ՝ Կարիճ նշանով, որ տուն է Հրատի։ Այս տարի ցորենի, գինու ձէթի, ապրեշումի և ձկան առատութիւն է, իսկ Կարիճի ուժեղութեան համար՝ ձմեռը շատ ձիւն կլինի, ընտանի անասնոց կոտորած, ձմռան մէջ բարեխառն ու քամոտ, վերջը՝ գէճ, եղեամոտ, խաւարաչուտ և ցաւագարութեամբ խառն։ Ամառը կլինի գարնան նման· տարին յղի կանանց համար կասկածելի է, մրգերի առատութիւն։ Դիմոկրիտոսն ասում է, այս տարի գետերն կառատանան, իսկ կարկուտները կնոսրանան։ Աշունը ջրային, ձէթը բաւական կլինի, նոյնպէս միսը և փուշը։ Գուշակւում է պատերազմ, որոտմունք՝ այլ և ամառային եղանակում։ Հրատը գտնւում է երկնքի 10-դ տանը, ուստի գուշակւում է շատ կոտորած, սաստիկ պատերազմ, մարդկանց մէջ հիւանդութիւն և հաւատարմութեան սակաւութիւն։ Արևի շառաւիղներից Լուսաբերը մի Թագաւորի մահ է ցոյց տալիս, նոյն երևոյթն է ցոյց տալիս նաև երկնքի վրայ երևացող Հրատի նշան։ Լուսնթագը երկնքի 8-դ տանը, թւում է թէ յանկարծական մահ է ցոյց տալիս, և որովհետև նոյն Լուսնթագը կցւած Փայլածւի հետ, այս պատճառով ցոյց է տալի վաճառականների փոփոխական բարքը։ Փայլածուն երկնքի 8 դ տանը նշան է որ երեխաներ կմեռնին, որովհետև զանազան հիւանդութիւններ կը լինեն, հարւած անասուններին, վնաս ծառերին և պըտուղներին։ Ժողովուրդներն իրենց տէրերից տուգանք կկրեն, հողը լաւ չի պտղաբերում և բոլոր բերքն*



*երևում է միջակ. որովհետև ցոյց է տալիս Լուսինը Երևակի հետ կցած, Երևակը երկնքի վեցերորդ տանը, այլ և Լուսաբերն երկնքի 9-դ տանը և Առիւծ կենդանակերպը ժամացէտ տեղումը։*

### *1916, 1944, 1972, 2000, 2028, 2056*

*Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսաբերը Կարիճի հետ, որ տուն է Հրատի։ Այս տարի շատ պարարտ և առատ կլինի ցորենով և ուրիշ պտուղներով։ Ձմռան սկիզբը ցուրտ կլինի և կարկուտ. մէջը՝ ջերմ. և վերջը՝ բարեխառն։ Գարունը մինչև յունիս ամիսը ցուրտ. ցոյց է տալիս այլ և անձրևներ և որոտմունք, բայց յետոյ աղբիւրների ջրերը կպակասին. այս պատճառով շատ եզներ կսատկին։ Դիմոկրիտոսն ասում է. Աշնանը գետերը կառատանան և հիւանդութիւններ կլինին։ Աստուծուն աղաչենք՝ որ մահտարաժամ չլինի։ Պէտք է քիչ ուտել և շատ գինի խմել։ Ձմռան սկիզբն անձրև կլինի և չափից աւելի ձիւն կգայ։ Այս տարի տենդը կշատանայ և ջերմութիւնից առաջ կգայ ուրիշ հիւանդութիւն. որովհետև ցոյց է տալի Լուսաբերն երկնքի 6-դ տանը։ Դարձեալ երևում են մեծ հարւած՝ մանաւանդ ծերերին և երեխաներին. կանանց աւերումն, ըստ որում ցոյց է տալի Հրատը Երևակի հետ կցած և քառանկիւնի հայեցւածով դէպի Արեգակը։ Փայլածուն արևի շառաւիղներից բորբոքւած ու քառանկիւնի հայեցւածովը Հրատի հետ, այլ է երկնքի 6-դ տանը Լուսաբերը վիշապի տուտի հետ և Լուսինը դրած երկնքի 8-դ տանը՝ ստոյգ գուշակւում են, կլինեն վէճեր ու կռիւներ այլ և այլ մարդկանցից իրենց Թագաւորի դէմ, այլ և տարաձայնութիւններ եղբարց և սիրելեաց մէջ, որովհետև ցոյց է տալիս Հրատը Երևակի կցած և քառանկիւնի հայեցւածով արևի հետ երկնքի երրորդ տանը։*

Գրագրաց և վաճառականաց մէջ կտիրեն խաբէութիւններ և այս պատճառով նրանց կհանդիպի մեծ դժւարութիւն և նեղութիւն, որովհետև Փայլածուն արևի շառաւիղներից բոլորված և քառանկիւնի հայեցւածով Հրատի հետն է։ Արքունի սպասաւորաց կլինի մեծ վնաս և նեղութիւն. որովհետև 10-դ տան տէրը՝ Փայլածուն է, որ քառանկիւնի հայեցւածով նայում է դէպի Հրատը։

## 1917, 1945 1973, 2001, 2029, 2057

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Արեգակն Աղեղնաւորի հետ, որ տուն է Լուսնթագի։ Այս տարի կլինի պարարտութիւն ցորենի և ուրիշ թեթևագին բաների։ Ձմռան սկիզբը կլինի բարեխառն և ջրային, մէջը՝ գետոց յորդութիւն, վերջը՝ ցուրտ և քամի։ Ամառը բարեխառն, հով ու զով. պտուղները պէտք է շուտ հաւաքել, որ չփչանան անձրևներից։ Աշնան հաստատ կփչեն տարեկան քամիները, պտուղները կլինեն բարեհամ և դիւրահաս, ճռաքաղութիւնը կլինի մնացական ու բոլոր ծառերն էլ կլինին պտղաբեր։ Ծառեր տնկելը լաւ է, մեծ անասուններ և շատ շներ կսատկին։ Ծովը կալէկոծի, իրեխաներին տկարութիւն. այս տարւայ շըրջանը յետ է քայլում։ Այս տարի երևում է շատ արիւնահոսութիւն, որովհետև Երևակը վիշապի պոչի հետ, և նոյն Երևակն երևում է երկնքի առաջին տանը, այս պատճառով կլինին պատերազմներ, սպանութիւններ, և թագաւորին վտանգ, վիճմունք, խռովութիւնք, տարաձայնութիւնք և վաճառականութեան վնաս։ Նոյնը գուշակում է Հրատը Լուսնթագի հետ կցած և քառանկիւնի հայեցւածով Երևակի հետ դրած երկրի անկիւնումը։ Մարդիկ կպատրաստւին ճանապարհորդելու դէպի հեռու աշխարհ, և վաճառականութեան պատճա-



ռով կգաղթեն հայրենիքից, որովհետև Փայլածուն երրորդ տանը և երկնքի 9-դ տանը նշան են, ըստ որում Փայլածուն և Լուսինն իշխում են ճանապարհորդաց, նաւորդաց և վաճառական մարդկանց վրայ։

## 1918, 1946, 1974, 2002, 2030, 2058

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսինը Աղեղնաւորի հետ, որ տուն է Լուսնթագի, այս տարի միջակ պարարտ է, որովհետև չափից աւելի կանձրևէ։ Ձմեռը կըլինի բարեխառն, մէջը գէճ, տղմոտ ու քամոտ, վերջը ջրերի առատութիւն, կարկուտ և ձիւն։ Շնիկ աստղի դուրս գալուց յետոյ կերևի ջերմութիւն և ցաւահարութիւն։ Տարեկան քամիները կփչեն։ Գուշակւում է երկրաշարժ, դաշտային տեղերը աւելի պտղաբեր կըլինեն, քան անտառային՝ ցորենով, գինով, ձէթով և ուրիշ պտուղներով։ Այս տարի փոքր անասնոց համար յաջողակ է, բայց մեծ անասնոց երևում է ձախողակ։ Աշնանը կերևին գլխացաւութիւն և աչքացաւութիւն։ Աստծուն աղաչենք՝ որ սառնամանիքը պտուղները չըվնասեն և ամռանը չլինին հիւանդութիւններ։ Լուսնթագը երկնքի առաջի տանը՝ նշանակում է մարդկանց անդամոց առողջութիւն։ Երևակը 10-դ տան և վիշապի տուտը Հրատի հետ, և Հրատը շարժուն կենդանակերպումը՝ նշան են արիւնահեղ պատերազմների ու կոտորածների։ Թագաւորներն ու իշխանները ժողովրդի վրայ անտանելի հարկ կդնեն անհաճոյ և անիրաւ արարմունք ցոյց կտան։ Այնքան գողեր ու աւազակներ կերևին, որ ճանապարհորդները կասկածանօք կպաշարւին, այնպէս է ցոյց տալի Հրատը՝ երկնքի 9-դ տանը, վիշապի տտան հետ, և որովհետև այս Հըրատը գտնւում է Երևակի տանը, ու Երևակը չի նայում Հրատին, ուստի կարծւում է թէ, բանտերը բը-

նութեամբ կբանան ու շատերը բանտերից դուրս կգան։ Փայլածուն երկնքի տասներկուերորդ տանը նշանակում է վաճառականաց ու իմաստասէրաց իրենց առաջի փառքից ու պատւից ընկնիլը։

### 1919, 1947, 1975, 2003, 2031, 2059

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջի աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Հրատը՝ Այծեղջիւրի հետ, որ տունն է Երևակի։ Այս տարի կլինի ցամաք և անհաշիւ պատերազմներ։ Ձմեռն անձրևային ու շատ մորեխ, բոլոր տարին հիւսիսային, և տեղ տեղ քամոտ։ Գարնանամտից յետոյ երևում են մահտարաժամ, երկար անձրև, գետերի առատութիւն և թանձրութիւն։ Ամառը բարեխառն և առողջարար։ Աշուն քամոտ և ջերմ. ցաւահարութիւն, իջւածք և հազ, մանաւանդ լեռնային տեղերում. Աստծուն աղաչենք։ պատերազմները խափանուին, Դիմոկրիտոսն ասում է, գինիներն բարեհամ կլինին, ու բոլոր տարին յաջողակ, անձրևների պատճառով պէտք է պտուղները շուտ հաւաքել։ Երևակը երկնքի 7-դ տան անկիւնումն է, ուստի այնպէս է երևում, որ կլինեն կռիւներ ու կոտորածներ, նոյն Երևակը Լուսաբերի հետ կցած, ցոյց է տալի մի անւանի ու հարուստ տիկնոջ մահ։ Լուսինը վիշապի գլխի հետ կցած, գուշակում է մահ անարժան մարդկանց, աւերումն և պտղոց վնաս. Արևը երկնքի 9-դ տանն է, ուստի մի թագաւոր ճանապարհորդութիւն կանէ. կարծւում է ահագին երկրաշարժներ, որովհետև Հրատը լուսնի հետն է։

### 1920, 1948, 1976, 2004, 2032, 2060

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Փայլածուն՝ Այծեղջիւրի հետ, որ տուն է Երևակի։ Այս տարի կլինի երաշտ ու ցամաք, մարդկանց խռովութիւն, մեծ անասնոց կոտորած. մանր չորքոտանի կենդանեաց յաջողակ, ձէթ սակաւ, գինի ու մեղր շատ։ Ձմռան սկիզբը՝ ցուրտ, մէջը անուշ, վերջը քամոտ։ Գարունը ջրառատ, ցուրտ ու եղեամնահար։ Ամառը սաստիկ քամիների պատճառով անձրևոտ, ցորենների ու բոյսերի մի մասը կվնասւի. Ջրերի վարարումն։ Աշնան կփչեն ջրածին քամիները։ Աստծուն աղաչենք, որ տղայոց ու մարդկանց սաստիկ տենդ չլինի։ Եղեամ (ղռաւը) շատ տեղերում խաղողին կվնասէ, անտառի գազանները և թռչունները արտերը կերթան, Աստծուն աղաչենք, որ մահտարաժամ, երկրաշարժ և կայծակնահարութիւն չը լինին։ Այս տարի արևը երկնքի 6-դ տանն է, այս պատճառով սաստիկ հիւանդութիւն, ցաւագարութիւն, մանաւանդ աչքերի, հարւած և կոտորած անասնոց, պակասութիւն ձէթի, որովհետև Կշիռը ժամադէտ է, Փայլածուն արևելեան և կցած Երևակի հետ, ցոյց է տալիս թագաւորին և արքունի գրագրաց մեծ վնաս և տուգանք, երաժիշտները կշատանան և գուսանաց հետ կուրախանան։ Լուսաբերն երկնքի 7-դ տանը նշանակում է յաջողութիւն կանանց ու իգաբարոյ մարդկանց, բայց լրակի ցոյց է տալիս հարւած ռամիկներին. ըստ որում Երևակը երկնքի հինգերորդ տանը գուշակում է մեծ կռիւ, սպանութիւն, արիւնահեղութիւն, բանտարկւածներից շատերին փախուստ։ Որովհետև Հրատը երկնքի անկիւնումը Երևակի տանը. և Երևակը առանց հայեցւածոց դէպի Հրատը՝ այդպէս են գուշակում։



### 1921, 1949, 1977, 2005, 2033, 2061

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսաբեր մոլորակն՝ Այծեղջիւր կենդանակերպի հետ, որ տունն է Երևակի։

Այս տարի շատ առատութիւն կլինի ցորենի, գինու, ապրեշումի և ուրիշ բերքերի։ Ձմռան սկիզբը կարկըտախառն ցուրտ կլինի, մէջը ջերմ, վերջը բարեխառն։ Գարունը մինչև յունիսի 21 ը ցուրտ։ Ամառը անձրև և երբեմն որոտումն։ Դիմոկրիտոսն ասում է, աշնանը՝ աղբիւրները կառատանան և հիւանդութիւններ կշարժին։ Պէտք է որկրամոլութիւնից զգուշանալ՝ մանաւանդ արբեցողութիւնից։ Այս տարի Լուսնթագը յետաքայլ և գտնւում է ոլջու, և Երևակից վատաբաղդ, նըշան է թէ թագաւորը իր հպատակներին կպատժէ, այլ և լինելու են մեծ պատերազմներ, որովհետև Լուսընթագը գտնւում է երկնքի 8 դ տանը։ Դարձեալ Հրատը Երևակի և Լուսնթագի հետ քառանկիւնի հայեցողութեամբ՝ նշանակում է չատ պատերազմներ ու զինւորաց կործանումն։ Եւ որովհետև Հրատը Լուսնթագի հետ տիրում են երկնքի 10-դ տանը, նշան է՝ թէ թագաւորը պատերազմի պատճառով՝ դուրս կգայ երկրից ու կճանապարհորդէ։ Դարձեալ, Հրատն է՝ որ քառանկիւնի հայեցողութեամբ տեսնելով լուսնից, ցոյց է տալի մարդկանց զանազան հիւանդութիւններ, ջերմութիւն, չորութիւն, սով, մահտարաժամ ու սատակումն կենդանեաց, ռամիկ ժողովուրդներն իշխաններից կզրաւին, ըստ որում լուսինը Երևակի հետ կցած է ցոյց տալի։ Եւ որովհետև արևը գտնւում է երկնքի երրորդ տանը՝ նշանակում է թէ, թագաւորն իր հետ առնելով քաջ մարդիկ՝ ճանապարհորդելու է։

### 1922, 1950, 1978, 2006, 2034, 2062

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Երևակը՝ Զրհոսի հետ։ Այս տարի ամեն բանի առատութիւն կլինի, մարդկանց ուրախութիւն, անասնոց և թռչնոց մահ, ամբողջ տարին հարաւային քամիները կփչեն։ Ձմռան սկիզբը



քամոտ կը լինի, մէջը՝ բարեխառը, վերջը՝ սառնամանիք և քամիներ։ Գարունը կլինի բարեխառն և սակաւ անձրև։ Ամառը նոյնպէս բարեխառը կլինի, կփչեն անուշ հովեր. պտուղներ առատ կլինին, բայց մրգերն ապականւած։ Աշնանը երևում են հիւանդութիւնք՝ մանաւանդ երիտասարդաց մէջ, իսկ ջրհոսութիւն աչաց՝ կանանց մէջ, որից շատերը կմեռնին։ Դիմոկրիտոսի կարծիքի համաձայն՝ կլինին վնասաբեր կարկուտներ, թող Աստուածը մեզ փրկէ մահտարաժամից։ Այս տարի համարեա թէ, ռամիկներն իրանց իշխաններից շատ ծանրութիւն ու բռնութիւն կկրեն։ Այլ և ծանր տկարութիւն՝ արեան ապականութեան պատճառով։ Մահն այն մարդկանց՝ որոնք Երևակի տակ են ծնած, և որոնց տարիքն անցել է, որովհետև Երևակը Արևի հետ կըցած և վիշապի գլխի մօտ ցոյց է տալի՝ ոչխարաց և միւս անասնոց մահ։ Դարձեալ, Լուսնաթագը գտնւում է վիշապի ատի մօտ, և վնասակար դիրքի մէջ գտնւած՝ այս ցոյց է տալիս մարդկանց մահ, տկարութիւն, անհաւատարմութիւն, աղքատութիւն, տենդ, ու ջրային ախտ։ Այլ և որովհետև Արև գտնւում է երկնքի 12 րդ տանը, նշանակում է թէ, թագաւորներն մեծ նեղութիւն կունենան, և թագաւորական տան ընտանիքի անդամներն իրար դէմ զանազան հակառակութեան խորհուրդներ։ Վերջը՝ որովհետև Փայլածուն գտնըւում է երկնքի 11-րդ տանը, նշանակում է թագաւորն իմաստուն մարդկանց խորհրդակցութեան կհրաւիրէ։

### 1923, 1951, 1979, 2007, 2035, 2063

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Արևը՝ Զրհոս կենդանակերպի հետ։ Այս տարին ցորենով, գինով և ուրիշ թեթևագին բաներով առատ կլինի. շատ անձրև. արևելեան ձմեռային կողմերումը թռչնոց մահ, որով-

հետև այն կողմերումը կլինին մառախլապատ, ցուրտ և ջրհեղեղ։ Գարնանամուտից յետոյ՝ լեռնային տեղերումը կլինի կարկուտ, սակայն պտղաբերութիւնն առատ կլինի։ Ամբողջ տարին կլինի առողջարար, բացի աշնանային եղանակից; պտուղները պէտք է շուտ քաղել, որ անձրևից չվնասուին։ Այս տարի պտուղները կլինին համեղ և հիւթական. Ծառերը պարարտ և պտղալից, տնկելը լաւ է. մեծ կենդանեաց մահ, ծովի՝ ոչ սակաւ ալէկոծութիւն. սաստիկ և ուժեղ քամիներ։ Այս տարին՝ հասարակ և սովորական տարիներից թւում է. ծանրագնաց. երևում են շատ աւազակներ, և բարեպաշտութեան վերացումը մարդկանցից. ըստ որում ցոյց է տալի Երևակն երկնքի 9-րդ տանը, և որովհետև քառանկիւնի հայեցողութեամբ երևում է Հրատից՝ զինուորներն իրար հետ կվիճեն և տեղից տեղ կը փոխուին։ Եւ որովհետև Հրատը գտնւում է երկնքի 12-դ տանը՝ նշանակում է թէ, շատերը դանակով և սրով կսպանուին։ Այլ և Արևը գտնւում է երկնքի 9-դ տանը՝ վիշապի գլխի հետ կցած՝ ցոյց է տալի թէ մի թագաւոր ճանապարհորդութիւն է անելու, մահ՝ ուժեղ մարդկանց. կանհետանան այն թագաւորներն՝ որոնք բռնութեամբ են թագաւորում և տարբեր իշխանութիւնները բռնի կերպով իրանց ենթարկում։ Դարձեալ Լուսաբերը ու Փայլածուն՝ բաղդազուրկ և այրեցած, նշան է՝ որ ռամկաց վնաս կհանդիպի թագաւորից և թագաւորին՝ ռամիկներից։ Վերջը՝ 10-դ տան իշխողն անբաղդ է, և մինչ այրւած եւս գտնւի տանը ընկած՝ ցոյց կտայ նեղութիւն, վշտակրութիւն և վնաս արքունի պաշտօնէից։

1924, 1952, 1980, 2008, 2036, 2064

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսինը։ Եւ ո-



րովհետև լուսինը գտնւում է երկնքի մէջ՝ Լուսնթագի տանը՝ որ Ձուկն է։ Այս տարի ցորենի և գինու առատութիւն, լեռնային կողմերում՝ շուտ-շուտ կարկուտներ, պտղոց առատութիւն, գետոց յորդութիւն, բոլոր տարին առողջարար՝ բացի աշնան եղանակից, որի մէջ կանանց մահ է գուշակւում։ Դիմոկրիտոսն ասում է, բերանի շուրջը կծնանին ծորակներ, ուստի գարնանը երիտասարդներն պէտք է աւելի գինի խմեն և ոչ դատարկ ջուր. ձիթենիքը առատ չեն երևում այս տարի, որովհետև Լուսնաթագը գտնւում է երկնքի երրորդ տանը, նշանակում է մարդկանց բարեբաղդութիւն և յաջողութիւն. և որովհետև Կշիռը գտնւում է բաղդի կիտման մէջ, նշան է ձէթի նւազութեան։ Այլ և Հրատը վիշապի գլխի հետ կցած է երևում. ուստի գուշակւում է թէ, մարդիկ զէնք կառնեն և իրար հետ կկռուին։ Վերջը՝ որովհետև Երևակը գտնւում է այնտեղ անկւում՝ նշան է սաստիկ պատերազմի և չարաչար կոտորածի։

1925, 1953, 1981, 2009, 2037, 2065

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Փայլածուն. որովհետև գտնւում է երկնքի մէջ Լուսնաթագի տանը (որ է ձուկ) իր բարձրութեան և իր առաջին հայեցողութեան մէջ։ Այս տարի գուշակւում է ցորենի կատարեալ հաւաքումն և մեղուների մահ, ժանտաբեր ախտ և տղայոց ապականութիւն։ Ձմռան սկիզբը անձրևային, ցուրտ որոտախառն. մէջը՝ բարեխառն. իսկ վերջը՝ սաստկութիւն անձրևաց և սառնամանիք գետոց։ Գարունը մինչև վերջը ծառերին վնասակար անձրևներ, և տեղ տեղ կարկուտ։ Ամառն անձրևային և մառախլապատ, հունձը պէտք է շուտով քաղել՝ որ չվնասուին։ Աշունը շատ քամի կլինի՝ բայց առողջարար, վաղերը

շատ խաղող կտան, ծառեր և բոյսեր տնկելը օգտակար է, ցորենը շուտով կփչանայ, պտղոց համար պէտք է Աստծուն աղաչել, այլ և իշխանաց համար՝ որ նրանց մէջ խռովութիւն չլինի: Այս տարի մահ է երևում մեծանուն և հարուստ կանանց. որովհետև Երևակը և Լուսաբերը կցած են երևում: Դարձեալ Լուսնաթագը երկնքի առաջի տանը՝ նշանակում է մարդկանց ամեն ցաւերից ազատութիւն. սաստիկ պատերազմներ և սպանութիւններ՝ մանաւանդ թագաւորների և նրանց օգնողների մէջ, որովհետև ցոյց են տալի Երևակն անկիւնումը՝ իսկ Հրատը երկնքի ութերորդ տանը:

1926, 1954, 1982, 2010, 2038, 2066

Երբ արև մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսնթագը, որովհետև սա գտնւում է երկնքի մէջ Հրատի տանը՝ որ է Խոյն, որտեղ կայ իր բարձրութիւնն՝ իւր առաջի հայեցողութեան մէջ: Առաջիկայ տարին կլինի պտղաբեր՝ առատ ցորենով, գինիով, մեղրով, ձէթով, վշով, ապրեշումով, ձկնով ու ամեն բարեհամ պտղով: Տարին ամբողջ խաղաղ կլինի՝ միայն պատերազմ: Ձմրան սկիզբը՝ ցուրտ և կարկուտ. մէջը՝ ջերմ. վերջը՝ հանդարտ: Գարունը ցուրտ՝ մինչև յունիսի 22-ը, որ Նրշան է անձրևաց և որոտմանց, աղբերաց ջրերը կպակսին, ոչ սակաւ եղներ կսատկին. Աստծուն աղաչենք՝ որ չլինի մահտարաժամ. պէտք է քիչ ուտել և ջրից քիչ խմել: Այս տարի Արևը գտնւում է երկնքի 12-դ տանը Հրատի հետ՝ որ ցոյց է տալի թէ օտար ազգաց թագաւորը՝ իր թշնամիներից շատ նեղութիւն կկրէ և գուցէ նրանից էլ սպանւի՝ շատ զինւորների կոտորածով: Այլ և, որովհետև Երևակի դուրս գալու միջոցն է՝ և Լուսնաթագի հետ քառակուսի հայեցողութեան մէջ, ցոյց են տալիս արիւնահեղ պատերազմներ. այս պատ-



ճառաւ՝ թագաւորից կհասնի մարդկանց սաստիկ նեղութիւն և տրտմութիւն. նոյնպէս ցոյց են տալիս թագաւորաց վտանգ, վէճ, տարաձայնութիւն և վնաս վաճառականութեան:

1927, 1955, 1933, 2011, 2039, 2067

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Փայլածուն, որ գտնւում է երկնքի մէջ՝ այսինքն Խոյի մէջ. որ տուն է Հրատի, այլ և առաջին հայեցողութեան մէջ, այս պատճառով առաջիկայ տարին կլինի լիութիւն ամեն բանի, ցորենի խաղողի, ձիթապտղի, կտաւատի, ապրեշմի, մսի ու ձկան: Ձմրան սկիզբը կլինի ցուրտ և կարկուտ, մէջը՝ ջերմ, վերջը՝ քաղցր: Գարունը մինչև ամռան սկիզբը ցուրտ: Ամառը շատ ջերմ: Աշնան՝ սառնամանիք, անձրև, հիւանդութիւն, և մանկամարդոց աչքացաւ: Դաշտային տեղերը՝ լեռնային տեղերից աւելի պտղաբեր կլինի: Գինին կվնասի և կնւազի. խաղողը պէտք է ուշ քաղել. ծառերը շատ պտղաբեր կլինին: Նաւարութեամբ ճանապարհորդութիւնը լաւ է: Դիմոկրիտոսն ասում է, կլինին կարկուտներ և սաստիկ ուժեղ քամիներ, Աստծուն աղաչենք, որ երկրաշարժ չլինի: Երևում են սաստիկ պատերազմներ և մարդասպանութիւնք: Թագաւորներն և իշխանները ծանր հարկ կը դնեն ժողովուրդների վրայ, կը յայտնուին վատ և փուչ մարդիկ. որովհետև Արևը ցոյց է տալի երկնքի անկիւնում տասներորդ տանը. ներհակ հայեցողութեամբ Հրատի և Երևակի հետ: Վերջը՝ Հրատն էլ ներհակ հայեցողութեամբ նայում է արևին երկնքի երրորդ տանը, որ ցերեկւայ թևալուռն է, Այս պատճառաւ ցոյց է տալի մեծ և արիւնահեղ պատերազմը, ռամկաց անհնազանդութիւն դէպի թագաւորն. ու կորուստ որ և է մի թագաւորութեան. այլ և երևում

են վիճմունք, խռովութիւն և զանազան դժգոհութիւններ եղբայրների, սիրելիների ու ընտանիքների մէջ:

1928, 1956, 1984, 2012, 2040, 2068

Երբ արեւը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը, տարւայ իշխողը կլինի Երեւակը, որովհետև Երեւակը գտնւում է երկնքի մէջ և Խոյի, որ տունն է Հրատի, որտեղ է իր բարձրութիւնը այլ և գտնւում է իր առաջին հայեցողութեան մէջ, ուստի առաջիկայ տարին կլինի ցորենի միջակ առատութիւն, Խոյի բարութեամբ ոչխարները կշատանան, ձուկը պակաս կլինի. ձիթապտղի իւղը և մեղրը միջակ, երեք և չորս օրեայ տենդ կտիրէ. ամբողջ տարին կփչեն հարաւային քամիները. Ձմռան սկիզբը շատ քամիներ, մէջը՝ բարեխառն, վերջը ջրառատ և սառնամանիք, Գարունը թեթև անձրևով բարեխառն կլինի. նոյնպէս և ամառը, բայց թւում է թէ, անուշ քամին կվնասէ մրգերը. Աշունը գուշակում է տկարութեան մանաւանդ վաւաշոտ կանանց, որոնցից շատերը կմեռնին. Կարկտահարութիւն և տարժամ, մահուան կասկած կայ: Այս տարի շատ աւազակներ են երևում, ով որ Երեւակի տակն է ծնւել, կլինի սակաւահաւատ և անգութ, ըստ որում Արեգակը երկնքի իններորդ տունն է ցոյց տալի, այլ և Հրատը կցած Լուսնթագի հետ (և ընդհակառակը) երկնքի եօթներորդ տանը՝ նշան է արիւնահեղ պատերազմների և մահ հարուստ ու մեծանուն մարդկանց: Լուսաբերը երկնքի եօթներորդ տանը անկւնում՝ ցոյց է տալի յաջողութիւն կանանց և վախկոտ մարդկանց:

1929, 1957, 1985, 1013, 2041, 2069

Երբ արև մարտի 21-ին մտնի Խոյի առաջի աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսինը: Արդ՝ լուսինը գտնւում է երկնքի մէջ Ցուլ կենդանակերպումը, որ է տուն Լուսաբերի՝ որտեղ ունի իր բարձրութիւնն, առաջին սահմանն և առաջին հայեցողութիւնը: Այս պատճառով կարելի է ասել, թէ այս տարին առատ կլինի ցորենով, գինով, պտղով, ձէթով, մետաքսով, և ձկնով, եղանակը շատ մեղմ և անուշ, ջրերի առատութիւն, այս պատճառով ոչխարները և մեղուները չեն ապականւիլ: Ամառը կլինի շատ անձրև, և ցուրտ, ձմեռը՝ հասարակ, գարունը բարեխառն: Աշունը ջրառատ: Արևելեան կողմից եղանները (խուրձերը) կալումը կփչանան, մարմիններին առողջութիւն է, որովհետև Լուսնաթագը գտնւում է երկնքի առաջի տան մէջ: Այլև Երեւակը տասներորդ տան մէջ, վիշապի տուտը կցւած Հրատի հետ և շարժելի նշանումը՝ ցոյց են տալի արիւնահեղութիւն, ու կոտորած: Թագաւորներն և իշխանները հպատակների և պաշտօնեաների վրայ կդնեն ծանր հարկեր և ուրիշ հրամաններ և ռամիկներին անհաճելի կարգեր: Երևում են ուժեղ աւազակներ ու գողեր, որովհետև Հրատը յայտնւում է երկնքի իններորդ տան մէջ վիշապի տուտի հետ ի միասին: Եւ որովհետև Հրատ ասածդ գտնվում է Երեւակի տան մէջ և Լուսնաթագը դէպի նշան չէ նայում, նշմարւում է թէ, բանտերը բռնութեամբ կբանան և բանտարկւածներից շատերը դուրս կգան: Եւս որովհետև Փայլածուն գտնվում է 12-դ տան մէջ՝ գուշակում է թէ, վաճառականները ու իմաստասէրները կընկնեն իրենց աստիճաններից:



1930, 1958, 1986, 2014, 2042, 2070

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Հրատը, սա գտնւում է երկնքի մէջ Ցուլի հետ և առաջին հայեցողութեամբ մեզ ցոյց է տալի, թէ առաջիկայ տարին

կլինի ցամաքութիւն, ցրտութիւն և ձիւն, միջակ պըտուղ, ապրշում, ձէթ, գինի և ձուկն: Գարունը, ամառը գէջ, աշունը՝ չոր ու ցամաք, ձմեռը տաք և պըտղաբեր, բայց շատ քամի, ցորենը մեծագին, ոչխարները՝ սակաւածնունդ, մեղուն, վուշը և միսը թանկագին, ընդեղէնները՝ միջակ: Հրատը՝ կռիւ է գուշակում. Աստուած մեզ երկրաշարժից ազատէ: Երեակն՝ եօթներորդ տան անկիւնումն է, այս պատճառով կլինեն պատերազմներ և կոտորածներ: Երեակը մասնակից է Լուսաբերի հետ այս պատճառով մի հարուստ և մեծահամբաւ տիկին կմեռնի: Լուսինը մասնակից է վիշապի գլխի հետ, ցոյց է տալի գովելի մարդկանց՝ մահ և պտղոց մեծ վնաս: Արեն երկնքի իններորդ տանը՝ մի թագաւորի համար ճանապարհ է նշանակում: Հրատը լուսնի հետ՝ կպատճառեն մեծամեծ երկշարժներ:

## 1931, 1959, 1987, 2015, 2043, 2071

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը, տարւայ իշխողը կլինի Փայլածուն Երկաւորի հետ իմիասին, որ Փայլածու մոլորակի առանձին տուն և օթևանն է: Այս պատճառով պտղաքաղութիւնները նւազ կլինի. այլ և գուշակում է կռիւ, չորքոտանիներին, պիծակներին (իշամեղու) մեղուներին կոտորած և ժանտամահ ցաւ: Ձմրան սկզբումը ցուրտ կլինի, մէջը՝ բարեխառն, վերջը շատ սառն, անձրևային և առատաջուր: Գարնան՝ կլինի ծառերին վնասակար անձրևներ, վերջը՝ տեղ-տեղ կարկուտներ կընկնին: Ամառն անձրևոտ և մառախլապատ, հարկաւոր է ցորենը շուտով քաղել, որ չապականին: Աշունը կլինի քամոտ և առողջարար, վաղերը շատ խաղող կբերեն: Այս տարին շատ լաւ է տնկելու, տեղափոխելու և պատուաստելու. ցորենը շուտով կապականի. պտղոց հա-



մար՝ Աստուծուն աղաչենք: Այս տարի մի գաւառի կամ քաղաքի աւերումն է ցոյց տալի և մարդկանց վտարանդութիւն: Եւ որովհետև Հրատը գտնվում է երկնքի եօթներորդ տանը, և արևի հետ քառանկիւնի հայեցողութեամբ՝ նշանակում են անթիւ մարդկանց մահ: Դաւաճանողներն աւելի կշատնան, ուրիշներին խորխորատ փորողներն՝ իրենք կնկնին նրա մէջ. տեսնւում է անթիւ մարդկանց գերութիւն: Մեծերի մէջ, և գանազան գաւառներում՝ խռովութիւն և կռիւ, այն աստիճան՝ որ սիրելեաց և բարեկամաց մէջ հաւատարիմը չի ճանաչւի:

## 1932, 1960, 1988, 2016, 2044, 2072

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը, տարւայ իշխողը կլինի Լուսնաթագը՝ Երկաւոր նշանի տակին, որ Փայլածուի տունն է: Եւ որովհետև սա գտնւում է երկնքի մէջ՝ իր բարձրութեան և առաջի հայեցողութեան միջումը, այս պատճառով Լուսնաթագի մեղմութիւնից՝ այս տարին առատ կլինի: Ձմռան սկզբին՝ ջրաւէտ, մէջը՝ բարեխառն և քամոտ. վերջը՝ գէջ և եղեմնախառն: Գարունը հիւանդութեան հետ խառն կլինի: Ամառը՝ գարնան կնմանի: Աշունը՝ գէջ նոյն իսկ սկզբում՝ փոքր ինչ հիւանդութիւն: Այս տարին յղի կանանց համար՝ կլինի կասկածելի: Ձիթենիքն կլինի բաւական. միսն ու քաթանը՝ փոքր ինչ թանկագին են երևում: Այս տարի, որովհետև արևը Հրատի հետ գտնւում է 12-րդ տան մէջ, նշան է՝ որ այլազգեաց թագաւորը սաստիկ նեղութիւն կկրէ իր թշնամիներից, որոնցից գուցէ մեռնի. զինւորների հետ արիւնահեղ կոտորածներով: Երեակը բարձրանալուն և քառանկիւնի հայեցողութեամբ լուսնաթագի հետ՝ ցոյց կտայ սաստիկ պատերազմը, որով մարդիկ իրենց թագաւորից նեղութիւն և տրտմու-

թիւն կկրեն, այլ և ցոյց կտայ ինչ և իցէ վտանգ թագաւորներին, վէճ, խռովութիւն և վաճառականութեան անկումն։ Եւ որովհետև գտնւում է հաստատապէս Նրշանի մէջ, տարին միջակ կլինի, կրադմանան կռիւներ, ցաւեր և ծաղիկներ։

1933, 1961, 1989, 3017, 2045, 1073

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Երևակը, որ գտնւում է երկնքի մէջ, Կշիռ կենդանակերպում, որ տունն է Լուսաբերին, որտեղ իր բարձրութեան և առաջի հայեցողութեան մէջն է։ Այս պատճառով առաջիկայ տարին կլինի միջակ և մարդկանց մէջ ուրախութիւն, ամբողջ տարին հարաւային քամի կփչէ։ Ձմռան սկիզբը քամոտ կլինի, մէջը բարեխառն, վերջը տառն ու քամի։ Գարունը կլինի միջակ ու անձրևային։ Ամառը միջակ և բարեխառն. քամիների անուշ փչելուց պտուղները կապականին. Աշունը վախաշոտ կանանց հիւանդութիւն է գուշակում, որոնցից շատերը կմեռնեն։ Դիմոկրիտոսն ասում է, թէ վնասակար կարկուտ կլինի, Աստծուն աղաչենք, որ մահտարաժամ չլինի։ Այս տարի աւազակները կշատանան։ Երևակի տակ ծնւողները հաւատք և բարեպաշտութիւն քիչ կունենան, որովհետև Երևակը երկնքի 9-րդ տանը այդպէս է ցոյց տալիս։ Այլ և Հրատը Լուսնթագի հետ կցւած ու երկնքի եօթներորդ տան մէջ ցոյց է տալի սաստիկ կռիւ ու կոտորած, մեծամեծ ու հարուստ մարդկանց մահ. բայց տարին քաղցր կլինի։ Լուսաբերը երկնքի եօթներորդ անկիւնի մէջը նորից ցոյց է տալիս կանանց և իգաբարոյ մարդկանց յաջողութիւն։



1934, 1962, 1990, 2018, 2046, 2074

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջի աստիճանը, տարւայ իշխողը կլինի Արևը Խեցգետին կենդանակերպի հետ, որ տուն է լուսնին։ Արևը գտնւում է երկնքի մէջ, որտեղ ունի իր բարձրութիւնն և իր հայեցւածը։ Այս պատճառով ցոյց է տալի՝ թէ այս տարին կլինի շատ առատ բերքի ու բոլոր թեթևացին բաներով պարարտ, լաւ ճաքաղութիւն, շատ պտուղ, գինի, ապրշում, ձէթ, միս և ձուկն։ Տարին ամբողջ խաղաղ։ Ձմեռը ջերմ, գարունը գէջ, (խոնաւ) ամառն ու աշունը քամոտ, ոչխարների, մեղրի և հունտերի (լոբի, սիսեռ, ոսպ, բակլայ և այլն) առատութիւն։ Պարտէզների պտուղները կփչանան, երեխաներին մահ և հարւած։ Այս տարի կգտնւին շատ գողեր. մարդկանց մէջ բարեպաշտութիւն չի երևում, որովհետև Երևակը երկնքի 9-դ տանն է ցոյց տալի։ Եւ որովհետև Երևակն ունի քառանկիւնի հայեցւած Հրատի հետ, այս պատճառով զինւորներն իրար հետ խռովութիւն կունենան և առաջին տեղը կփոխեն։ Եւ որովհետև Հրատը գտնւում է երկնքի 12-դ տանը, նշան է թրով և դանակով ընկնելու։ Այլև Արևը երկնքի 9-դ տանը կցւած վիշապի գլխի հետ՝ ցոյց է տալի՝ որ թագաւորը ճանապարհորդութիւն կանէ, մեծերին ու փոքրերին մահ, նոր թագաւորներ կյայտնւին՝ որոնք կուզենան բռնութեամբ իշխել և տիրել ուրիշներին։ Լուսաբերն ու Փայլածուն վատաբաղդ ու կիզեալ՝ նշանակում են ժողովրդին և թագաւորին վնաս, նմանապէս ժողովրդեց վնաս թագաւորին։ Վերջը՝ 10-դ տանուտէրը վատաբաղդ և անկիւնի տանը լինելով՝ այլ և կիզեալ (վառւած) ցոյց է տալիս ցաւեր, նեղութիւններ և թագաւորի ծառայողներին վնաս։

### 1935, 1963, 1991, 2019, 2047, 2075

Երբ արևը մարտի 21 ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Լուսինը, որը գտնւում է երկնքի մէջ Առիւծ կենդանակերպում, որ տուն է արևին, այս պատճառով տարին կլինի պարարտ: Ամռան ժամանակ շատ ջրեր ու հիւանդութիւններ: Ձմեռը ցուրտ ու մռայլ. գետերը կթանձրանան գարնանամուտից յետոյ՝ լեռնային և ապառաժ տեղերում շատ կարկուտ. բայց լեռնային ծառերը շատ պտուղ կտան. ամբողջ տարին կլինի առողջ՝ բացի աշունքից: Դիմոկրիտոսն ասում է. թէ բերանների շուրջը դուրս կգան բշտիկներ և թէ երիտասարդները պէտք է խմեն գարնան գինի. այս տարի ձիթապտուղը կլինի բաւարար: Եւ որովհետև Լուսնթագը գտնւում է երկնքի առաջի տանը՝ նշանակում է մարդկանց մարմնոյ առողջութիւն: Վիշապի տուտը Հրատի հետ կցւած և Հրատը շարժուն կենդանակերպումը՝ ցոյց է տալի մեծ պատերազմ և կոտորած: Թագաւորներն ու իշխանները ծանր հարկ կդնեն հպատակների և ռամիկների վրայ և ուրիշ անիրաւութիւն կանեն: Երևում են շատ աւազակներ ու գողեր, ճանապարհները կլինեն երկիւղալի և կասկածոտ, որովհետև Հրատը երկնքի 9 դ տանը՝ վիշապի տուտի հետ ցոյց է տալիս, և որովհետև Հրատը գտնւում է Երևակի տանը և Լուսնթագը նրան չի նայում, այս պատճառով կարծիք է, թէ բանտերը բռնութեամբ կբացւին և բանտարկւածներից շատերը դուրս կգան, Փայլածուն երկնքի 12-դ տանը՝ ցոյց է տալիս՝ թէ վաճառականները կընկնեն իրենց պատւից ու աստիճաններից:

### 1936, 1964, 1992, 2020, 2048, 2076

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Հրատը, որ իր հետ



կունենայ Առիւծն՝ որ տուն է արևի: Այս տարին ամուլ և ցամաք է երևում, ձմրան սկիզբը՝ ցուրտ, ջրային ու քամոտ, այնպէս որ՝ ծառերն արմատահան կը լինին, մէջը՝ բարեխառը, վերջը՝ ցուրտ: Գարունը անձրևոտ, այսպէս լինի նաև ամառը. աշունն երևում է ջերմ, ցաւագար, իջւած, հազ և կուրծքերի նեղութիւն, այս պատճառով պէտք է հաց քիչ ուտել և շատ գինի խմել: Դիմոկրիտոսն ասում է, թէ ձիթապտուղը առատ կլինի: տարին յաջողակ վաղերին, բայց հարկաւոր չէ ջրել, տանու մեծ կենդանիներից շատեր կը կսատկին. գազանները կշատանան, կանանց հիւանդութիւն, զօրքերին բօթալի ձայն: Պէտք է Աստծուն աղաչել՝ որ երկրաշարժներ չլինին: Երևակը երկնքի եօթներորդ տան անկիւնում, ցոյց է տալիս արիւնահեղ պատերազմներ և կոտորած, որ կցւած է լուսաբերի հետ՝ այդ պատճառով մի մեծ անւանի տիկին կը մեռնի: Լուսինը կցւած է վիշապի գլխի հետ, այս պատճառով յարգանքի արժանի մարդիկ կմեռնեն, պըտուղները շատ կվնասւին կփչանան: Թագաւորը կճանապարհորդէ, որովհետև Հրատը լուսնի հետ է, ուստի գուշակւում են ուժեղ երկրաշարժներ:

### 1937, 1965, 1993, 2021, 2049, 2077

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը, տարւայ իշխողը կլինի Լուսնթագը՝ Առիւծ նշանի հետ, որ տուն է արևին. այս տարին կլինի շատ պարարտ և առատ ցորենով, գինիով, ձէթով, ապրեշումով, ձկներով և բոլոր մրգերով: Ձմռան սկիզբը կը լինի ցուրտ և կարկտային. մէջը՝ ջերմ, վերջը՝ բարեխառն: Գարունը կլինի ցուրտ և անձրևային՝ մինչև յունիս ամիսը՝ ամռան անձրևներ և որոտմունք. աղբիւրների ջրերը կպակսին, այս պատճառով շատ եզներ կսատկին: Աշունը գետերը կառատացնէ: Դիմոկ-

րիտոսն ասում է, երեւում են հիւանդութիւններ։ Աստծուն աղաչենք՝ որ մահտարաժամ չլինի։ Քիչ ուտել և շատ գինի խմել։ Նոյն իմաստասէրն ասում է կռիւ կը լինի։ Այս տարին ցոյց է տալիս նաև, որ մի օտար ազգաց թագաւոր շատ նեղութիւն և վիշտ կկրի թշնամիներից, գուցէ մեծ հարւածով և զօրաց կորուստով և իր մահով։ Երեւակն իր դուրս գալուն և քառանկիւնի հայեցողութեամբ Լուսնթագի հետ, ցոյց է տալիս արիւնահեղ պատերազմներ, այդ պատճառով մարդիկ արտնեղութիւն կկրեն իրենց թագաւորից, այլև ցոյց է տալիս թագաւորին վտանգ, վէճեր, խռովութիւններ, տարաձայնութիւններ ու վաճառականութեան վնաս։

### 1938, 1966, 1994, 2022, 2050, 2078

Երբ արև մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը տարւայ իշխողը կլինի Լուսաբերը Կոյս նշանի հետ, որ է տուն Փայլածուին։ Այս տարին կլինի ամենաառատ և շատ պարարտ. առաւել դաշտային տեղերում, քան լեռնային, որովհետև Կոյսը մայրենիներին սպառնում է ժանգ և թրթուր։ Գինին կապականի և կպակսի, անապական գինի մնալու համար՝ լաւ է, որ խաղողը ուշ քաղեն։ Ծառապտուղներ կառատանան։ Թռչունները կպակսեն։ Ձմռան սկիզբը կլինի միջակ և անձրեւային. մէջը մռայլ. վերջը ցուրտ։ Գարունը բարեխառն և խոնաւ։ Ամառը շատ ջերմ։ Աշունը՝ ցուրտ և ցաւահար, մանաւանդ տղայոց աչքացաւ կհանդիպի։ Նաւարկութեան համար յաջողակ է և լաւ. կլինեն պատերազմներ, ծերոց և չորքոտանի անասնոց կոտորածներ։ Դիմոկրիտոսն ասում է, որ կլինեն վնասակար կարկուտներ. Աստծուն աղաչենք, որ երկրաշարժ չլինի։ Այս տարի երեւում են կռիւներ և մարդկանց կոտորած։ Թագաւորն ու իշխանները ծանրակիր հարկ կդնեն ռամկաց վրայ. կյայտնւեն վատ և անպիտան



մարդիկ, որովհետև նշանակում են՝ որ արեգակը հակադիր հայեցւածով է դէպի Հրատը և Երեւակը երկնքի 10-դ տան անկիւնում։ Եւ որովհետև Հրատը հակադիր հայեցւածով է գտնւում արևի հետ երկնքի երրորդ տանը՝ ցերեկւայ թաւալումն է, այս պատճառով ցոյց է տալիս արիւնահեղ պատերազմ և անհնազանդութիւն թագաւորին և կորուստ մի թագաւորութեան, այլ և երեւում են վէճեր, խռովութիւններ և վիճաբանութիւններ, որ կլինեն եղբայրների, բարեկամների, ընկերների ու նրանց բոլորի ընտանիքներում։

### 1939, 1967, 1995, 2023, 2051, 2079

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը տարւայ իշխողը կլինի Երեւակը, Կոյս նշանի հետ, որ տուն է Փայլածուին, այս տարի ամեն բան միջակ կլինի, բայց Կոյսի զօրութեան պատճառով ցանքերի մէջ ժանգ և թրթուր կընկնի. նաւարկութիւնը վտանգաւոր է երեւում։ Ձմռան սկիզբը ցուրտ և կարկուտ, մէջը տաք, վերջը քաղցր։ Գարունը մինչև յունիս ամիսը ցուրտ կլինի։ Դիմոկրիտոսն ասում է, որ աշնանը գետերը կպղտորւին, որից հիւանդութիւններ կառաջանան, որ կոչւում է երեք օրեայ տենդ։ Այս տարի աւազակները կշատանան, որոնք Երեւակի տակ ծնւան, բացի այդ՝ այդ համաստեղութեան տակ ծնւածները բարեպաշտութիւնից և հաւատից թոյլ կը լինեն, որովհետև Երեւակը երկնքի 9-դ տան է ցոյց տալիս։ Իսկ Հրատը կցւած Լուսնթագի հետ՝ երկնքի 7-դ տանը՝ նշան են սաստիկ կռիւ ու կոտորածների, մահ մեծատուն ու հարուստ մարդկանց, բայց և այնպէս տարին կլինի քաղցր։ Դարձեալ Լուսաբերը երկնքի 7-դ անկիւնում, նշան է կանանց և կնաբարոյ մարդկանց յաջողութեան։

### 1940, 1968, 1996, 2024, 2052, 2080

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Արեգակը, Կշիռ նշանի հետ, որ տուն է լուսաբերին։ Այս տարին կլինի ամենատատ, բայց Կշռի աւելի զօրութեան պատճառով՝ գուշակւում է պտուղներին ապականութիւն, մարդկանց մարմիններին հարւած և պատերազմ, իսկ ցորենի, գինու, ձէթի, ապրշումի և բոլոր մրգերի առատութիւն։ Ձմռան սկիզբը ցուրտ և կարկուտ կը լինի վերջ բարեխառն, գարունը ցուրտ մինչև յունիս ամիսը, կլինեն անձրևներ, կարկուտներ և չորութիւններ, շատ եղներ կսատկին։ Դիմոկրիտոսն ասում է. գինին լաւ և մնացական կլինի։ Տարին յաջողակ է վազեր և այլ պտղատու ծառեր տնկելու։ Մարախը կշատանայ։ Այս տարի երևում են պատերազմներ, ամբոխային կռիւներ, հրկիզութիւններ, տարաձայնութիւններ, չարութիւններ, թշւառութիւններ և պղտորութիւններ կրօնական կարգերի, մարդկանց մէջ այլ և այլ արտմութիւններ, ըստ որում մեծ կցորդութիւն է ցոյց տալի Երևակի և Լուսնթագի, որ եղաւ դեկտեմբերի 24-ին հրային կենդանակերպումը։ Այս կցորդութիւնները և կամ ծնունդները՝ նշանակում են մեծ վնաս. հաստատ կռիւ. ուրախ մարդկանց, վատ մահ։ Այլ և այս ծնունդով այլ և այլ ատելութիւն և դաւաճանութիւն երևում են իշխանաց մէջ, որով նոցա իշխանութիւնները կփոփոխին. և այս կլինի յիշեալ ծննդոց փոփոխութիւնից, ջրային եռապատկութիւնից հրայինի մէջ, որ շատ չարաշնաս է, որովհետև մարդկանց կլինին շատ և զանազան վնասներ։ Եւ որովհետև Ֆրանսիան Լուսնթագի իշխանութեան տակն է, այս պատճառով նա շատ վնասների մէջ կընկնի։ Եւ որովհետև Հրատը գտնւում է երկնքի առաջին տանը, նշան է, որ այս տարի կլինի մեծ արիւնհեղութիւն։



Լուսինը մօտենում է Երևակի մարմնին, նշան է մի մեծ տիկնոջ մահւան։ Ռամկաց հիւանդութիւն. ջերմութիւնից և խոնաւութիւնից առաջ եկած գլխացաւութիւն. կանանց ցաւ և ուրիշ սորա նման ցաւեր։ Թագաւորներն ու իշխանները վեր կըկենան միմեանց և ռամկաց դէմ, ժողովուրդները կխառնւեն։

### 1941, 1969, 1997, 2025, 2063, 2081

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը տարւայ իշխողը կլինի Հրատը՝ Կշիռ նշանով, որ տուն է Լուսաբերին։ Այս պատճառով տարին երևում է ամուլ և ցամաք։ Ձմռան սկիզբը ցուրտ կը լինի, ջրային սաստիկ քամիով, որից ծառերն արմատահան կլինին. մէջը բարեխառն, վերջը ցուրտ։ Գարունն անձրևոտ. ամառը գետերը կցամաքին, խոնաւութիւնը կպակասի. աշունը՝ եղեմնախառն (դալա). պէտք է քիչ հաց ուտել և շատ գինի խմել։ Դիմոկրիտոսն ասում է, գինին և ձէթը առատ կլինին։ Տարիս յաջողակ է վազ և այգի տնկելու, բայց ոչ ծառեր. մեծ անասուններն և ընտանի կենդանիքը կսատկին, տենդը կշատանայ։ Աստուած աղաչենք՝ որ երկրաշարժութիւն չհանդիպի։ Աշխարհի այս թաւալման (պտտելու, գլորելու) ժամանակ՝ երևում է Երևակը երկնքի 12-դ տանը քառանկիւնի հայեցւածով արևի հետ. այլ և լուսինը երկնքի երրորդ տանը կցւած Հրատի հետ՝ ուր վատարախտներն են, ցոյց է տալիս մարդկանց վնաս, նեղութիւն, ձանձրութիւն և ձախորդութիւն, մինչև այն աստիճան՝ որ էլ չի տեսնւի սէր, բարեկամութիւն և ճշմարտութիւն, այլ առհասարակ աւերումն։ Այս տարի հոկտեմբերի 12-ի և 21-ի մէջ Արևը ժամ ու կիսով-կիսաւարի, երբ լուսինը երկնքի ութերորդ տանը շրջի Կշիռ կենդանակերպի տակ, այս պատճառով գուշակւում է մի մեծ և հզօր թագաւորի և

կամ իշխանի մահ. սով կլինի և հասարակ մահտարաժամ: Եւ այն թագաւորներն ու իշխանները որոնք ծընել են Կշիռի և կամ Խոյի իշխանութեան տակ անհանգստութիւն և նեղութիւն կկրեն ուրիշներից:

## 1942, 1970, 1998, 2026, 2054, 2082

Երբ արևը մարտի 21-ին մտնի Խոյի առաջին աստիճանը՝ տարւայ իշխողը կլինի Փայլածուն կշեռ նըշանով: Այս տարին կլինի ամուլ, մարդկանց հարւած, պտղոց աւերումն, պիծակներին և մեղուներին մահ և ժանտաբեր ցաւ: Ձմռան սկիզբը՝ ցուրտ սառնամանիք, մէջը՝ բարեխառն; վերջը՝ գարնանային, անձրևաշորդ, և գետոց թանձրութիւն: Գարունն անձրևոտ, ծառերն անձրևներից կվնասին, վերջը՝ տեղ տեղ կըկարկտահարի: Ամառն անձրևային և մառախլապատ, հունձը պէտք է շուտով վերջացնել որ չապականուի: Աշունը քամոտ բայց առողջարար, վազերը շատ խաղող կտան, լաւ և յաջողակ է բոյսեր տնկելը ու վազեր տեղափոխելը. ցորենը շուտով կապականի, տարին առանց հիւանդութեան կանցնի: Աստծուն աղաչենք պտղոց համար. տարիս ունի առատ անձրև, իշխանաց մէջ կլինի տարաձայնութիւն: Այս տարի երեւում է մի գաւառի և կամ մի քաղաքի աւերումն, այլ և անյաջողութիւն, նեղութիւն և մարդկանց վնաս: Եւ որովհետև Հրատը գտնւում է երկնքի 7-րդ տանը քառանկիւնի հայեցւածով Փայլածւի հետ, և Երևակը երկնքի 8-դ տանը նոյնպէս քառանկիւնի հայեցւածով Արևի հետ, այս պատճառով գուշակւում է մահ շատ մարդկանց. աւելի երևում է ոմանց նրբութիւն և խորամանկութիւն, որ ուրիշներին հոր փորելով՝ իրանք կընկնեն նրա մէջը: Մարդկանց չափից աւելի կհանդիպի գերութիւն և բանտարկութիւն, ազնւականաց ու աւրբեր նահանգաց մէջ երևում են տարաձայնութիւններ



մինչև այն աստիճան, որ բարեկամը և հաւատարիմը չի ճանաչի. Երևակը ներհակ նայելով Հրատին ցոյց է տալի նենգութիւն, մատնութիւն և սուտ խորհուրդ, որ շատ տեղերում կհանդիպի:

—

Վերջացնելով այս 28 տարիներ, դարձեալ շարունակիր սկզբից, որովհետև Արևի մշտենջական շրջանն է այդ, միայն փոխիր թւականն՝ սկսելով 1943 և այլն ըստ կարգին:

---

## Ցուցմունք վասն պատահման եղանակաց ի վերայ Երկոտասան ամսեաց

Յունվար՝ որ է Հոռի, լուսինը խաւարի՝ արևելքից մի թագաւոր դուրս կգայ շատ արիւնահեղութիւն կանէ շատ զօրքի կյաղթէ: Աղ և ձիւն շատ, մորեխ կլինի. և արևմուտքում լռութիւն: Մեծամեծները միմեանց վերայ վեր կըկենան, քաղաքների հետ կպատերազմին և կառնեն: Թէ բակ ունի, ջրերը կպակասին, տարւայ յառաջանալուն մի թագաւոր փախստական կլինի: Թէ եղջիւրն ողորդ (շիտակ, կանգնած) լինի, ցուրտ կլինի, թէ կախ, անձրև կլինի: Արեգակը թէ խաւարի, մի թագաւոր դուրս կգայ մարդկանց վերայ. սուր կշարժէ և ամէնը ինչ կաւերէ. և տարին բարկութիւն կլինի: Թէ բակ ունի, գողերը կշատանան. մի թագաւոր կփախչի. ոչխարներին մահ, պատերազմներ կշարժւին: Թէ Աղեղն Արևելք իջնի, անձրևաց առատութիւն, մարդիկ ցաւեր կկրեն: Թէ արևմուտք իջնի, տարին բարի և հողմային կլինի, հաց, գինի և պատերազմը խիստ շատ: Թէ հիւսիս կամ հարաւ, շատ քամի կփչէ: Թէ կայծակ լինի, Արևմուտքից քամի կփչէ, ծառերը կպակասին պտուղներից, տարին բարի կլինի: Թէ որոտայ, բարի է ամէն բանի, ոչխարները կաւելանան, հացը, գինին

շատ և ամէն երկրի լիութիւն։ Թէ ցերեկը շարժ լինի, պատերազմներ կլինին, չորքոտանիքը կպակասին. բայց ամէն բանի առատութիւն։ Թէ գիշերը, կլինի աշխարհում մահտարաժամ. քաղաքաց փոփոխումն, կռիւներ, իրար կնեղեն, կփախչին դէպի արևելք, հիւանդութիւն և գետոց վարարումն։

—

Փետրւար՝ որ է Սամի, թէ լուսինը խաւարի, թագաւորաց մէջ արիւնհեղութիւն կլինի, Արևելքից մի թագաւոր վեր կկենայ և Համիթը կառնու, վայ կլինի, մարդկանց և շատերին մահ։ Թէ բակ, գինին և բամբակը խիստ շատ։ Թէ եղջիւրն ողորդ լինի, ցուրտ կլինի։ Թէ կախ տարւայ մուտքը լաւ չի լինի։ Թէ արեգակը խաւարի, այս տարի ամէն տեղ նւազութիւն կլինի։ Թէ բակ, արևելքից մի թագաւոր դուրս կգայ և շատերին կհնազանդեցնէ, և երկրի վերայ տուգանք կդրուի։ Թէ աղեղն արևելք իջնի, բաբելացւոց շատ ցաւեր կտիրապետեն, և ձիաւորներին շարժումն կլինի դէպի արևմուտք, շատ պատերազմներ, մի թագաւոր իր զօրքերից կըկորչի, շատ ձիւն, մարդկանց մէջ խաղաղութիւն, գազանաց բազմութիւն, հեծեալք կմտնեն արևմուտք, քամիներ և անձրևներ թէ արևմուտք իջնէ, սաստիկ քամի, բոլոր երկրներում աղքատութիւն արիւնհեղութիւն. հալածումն, պատերազմներ, պարսիկները կզօրանան։ Թէ կայծակ լինի, արևելեան կողմից սով. մահ, մարդկանց, սակաւութիւն կերակրոց և պակասութիւն պտղոց։ Թէ որոտայ, գարունը գեղեցիկ. և խիստ շատ պտուղ։ Թէ ուրբաթ օրը որոտայ, կարկուտ կլինի, սով, որից ստիպւած հայրերն որդւոցը կվաճառեն։ Թէ ցերեկը շարժ լինի և թէ գիշեր մարդկանց վնաս է, իսկ անասնոց առողջութիւն, և ամէն բանի առատութիւն, այլ և կլինին պատերազմներ, թագաւորները միմեանց հետ կկռւին, մեծամեծ քաղաքները կընկնին և իրար հետ կխառնեն, մարդիկ



նենգաւոր կլինին, իշխանները իրենց գլխաւորից կապստամբին, արևելքի գլխաւորը կկորչի, զօրաց կլինի դադարումն, և Եգիպտոսում սով կընկնի։

—

Մարտ՝ որ է Տրէ թէ լուսինը խաւարի, ամեն բանի թանկութիւն, բայց առողջութիւն. Պարսկաստանում մեծամեծները կմեռնին, տարին բարի կլինի։ Թէ բակ ունենայ, կնշանակէ աւեր, ահ ու մահ։ Թէ եղջիւրն ողորդ, այգիների պտուղները կչորնան։ Թէ կախ, երաշտ և քամի։ Թէ արեգակը խաւարի. Հռոմից մէկը զօրքով դուրս կգայ Արաբիա և շատ աղմուկ կլինի։ Թէ բակ, հիւանդութիւն կլինի և նրա տեղը, մի ուրիշը կառնու։ Թէ աղեղն արևելք իջնի, ձիաւորներ դուրս կգան, բայց թագաւորաց մէջ հաստատութիւն կլինի. պտուղները կշատնան, բայց երեք ամբողջ ամիս, անասնոց մահ. թագաւորն իր մեծամեծաց վրայ կզօրանայ, երկրի վերայ, մահ և անձրև։ Թէ արևմուտք իջնի ամեն բանի առատութիւն և ամեն երկրի խաղաղութիւն։ Թէ կայծակ լինի, շատ չարիք կտիրեն երկրին. բայց մեղրը շատ կլինի։ Թէ որոտայ, աշունը չոր և պարզ կլինի, ձմեռը երկար, ոչխարաց մահ և մարդկանց առողջութիւն։ Թէ ուրբաթ օրը որոտայ, գարուն քամոտ, մարդկանց առողջութիւն, մեղրը և գինին խիստ շատ և պտղոց առատութիւն։ Թէ ցերեկը շարժ լինի գազանաց և թագաւորաց մէջ կռիւ կլինի, գողեր կկորչին և աղքատները կհարստանան, արևելեան կողմ վնաս կլինի, բայց բոլոր երկիրում ու քաղաքներում բարութիւն կլինի, թշնամութիւնը կվերանայ, կլինի սակաւ հիւանդութիւն և մի թագաւոր կմեռնի։ Թէ գիշերը շարժ լինի, կլինի խաղաղութիւն, սաստիկ քամի, և շատ ցորեն, թշնամու դէմը սահմանը կանգնած կլինի և թռչուններն կշատնան։

—

Ապրիլ՝ որ է Քաղոց, թէ լուսինը խաւարի երկրում սով և տրտմութիւն կլինի, մեծամեծները կխոնարհին, բայց Հայաստանում կլինի առատութիւն և տարին բարի, Պարսկաստանում մեծ սով կլինի. նոցա թագաւորներն կնուաճին: Թէ բակ, մարդկանց մէջ ցաւեր. թշնամեաց փախուստ և բոլոր երկրին ուրախութիւն: Թէ եղջիւրն ողորդ լինի, այգիները լաւ կլինին: Թէ կախ, օդը կխառնւի և մահ կլինի: Թէ արեգակն խաւարի, թագաւորաց սպանում և պակասումն զօրաց: Թէ բակ առնու, կլինի արիւնհեղութիւն, քամի, շատ հիւանդութիւն, ջրերի պակասումն, գողերի բազմութիւն և մահ: Թէ Աղեղն արևելք իջնի՝ պարսից թագաւորութեան մէջ խառնակումն կլինի. մեծամեծաց կորուստ, սուգ և տրտմութիւն, արևելքում մի մեծի մահ, և արևելեան թագաւորի դէմ հակառակութիւն: Թէ արևմուտք իջնի, արևելքից մի թագաւոր վեր կկենայ, արիւն կթափէ, կաւրէ շատ քաղաքների, կլինի շատ պատերազմներ, պարսից երկրում գերութիւն, գողեր կբազմանան, մարդկանց փախուստ, սակաւ խաղաղութիւն: Թէ որոտայ, գազաններն և ոչխարներն կկոտորւին և տղայոց մահ: Թէ ուրբաթ օրն որոտայ, հարաւային կողմում բարի կլինի և մարդկանց առողջութիւն մեղրը շատ, ոչխարներին բարի, շարժմունք և հարուած մեծամեծաց, բազմածնութիւն կանանց: Թէ ցերեկը շարժ լինի, արևելքում արիւնհեղութիւն կլինի, բոլոր երկիրների զօրքեր կցրւին, անհաստատ խաղաղութիւն կլինի, այլ և թագաւորաց և իշխողաց կործանումն: Թէ գիշերը շարժ լինի՝ գերութիւն և տեղ տեղ օգտակար անձրև, բայց խիստ շատ պատերազմներ,

—

Մայիս՝ որ է Արած՝ թէ լուսինը խաւարի բարի է բոլոր պտղեղէնների. Հռոմոց երկրում հակառակութիւն և այլազգիների կոտորումն ու աւերումն շատ տեղեաց, բոլոր երկիր սուգ և տրտմութիւն կկրէ



անօրինաց ձեռքից, յղի կանայք կմեռնին, թագաւորը իր թշնամուն կսպանէ, ինքը կմեռնի և որդին կթագաւորէ: Թէ բակ ունենայ, Արաբիայում խառնակութիւն կ լինի և գազանները կսատկին: Թէ եղջիւրն ողորդ, գազանները կշատանան և կսատկին, թէ կախ լինի, թանկութիւն հացի և հիւանդութիւն: Թէ արեգակը խաւարի, մի թագաւոր կմեռնի, և մեծ հակառակութիւն կլինի: Թէ բակ ունենայ, մի թագաւոր կմտնի օտար քաղաք, անյաջողութեան պատճառով յետ կդառնայ, մարդկանց առողջութիւն կլինի: Թէ Աղեղն արևելք իջնի, մուտքը շատ կլինի, տարին արդիւնաւոր, մեղրն ու բամբակը թանկ, շատ պատերազմներ, արևմուտքում ազատութիւն. արևելքի թագաւորը գերութեան կտարւի, և Մարաց թագաւորը կպատերազմէ օտար թագաւորի հետ, և յետոյ կլինի խաղաղութիւն: Թէ արևմուտք իջնի, հիւանդութիւն, ջերմ, և ծաղիկ ցաւ: Թէ կայծակ լինի, երեք օր քամի կբարձրանայ, արիւնհեղութիւն կլինի և մեծ մարդ կմեռնի: Թէ ամպ գոռայ, պտուղները կշատանան, բայց գինիները կքացախին: Թէ ուրբաթ օրը որոտայ, մարդկանց մահ և անասնոց ծախք, հացի նուազումն, գողերը կըշատնան, հաւատքը կթուլանայ, մարդիկ կդիւահարին, մեծամեծները կչքանան, կանայք կվիժեն: Թէ ցերեկ շարժ լինի, ամառ շոգ կլինի, մի թագաւոր վերկենալով արիւնհեղութիւն կանէ, մեծամեծաց մահ, շատ մարդիկ կպակասին, հեթանոսաց հետ կռիւ, ցորենի պակասութիւն, թշնամիք կշատանան, հաւատացելոց թերահաւատութիւն: Թէ գիշերը շարժ լինի, թագաւորների և հարուստների պակասութիւն. թագաւորաց անկումն, ցորեն շատ, բայց մարախ կընկնի:

—

Յունիս որ է Մեհեկի, թէ լուսինը խաւարի սասանութիւն աղքատաց և արիւնհեղութիւն, անձրևները 40 օր կպակասին և Բաբելացւոց թագաւորը իր թշնա-

մուն կսպանէ. Թէ բակ ունենայ, հինգ օրից յետոյ սաստիկ քամի կլինի, անձրևները կպակասին, գազանները կսատկին, և կլինի խաղաղութիւն։ Թէ եղջիւր ողորդ լինի, օդը կխառնուի պէտք է զգոյշ լինել։ Թէ կախ լինի, երաշտ և թանկութիւն։ Թէ արեգակը խաւարի, մի թագաւոր կվերկենայ արևելքում, շատ տեղեր կաւերէ, մեծ աղմուկ կանէ և երկիրը կսասանի։ Թէ բակ ունենայ, զօրքերը Հռոմից արևմուտք կերթան, շատ քաղաքներ կառնեն և շատ աւար կտանեն։ Թէ աղեղն արևելք իջնի, հարաւային կողմում վաստակը լաւ կլինի, ցաւ կընկնի. և Պարսից երկրումը մարդիկ և շները կկոտորին։ Թէ արևմուտք իջնի կլինի շատ անձրև, գինի, ձէթ մեղրը։ Թէ կայծակ լինի, անասնոց և թռչոց սղութիւն կլինի։ Թէ որոտայ, արիւնհեղութիւն կլինի, հացն առատ, գինին թանկ և մարդկանց առողջութիւն։ Թէ ցերեկը շարժ լինի՝ կլինի արիւնհեղութիւն, սրտնեղութիւն, արտասուք, հիւանդութիւն, մի մեծ աթոռ կկործանի, ծառերը կապականին ու Աստուած քաղցրութեամբ կնայէ աշխարհի վերայ։ Թէ գիշերը շարժ լինի, մանր անասունները կկոտորուին, աղբիւրները կշատանան, ցորենը շատ և աշխարհին խաղաղութիւն։

—

Յուլիս՝ որ է Արեգի, Թէ լուսինը խաւարի, Խորասանում կլինի արիւնհեղութիւն և մեծ աւեր. քաղաքները կշարժին. թագաւորը կժառանգէ նրան, արևմուտքում կլինին պատերազմներ։ Թէ բակ ունենայ, քամիները, անձրևները և անասունները շատ կը լինին, աղբիւրներն կառատանան և մարդկանց առողջութիւն։ Թէ եղջիւրն ողորդ, երաշտ կլինի։ Թէ կախ, անձրև կլինի։ Թէ արեգակն խաւարի, թագաւորի որդին կսպանէ իր հօրը, կանցնի արևելք, շատ քաղաքներ կառնէ, բայց նրա զօրքը կցրուի բոլոր երկիր։ Թէ բակ, մահ կհասնի թագաւորին և նրա որդուն,



նրա զօրացը կլինի թշուառութիւն։ Արաբը դուրս կը գայ և շատ վնաս կանէ։ Թէ աղեղն արևելք իջնի, թագաւորը կմեռնի և նրա գործքերն կխափանուին, զօրքեր վեր կկենան, արևմուտք կմտնեն։ պարսիկները այլազգեաց հետ կպատերազմին և նրանց կյաղթեն. Բաբիլոնում և արևմուտքում պատերազմներ կլինին, ցորենը շատ։ Թէ արևմուտք իջնի, հարաւային կողմում արիւնհեղութիւն կլինի։ Թէ կայծակ լինի, անձրևներն կպակասին, մեղրը և բամբակը լաւ, երկրի վերայ, ահ և պատերազմ։ Թէ որոտայ, խաշանց մահ, տղայոց ծաղիկ, ցորենը շատ և ազատաց մահ։ Թէ ուրբաթ օրը որոտայ, ձմեռը երկարատև, տարին ծառերին և տունկերին բարի։ Թէ ցերեկը շարժ լինի, տղայոց ապականութիւն, երկրի վերայ մեծ նեղութիւն, կռիւ և որոտմունք։ Թէ գիշերը շարժ լինի, թագաւորներն իրար վերայ վեր կկենան, մեծամեծներին հիւանդութիւն և նաւերի կործանումն։

—

Օգոստոս՝ որ է Ահիկի, Թէ լուսինը խաւարի, շատ ցուրտ կլինի, յետոյ անձրև, հարաւային կողմումը սաստիկ հիւանդութիւն, իսկ հացն առատ, արևմուտքում սով և նեղութիւն, շատ փայլատակներ. ծառերին վնաս, մարդկանց առողջութիւն, անձրև երեք ամիս կպակասի, Հայաստանեաց քաղաքները այլազգիք կառնեն. բոլոր քաղաքներում ահի ձայն, Խորասանում արիւնհեղութիւն։ Թէ բակ ունենայ, քամի կվերկենայ և անձրև կլինի և տեղ տեղ շատ խռովութիւն, Թէ եղջիւրն ողորդ, ոչխարները կշատանան, և ամեն բան բարի։ Թէ կախ լինի, անասունները կսատկին։ Թէ արեգակը խաւարի, Հռոմոց թագաւորը Արաբիա կմտնի, Արաբն վեր կկենայ և կկոտորէ Հռոմներին և մեծ խառնակումն կլինի։ Թէ բակ ունենայ, թագաւորը կը մեռնի և ուրիշը կթագաւորէ. սրա օրերումը խաղաղութիւն կլինի։ Թէ աղեղն արևելք իջնի, առաջիկայ

ամիսը ձիւն կլինի, պարզ և ցուրտ, Հռոմոց մէջ շատ պատերազմներ, արևմտեան Թագաւորը գերութեան կը տարուի. ռուսներն իրար հետ կպատերազմին. խաղաղութիւն բոլոր երկրներում: Թէ արևմուտք իջնի, տարին կլինի բարի, պտուղներն առատ, փոխումն մէկ Թագաւորի, մարդկանց տեղափոխութիւն քաղաքից քաղաք և մահտարաժամ: Թէ կայծակ լինի, ողը ու հալածանք աշխարհում, և խռովութիւն Թագաւորներին և նրանց երկրներին: Թէ ցերեկը շարժ լինի կռիւ կլինի շատերը գետին կընկնին. աշխարհը կապականի. ծովերը կցամաքին, ցորենը և բոլոր պտուղներն առատ կլինին: Թէ գիշերը շարժ լինի, մինչև 30 օր սաստիկ անձրև և ցուրտ կլինի. տղայոց մահ:

—

Սեպտեմբեր՝ որ է Մարերի; Թէ լուսինը խաւարի ցուրտ կլինի, նեղութիւն և խռովութիւն բոլոր երկրում որովհետև քաղաքները վեր կկենան քաղաքաց վերայ, արևմուտքում մի մեծ մարդ կմեռնի, երկրի վերայ նոր խորհուրդ կշարժի և մարդկանց վնաս կպատճառէ երկրի պտուղները կչորանան: Թէ բակ ունենայ, կարկտախառն անձրև կգայ, կամ քամիով ձիւն. ցամաք և ցուրտ, ձմեռը բարի, և սաստիկ քամի: Թէ եղջիւրն ողորդ լինի, շատ անձրև և մահ կլինի, բարութիւն կը պակասի: Թէ կախ, լինի քիչ անձրև և շատ բարի: Թէ արեգակը խաւարի, ամեն բանի նեղութիւն և մահ, պատերազմներ, արիւնահեղութիւն. բազմութիւն մարդասպանաց, և յետոյ բոլոր երկրներում առատութիւն: Թէ բակ ունենայ, կլինի ցամաք և ցուրտ, քաղաքում զարհուրումն. գինին պակաս, ցորենը շատ: Թէ աղեղն արևելք իջնի, պտղոց սակաւութիւն, բոլոր երկրում խաղաղութիւն. սերմը պակաս կլինի, Բաբելացւոց երկրում երեք տարի սով կլինի. արևմուտքում անձրև, Աոխեծներն մարդկանց եօթն ամիս վնաս կը տան: Թէ արևմուտք իջնի, անձրևաց պակասութիւն,



տղայոց ցաւ, հաւերի և խաշանց առողջութիւն: Թէ որոտայ, հացի առատութիւն, շատ անձրև և հիւանդութիւն: Թէ կայծակ լինի, ամեն բանի առատութիւն զօրքերն արևելքից արևմուտք կերթան, շատ պատերազմներ կլինին և երկրի վրայ բարկութիւն: Թէ ցերեկը շարժ լինի, խաղաղութիւն է աշխարհի, պատերազմաց դադարումն, մեծատանց մահ, կանանց, տղայոց և խաշանց ցաւ: Թէ գիշերը շարժ լինի, խաղաղութիւն, լիութիւն և ուրախութիւն, ցորենի առատութիւն և ծովերի շատանալ:

—

Հոկտեմբեր՝ որ է Մարգաց, Թէ լուսինը խաւարի, տարին բարի կլինի, հացի և ամեն բանի առատութիւն, մարդկանց մէջ խաղաղութիւն. շատ անձրև և լիութիւն: Տիւրոսի սարումը մի մարդ իշխանութիւնից կընկնի: Թէ բակ ունենայ, շատ ձիւն և սաստիկ ցուրտ մեծամեծ անձրևներ: Թէ եղջիւրն ողորդ, տարին յառաջ գալուն, բարի կլինի, Թէ կախ կգուշակէ մահ և կարկուտ: Թէ արեգակը խաւարի, տարին ցաւագին և մահաբեր կլինի: Թէ բակ, ահալից կլինի: Հռոմները կփախչին. շատ ծաղիկ: Թէ որոտայ, շատ անձրև և սաստիկ ջերմութիւն, մեծերին մահ: Թէ ուրբաթ օրն որոտայ, իրաւունք կյաղթանակէ և մարդիկ կդառնան իրենց տեղերը, հաց և գինին շատ, արևմուտքից և հիւսիսից զօրաց շարժումն: Թէ աղեղն արևելք իջնի, կլինի շատ անձրև, վաստակաց աճումն, և շատ լիութիւն. բայց մարդիկ ցաւից կվնասին, և արևմուտքում շատ պատերազմներ կլինին. Բաբելոնում ժանգ արևելքում վաստակոց շատութիւն: Թէ արևմուտքը իջնի, հարաւային կողմում սով կընկնի: Թէ կայծակ լինի, ծառերի պտուղները կպակասին և շատ քաղաքներ կկործանին: Թէ ցերեկը շարժ լինի, երկիրը քիչ կսասանի, ոչխարաց մահ: Թէ գիշերը շարժ լինի, հեթանոսաց Թագաւորներն օտար աշխարհ կփախչին

ուրիշները կառնեն նրանց տեղ ու թագաւորութիւնը ծառերի պտուղները կպակասին. քաղցր անձրև, առատ ցորեն, կենդանեաց կորուստ, և յետոյ մեծ խաղաղութիւն։

—

Նոյեմբեր՝ որ է Հրոտից. լուսինը խաւարի, գարնան ժամանակ վաստակը կաճի, ամեն բանի առատութիւն, տղայոց օգտակարութիւն։ Երուսաղէմ շատ անձրև կլինի, հեթանոսաց մէջ կռիւ, և մէկը կմեռնի։ Թէ բակ ունենայ, առատութիւն և խաղաղութիւն, և գետերը կբազմանան։ Թէ եղջիւրն ողորդ, հաց ու գինին շատ և ցուրտ։ Թէ կախ, կգուշակէ մահ և անձրև Թէ արեգակը խաւարի՝ կոտորումն անասնոց և գազանաց և տղայոց հիւանդութիւն։ Թէ բակ ունենայ՝ զօրքերը դէպի արևմուտք կշարժին։ Թէ աղեղն արևելք իջնի՝ երաշտութիւն. վաստակաց ժանգ. արևելքում մի թագաւոր իր թշնամիներից կմեռնի, և տրտմութիւն կլինի. այլ և շատ ձիւն կգայ։ Թէ արևմուտք իջնի՝ կլինի յաջողութիւն, խաղաղութիւն և առատութիւն։ Թէ որոտայ՝ մահ կլինի, վաստակ և այգիները կլաւանան, ցորեն և գինին շատ։ Թէ ուրբաթ օրը որոտայ՝ աւերումն կլինի, քաղաքներն ու գիւղերը կշարժին, արևելքից մի թագաւոր վեր կկենայ՝ և պատահած երկիրը կապականէ։ Թէ ցերեկը շարժ լինի՝ ջրերը կշատանան, քամի կլինի, տարին պտղաբեր և անչափ առատութիւն։ Թէ գիշերը շարժ լինի՝ այնտեղ, որտեղ շարժը կլինի, կռիւ և սասանութիւն կլինի և մարդկանց փախուստ։

—

Դեկտեմբեր՝ որ է Նաւասարդ, թէ լուսինը խաւարի շատ անձրև և եղեամն կլինի, բայց օրն պարզ. դառնութիւն օդոց, խաղաղութիւն քաղաքի, ամառնը պատերազմներ, բայց լուութիւն, մորեխ և ճպուռ. գարուն խառնակ և ծաղիկ տղայոց։ Թէ բակ ունենայ, իշխա-



նաց մէջ սէր և խաղաղութիւն, ձիւն և կարկուտ։ Թագաւորներ կմեռնին, Պարսիկներն անձրևից կապականին։ Թէ եղջիւրն ողորդ, կնշանակէ պակասութիւն և ցրտութիւն։ Թէ կախ, անձրև կլինի։ Թէ արեգակը խաւարի, կլինի խաղաղութիւն. բայց չորս կողմից տարին խառնակ կլինի և տղայոց ծաղիկ։ Թէ բակ ունենայ, զօրքերը արևելքից կշարժին դէպի արևմուտք գինին շատ և մարդկանց ուրախութիւն։ Թէ աղեղն արևելք իջնի, օրերը կտաքանան, ամպերը կխառնակին, և երկրի վերայ սուր կշարժի։ Թէ արևմուտք իջնի, ամեն բանի և ամեն երկիր առատութիւն և մարդկանց առողջութիւն։ Թէ կայծակ և թէ աստղերը հրացայտ լինին, մարդկանց հիւանդութիւն, ցորենի և գինու առատութիւն. Պարսից կոտորումն։ Թէ որոտայ, բոլոր երկիր բարութիւն կլինի և շատ վաստակ։ Թէ ուրբաթ օրն որոտայ, արևելքում նւազութիւն կլինի։ Թէ ցերեկը շարժ լինի։ այն տեղի ժողովրդին խառնակում և կռիւ կլինի և շատ պատերազմներ։ Թէ գիշերը շարժ լինի, մեծամեծաց տրտմութիւն, մարդկանց նեղութիւն, քաղաքաց աւերումն, գլխաւորաց կոտորումն ու վաստակաց նւազումն կլինի։

## Ցուցմունք ի վերայ երկոտասան կենդանակերպից որք եւ կոչին Տանուտէրք

—

Խոյն երբ տանուտէր լինի, գարունը կլինի ազնիւ, և ամեն բանի առատութիւն, Հռովմում բոյսերը կչորանան, բարի վաստակ, Բաբելոնում սով կլինի. Ասորիքում առատ գինի, Հնդկաստանում մահ. Դիլաթայ երկրից մինչև Հիւսիսի ծովը՝ խաղաղութիւն, Արևմուտքում. երկրաշարժ և շատ քաղաքաց կործանումն։ Երբ հիւսիսի կողմից աստղ դուրս գայ՝ քաղաքները իրար կխառնեն. Աստուածանից կամ թագաւորից՝ մեծ մարդկանց կորուստ։ Երբ Աղեղն իջնի բու-

ղոր աշխարհի խաղաղութիւն. ամառը բարի վաստակ, այլ և անձրև, մեղր, շատ բերք, թեթև ձիւն և մարդկանց առողջութիւն:

—

Ցուլն երբ տանուտէր լինի՝ գարունը գէճ կլինի, ուստի առաջուց մի ցանիր շատ, որովհետև տարւայ մուտքը լաւ չէ, Բաբելոնում կլինի սով և մահ: Գարունից յետոյ, քամիներ, որովհետև Ցուլը գէճ և ջերմ. աշխատանքներին երկնքից կլինի պակասութիւն. Ասորիքում եզների և ոչխարների մահ. ամառը տեղ տեղ տոթային և սաստիկ ջերմային. բայց սաստիկ հակառակ կլինի. առաջ ձմեռը քաղցր կլինի, յետոյ շատ ձիւն. գարունն ազնիւ, և ամէն բանի բարութիւն և լաւութիւն է ցոյց տալիս:

—

Երկւորն երբ տանուտէր լինի, գարունը միջակ և շատ տեղերում սով և տրտմութիւն: Պարսից երկրումը աշխատանք չի լինի. ձմեռը սաստիկ վատ կը լինի, իրար հետ պատերազմ կլինի. Պարսից սահմանում երկիրը կխառնուի. Դիկլաթայ երկրից մինչև Ովկիանոս ծովը և Բաբելոնում շարժումն կլինի, բայց ոչ սաստիկ: Ասորիքում և Միջագետքում ձմեռը մեղմ. գինին ցորենից շատ կլինի. տարին առողջ, յետոյ կը վերկենայ անհագին քամի. ծնունդը չի շատանայ. սաստիկ բերանացաւ և աղբիւրների պակասութիւն:

—

Խեցգետինը երբ տանուտէր լինի, գարունն երկար և քամոտ. բոլոր պտղաբերութիւնը կփչանայ և գինին սակաւ, աշխատանքը լաւ կլինի, բայց անձրևը սակաւ, անասնոց և գազանաց անկումն, երկրի վերայ տրտմութիւն, անասնոց արօտի սակաւութիւն, տեղ տեղ մարախ, ձմռանը թանկութիւն, և քամի հիւանդացողը, ցաւի մէջ սաստիկ նեղութիւն կկրէ. և բայց ցուրտ կլինի:



Առիւծն երբ տանուտէր լինի, գարունը բարի ջխարար. վաստակը և պտղաբերութիւնը լաւ, պտուղների ծանրութիւնից ճիւղերը կկոտրուին. գինին լաւ: Ամռանը շատ անձրև, քաղաքաց աւերումն. Բաբելոնում ժողովրդի շարժում. Ասորիքում տրտմութիւն, որովհետև օդը բերքը կապականէ. անձրևից, յետոյ երաշտ: Ձմեռը սակաւ, ցուրտը սաստիկ, ձմռան սաստկութիւնից մառախուղ կնստի. գազանները կսատկին. Յունաստանից զօրք կվերկենայ և շատ գաւառներ կասպատակէ:

—

Կոյսն երբ տանուտէր լինի, գարունը բարի, վաստակը լաւ, բայց տարւայ մուտքերն կպակասին. այգումը մի աշխատիր, գինի չիլինի, ծառերը պըտուղ չեն տայ, Արևելեան երկրում, անձրևի սակաւութիւն, տարին ցաւագին և շատ աչքացաւ: Սաորիքում սովը և մորեխը կվնասէ: Պարսկաստանումը գլխաւոր մի մարդ կընկնի. զօրքերը կվերկենան և շատ գաւառներ ասպատակութեամբ կգրաւեն: Աշունը տեղ տեղ երկար կտևէ: Ձմեռը քաղցր բայց սաստիկ սով, որից ստիպուած մարդիկ իրենց ունեցած ամէն ինչքը կվաճառեն:

—

Կշիռն երբ տանուտէր լինի, գարունը սակաւ անձրև բայց ցորենը շատ, գինին կփչանայ: Հռովմում տրտմութիւն և սաստիկ խառնակում կընկնի: Հայաստանումը, աւերմունք կմտնի. երկիրը իրար մէջ կբաժանին, մեծերի տները կկործանին. անասնոց և եզների ցաւ. իսկ վաճառումը սակաւ. պիծակը երկիրը կվնասէ, արիւնից փորացաւ. գազանաց մահ: Ամառն անձրևային, բոլոր պտղաբերութիւնը լաւ: Դիկլաթայ երկրում խաղաղութիւն, աշնան անձրև, յետոյ երաշտ. ձմեռը բարի և շատ ձիւն, տեղ տեղ կարկուտ:

—

Կարիճը երբ տանուտէր լինի, գարունն անձրևոտ ամպամած, բայց վերջն երաշտ, յետոյ առկայծ և անեղ ցուրտ, տարին վատ կլինի, որովհետև օդն Աստծու հրամանաւով կորտմի, կլինի ամպերի խառնակութիւն և փայլատակմանց ճայթումն, անեղ որոտմունք, երկիրը կսասանի, գետերն ու ծովերը կվերկենան և մրրիկով կալէկոծւեն։ Գարունն ամպերով խառնակ կգայ. մինչև բազմաստեղ դուրս գալը, պտղաբերութիւնը կնորանայ. գինին սակաւ. բարի վաստակ, բայց հունձը սակաւ, կամ ամպերից կամ կարկտից և կամ ուրիշ որև է պատահարից քիչ կվնասի ու Թրթուր կերևի։ Պարսկաստանում խառնակութիւն, իրար կընկնին և նրա զօրքերը կշարժին, երկրի Թագաւորը հոգսերի մէջ կընկնի. Յունաց Թագաւորն իր զօրքովն աթոռից կշարժի, շատ գաւառներ կապականին ձիերի սմբակներից ու երկիրը կխռովի, որով և տարւայ բերքերը կպակասին։ Աղեղնաւորի մտնելու ժամանակ, սով կը լինի, աշունն անցնելուն լաւ կլինի, ձմեռը Թեթև քամի բայց սաստիկ ցուրտ և անձրև։

—

Աղեղնաւորն երբ տանուտէր լինի, գարունն ամպերով խառը կլինի մինչև ամառային եղանակը, տարին քամոտ, դաշտերն աշխատանքով լի, գինով և բոլոր պտղով, բայց այգիները, կարկտից, կամ ուրիշ պատահարներից կապականին, սաստիկ պիծակ, շատ տեղերում սով, զօրաց շարժումն, արևելքից արևմուտքից պատերազմաց ձայներ. ժողովրդոց իրար հետ բախում։ Շատ գաւառներ ոտնակոխ կապականին, մեծերի տներն Աստծուց կամ Թագաւորից կկործանին, նեղութեան ժամանակ ծնողները կուրանան իրենց որդոց. երկիրն ինչպէս ալէկոծեալ նաւ կտագնապի, իսկ Ասորւոց երկրում խաղաղութիւն և ամէն բարութեան լիութիւն։ Ձմռան առաջին մասում ջերմ, ու ցամաք, ցորենը դալուցը լաւ կլինի, բայց ոչխարաց կոտորումն։



Այծեղջիւրն երբ տանուտէր լինի, գարունը լաւ ու անձրև, սաստիկ պիծակ, պտղաբերութիւնը պակաս առաջ ցանածները պարարտ բերք կունենան, դաշտերը վաստակներով լիքը կլինի, իսկ բարձր տեղերի վաստակը, օդը կտանի։ Հայոց մէջ տրտմութիւն կլինի, մեծերը իրենց հարստութիւնից կընկնին։ Հիւսիսային և հարաւային կողմերում բարկութիւն կշարժի ոտնակոխ լինելուց, աղբիւրներն ու գետերն կցամաքին, երկնքից ճայթմունք կլինի, գաւառները կարկըտից կփչանան. տարին կլինի ցաւալի, շատ քաղաքներ կկորչին, ու մեղրը կպակասի։ Յետոյ ցանածներն աշնանը լաւ կլինի։ Ձմեռը լաւ կգայ, ցուրտ և ձիւն չի լինի։ Հացը ապրիլից մինչև յունիսը կնւազի։ Թէ լուսինը խաւարի, պտղաբերութիւններն կապականին. մուտքը լաւ կլինի, Թէ տեղ տեղ չժանգահարի։

—

Ջրհոսն երբ տանուտէր լինի, գարունը գէճ, մեծ անձրևներ, առատ պտուղներ, դաշտային տեղերում չը սերմանել, ժանգը աշխատանքը կփչացնէ. զօրաց շարժումն արևելքից մինչև արևմուտք. մարդիկ կապաւինին քարաժայռերի այրերը։ Ոչխարաց մահ, առաջնորդաց կորուստ, բոլոր երկրում մեղրը սակաւ, առհասարակ, մարդկանց առողջութիւն, գնացք կարկտի, հիւսիսից քամի, պտղոց պակասութիւն ու տեղ տեղ Թրթուր։ Ձմեռը ցամաք, ցորեն և գինի շատ։ Արևելքում սով. խաչի ամսից ի վեր, դաշտերը պտուղ չեն բերել, վաստակը լեռներում. այգիները միջակ կլինին։

—

Ձուկն երբ տանուտէր լինի, գարունը միջակ, կըտուր, անձրև ու վարարումն գետոց. ցորենի և պտղոց առատութիւն, մեղրը սակաւ և տեղ տեղ պատերազմներ։ Մահտարաժամ ոչխարների ու սաստիկ փորացաւ։ Ծովերը կշարժին, լեռները կպարարտանան, մորեխն ու Թրթուր պարսից երկիրը կփչացնէ. արևելքում խա-

ղազութիւն, Հռոմայ երկրում պատերազմներ։ Ամառն անձրևային, հունձը լաւ կհասնի, մեծերին մահ, ազգերի իրար հետ խառնակումն։ Աշնանը շատ անձրևներ, խաչի ամսի ցանածը. լաւ կլինի, տեղ տեղ ձիւն։ Հասարակ ձմռան հարաւը կշարժի, անձրև կգայ և ցուրտ կլինի։ Գինին շատ, բայց ոչ ամէն տեղ. բերքը միջակ, ձմռան միջի ամսի 10-ը կամ 15-ին, եզներին, լաւ, տղաներին մահ։

---

Ի վերայ եօթն մոլորակած, հանդերձ Կաղանդացուցիւ եւ ծանօթութիւնք վասն իւրաքանչիւր աւուր ծնեալ անձանց.

## ԱՐԵԳԱԿ

Արեգակն է ինչպէս թագաւոր և ուղևորիչ մոլար աստղերի, որովհետև ուրիշներից աւելի ազդողականութիւն ունի, արեգակի օրը կիրակին է, ցերեկուայ կամ գիշերուայ առաջին ժամին։ Կաղանդն եթէ կիրակին հանդիպի, ձմեռը սաստիկ ցուրտ կլինի, գարունը բարեխառն։ Ամառը չոր և սակաւակութ, աշունը հողմային։ Բերքը՝ գարին, ցորենը, գինին, ձէթը, մեղրը, ոչխարը և մեծ կենդանիքը առատ։ Այլ և կլինի վայրախօսութիւն աղնւականաց մէջ, քուռթիւն մեծերի դէմ. մահ, տղաների և մանկամարդերի։ Արեգակի իշխանութեան տակ ծնածը կլինի մսոտ, կարմրագոյն, լայնաճակատ, բարակունք, սիրուն աչեայ, յարմարաքիթ, միջակաբերան, միջակաշուրթ, գեղածնօտ և շատ գեղեցիկ. բնութիւնը, ծանր, համեստ, առատաձիրտ, խորախոհ, պատուասէր, քաղցրախօս, Աստուածասէր և բարի։

## ԼՈՍԻՆ

Լուսինն ունի զանազան արարք. մանաւանդ աճելուն և նուազելուն։ Աճելու ժամանակ յաջողակ է կենդանիներ կրտելը, արմտիք հաւաքելը, ամուսնա-



ցելոց զուգակցիլը. և ուրիշ սրանց նման առնելու և անելու բաները. իսկ լրման ժամանակ օգտակար է սպիտանի։ Լուսնի օրն ցերեկուայ և գիշերուայ առաջին ժամն է, կաղանդն եթէ երկուշաբթի հանդիպի. ձմեռը կլինի բարեխառն, գարունը գովական, ամառը միջակ ու աղնիւ, աշունը շատ խոնաւ, ջրերը բնաւ չեն պակասի. ցորենի պակասութիւն. իսկ ուրիշ սերմերի առատութիւն. գինին և ձէթը միջակ. անասնոց սաստիկ նուազութիւն. մարդկանց հիւանդութիւն, մեծերի մէջ պառակտումն, կանանց արգանդացաւ, մետաքսի և մեղրի պակասութիւն։ Լուսնի իշխանութեան տակ ծնածը կլինի սպիտակամարմին, մաղասոտ, նեղածնօտ, բոլորադէմ, ատամնայարմար, միջակաչեայ, քնափ, փոքրաբերան, գաղտերակ, հաստաթիկունք, երկայնաբազուկ, յարմարաշարժ, սպիտակամազ, լայնաճակատ, նստաքիթ, բացերես, փոփոխական, դիւրահաւանդ, երկրասէր, ջրասէր ու վախաշոտ։

## ՀՐԱՏ

Հրատը զանազան փոթորիկներ է պատճառում, սառնամանիք, ալէկոծութիւններ, և ուրիշ օդային պղտորութիւններ, երբեմն սաստիկ ջերմութիւններ, ծանր հիւանդութիւններ, մարդկանց շարժումն, խռովութիւն վիճաբանութիւն, ապստամբութիւն, արիւնհեղութիւն և ուրիշ տեսակ տեսակ թշնամութիւններ։ Հրատի օրն է երեքշաբթի, ցերեկուայ երեկոյեան առաջին ժամը, կաղանդն եթէ երեքշաբթի հանդիպի, ձմեռը կլինի ցուրտ, անձրև. խաւար և շատ ձիւն, գարունը գէճ, ամառը ջերմ. աշունը չոր։ Այս տարի կլինի ալէկոծութիւն. նաւաբեկութիւն, ցորենի նուազութիւն, և ուրիշ արմտեաց, մեղրի, ձէթի, և մրգերի միջակութիւն, մաշ և հունդ սերմերի առատութիւն, գինու պակասութիւն, մանր կենդանեաց մահ. այլև իգականաց աւելի հիւան-

ղութիւն և մահ, քան արականաց, այլև մահ ազնուականաց: Հրատի իշխանութեան տակ ծնածը կլինի թխամարմին, կարմրատես, ոլոր և փոքրամազ, հրաչեայ, և մեծապինչ, սակաւամօրուք, և անյարմարատամն. Բնութիւնը սրտմտող, չարաբարոյ, չարահնար, չարախնդաց, լեզւագար, կամապաշտ, թերահաւատ, արիւնարբու, անբարտաւան. իգամոլ, խաբեբայ, սուտ երդւող, անգութ, յափշտակող, խաղաղութեան թշնամի և անյագ վնասակար:

## Փ Ա Յ Լ Ա Ծ Ո Ւ

Փայլածուն փոփոխական և երկարուն է, բարւոյ հետ բարի, չարի հետ չար. օրը՝ չորեքշաբթի առաւօտեան կամ երեկոյեան առաջին ժամը: Կաղանդն եթէ չորեքշաբթի հանդիպի՝ ձմեռը կլինի դժւար՝ բայց ոչ սաստիկ ցուրտ. գարունը գէճ՝ և ոչ զովելի, ամառը լաւ, ջերմ ու ազնիւ: Ցորենը միջակ. ուրիշ հունտերը, գինին, ձէթը, մեղրը առատ, բայց տեղ տեղ ռոճիկների սակաւութիւն: Այնպէս է երևում, աշնանը գլխաւոր մարդկանց կլինի մահ, խելառութիւն, կողոպտութիւն, գլխացաւութիւն, վիժածք, և նոր համբաւ: Փայլածւի իշխանութեան տակ ծնածը կլինի մաղասամակարդ, ծանր և փափկամարմին, ունայնախոհ, երկրաւէր. քաղցրախօս, յօժարածիծաղ, մարդելոյզ, հպարտստասաց, խորամանկ, նեղաճակատ, երկայնունք սևաչեայ, յարմարադէմ. յարմարածնօտ, և սև զգեստներ սիրող, նեղաքիթ հաստաշուրթ:

## Լ Ո Ւ Ս Ն Թ Ա Գ

Լուսնթագը պատճառում է բարեկամութիւն, խաղաղութիւն, հանդարտութիւն և ջերմեռանդութիւն, մանաւանդ մանուկ հասակի: Իշխում է խոհեմ, համեստամօթխած, ներհուն, ազատաբարոյ զւարճամիտ և բա-



րեպաշտ անձանց վրայ: Լուսնթագի օրն է հինգշաբթի առաւօտեան կամ երեկոյեան առաջին ժամ: Կաղանդն եթէ հինգշաբաթի հանդիպի, ձմեռը կլինի անուշ, գարունը քամոտ, ամառը ցանկալի, աշունն անձրևային: Առատութիւն ցորենի, ռոճկի, մրգերի, արմըտեաց, գինու և ձէթի: Լուսնթագի իշխանութեան տակ ծնածը կլինի գեղեցկահասակ, կարմրախայտ, փափկամիս, հաստերակ, բարեձև. միջակամատնեայ, գորշահեր, մեծաճակատ, մեծաբերան, մեծակոկորդ, հաստաքիթ, սևաչեայ, ատամախիտ, լայնածնօտ, լայնակուրծք և լայնաթիկունք. Բնութիւնը՝ հանդարտ, համեստակենցաղ, բարեհաճոյ, անպատիր, հաւատարիմ, ժուժկալ և ամէն հանճարի և բարիքի ընդունակ:

## Լ Ո Ւ Ս Ա Բ Ե Ր

Լուսաբերը՝ այն է գիշերավարը, իշխում է կանանց երեխայից, երաժշտաց, բարեբախտ և զարդարուն անձանց վրայ: Լուսաբերի օրն է ուրբաթ առաւօտեան կամ երեկոյեան առաջին ժամը: Կաղանդն եթէ ուրբաթ հանդիպի՝ ջրերը չեն պակասի. ձմեռը ծանր, սաստիկ դառն ցուրտ, գարունը քամոտ. ամառը՝ գէճ և անուշ, աշունը մասամբ չոր, մասամբ հողմակոծ և անձրևային: Ապրուստը առատ՝ թէև ծանրագին, կութը շատ և լաւ. կերևի աչացաւութեան նշան. ծանր՝ տագնապ մեծանուն և պատուական անձանց. աշխարհի այլևայլ կողմերում տարաձայնութիւն, և տեղ տեղ գետնաշարժութիւն: Լուսաբերի իշխանութեան տակ ծնածը կլինի բարձրահասակ, զւարճերես, աչեղ, ծիծաղադէմ, հերատարած, և արծւաքիթ: Բնութիւնը՝ ճարտարաբան, խոհեմ, գթոտ, սիրելի, համեղախօս, զբօսասէր, իգասէր և տափածու:

—

## ԵՐԵԽԱԿ

Երեւակը պատճառում է ջանք և աշխատանք, սով մահ, նեղութիւն, աւերածութիւն և այս տեսակ թշւառութիւններ։ Իշխում է ծերոց, անկելոց և առանձնացելոց, զօշաքաղ, վաշխակեր, կախարդ, գծուծ և մտախոհ անձանց վերայ։ Երեւակի օրն է շաբաթ առաւօտեան կամ երեկոյեան առաջին ժամը։ Կաղանդն եթէ շաբաթ հանդիպի՝ կլինի չորութիւն, և սղութիւն, ձմեռը՝ երկար, քամոտ, ցուրտ և սակաւ անձրեւային. գարունը շատ անձրև, ամառը՝ գէճ, աշունը չոր և հով բազմատեսակ ամուսնութիւն, հին տների կործանում, երեք և չորեքօրեայ տենդ, մահ ծերոց, անկելոց, ոչխարաց, և շերամի որդանց։ Երեւակի իշխանութեան տակ ծնածը կլինի սեւամազ, թխադէմ. մեծակզակ, մազոտ, հաստաշրթն, ջլոտ և նեղակուրծք. բնութիւնը՝ ագահ, խորախոհ, մտայոյզ, ծանրաշարժ, նենգժոտ, բղջախոհ, առանձնակեաց և սև շորեր սիրող։

---

### Ցաղագս ժամուց տւնջեան եւ գիշերոյ

Յունուար ամսի օրն 10 ժամ է, իսկ գիշեր 14
Փետրուարի օրն 11 ժամ. գիշեր 13
Մարտի օրն 12 ժամ, գիշեր 12
Ապրիլի օրն 13 ժամ, գիշեր 11
Մայիսի օրն 14 ժամ, գիշեր 10
Յունիսի օրն 15 ժամ, գիշեր 9
Յուլիսի օրն 14 ժամ, գիշեր 10
Օգոստոսի օրն 13 ժամ, գիշեր 11
Սեպտեմբերի օրն 12 ժամ, գիշեր 12
Հոկտեմբերի օրն 11 ժամ, գիշեր 13
Նոյեմբերի օրն 10 ժամ, գիշեր 14
Դեկտեմբերի օրն 9 ժամ, գիշերն 15



Բայց պէտք է ասել՝ որ ոչ ամեն տեղի համար է այս կարգ, այլ երկրի, ատրճանի, բարձրութեան և ցածութեան համեմատ էլ լինում են օր ու գիշերւայ երկարութիւններ։

---

### Ցաղագս նշանակութեանց բազմադիմի ներգործութեանց, որոք պատահին իւրաքանչիւր աւուր յընթացս երկոտասան ամսոց տարւոյն

Յունւար՝ Հռոմայեցւոց, Արաց՝ Հայոց, Ջիլգատէ, Տաճկաց. Սէբաթ՝ Եբրայեցւոց, լեզուներով կոչւում է այս ամիսը, այս ամսին մարդու խուլը (պաղլամը) կաւելանայ. ստամոքսը կերակրից կթուլանայ. այս պատճառով առաւօտները տաք ջուր խմելը լաւ է, կերակուրները՝ պարարտ միս, լաւ ձուկն, անուշեղէն և քաղցրահամ գինի։ Պէտք է քիչ ուտել. սառը կերակրներից և սառը ջրից հեռու մնալ, մանաւանդ երեկոյեան բաց մըսալուց՝ ցաւ կբերէ. պէտք է զգուշանալ արիւն առնելուց, բաղանիք գնալուց, գլուխը լւանալուց. դեղեր խմելուց, գիշերը դուրս մնալուց. քաղցած մնալը վընաս չի տայ։

---

Յունւարի 1, այսօր Հռոմէացւոց տարեմուտ է։ 2, 3, Խոյի համաստեղութիւնը կերևի։ 4, 5. ձմեռ եղանակի կէսն է։ 6, 7, Այսօր մի ժամ կայ՝ որի մէջ դառը ջրերը կքաղցրանան, ծովերը կխառնւին։ 8, 9. Այսօր ինչ և իցէ գործք սկսելը լաւ է։ 10, Եղանակն ու օդը անհաստատ է։ 11, Պարզ և սառ։ 12, 13, 14 Ծովերը կալէկոծին։ 15, Ձմեռը կսաստկանայ։ 16, 17, 18 Հիւսիսային քամիները կսաստկանան։ 19, 20 Աւրը ռապային է, 40 օրն կատարի, ծովերը կշարժին։ 21, 22, 23, 24 սկիզբն է 50 օրւայ, որ այլազգիները խըթիտային խամսին են ասում, և արևը կմտնի Ջրհոսը։

25, 26 Այսօր ծովերը 3 օր կշարժին: 27, 28 լուսինը խըլըէրի հետ իմիասին կընթանայ: 29, 30, այսօր ձըկները ըներից դուրս կգան, 31, օդը կմրրկախառնի:

—

Փետրուար՝ Հռոմ. Մեհեկի՝ Հայ. Զիլհիճճէ Տաճկ. Աթար՝ Եբրա: Այս ամսին խառնակ քամիներ կփչեն. ձիւնն և անձրևը կշատանան, ջուրը կսկսի բարձրանալ ծառերի ճիւղերը: Այս ամսին կերակրները՝ չոր միս, չոր միրգ, և զանազան թռչուններ, տապակած հաւեղենների վերայ՝ սխտոր գործածելը լաւ է, մանաւանդ խաշուն, կարմիր տաքտեղով՝ բայց չափաւորապէս, թոյլ մարդկանց օգտակար է մաճուն՝ որ գլխի ցաւը և ցուրտը բժշկէ, ջրով եփած միսը աւելի լաւ է՝ քան խորոված: Պէտք է քիչ ուտել, որովհետև արիւնն աւելանում է, իսկ հին արիւնը երակներումը նրբանում է, Պէտք է զգուշանալ երկար սոված մնալուց, շուտ շուտ բաղանիք գնալուց, արիւն հանելուց, աղի ուտելուց և ցուրտ տեղեր քնելուց:

—

Փետրվարի 1, 2, 3, մինչև 3 օր անձրև կլինի, կամ եղանակն ամպոտ, և անձրև գալը առատութիւն ցոյց կտայ: 4, 5 Նօտոսը կփչէ, մրրիկ և որոտումն: 6, այսօր ջուրը կսկսի ծառը բարձրանալ: 7. 8, Այսօր արևի ջերմութիւնն օդը կիջնի, ծառերը կոկոնիլ կսկսին: 9, 10, 11, բարի է՝ ծովերը 3 օր կը խառնակին: 12, 13, Այսօրւանից ցուրտը կսկսի պակասիլ: 14, Այսօր արևի ջերմութիւնը կիջնի ջուրը: 15, 16, 17, 18 Արագիլը կգայ, ցուրտ, ծովերն 3 օր կխառնուին: 19, 20, Ըստ ոմանց, արագիլը այսօր կգայ: 21, 22, 23 Արևը կմտնի ձուկ կենդա. արևի ջերմութիւնը կիջնի հողը, մանր թռչունները և մժեղները դուրս կգան: 24, 25, Այսօրւանից լերը կերևին: 26, 27, ինչև 7 օր ցուրտ, որին պէրտիւլ աճիւզ են ասում, այսինքն պառաւի ցուրտ: 28, 29 ծիծեռնակները կդառնան մեր կողմերը:



Մարտ՝ Հռոմ. Արեգ՝ Հայոց. Մուհարրէմ՝ Տաճկ. Նիսան՝ Եբրա. լեզուներով կոչւում է այս ամիսը: Այս ամսին երկիրը կզարթնի, մարդկանց պալղամը կսկսի նւազիլ, դեղ խմելն օգտակար է լեղին մաքրելու համար, բայց պէտք չէ արիւն հանելը և զօրեղ օշարակ խմելը, օգուտ է խոտերի ջրով լուացւելը: Այս ամսի կերակուրները պէտք է լինին, նուրբ միս, բարեխառն ըմպելիք, քաղցր ուտելիք և թերախորով ձու: Եւ որովհետև այս ամսին միշտ մեծ պահքն է հանդիպում, ուստի պէտք է անեփ պրասից, սոխից, սխտորից և պողպայից զգուշանալ, կվնասեն. քիչ ուտելը օգտակար է այս ժամանակ կպատահի աչքացաւութիւն, փորացաւութիւն և արեան խառնումն:

—

Մարտի 1, 2, Այսօւանից մարդու քունը կաւելանայ, մինչ 7 օր ծառերը կպատւաստին. 3, ցուրտ և քամի: 4, 5 Այսօր պէրտիւլ աճիւզին վերջն է, քարքարը կգնայ Հռոմոց երկիրը: 6, 7, Մըջիւնը դուրս կգայ: 8, 9, 10: Քամի և անձրև: 11, 12, 13 Վերջն 50 աւուր ձմռան, որին օտար ազգերը Նեվրուզ են կոչում և Լատինաց գարնանամուտ: 14 Ալէկոծութիւն 3 օր: 15, 16, այսօր զեռունները դուրս կգան: 17, 17 Սայտ է, սերկևիլ տնկելն լաւ է: 19. Նաւերը կճանապարհորդին: 20. Այսօր Հայոց գարնանամուտ է: 21, Այսօր արևը կմտնի Խոյն կենդա: 22, Պիւլպիւլը կսկսի խօսիլ: 23, 24, Այսօրւայ պէս կլինի 30 օր: 25, 26, Այսօր ծովերը կսկսին շարժել, և ծիծեռնակը կգայ: 27, Այսօրւանից կարելի է դեղ խմել: 28, 29, Արաբէ չէմս է, և 3 օր ցուրտ կլինի: 30, 31, Անձրևային օրեր:

—

Ապրիլ՝ Հռոմ. Ահեկի՝ Հայոց. Սէֆէր Տաճկ. Եառ՝ Եբրա. Այս ամսին մարդ ուրախ և զւարճ կլինի. որովհետև գարնան եղանակը մարդկանց բնութիւնը կզօրա-

ցնէ, առաւօտները քիչ սառը ջուր խմելը օգուտ է։ Ամսիս կերակրները պէտք է լինին եղջերւի միս, քաղցրեղէն, գառներ, թթու կերակուրներ։ Պէտք է հեռու կենալ աղի բանից, բողկից, ամեն տեսակ դառն և կծու խոտերից։ Արիւն հանելը, դեղ գործածելը, անուշ իւղերով օծւելը, երբեմնապէս բաղանիք գնալը առողջարար է։ Արևելեան քաղցր քամիները կսկսին փչել։

—

Ապրիլի 1, Այսօր կարիճը կցածրանայ. 2. Երեք օր քամի՛ 3, 4, Օդը ամէն տեղ մառախլապատ կլինի։ 5, 6, Հարաւային քամի և անձրև։ 7, 8, 9, 10։ Եթէ այսօր անձրև լինի թէև սակաւ՝ առատութեան նշան է եթէ չլինի՝ տարին չոր կլինի։ 11, 12, 13, 14 15, Այս երկու օրը շատ լաւ է, և ամէն բան և գործ բարի և յաջող կլինի։ 16, 17, Ջրային քամի և ալէկոծութիւն։ 18, 19, 20, Այսօր Նոյը մտաւ տապանը՝ անհաստատ է։ 21, 22, Արևը կմտնի ցուլ կենդա. 23, 24, 25, Օր՝ ս. Գէորգայ՝ որին օտար ազգերն Խտրելէզ են ասում, մի օր քամի։ 26, 27, 28, Արևելեան քամիները կսկսին փչել, և Նիժպատները կսկսին շնչել։ 29, Գարունը կսկսի զօրանալ։ 30, Նշան է ալէկոծութեան և քամիների։

—

Մայիս՝ Հռոմ. Մարերի՝ Հայ. Րէպիւլ Էվվէլ՝ Տաճ. Սիվան՝ Եբրա. Այս ամսին ջրերը կմաքրւին, քաղցրաշունչ քամիները կփչեն. Զաֆրան կշատանայ և շատ ախտեր կլինին, ուստի չէ հարկաւոր շատ ուտել այլ չափաւոր. որովհետև վերէժ առաջ կգայ, և ով որ շատ ուտէ և ցերեկը քնի ըղխ կլինի։ Կերակրները պէտք է նուրբ և դիւրամարս լինին, գառան գլուխ և ձուկ, բեղէնէ խոտն էլ կերակրեց առաջ օգուտ է։ Հեռ պէտք է լինի եղջերւի մսից, խաշից, աղի բաներից և չքամած մածնից։ որ բոլորովին սաֆրա կլինի։ Արիւն



առնելը, դեղ գործածելը, չափաւորապէս բաղնիք գնալը օգտակար է։

—

Մայիսի 1, 2, Այսօր նահս է, սկիզբն մալթային, և անձրևի գալն դադարի։ 3, Նունենին կսկսի ծաղկել։ 4, 5 ծովերը կխառնւին, 3 օր քամի։ 6, 7. 8, 9 Կարիճի կիսի ցածրանալը նշան է չորս կամ հինգ օր հողմոկոծութեան։ 10, 11, 12, 13, Արևմտեան քամին կը փչէ, երբեմն անձրև։ 14, 15. 16, 17, Գարնան քամիները կդադարին. և այս օրն ինչպէս լինի՝ այնպէս կգնայ երեսուն օր։ 18, 19, 20, 21, 22, Անձրևային քամիները կփչեն։ 23, Արևը կմտնի երկաւոր կենդա. 24, 25, 26։ Ամառանոց գնալու օրեր։ 27, 28, 29, Ջերմութիւնը կսկսի աւելանալ։ 30, 31, Ալէկոծութիւն. այգիները բրելու (փորելու) ժամանակ է.

—

Յունիս՝ Հռոմ. Մարգաց Հայոց. րէպիուլ Ախըր՝ Տաճ. Թամուզ, Եբրա. այս ամսին մարդու արիւնը կիջնի սաֆրան կզօրանայ, փորի ցաւ առաջ կգայ. երբեմն էլ տենդ. ուստի առաւօտներ ջուր խմելը օգուտ է մաղձը կմաքրէ։ Կերակուրներ այս ամսին պէտք է լինին ուլի և հաւի միս, թարմ ձու, որոնք ցուրտ բնութիւն ունին. օգտակար է դդումը և վարունգը, և ջրախառը գինին։ Պէտք է զգուշանալ այն կերակրներից՝ որոնք բնութեամբ ջերմային են, մուշկ և զաֆրան չպէտք է հոտոտել. այլ բարեխառն բնութիւն ունեցող ծաղիկներ։ Այս ամսին չպէտք է հանգիստ մնալ այլ ըստ կարողութեան աշխատել. եթէ ոտքով յաճախ քայլես (ման գաս, շրջիս) շատ մեծ օգուտ կստանաս։

—

Յունիսի 1, 2, Այսօրվանից հիւսիսային քամիները կփչեն։ 3, 4, Կոյսի համաստեղութիւնը կերևի։ 5, 6, Հարաւային քամին կփչէ։ 7, 8, Ծովերը կշար-

ժին, երեք օր ալէկոծութիւն։ 9, 10, 11, Այսօր ինչպէս է, մինչև տարեգլուխն այնպէս կգնայ։ 12. 13, տաքութիւնը կսկսի շատանալ։ 14, 15, 16, Այսօր ինչ սկսեն՝ բարի է, Նիլ գետը կաւելանայ՝ միւս ջրերը կը պակասին։ 17, 18. Հիւսիսային քամիները կփչեն ալէկոծութիւն ծովու։ 19, 20, Այսօր Հայոց ամառնամուտ է։ 21, Արեգ կմտնի Խեցգետինը։ 22, 23, Այսօր սկիզբն սամիէլի փչելու, երեք օր քամի. 24 Յիսնօրեայ տաքութեան սկիզբն է։ 25, 26, Աղէքսանդր Մակեդոնացին այսօր է ծնուել, քամի։ 27, 28, Շուն համաստեղութիւնը կերևի։ 29, 30 Այսօր ամեն բան շատ լաւ է թէ վաճառել, թէ ճանապարհորդել և թէ գնել։

—

Յուլիս՝ Հռոմ. Հրոտից՝ Հայ. Ճեմազիւլ Էվվէլ. տաճ. Արնուն Երրա. այս ամսին ջերմութիւնը կզօրանայ. լուն. մոծակը և մորեխը կշատանան։ Կերակուրներն անցած ամսի պէս պէտք է լինին դիւրամարսելի և թեթև, ուլի և հաւի պարարտ միսը, թարմ խոտեղէն և սառն օշարակներ։ Պէտք է զգուշանալ ջերմ և չոր կերակրներից, պահարեղէնից, որոնք բնութեամբ ջերմային են, խակ մրգից, չքամած մածնից. նաև սոված մնալուց, բաղանիք շուտ շուտ գնալուց, արիւն առնելուց, առանց հարկաւորութեան դեղեր գործածելուց, որովհետև այս ամսին մարդու բնութիւնը թուլանում է ուստի այսպէս բաներից հարկաւոր է զգուշանալ։

—

Յուլիսի 1, 2, Երեկոյեան Կուսի համաստեղութիւնը կերևի։ 3, 4. ջերմ, արևմտեան քամին կիշխէ։ 5, 6, 7 8, Այսօր Ջօհրաեմանի աստղը կծնի, մի օր քամի։ 9, 10, 11, ըստ ոմանց Նոյը այսօր տապանից դուրս եկաւ. 3 օր քամի։ 12, 13, 14, 15, մեծ քամի և ծովերը կխառնուին։ 16, 17, 18, 19, անհաստատ եղանակ և քամիներ։ 20 Այսօր փայտ կտրելու ժամանակ



է։ 21 Արեգ կմտնի Կոյս կենդան։ 22, 23, Ղույեուղ աստղը կսկսի իշխել, 3 օր քամի։ 24, 25, Ձմեռային ցանելը լաւ է։ 26, 27, Խառնակ քամիներ կփչեն։ 29, 30, 31, ըստ ոմանց Ղույեուղ աստղը այսօր կծնի, 3 օր քամի։

—

Օգոստոս՝ Հռոմ. Նաւասարդ՝ Հայ. Ճեմազիլախըր, տաճկ. Իլուլ՝ Երրա. այս ամսին շատ տաք քամիները կաւելանան. տեղ-տեղ սամիէլները կփչեն. մարդկանց կազմուածքը շատ կթուլանան, գրեթէ ամեն գիշեր հիւսիսային քամիները կփչեն. ուստի պէտք չէ մերկ պառկել, բացօդեայ տեղում ձիերն առանց ծածկելու թողնել։ Կերակրները թթու ապուրներ, դդում, ուլի և վառիկի միս, և սառը բնութիւն ունեցող կերակուրներ, մրգեր և ջրալէտ գինիներ։ Պէտք է հեռու մնալ կաղամբից, լուծողական դեղերից, արիւն հանելուց, ծոմ կենալուց, տաքին մօտենալուց, շատ աշխատելուց, անջուր գինի խմելուց և չքամած մածուն ուտելուց։

—

Օգոստոսի 1, 2, 3, Այսօր Եգիպտոսի Նեղոս գետ կաւելանայ, միւս ջրերը կցածրանան։ 4, 5, Սամիէլի վերջն է, այս օրից հիւսիսային քամիները չեն փչել։ 6, 7, ծովերը կխառնուին։ 8, 9, Երբայեցւոց գիրն այսօր գտնուեց։ 10, 11, 12, Այսօր արագիլն կերթայ օտար երկիր։ 13, 14, Նապաստակի և Դլփին ձկան համաստեղութիւնները կերևին, ծովերը կխառնուին։ 15, 16, Այսօր Զօհալ աստղը Հարաւ. Մեքքայումը կծնի։ 17, 18, 19, 20, Այս օրերումը կլինին վնասակար ջերմութիւններ, յետոյ կխաղաղին։ 21, 22, Արեգ կմտնի Կոյս կենդան։ 23, 24, օձը աստղը Շամփուրի հետ կերևի։ 25, 26, Այսօր խաղողը կատարեալ կհասնի։ 27, Այսօր Խոյերը էգ ոչխարներից կհեռացնեն։ 28, Երեք օր քամի։ 29, 30, Տարերքը մարդկանց մէջ կխառնուին

շատ փորձութիւններ կլինին։ 31, Այսօրից կարելի է է դեղ խմել։

—

Սեպտեմբեր՝ Հռոմ. Հոռի՝ Հայ. Րեճէպ տաճկ. Թշրի, Եբրա. այս ամսին ջերմութիւնը կբարեխառնի, սէրը կզօրանայ, գոյնը կզւարթանայ, տեղ տեղ հիւանդութիւն և փայծեղացաւութիւն կլինին, ուստի արիւն առնելը, դեղ խմելը, անուշեղէն ուտելը, քաղցրահոտ հիւթերով օծուելն օգուտ է։ Կերակուրներ, այծի (շիշէկ) միս, չափաւորապէս պահարած. Ջրերի ափին և զբօսատեղերում նստելը օգուտ է, չէ հարկաւոր այծի, նապաստակի և սագի միս ուտել. բաղանիք շուտ շուտ գնալը լաւ չէ.

—

Սեպտեմ. 1. Այսօր նահս է ըստ աստղաբաշխից։ 2, Պատրաստ մնալ հարկաւոր է։ 3, 4, Հարաւային Բերէնիչ աստղը կերևի, որոտումն և անձրև։ 5, 6, Այսօրուանից արիւն առնելը օգտակար է, 7, 8, 9, ծովերը կխառնուին, Այծ աստղը կերևի։ 10, 11, քամի և 10 օր ծովի ալէկոծութիւն։ 12, 13 այսօր Նեղոս գետը կցածրանայ։ 14, 15 բոյսերը և ծառերը աճելուց կը դադարին։ 16, 17, այսօր ամպին շատ նայելն օգուտ է։ 18 Հայոց աշնանամուտ։ 19, 20 Ծառերի ջուրը վայր կդառնայ և տերևները կսկսին վայր գալ։ 21, 22. 23, Այսօր արևը կմտնի Կշիռ կենդան. գիշերն ու ցերեկը կհաւասարի։ 24, երեք օր քամի։ 25, 26, Հրէայք այս օրը շատ են պատւում։ 27։ 28, 29, Արևմտեան քամի նշան երևի անձրևի։ 30, քամի, Այծիկն կտեսնուի։

—

Հոկտեմբեր՝ Հռոմ. Սահմի՝ Հայ. Շաբան՝ տաճկ. Մարսեվան՝ Եբրա. այս ամսին կփչեն խառնիխուռն քամիներ, արևելեան քամին կզօրանայ. ցաւերը կզարթնին մարդկանց մէջ։ Կերակուր այս ամսին պէտք է լինի հորթի-մսից խորովուք, խաշած հաւեր, քաղցր և



թթու նռներ, խնձոր։ Արիւն առնելը և կակուղ դեղեր գործ դնելը լաւ է։ Ծոմ մնալուց, կերակրի վրայ խառը միրգ ուտելուց բաղանիքում շատ նստելուց պէտք է զգուշանալ։ Այս ամսի 15 ին կտրած փայտը ուշ կփտի։

—

Հոկտ. 1, 2, Այսօր արևելեան քամին կփչէ. նահս է։ 3, 4, Այսօր սողունները գետնի մէջը կմտնեն 5, 6, Պսակ համաստեղութիւնը կերևի։ 7, 8, 9, Այծեամ համաստեղութիւնը կերևի, և ծովերը մի օր կը շարժին։ 10, 11, 12, ծովերը կալէկոծին, նահս է։ 13, Զգուշանալ ծովից։ 14. Եղանակն այսուհետև կսկսի ցրտանալ։ 15, 16, Այսօր կտրած փայտը ուշ կփտի։ 17, 18, 19, 20 Հողմային և անձրևային ժամանակ է։ 21, Արևը կմտնի Կարիճը։ 22, 23, 24, Եգիպտացիք այսօր սերմը կցանեն։ Ղասմի օրն է, տօն Դիմիտրիայ վկայի. 26, Այսօր Ձուկերը կթողնին մաքեաց մէջ։ 27 28, 29, Այսօր ծիծեռնակները կերթան ամառանոց։ 30 31, Այսօր թռչունները իրենց բոյն և սողունները գետնի ներսը կմտեն։

═

Նոյեմբեր՝ Հռոմ. Տրէ՝ Հայ. Ռամազան՝ տաճկ. Քասղև Եբրա. այս ամսին ցուրտը կսկսի, մարսողութեան ոյժն կաւելանայ։ Կերակուրներ, պարարտ մսեր ձկներ, հալւա, մեղրաթորմը, առաւօտեան տաք ջուր խմելն օգուտ է առողջութեան և փարատումն բազմատեսակ ցաւերի և հիւանդութեան։ Գիշերը սառը ջուր չխմել, շուտ շուտ բաղանիք չգնալ, դեղ չխմել, արիւն չառնել։

—

Նոյեմ. 1, 2։ Հարաւային քամիների ակիզբն է, ծովերը կխառնուին. նահս է։ 3, 5, կսկսի անձրևել, ծովի ճանապարհորդութիւնը լաւ չէ։ 5, 6, 7, Հայոց Նոյեմբերի 1-ին և Ֆրանկաց 11-ին ինչպէս լինի՝ ձը-

մեռն այնպէս կանցնի։ 8, Ծովերը երկու օր կխառնուին 9, 10. 11 12, Անձրևն ու ջրերը կշատանան, 3 օր քամի։ 13, 14, 15, ծովերը կալէկոծին։ 16, Հիւսիսային քամին կսկսի փչել։ 17, մի օր քամի։ 18, Ջիւլքերն այսօր կընկնին։ 19, 20, Ճանճերը կսկսին սատկել։ 21, Արևը կմտնի Աղեղնաւորը. 22, 23, Այս օրից գիշերը սառը ջուր խմելը շատ վնաս է։ 24, 25, Այսօր ծառերի տերևները վայր կգան բոլորովին. 26, 27, 28 Սառը քամիները կփչեն, ալէկոծութիւն, և անձրև, 29. 30, Ձմեռային սերմեր ցանելու ժամանակ է։

—

Դեկտեմբեր Հռոմ. Քաղոց՝ Հայ. Հեվալ՝ Տաճ. Տէմբէթ, Եբրա. այս ամսին ցուրտը կսկսի սաստկանալ, պաղամը կշատանայ. հազը կյայտնուի մարդկանց մէջ. Այս ամսի կերակուր հարիսա խաշ, խորովուք, շաղգամից և կաղամբից մուրէն, հաւ, վարիկ և ոչխարի գլուխ. Հարկաւոր է զգուշանալ սառը բնութիւն ունեցող կերակրներից, բաղանիք գնալուց, արիւն առնելուց. դեղ խմելուց. սառը ջրից և մրսելուց.

—

Դեկտեմ. 1, 2 Ամպային և պղտոր օրեր։ 3, Սարդերն ու ճանճերը կսատկին։ 4, 5, մեծ քամի։ 6, 7, 8, Աղեղնաւորը կցածրանայ, կարճի կէսը կերևի. 9, 10, 11, Նահս է, քամի հինգ օր։ 12, 13, 14, 15, Սկիզբն 40 օրհայ որին Արաբացիք արպային են կոչում, Տաճիկները զեմհերին։ 17, 18, Այսօր քաղցր ուտելն լաւ է. գլուխ ածիլելը վատ, 18, Հայոց ձմեռնամուտ է։ 19, Հինգ օր քամի։ 20, Ջիւն գալը կսկսի։ 21 Այսօր արևը կմտնի այծեղջիւրն։ 22, 23, 24, Այսօր ջերմութիւնը երկրի ներսը կանցնի։ 25, Եօթն օր քամի։ 26, ցուրտը կսաստկանայ։ 27, Մանրիկ մժեղները կսատկին։ 28, 29. 30, 31 կատարեալ ցուրտ։



## Գուշակումն ի վերայ խաւարման Արեւի եւ աստեղաց

Արևի խաւարումը պատճառում է ծանր ցրտութիւն, իսկ լուսինինը չորութիւն։ Այս խաւարմանց կրկնութեանց՝ հետևում է ապագայ տարիների առերջութիւն (անբերութիւն, ամլութիւն)։ Թէ խաւարման իշխող աստղը Երևակը լինի՝ կհետևին երկար տկարութիւններ աքսորանք, կենդանեաց պակասութիւն. ճլերք, չորաւուր տենդ, ձկների մահ։ գետերի հեղեղներ, պտղոց ապականութիւն, ժանտահարութիւն. և ուրիշ այսպիսի վնասներ։ Սրա նման գուշակիր և միւս իշխող աստղերը։ Թուարողի սև՝ և կապտաշաղ գոյնը՝ Երևակի աբաըքն ունի, սպիտակագոյնը Լուսնթագի կարմրաշաղն Հրատի, դեղնագոյնը Լուսաբերի, իսկ գոյնզգոյնը Փայլածուի։ Աստեղաց խաւարումը, հողային կենդանակերպերում կբերէ առերջութիւն և ցամաքութիւն, ջրայիններում խոնաւութիւն և մահ, օդայիններում, քամի, պատառումն և ժանտ. հրայիններում, հրդեհութիւն, տապ, մահ և պատերազմ։

—

## Գուշակումն գիսաւոր աստեղաց

Գիսաւոր աստղաձևերն ու տտաւորները, պատճառում են ժանտամահ, որովհետև հողի բերք և պտուղն ապականում են, որից առաջ է գալի սով և ժանտամահ։ Այլև կպատճառեն աղմուկ, ապստամբութիւն կռիւ, որովհետև ունին հակում կուասէր Հրատի, երկդէմ Փայլածուի և մարդատեաց Երևակի։ Այլ և կպատճառեն իշխանաց և մեծամեծաց մահ. որովհետև գրգամարմին փափկասունները դիւրաւ կսահին ապականւած օդից։ Այլ և կպատճառեն օրինաց, կարգադրութեանց ու իշխանութեանց յեղափոխութիւն, որովհետև պատերազմներից յետոյ իշխաններն և թագաւորները կփոխուին, յաղթողները յաղթւածների տե-

ղերը բռնելով, կփոփոխեն օրէնքները, իրաւունքները. երբեմն և կրօնը։

—

### Գուշակումն քամիների եւ անձրեւաց

Իմաստնոց խօսքն է «Ձմեռն առանց քամիների չի լինի, իսկ պատերազմն առանց կանանց» քամին ուր որ կամենում է, փչում է, նրա ձայնը լսում ես, բայց չես գիտում, որտեղից է գալի և ուր է գնում. Յովհ. գ. 8.

Հիւսիսային քամին, ցուրտ է և չոր, պարզող, առողջարար, պաշտպան եղծանելեաց, բայց վնասակար ծաղկանց, նորատունկ որթոց և մատաղ տնկոց, սաստիկ ցրտութեանը պատճառով։

Հարաւայինը ջերմ և խոնաւ, տօթահար, ժանտաբեր, լուսաղօտ, վշտագին, վհերոտ, կամ դանդաղ, պատճառ փտած տենդի, կողացաւութեան և թոքի ուռուցման։

Արևմտեանը թաց և բարեխառն, ջրային, անձրևածին և որոտաբեր, տեղ տեղ ամառն օդը կպարզէ, գարնան և ձմռանը անձրև և ձիւն կբերէ։

Արևելեանը, է բարեխառն, տաք, չոր, առողջ, թշնամի փտած ժանգի, մարմնի պաշտպան, իսկ ձմեռնայինը ցուրտ ու սառը կլինի, արևագալին կփչէ, գիշերը կհանդարտի։

Տարեկան քամին՝ (որ տարւայ այս և այն մասին հաստատ փչում է) երկդիմի է՝ ամառային և ձմեռային։

Ամառային տարեկան քամին Շնիկ աստղը դուրս գալուց ութն օր առաջ կսկսի փչել և կտևէ 40 օր. ձմեռնայինը ամառնայինի հակառակն է, փչում է հակառակ ժամանակում։

Երևակը շարժում է արևելեան քամին, Լուսնթագը՝ հիւսիսայինը. Լուսաբերը միջօրեայ. Փայլածուն



ընկերանում է միւսերի հետ։ Արև ու Լուսինը շարժում են արևմտեան քամին։ Երբոր լուսինը Խոյի, Առիւծի և Աղեղնաւորի մէջ լինի քամին կփչէ արևմուտքից և և հիւսիսից։ Երբ Ցուլի, Կուսի և Այծեղջիւրի մէջ լինի կփչէ հարաւից։ Երբ Երկաւորի։ Կշռի և Ջրհոսի մէջ լինի՝ կփչէ արևելից և հիւսիսից, իսկ երբ Խեցգետնի, Կարճի և Ձկան մէջ լինի, կփչէ Հարաւից և Արևմուտքից։

—

### Նշանք գուշակութեան գետնաշարժի.

Գետնաշարժը յառաջ է գալիս գետնի տակի հրահալեաց ժամանակ առ ժամանակ ամենազօրեղ վառւելուց և սաստիկ բորբոքւելուց. շարժը ընդհանրապէս կղզիների մէջ աւելի կլինի՝ քան մայր ցամաքում, ծովեզրեայ տեղերը՝ քան ցամաքի ներսի կողմերը, աւելի այն երկիրներն. որ հասարակածնին մօտ են՝ քան հիւսիսային երկիրները։ Շարժը լինում է՝ խիստ անձրևային տարիներից յետոյ։ շարժից առաջ փոթորիկներ են լինում, հրերևոյթ երկնքի երեսը կրակից բաներ կերևին, կծու գոլորշիներ գետնիցը դուրս կգան, օդը կարմրած և բորբոքւած կերևի. երկինքը սև ու թանձր ամպերով կլցւին։ Գետնի տակից դոռումն կլսուի, կենդանիները նեղացած և տխուր կերևին, թռչունները կգոչեն ու կշարժին, աղբիւրները կդադարին և կպղտորին, ծովը կխօսի, կուռի, կքաշւի, նորից ցամաքը կլցուի, նաւերը նաւահանգստի մէջ իրար կդիպչին, իսկ մեծ ծովի միջի եղած նաւերը՝ յանկարծ մի սաստիկ ցնցումն կիմանան, կարծես թէ քարի կխփւին։

———

## Յաղագս գուշակութեանց տարւոյն իւրաքանչիւր ամսեաց եղանակաց եւ օդոց

Յունուարի առաջին օրն՝ օգոստոսի օդ և եղանակն է ցոյց տալիս. եթէ օդը պարզ և մաքուր լինի՝ առաջիկայ տարին պարարտ կլինի, եթէ արևելեան քամին փչէ՝ անասնոց մահ կլինի, թէ արևմտեան՝ մեծամեծ մարդկանց մահ, թէ հարաւ՝ ռամկաց մահ, և թէ հիւսիս տարին կլինի անբեր, ամուլ և ստերջ: Երկրորդ օրն, ինչպէս որ լինի, այնպէս կլինի սեպտեմբեր ամիսը. այսօր օրն անհաստատ է երևում: Երրորդ օրը կփոփոխի և ցոյց կտայ հոկտեմբեր ամսի բնութիւնը: 4-ը, ցոյց կտայ ձմռան կէսը,-հարաւը կփչէ. անձրև և կգուշակէ նոյեմբեր ամսի եղանակը: 5-ը, ցոյց կտայ դեկտեմբերի որպիսութիւնը. այլև երևում են հողմախառն մրրիկներ: 6 ին, 7-ին, 8-ին, երբեմն արևմուտքը կփչէ: 9-ին հարաւը և անձրև: 10-ին, 11 ին, 12-ին օդը կփոփոխի: 13-ին հողմակածութիւն: 14-ին, 15-ին, 16-ին, 17-ին, հարաւը կփչէ և անձրև: 18-ին, 19-ին ձմռան եղանակ: 20-ին, 21-ին արեգակը Ջրհոսը կմտնի: 22-ին, կամպէ: 23-ից մինչև 27-ը ալէկոծութիւն: 28-ին, 29-ին հարաւը, կփչէ: 30 և 31-ին մրրկախառն օդ:

—

Փետրուարի առաջի օրը կփչեն արևելեան քամիներն, երբեմն հարաւային եղիամով: 2-ին, 3-ին առիւծն ու քնարիկը բոլորովին կցածրանան: Արևմուտը կամ հիւսիսը կփչէ: 4-ին, 5-ին դլփինը Ջրհոսի հետ կցածրանոյ, անձրև, մրրիկ, կայծակ, կփչեն արևմտեան քամիները: 6-ին, 7-ին քամիներ: 8-ին, 9-ին հողմակոծութիւն: 10-ին, 11-ին կփչէ արևմտեան քամին: 12-ին, 13-ին աղեղնաւորը կցածրանայ, քամի. 14 ին, երեկոյեանը ըմպանակ աստղը, քամիներ մինչև 19, 20, 21-ը. արեգակը կմտնի ձուկ կենդանակեր-



պումը երբեմն հողմակոծութիւն, երբեմն հիւսիսը կփչէ մինչև 30 օր: 22 ին կերևի արջի տուտը, օրը ցուրտը, զանազան քամիներ և անձրև: 23-ին սլաք աստղը կերևի, ժամանակ է տնկել վազեր, ձիթենիները. ձնաբեկներ և հուռտեր: 24-ին Ջրհոսը կմնասէ և կանձրևէ: 25-ին արջի տուտը դուրս կգայ, օրն անձրևային 26-ից մինչև ամսի վերջը արևմտեան քամին առատօրէն կը փչէ, որ բարեխառնօրէն գէճ է և ջրային, անձրևածին ու որոտաբեր եղանակի համաձայն:

—

Մարտի առաջի օրը կփչէ հարաւը, երբեմն եղեամով և ձիւնով: 2-ին ճառքաղ աստղը կերևի, հիւսիսային քամիներ կփչեն: 3 ին, 4-ին կփչէ հարաւը, երբեմն արևմուտը, օրն է ցուրտ: 5 ին քնարիկը քամիով կերևի: 6 ին արծիւ աստղը սաստիկ քամիով կցածրանայ: 7-ին արծիւը կանուխ դուրս կգայ: 8-ին, 9-ին այծեղջիւրը կերևի, անձրև և քամի: 10-ին, 11 ին և 12-ին փեգաղ աստղն է, հիւսիսը կփչէ, քամի և անձրև 13-ին հիւսիսային ձուկը կերևի և հիւսիսային քամիները կփչեն: 14 ին նաւագէտ աստղը դուրս կգայ, ծիծեռնակը կպանդխտի, զանազան քամիներ կփչեն, այս ժամանակ այգիները և բուրաստանները կմաքրեն և կպատրաստեն: 15-ին, 16-ին կարիճը կցածրանայ նշան է ալէկոծութեան, արևմտեան քամին կփչէ: 20-ին 21-ին, արեգակը Խոյն կենդանակերպը կմտնի: 22-ին, 23-ին խոյն կսկսի երևիլ, անձրևային օդ, երբեմն կը ձիւնէ, և գարնանային հաւասարակած է, հիւսիսը կփչէ 24-ին, 25-ին ձկները կերևին, ձիւն կգայ: 26-ին հողմակոծութիւն որոտումով, 27-ին, 28 ին կարիճը կցածրանայ, քամի անձրև և որոտ: 29 ին, 30 ին հարաւը կփչէ, անձրև: 31-ին քամի և անձրև:

—

Ապրիլի առաջին օրը Կարիճը կցածրանայ, նշան է ալէկոծութեան, 2-ին, 3-ին օդը մառախլապատ,

վիրջիլեայ աստղերը կանհրեւոյթանան։ 4-ին, 5-ին հարաւը կփչէ։ 6-ին անձրև։ 7-ին արևմուտը հարաւը եղեամով։ 8-ին վիրջիլիայքը կցածրանան և ցուրտ կլինի։ 9-ին, 10-ին, 11-ին հարաւայինները կփչեն. հողմակոծութիւն։ 12-ին ցուրտ։ 13-ին Կշիռը կցածրանայ և կցրտէ։ 14-ին քամի, մրրիկ և ջուր։ 15-ին, 16-ին, 17-ին, 18-ին, 19-ին ջրային։ 20-ին, 21-ին արեգակը կմտնի Ցուլ կենդանակ. գարունը ջրային։ 22-ին վիրջիլայքը կերևին, հարաւային քամիները կը փչեն։ 23-ին քնարիկ աստղը կերևի, նշան է ալէկոծութեան։ 24-ին, 25-ին, 26-ին, 27-ին լաւ օդ։ 28-ին հարաւ և անձրև։ 29-ին Այծիկը կերևի, հարաւը կփչէ և անձրև։ 30-ին երեկոյեան Խեցգետինը կցածրանայ, նշան է ալէկոծութեան, այսօր ձիթենիները և ուրիշ բոյսերը պատւաստելը լաւ է։

—

Մայիսի առաջի և 2 օրը աւում է, թէ արեգակը մտում է մի տեղում. հիւսիսային քամիները կփչեն։ 3-ին Զենտաւը աստղը կերևի, նշան է ալէկոծութեան 4-ին, 5-ին նոյն աստղը գուշակում է անձրև։ 6 և 7-ին Կարիճի կէսը կցածրանայ. նշան է հողմակոծութեան առաւօտուն վիրջիլեայ աստղը դուրս կգայ, արևմտեան քամիները կփչեն, երբեմն կանձրևէ։ 8-ին. 9-ին վերջիլեայքն կցածրանան. արևմտեան քամիները կփչեն, շատ անգամ անձրև։ 11-ին, 12-ին. 13-ին, 14-ին Բընարիկն առաւօտուն դուրս կգայ. նշան է ալէկոծութեան, կաւ և սպասեղէնները սրբելու լաւ ժամանակ է. հնձած խոտերը չորացնելու, և ծառոց ոստերը անկելու։ 15-ին, 16-ին, քնարիկը կրկին առաւօտուն կերևի. հարաւային կամ արևմտեան քամիները կփչեն երբեմն կանձրևէ։ 17-ին, 18-ին, 19-ին, 20-ին, նոյն քամիները կփչեն ջրի մէջը։ 21-ին արևը կմտնի երկւոր կենդանակերպում, հիւսիսայինքամիները կփչեն, երբեմն հարաւայինները ջրի տակ։ 22-ին, 23-ին, 24-



ին Արջի տուտը առաւօտուն կցածրանայ. նշան է ալէկոծութեան։ 25-ին, 26-ին, 27-ին այծիկն առաւօտուն կերևի, հիւսիսայինները կփչեն։ 28-ին հարաւը կփչէ։ 29-ին վերջիլիայքը կերևին։ 30-ին, 31-ին հողմակոծութիւն. լաւ եղանակ է՝ կրկին այգի փորելու, վազերը կտրելու։

—

Յունիսի 1-ին և 2-ին Արծիւ աստղը կերևի. քամի։ 3. 4. 5-ին հարաւային քամիները հիւսիսայիններին հետ կփչեն, անձրև։ 6-ին հիւսիսը կփչէ. անձրև 7-ին արջի տուտը կցածրանայ և արևմտեան քամիները կը տիրեն։ 8-ին գլփին աստղը կսկսի երևիլ։ 9-ին հիւսիս կփչէ, անձրև։ 10-ին երեկոյեան գլփինը կերևի, կփչէ արևմուտը, երբեմն թեթև կանձրևէ. վազեր անկելու և անասուններին արօտ ուղարկելու ժամանակ է։ 11-ին, 12-ին արևմուտքը կփչէ, օդը կխառնէ որոտմունքով։ 13-ին ջերմը կսկսի, գլփինը կերևի։ 14-ին հայկը կերևի (այն է շամփուր)։ 15-ին քամի, հարաւը կփչէ։ 16-ին ալէկոծութիւն, հիւսիսային քամիները կփչեն։ 17-ին արևմտեան կամ հարաւային քամիները։ 18-ին, 19-ին հարաւը և արևմուտը կփչեն։ 20, 21-ին արևը կմտնի Խեցգետինը, ալէկոծութիւն, ամառնային արևակացութիւն է. ցերեկը կսկսի կարճանալ գիշերը երկարել։ 22, 23-ին օձն ու շամփուրն կերևին, նշան է ալէկոծութեան։ 24, 25, 26-ին արևմտեան քամին կփչէ, շոգ։ 27, 28, 29-ին, ալէկոծութիւն. շուն աստղը կերևի, 30-ին արջի տուտը ալէկոծութեամբ կցածրանայ, եթէ յունիսի 24-ին անձրև գայ՝ ընկոյզները կը փտասին, և կհետևի 40 օրեայ անձրև, անձրևները պակասելուն՝ հունձերը կառատանան։

—

Յուլիսի 1, 2, 3-ին արևմուտը կտիրէ և չոր կըլինի։ 4-ին պսակ աստղը առաւօտուն կցածրանայ. 5. 6-ին խեցգետնի կէսը կցածրանայ։ 7-ին, 8-ին այծեղ-

Ջիւրի կէսը կցածրանայ։ 9-ին երեկոյեան ձուկ աստղը կերևի։ 10-ին քամիները կլռլեն։ 11 ին, 12-ին հարաւը կփչէ։ 13-ին, 14-ին հիւսիս և հարաւը կփչեն։ 15-ին Նաւապետ աստղը կերևի, հարաւը և արևմուտը կփչեն հիւսիս։ 16-ին, 17-ին հիւսիսը կզուժէ։ 18-ին արևմուտը կփչէ։ 19-ին անհաստատ քամիներ։ 20-ին արեգակը կմտնի առիւծ կենդանակերպը. արևմուտքը կփչէ։ 22 ին արևմտեան քամիները կփչեն, շնիկ աստղը կլռլէ, որ հներից կոչեցաւ արամազդայ շնիկ աստղը։ 23-ին արծիւը կցածրանայ։ 24-ին փայլածու աստղը առիւծի կրծոց վրայ կերևի, երբեմն ալէկոծութիւն։ 25-ին Ջրհոսը կսկսի ցածրանալ, հարաւը կամ արևմուտքը կփչէ։ 26-ին շնիկ աստղը կերևի, ջերմ եղանակներ։ 27-ին արծիւը կերևի։ 28-ին, 29-ին 30-ին, 31-ին փայլուն աստղերը առիւծի կուրծքին կերևին, առիւծը կցածրանայ. ալէկոծութիւն։

—

Օգոստոսի առաջին օրը տարեկան քամիները կըփչեն. այլ և հիւսիսը։ 2-ին 3-ին հարաւային քամիները կփչեն։ 4-ին, 5-ին առիւծի կէսը կերևի, ալէկոծութիւններ։ 6 ին քնարիկը կերևի, ջերմ։ 7-ին Ջըրհոսի կէսը կցածրանայ։ 8, 9, 10, 11-ին առիւծը կերևի, ջերմ և մռայլ։ 12-ին քնարիկը կցածրանայ քամի 13, 14-ին դլփինը Նապաստակ աստղի հետ կցածրանան. հողմակոծութիւն 15-ին, 16-ին մթապատ օդ։ 17 սկիզբն աշնան։ 18-ին Քնարիկը կցածրանայ, 19-ին դլփինը կխոնարհի, միջակ ջերմ, 20-ին 21-ին արևը կմտնի կոյս կենդան. հողմակոծութիւն։ 22-ին, 23-ին քնարիկը կցածրանայ, պարզ կլինի։ 24-ին վիրջիլեայքն կերևեն, հիւսիսը կփչէ։ 25-ին տարեկան քամիները կփչեն։ 26-ին Դլփինը կերևի։ 27-ին ճռաքաղը կերևի, հարաւը կփչէ, ալէկոծութիւն, Արջի տուտը կցածրանայ։ 28-ին վերջիլեայքն կերևին։ 29-ին Արևմտեան քամին կփչէ։ 30-ին կոյսի ուսերը կերևին և տարե-



կան քամիները կվերջանան։ 31-ին Անդրոմէդա Աստղը կերևի հով։ Յուլիս ամսի 15-ից մինչև այսօր ծառերը կպտղատուին և բոյսերին աղբ կանեն։ Եթէ օգոստոսի 10-ին օդը պարզ լինի գինին առատ կլինի, իսկ 15-ին և 24-ին ինչպէս որ օդը լինի՝ այնպէս կլինի աշունը։

—

Սեպտեմբերի 1 ին օրը ջերմ կլինի։ 2-ին հարաւային Բէրէնիչ աստղը կերևի, ջերմ։ 3-ին անձրև, որոտումով։ 4-ին Արջի տուտը ճռաքաղի հետ կերևի։ 5-ին կլռլեն քամիները, անձրև։ 6-ին Ձուկ աստղը կերևի։ 7-ին Ձուկն ու Արծիւն էլ չեն ծանրանայ. Այկերևի, ալէկոծութիւն։ 8-ին Արջի տուտը կերևի ծիկը կերևի, ալէկոծութիւն։ 8-ին Արջի տուտը կերևի քամի, որոտումն։ 9, 10, 11-ին հարաւը կփչէ, կամ արևմուտքը։ 12-ին, 13-ին Արջի տուտը կերևի, անձրև։ 14-ին ծիծեռնակն ուրիշ երկիր կերթայ։ 15-ին, 16-ին, 17-ին Արջի տուտը կերևի, կփչէ։ հարաւը կամ արևմուտքը։ 18-ին Կոյսի սումպուլը կերևի, արևմուտք կփչէ։ 19-ին Ջկները կերևին։ 20 ին, 21ին արևը կըմտնի Կշիռ կենդանակ. օրերը կհաւասարին, առաւօտ Ըմպանակ աստղը կերևի, աշնանամուտ, անձրև։ 22-ին Խոյն կխոնարհի հարաւ, անձրև, կամ արևմուտքը կը փչէ։ 23-ին Նաւ աստղը կցածրանայ։ 24-ին Կէնտաւուրն, քամի անձրև։ 25-ին Ջուր։ 26-ին, 27-ին Այծեղջիւրը կերևի, արևմուտքը կփչէ։ 28-ին, 29-ին վերջիլեայքն էլ չեն երևի։ 30-ին Այծիկը կերևի, հողմակոծութիւն։

—

Հոկտեմբերի 1-ին օրը քամի, վերջիլեայքը կերևին։ 2 ին նոյնպէս։ 3-ին Կառավարը կխոնարհի և կդառնայ դէպի Արծիւը։ 4 ին անձրևաբեր բազմաստղն կերևի, անձրև. 5-ին Պսակը կերևի։ 6-ին Խոյի կէսը կցածրանայ Կարիճի հետ։ 7-ին Այծմունքն կերևին։

8-ին Պսակի Փայլածու աստղը կերևի, օդը կխառնուի։ 9-ին, 10-ին վերջիլիայքը քամիով կերևին։ 13-ին, 14 Պսակը ամբողջ առաւօտը կերևի, ձմեռային հարաւը կփչէ, անձրև։ 15 ին, 16 ին, 17-ին հողմակոծութիւն, երբեմն անձրև։ 18-ին. 19-ին արևմտեան քամին կփչէ։ 20-ին, 21-ին Արևը կմտնի Կարիճ կենդ. արևը ծագելու ժամանակ վերջիլիայքը կմտնին, ալէկոծութիւն։ 22-ին, Ցուլի տուտը կցածրանայ, հարաւը կփչէ. երբեմն անձրև։ 23-ին Կարիճը կիջնի։ 24 ին, 25 ին վերջիլիայքը Չէնտաւրի հետ կցածրանան առաւօտուն։ 26-ին քամի, ծովի ալէկոծութիւն, Կարիճի ճակատը կերևի։ 27-ին, 28-ին Արջի տուտը քամիով կցածրանայ։ 29 ին Սևադէմ աստղը որ է Կարսխօպէն կծածկուի։ 30-ին, 31-ին Հայկը կամ Շամփուրը կսկսի ցածրանալ. երեկոյեան Քնարիկը կերևի. ալէկոծութիւն։ Լաւ ժամանակ է բոյսերը մաքրել, պտուղատել, ցանել, որթերը ծայրակտուր անել, վարել, տնկել և սորանց նման գործքերը կատարել։ Եթէ այս ամսին ծառոց տերևները վաղ չցցուեն. ձմեռը կլինի ցրտային։ Եթէ ծառոց տերևները ցիրցան լինին, առաջիկայ տարին կլինի ստերջ. և ամուլ կանցնի։ Արևելեան քամին առողջարար է, ջերմ և չոր։ Արևմտեան ցուրտ և խոնաւ։ Հարաւայինը ջերմ, խոնաւ և վնասակար. Հիւսիսայինը միշտ ցուրտ և չոր։

—

Նոյեմբերի 1 ին օրն առաւօտուն վերջիլիայքն Արջի ատի հետ կցածրանան, օդը կխառնուի, անձրև։ 2-ին ցուրտ քամիները կփչեն, անձրև։ 3-ին Քնարիկը կերևի։ 4-ին, 5-ին քամիները կփչեն, անձրև։ 6-ին Արջի տուտը կծածկուի, օդը մառախլապատ։ 7-ին վերջիլիայքն և Հայկը կծածկուին, քամի։ 9-ին օդը կխառնուի, 10-ին սկիզբն ձմրան։ 11-ին վերջիլիայքը կծածկուեն։ 12-ին Կարիճի Փայլածուն աստղը կերևի 13-ին առաւօտուն վերջիլիայքն և Շամփուրը կծած-



կուին։ 14-ին Կարիճը առաւօտուն կցածրանայ։ 15-ին, 16-ին Քնարիկն առաւօտուն կերևի, քամի կփչէ։ 17 ին հողմակոծութեան օր։ 18-ին Հայկը և քնարիկը հողմակոծութեամբ կերևին։ 19-ին ցուլի եղջիւրներն արևն կցածրանան. հողմակոծութիւն։ 20, 21 ին արևը կմտնի աղեղնաւոր կենդա. սաստիկ հողմակոծութիւն։ 22-ին կջրհոսի և կձիւնէ, 23-ին ցուլի եղջիւրը կցածրանայ։ 24-ին Առաւօտուն Շնիկը կծագի։ 25-ին, 26-ին ցուրտ քամիները կփչեն։ 27, 28. 29-ին Շունը կցածրանայ, մառայլապատ օդ, քամի ջուր։ 30-ին Շամփուրը կցածրանայ, քամի, անձրև։ Լաւ ժամանակ է ցանելու, որթերը ջրելու, ջերմ օրերում։ Եթէ գիշերը տաք լինի, շատ լաւ է դաշտումը աշխատել կամ այգումը։ Եթէ Արևն Աղեղնաւորը մտնելուց յետոյ օրոտայ, լեռնային տեղերում կլինի մրգերի առատութիւն, իսկ ձորային տեղերում պակասութիւն։ Ինչպէս որ լինի 14-երդ օրը այնպէս կլինի մարտ ամիսը։ Եթէ նոյեմբերի 11-ին անձրևի կամ ամպէ անհաստատ ձմեռն կհետևի, եթէ պարզ լինի նշան է ցրտութեան. և թէև անձրևից յետոյ ցրտէ օդը կնշանակէ ստերջութիւն ստերջ առ ժամանակեայ ամուլ։

—

Դեկտեմբերի 1-ին օրը կլինի պղտոր, Հայկը առաւօտուն կանհերևութանայ։ 2 ին երեկոյեան Շունը կցածրանայ, քամի։ 3-ին, ալէկոծութիւն. ամպ։ 4, 5-ին քամին կփչէ, անձրև, աղեղնաւորը կցածրանայ։ 6-ին կարիճի կէսը կերևի։ 7, 8 ին, Արծիւը կերևի. կարիճի բոլորը, կրկին քամի, 9, 10, 11-ին առաւօտուն շունը կերևի, չի լինի քամի և մառայլ 12, 13, 14, 15, 16, 17-ին քամին կփչէ, անձրև։ 18-ին երկինքը խաւարապատ, երկու հակառակ քամիներ կը փչեն։ Այծիկը կերևի. 20-ին Արծիւը Այծեղջիւրի հետ կբարձրանան, արևը կմտնի այծեղջիւրը կենդա. ցերեկը կերկարի։ 21. 22-ին քամի, երեկոյեան արծիւը

կերևի։ 23-ին առաւօտուն այծիկը կերևի։ 24-ին Արծիւը կխոնարհի դէպի պսակը հողմակոծութիւն։ 25ին 26 ին առաւօտուն Դլփինը կերևի։ 27-ին ալէկոծութիւն, ցուրտ։ 28 ին. 39-ին, 30-ին Շնիկը կխոնարհի երեկոյեան ալէկոծութիւն 31-ին քամի, ալէկոծութիւն Այս ամսին բոլոր հողմակոծութիւնները կվերջանան, ինչպէս լինի դեկտեմբերի 4-դ օրը այնպէս բոլոր ամիսը կանցնի։ 5-դ օրը կնմանի յունուարին, 6-դ օրը, փետրուարին, այնպէս և միւս օրերն։ Եթէ երկինքն որոտայ քամի կբերէ։ Քրիստոսի ծննդեան կանաչութիւն կգուշակէ զատկին ձիւն, եթէ այս ամսի 24-ին, 25ին, ամպ լինի կնշանակէ ցորենի, գինու և մրգաց առատութիւն իսկ եթէ լինի քամի և անձրև ցոյց կտայ ժանտամահ.

---

## Գուշակումն տարւոյ

Եթէ կամենում ես իմանալ թէ տարին ինչպէս և ինչ է լինելու, միշտ առ ՌՆԽ (1440). Հայոց թւականը վերան աւելացրու դուրս արի 12. 12. մնացորդը թէ 1 միայ՝ սղութիւն է աշխարհի, թէ 2 պատերազմներ կլինի. թէ 3 մահ կգայ սաստիկ. թէ 4 աշխարհիս մէջ խաղաղութիւն կլինի թէ 5 մարախը և գազանները կապականեն երկիրը. թէ 5 աշխարհը գերութիւն կլինի. թէ 7 խաղաղութիւն և շինութիւն կլինի։ Թէ 8 թագաւորներից և իշխաններից սրով մեռնողներ կլինին։ Թէ 9 տարին հիւսիսային կողմումը երաշտ կլինի։ Թէ 10 կարկուտը կփչացնէ երկիրը։ Թէ 11 ամեն բանի առատութիւն կլինի։ Թէ 12, հանգիստ, խաղաղութիւն և ուրախութիւն կլինի ամենին։

Եթէ կամենում ես գիտենալ տարւայ մէջ որ սերմը լաւ, և առատ կբուսնի, յուլիս ամսի 25-ին մի ամանի մէջ լից ամեն տեսակ սերմեր՝ վրան հողով ծածկէ և ջուր ցանէ. դիր տանը մէջ մի յարմարաւոր



տեղ որ բուսնին. մնայ 7 օր, յետոյ գիշերը դուրս դիր առաւօտուն տես՝ սերմերից որ տեսակն է բուսել, և դու այդ տարուայ աշնանը և առաջիկայ գարնանը այն սերմից առատ սերմանէ, չափիցն աւել կօգտուիս.

Եթէ կամենում ես գիտենալ հացի սղութիւնը և կամ լիութիւնը, յուլիս ամսի 18-ին ցորենը կշռէ, և տանը մէջ մինչև 7 օր պահէ, և յետոյ նոյն կշիռով և նոյն չափովը կշռէ պահած ցորենդ, տես, թէ պակասել է հացի պակասութիւն կլինի, թէ աւելացել է հացի առատութիւն կլինի. թէ չէ պակասել և չէ աւելացել. հացի հաւասարութիւն կլինի։

Խաւարումն արևի, արևը՝ եթէ Խոյ կենդանակերպումը խաւարի, թէ սև է, մեծ սով և ամեն բանի պակասութիւն կլինի, Թէ կարմիր է սուր կշարժի և պատերազմներ կլինին. Թէ դեղին է՝ ցաւեր և մահ տարաժամ կլինին։ Եթէ Ցուլ կենդանակերպումը խաւարի թէ սև է, սով կգուշակէ, Կարմիրը. սուր, դեղինը մահ։ Այսպէս պէտք է իմանալ բոլոր կենդանակերպների համար։

Լուսինը, թէ կարմիր և հրագոյն երակ ցոյց տայ խիստ ցուրտ կլինի։ Թէ լուսինը բոլոր օրերումն ունենայ 2 կարմիր բակ. ամպագոյն, սաստիկ անձրև կըգայ. ժանաւանդ լուսնի երակը թէ մութն և սև լինի, անձրևը այնքան սաստիկ կլինի։ Թէ լուսնի հիւսիսային եղջիւրը վեր է, իսկ հարաւային ցածր, որպէս թէ լուսինը դէպի հարաւէ նայում, անձրևի նշան է։ Թէ հարաւայինը հիւսիսայինից վեր է, որպէս թէ հիւսիս է նայում. նշան է պարզութեան։ Իսկ եթէ արևելքի դէմն է դարձեալ պարզ օրերի նշան է։ Թէ լուսնի եղջիւրներն սուր են պարզ է նշանակում. Թէ մթնաշաղ լինի որպէս թէ լուսինը չէ երևում քամի կլինի։ Իսկ թէ մթնաշաղն շարժ ունենայ քամին սաստիկ կլինի։ Թէ եղջիւրներն բաց են, մթնաշաղ ամպ և քամի կըլինի։ Թէ շուրջը մօտին ցօղեր ունենայ, լուսնի օրերը

պարզ կլինին։ Թէ յատակը և պարզ ծագէ ջերմ կլինի։

Երբոր արևելքից ամպ գայ անձրև կլինի։ Երբ երեկոյեանը երկինքը կարմրի, պարզ օրեր կլինին։ Երբ երկինքն առաւօտուն կարմրի, անձրև կլինի։ Թէ արեը ծագելու ժամանակ մթնագոյն լինի, և ճառագայթները կայծակնանշոյլներ ունենան, խստաշունչ օդ է գուշակում։ Թէ նոյն կերպարանքի մէջ մնայ, մըթնութիւնը չմաքրուի, օդն աւելի պղտորի ամպն աւելի և աւելի շատանայ, երկար անձրևի նշան է։ Երբ արեն ամպերի մէջ մտնի և դուրս գայ և ջերմ լինի նշան է օդի խոնաւութեան։ Ձմրանը երբ լուսամուտի ապակիները քրտնին և դուրսը շամանդաղ լինի անձրևի նշան է իսկ եթէ չոր լինին, պարզութեան նշան է։ Երբ արևմտեան կողմը երեկոյեանը ամպ մնայ մինչև առաւօտ՝ անձրևի նշան է։ Երբ գարնան հասարակածն փոխի և առաջին օրը անձրև գայ. առ և տես թէ ջուրը քաղցրահամ է՝ տարին բարի կգայ, թէ աղտաղտուկ (շոր) տարին վատ կգայ։ Երբ Խոյի 8-ին երկնքումը նշան երևի ցոլացումն և կամ աստղի անցումն մեծ ցասում կգայ։ Երբ գարնանը եղանակը փոխուի ամպ և ջերմ լինի, գարունը բարի և անձրևաշատ կլինի. Թէ ցուրտ, դառն օրեր կլինին. Թէ պարզ և շամանդաղ ամառը տաք և աշունը ցաւոտ կլինին։ Երբ արեը Խոյ կենդանակերպը մտնի և առաւօտուն ձիւն գայ տասն օրից յետոյ կրկին կգայ։ Եւ երբ շուտով ջերմանայ, բարի կլինի, Թէ ցուրտ լինի, խիստ օրեր կնշանակէ։ Երբ հարաւային քամին փչէ, գարունը և ամառ կլինի քաղցր օդ, լաւ վաստակ և քիչ խոտ։ Թէ ամսի երկրորդ օրը պարզ լինի, ամառը չոր կլինի, հացի սակաւութիւն և պտուղների նուազութիւն Թէ ամսի երկրորդ օրը ամպ լինի ամառը քաղցր կլինի, աշխատանքը լաւ իսկ պտուղները միջակ։ Ամսի չորրորդ օրը Թէ բազմաստեղը գնդակ տեսնես, Պարսից զօրացը մեծ շարժում կլինի, Թէ ճապաղ, Պարսից նը-



ւազութիւն կլինի, իսկ Հայոց բարձրութիւնը։ Թէ հինգերորդ օրը, լուսինը մթնագոյն տեսնես այն օրերն խիստ կլինին։ Երբ արևն դարձած տեսնես, շատ պատերազմներ կլինին և Պարսիկները կշատանան և կզօրանան։ Երբ Կոյս կենդանակերպի տասներորդ օրը լինի և օրն ամպոտ, մահ կնշանակէ։ Երբ Կշիռը կենդանակերպի օրերում լուսինը 12 լինի և որոտումն. տղայոց և գազանաց մահ կլինի, այլև հացի և պտղոց նուազութիւն և տարուայ վերջին օրերումը շները կը կատաղին։ Թէ լուսնի 25-ին որոտում լինի, անձրև և կարկուտ կլինի և արեգակի խաւարումն։ Երբ Կշիռ կենդանակերպի մտնելուն, ամպ և անձրև լինի, նշան է պարզութեան։ Եւ եթէ միայն ամպ, ցամաք և ցուրտ երկար։ Իսկ կենդանակերպից դուրս գալուն, շատ անձրև կգայ։ Երբ Աղեղնաւոր կենդանակերպի 14 օրը լուսինը բակ առնէ, չորս օրից յետոյ կլինի ցուրտ և շատ ձիւն, և 3 օրից յետոյ էլ քամի կփչէ սաստիկ ձիւնով։ Երբ ձմեռնամուտ լինի, և օրն ամպ, այն տարին բարի կլինի։ Թէ պարզ գայ, տարին երաշտ և սով կլինի։ Թէ երկրորդ օրը արևելեան քամի փչէ, ամառն բարի կլինի և առողջ։ Երրորդ օրը երբ արեը խանձեալ տեսնես, մեծ խռովութիւն և մորեխ կլինի։ Եթէ չորրորդ օրը ջերմ լինի, տարին բարի կլինի, Թէ ցուրտ և ամպ, տարին վատ կգայ։ Երբ Ջրհոսը 29 լինի և օրն ամպ, 2 օրից յետոյ սաստիկ ձիւնով քամի կփչէ և շատ անձրև կգայ։ Երբ Ձուկը 12 լինի. և արևելքից քամի փչէ, խիստ պարզ կլինի, և սերմեղէնքը կախալին օր առաջ կծլին։

Երբոր արևելքից աստղը ցոլանայ արևմուտք։ Պարսից և Յունաց Թագաւորները կպատերազմին, Անդրէաս իմաստասէրն այսպէս է ասում. Թէ արևելքից դէպի արևմուտք ցոլանայ, բարկութիւն է նշանակում բայց տարին յետոյ բարի կլինի։ Եթէ հիւսիսից հարաւ ցոլանայ, Թագաւորաց շարժումն է։ Եւ Թէ արև-

մտից արևելք ցոլանայ և նրա շառաւիղները բաժանուին աջ և ձախ, որ կողմն և գնայ մեծ յաջողումն կը գայ։

Օրւայ ժամերը։ Կիրակի, առաջին ժամը Արեգակինն է, արու է. բարի է ամեն գործերի. առնել, գընել վաճառել, մեծի մօտ գնալ, բան խնդրել, ճանապարհ գնալ։ Բ. ժամը Լուսաբերինն է, բարի է ամեն բանի, ինչ վերաբերում է կանանց, նոր ձևել, նոր հագնել, ճանապարհ գնալ։ Գ. ժամը Փայլածուինն է, չար է, ճանապարհ գնալ, գիրք կարդալ, ուսանել, իմաստնոց հետ զրոյց անել, ասել, խօսել, գնել, վաճառել, մանուկ ուսման տալ։ Դ. ժամը լուսինն է, էգ է, բարի է ամեն բանի, գնել, վաճառել, ճանապարհ գընալ, անասուն գնել, նաւ նստել, նոր ձևել՝ նոր հագնել։ Ե. ժամը Երևակինն է, արու է և չար ամեն բանի, հիւանդացողը դժուար կապրի։ Զ. ժամը Լուսընթագինն է, բոլորովին բարի է։ Է. ժամը Հրատինն է, արու է, վատ է և չար։ Ը. ժամը դարձեալ Արեգակինն է, պատրաստ կաց զրոյցներից, աղօթէ որ չարն անցնի։ Թ. ժամը Լուսաբերինն է, բարի է կանանցից որևէ բան խնդրել. ուտել, խմել և ուրախանալ։ Ժ. ժամը Փայլածուինն է, բարի է։ ԺԱ. ժամը Լուսինն է բարի է, ճառել, քարոզել։ ԺԲ. ժամը Երևակին է, չար է։ Երկուշաբթի. Ա. ժամ լուսինն է, բարի է. բայց գաղտ բան չխօսես և չանես վատ է։ Բ. ժամը Երևակինն է, չար է. Գ. ժամը Լուսնթագինն է, բարի է ամեն բանի։ Դ. ժամը Հրատինն է, չար է։ Ե. ժամը Արևինն է, բարի է ամեն բանի։ Զ. ժամը Լուսաբերինն է, բարի է կանանց խորհրդի, հարսանիք անել։ Է. ժամը Փայլածուին է, չար է։ Ը. ժամը Լուսնինն է, բարի է։ Թ. ժամը Երևակինն է, չար է, երակ մի առնել, կնոջ հետ մի խօսի։ Ժ. ժամը Լուսնթագին է, բարի է բան խնդրելը հոգևորականից։ ԺԱ. ժամը Հրատին է, բարի է, զէնք գնել, սրի և երկաթի լաւ է,



բայց պատրաստ մնալ հարկաւոր է։ ԺԲ. ժամը Արևինն է, բարի է։ Երեքշաբթի ա. ժամը Հրատինն է, չար է։ Բ. ժամը Արևինն է, բարի է։ Գ. ժամը Լուսաբերինն է, ամեն բանի բարի է։ Դ. ժամը Փայլածուինն է, բարի է, կարդալ գրել, մեծից զգոյշ կենալ. Ե. ժամը Լուսնին է, բարի է, ճանապարհ գնալ, աղօթել և վաճառել։ Զ. Երևակինն է, չար է, երակ չառնել, նոր չը կարել, նոր չհագնել, ճանապարհ չգնալ, աղօթել Աստուծոյ։ Է. ժամը Լուսնթագինն է, բարի է աղօթել Աստուծոյ, զաւակ խնդրել։ Ը. ժամը Հրատինն է, չար է, այդ ժամը աղօթքով անցրու. Թ. ժամը Արեգակինն է, բարի է, ինչ կամենաս արա կյաջողի բայց աղմուկից պատրաստ կաց։ Ժ. ժամը Լուսաբերինն է, բարի, է, ինչ կամենաս արա. ԺԱ. ժամը Փայլածուին է, պատրաստ կաց, աղօթքով անցրու։ ԺԲ. ժամը Լուսնինն է, չար է։ Չորեքշաբթի Ա. ժամը Փայլածուինն է, չար է, բայց կարդալ, գրել և ուսանելը լաւ է։ Բ. ժամը Լուսնինն է, շնորհաւոր է, վաճառել, տնկել, որսալ։ Գ. ժամը Երևակինն է։ Դ. ժամը Լուսնինն է, բարի է։ Ե. ժամը Հրատինն է. պատրաստ կաց գազանից, մանաւանդ արջից, կնոջ հետ չխօսել. Զ. ժամը Արևինն է, ճանապարհորդելը լաւ է։ Է. ժամը Լուսաբերինն է, բոլորը լաւ է։ Ը. ժամը Փայլածուինն է, բարի է։ Թ. ժամը Լուսնին է, բարի է։ ԺԲ. ժամը բարի է ամեն բանի։ Հինգշաբթի, Ա. ժամը բարի է։ Բ. ժամը չար է։ Գ. ժամը բարի է։ Դ ժամը բարի է. Ե. ժամը բարի է։ Զ. ժամը բարի է ամեն բանի։ Է. ժամը չար է։ Ը. ժամը միջակ է։ Թ. ժամը խիստ բարի է։ Ժ. ժամը բարի է։ ԺԱ. ժամը ամեն բանի շատ բարի է։ ԺԲ. ժամը չար է։ Ուրբաթի Ա. ժամը բարի է. Բ. ժամը բարի է. գ. ժամը բարի է. Դ. ժամը չար է. Ե. ժամը շատ բարի է ամեն բանի. Զ. ժամը լաւ է. Ը. ժամը բարի է ամեն բանի։ Թ. ժամը չար է, պատրաստ կաց մանաւանդ Տաճկից։ Ժ. ժամը բարի ամեն

բանի։ ԺԱ. ժամը չար է։ ԺԲ. ժամը շատ բարի է։ Շաբաթի Ա. ժամը խիստ չար է ամեն բանի։ Բ. ժամը շատ բարի է ամեն բանի։ Գ. ժամը բարի է. Ե. ժամը բարի է, մանաւանդ կանանց վերաբերութեամբ։ Զ. ժամը բարի է։ Է. ժամը բարի է։ Ը. ժամը շատ վատ է, երակը չառնել. Թ. ժամը շատ լաւ է և շնորհաւոր։ Ժ. ժամը վատ է, պատրաստ մնալ։ ԺԱ. ժամը խիստ լաւ է. ԺԲ. ժամը ամեն բանի լաւ է.

## Չորս եղանակները գուշակելու նշաններ.

Թէ Աշունն անձրևոտ լինի, Ձմեռը սովորաբար քիչ կանձրևէ, Գարունն և բոյսերն յետ կմնան։

Թէ Գարունը ցուրտ ու չոր լինի, աշունը խոնաւ ձմեռը թեթև կլինի, որով բոյսերը ուշ կհասնին։

Եթէ Ամառը շատ անձրև գայ, ձմեռը սաստիկ կը լինի, որովհետև գետնից շատ գոլորշի ցնդելով երկիրը կսառի։

Երբոր Ամռան կամ Աշնան ժամանակ արևմտեան հարաւային քամի փչէ, և նոյն եղանակի համար օդը շատ ցուրտ լինի և ծանրաչափ գործին վայր իջնի, շատ անձրև կգայ Ձմեռը։

Եթէ ձմեռը անձրևոտ լինի, Ամառը չոր կլինի, Աշունն էլ չոր եղած ժամանակը։ Ձմեռը շատ հով կը փչէ։

Եթէ Կռունկները Աշնանը շուտով դէպի տաք երկիրները գնան։ Ձմեռւայ ցուրտը սաստիկ կլինի։

## Օդի պարզութեան նշաններ.

Լուսինն երեք օրւայ եղած միջոցին՝ եթէ վրան մի բարակ սպիտակ ամպ կանէ՝ պարզութեան նշան է, օդը բաց ու պայծառ կլինի։

Նոյնպէս չորրորդ օրը լուսինը եթէ պարզ ու



պայծառ տեսնւի, պարզութեան նշան է, օդը պայծառ կլինի։

Երբոր լուսինը բակ ունենայ, և այն բակը պարզ և սպիտակ տեսնւի, պարզութեան նշան է։

Արևն էլ եթէ առաւօտուն այսպէս տեսնւի, պարզութեան նշան է։

Արևը մտած ժամանակն եթէ պարզ և սպիտակ երևի, միւս օրն օդը բաց կլինի.

Եթէ արևի ծագած ժամանակ քիչ ամպ տեսնւի, կերևի թէ քիչ էլ անձրև կգայ։

Արևի ծագած ու մտած ժամանակներում, եթէ չորս կողմը սպիտակ ամպ գտնւի, պարզութեան նշան է։

Եթէ բարձր լեռան գլխից սպիտակ ամպ երևի, պարզութեան նշան է։ Այսպէս էլ թէ ծովի վրայ երևի։

Բու թռչունն եթէ գիշերը ձայն հանէ, կամ ագռաւը եթէ սաստիկ կռկռայ՝ պարզութեան նշան է։

## Անձրևի նշաններ.

Երեքօրեայ լուսնի ծայրը՝ եթէ պղտոր երևի անձրևի նշան է։ Չորրորդ օրն էլ թէ այն պղտորութիւնը երևի, ամպոտ օդի նշան է։ Լուսնի մօտ եթէ բակ երևի, կարմիր ջրի պէս պղտոր, ամպոտ. օդի և շատ անձրևի նշան է։

Օգոստոս ամսի մէջ լուսնի ծննդեան ու լրման օրերը՝ գրեթէ միշտ անձրև կգայ։

Լուսնի բակը թէ սևագոյն լինի, քիչ անձրևի նշան է։

Եթէ լուսնի բոլորը պղպջակի պէս ամպեր շատ երևին, շատ անձրևի նշան է։ Ամառը գիշերները եթէ արևելեան հով լինի, և աստղերը սովորականից աւելի մեծ ու փայլուն երևին, մի քանի ժամից յետոյ անձրև կգայ։

Արևը ծագած ժամանակ, թէ կարմիր ու սևագոյն ամպերով դուրս գայ, արևելեան կողմումը շատ անձրևի նշան է։

Արևը ծագելու ժամանակն եթէ բոլոր երկնքի երեսը բարակ ամպով ծածկած է այն օրը քիչ անձրև կգայ,

Արևի ծագած ժամանակ, թէ չորս կողմը փայլուն ու ամպ երևի, անձրևի նշան է։

Եթէ արևի ծագելուց երեք, չորս ժամ առաջ անձրևել սկսի, մինչև կէս օրը օդը կբացւի։

Կայծակ կամ ամպերի ճայթմունք որ կողմը եթէ լինի, անձրև գալու նշան է, միայն փայլակը հիւսիսի և կամ հարաւի կողմերի՝ որ կողմերն եթէ երևի, այնտեղ անձրև կլինի։

Եթէ յանկարծ հարաւային սաստիկ հով փչէ, և երկու երեք ժամ շարունակ անձրևէ, մինչև 15 ժամ կտևէ։

Եթէ ամբողջ ցերեկը անձրևէ և երեկոյին Արևմուտքը բաց լինի, կամ արևը կարմիր ամպերի միջից վայր իջնի, երկրորդ օրը օդը կբացւի։

Եթէ լուսինը բակ ունենայ, արևմտեան քամիով, երկրորդ օրն անձրև կգայ։

Ձկնկուլ թռչունը եթէ շատ լացւի, շատ անձրև գալու նշան է։

Կովերն երբոր հարաւի կողմը երկար նայեն, անձրևի նշան է։

Մրջիւններն երբոր իրենց հաւկիթները տեղից տեղ կրեն անձրևի նշան է,

Հաւերը երբոր վազեն և կռկռան, անձրևի նշան է։

Գորտերը թէ դէպի ջուրը վազեն, կռկռան և ձայնեն, անձրևի նշան է։

Երբոր հովը կակուղ փչէ, անձրև ուշ կգայ։

Կաղնի ծառը եթէ շատ պտուղ տայ, այն տարին անձրև շատ կլինի։



Բոլոր կենդանիների դէպի հիւսիս փախչիլը անձրևի նշան է, և ձմեռը անձրև ու ձիւն շատ կլինի, եթէ կռունկը ուշ գայ, Ձմեռն էլ ուշ կմնայ։

## Հովի Նշաններ.

Արևի վերայ.—Երբոր արևը սպգոյն է ծագում և կարմրութիւնը երկար ժամանակ տևում, կամ սկաւառակը խիստ մեծ է, և դէպի հիւսիսային կողմն արիւնի գունով տեսնւում, հով լինելու նշան է։ Նոյնպէս երբոր արևի սկաւառակի վրայ էլ սև շրջանակներ կամ կարմիր ճառագայթներ լինին։

Երբոր արևը բակ ունենայ, նշան է որ հով ու անձրև պէտք է լինի։

Լուսնի վերայ.—Երբոր լուսինը խիստ խոշոր երևի, գոյնը կարմիր, բոլորը բակ ունենայ հով վեր կենալու նշան է, եթէ բակը երկուս է փոքրիկ հով կլինի։

Երբ առաւօտուն ծովի թռչունները միմեանց մօտ ջրի երեսին թռչկոտելով կարկաչեն, այն օրը հովը կփչէ։

Մթնոլորտի վերայ —Երբոր ամպերը նօսր լինին և շուտ շուտ դէպի հարաւային կողմը կամ արևմուտք գնան, գոյները կարմիր մանաւանդ առաւօտուց, նշան է հով վեր կենալու։

Սաստիկ քամուց յետոյ, երբոր անձրև գայ, քամիները կդադարին։

## Անձրեւի եւ պայծառ օդի Նշաններ.

Մթնոլորտի վրայ.—Ամպոտ ժամանակ երբոր քամին փչէ, անձրև գալու նշան է. նոյնպէս անձրև գալու նշան է, երբոր ամպերը իրար վրայ դիզւին. հարաւային կողմից գան և շուտ շուտ իրենց դիրքը փոխեն, և կամ երեկոյեան ժամանակ հիւսիսային ա-

րեւելեան կողմը շատ ամպեր խտացած լինին: Երբ երեկոյեան Արեւը մտնելուց յետոյ հիւսիսային կողմը լեռան պէս դիզուած ամպեր լինին, նոյն գիշերը անձրեւ կգայ:

Թէ որ արեւելեան կողմից ամպեր դուրս գան և սեւագոյն լինին, նշան է գիշերը անձրեւ գալու: Եթէ արեւմուտքից գան, երկրորդ օրուայ անձրեւի նշան է: Երբոր ամպերը բամբակի պէս սպիտակ դիզուած լինին նշան է, թէ երկու կամ երեք օրից յետոյ անձրեւ է գալու: Եթէ կէս օրուայ դէմ արեւմտեան հարաւային կողմը ամպեր ժողովուին նշան է, թէ գիշերը հովով և անձրեւով պէտք է սաստիկ փոթորիկ լինի: Երբոր մի մօտ տեղ սաստիկ անձրեւ եկած է. մանաւանդ ամառը այն անձրեւից շատ նօսր ամպեր կձեւանան, որով մի քիչ հեռու տեղ նորից անձրեւ կգայ, բայց շատ չի տեւիլ, որովհետեւ երկրորդ անձրեւի պատճառը խոնաւութիւնն լինելով, շուտ կանցնի: Թեթեւ անձրեւ կգայ, երբոր առաւօտուց երկինքն ամպերով ծածկուած լինի, օդը հանդարտ, արեւի ճառագայթներն էլ ամպերի միջից անցնին, որովհետեւ արեւը ծագելէն յետոյ, ջերմութիւնից վերի օդը նրբանալով, շատ խոնաւութիւն կը ծծէ, որով օդը կպայծառանայ: Բայց թէ որ օդի մէջ շատ թանձր ամպեր լինին. և խոնաւ հովեր փչեն, անձրեւը երկար ժամանակ կտեւէ: Արեւը մտնելու ժամանակ երբոր ամպերը ոսկեգոյն կամ կարմրած երեւին, և փոքր ամպերն էլ կարծես թէ ցածրանում են և դէպի քամին գնում. գոյները սպիտակ է և արեւը հորիզոնից վեր, լաւ օդի նշան է:

Փորձուած է, երբ երկինքը կտոր կտոր ամպեր լինին, երկրորդ օրուայ օդը լաւ կլինի. բայց սովորաբար երկու երեք օրից յետոյ անձրեւ կգայ: Թէ որ արեւը դուրս գալէն մէկ կամ երկու ժամ առաջ անձրեւ սկսի, կէս օրուայ դէմ օդը կբացուի, բայց թէ որ արեւը դուրս գալէն մէկ կամ երկու ժամ յետոյ սկսի



անձրեւը, սովորաբար բոլոր օրը անձրեւ կգայ: Երբոր անձրեւն երկու կամ երեք ժամ հարաւային արեւելեան կողմից գայ սաստիկ քամիով, և յետոյ քամին դադարի, անձրեւը մինչեւ 12 ժամ կամ աւելի կտեւէ, և յետոյ կդադարի:

Արեւի վերայ.—Երկնային մարմնոց տեսքը՝ օդի ինչպէս լինելը շատ լաւ կարող են ցոյց տալ. ուստի երբոր արեւը մութ՝ և կարծես թէ թրջած է, յայտնի նշան է անձրեւ գալու: Մանաւանդ երբոր արեւը կարմիր է ծագում և չորս բոլոր սեւորակ, կամ թէ վերան թանձր ամպ, և կամ արեւելեան կողմը կարմրած լինի: Յանկարծական սաստիկ անձրեւը ոչ երբէք երկար կտեւէ, բայց երբոր երկնքի երեսը կամաց կամաց ծածկուին, արեւը լուսինը կամ աստղերը կամաց կամաց մթնանան, սովորաբար մինչեւ 6 ժամ անձրեւ կգայ: Արեւը ծագելու ժամանակ երբոր տեսքը պայծառ է և երկինքը մաքուր, օդը լաւ կլինի: Արեւի բոլորտիքը պատած ամպերն էլ երբոր դէպի արեւմուտք գնան, կամ թէ բոլորտիքը ցրուին, հաստատուն գեղեցիկ օդ կլինի, նոյնպէս արեւը մտնելու ժամանակ ամպերի գոյնը թէ որ կարմիր է օդը լաւ կլինի:

Լուսնի վերայ.—Երբոր լուսնի սկաւառակը դեղնագոյն է, անձրեւի նշան է. նոյնպէս կլինի երբոր կիսալուսնի ծայրերը առաջի երեւալուն այսինքն երկու լուսնի փոփոխումից յետոյ երեք օր, սուր չեն երեւիլ այս անձրեւի նշանը առաջի քառորդի համար է, բայց միւս երեք մասերի համար, լաւ և գեղեցիկ օդի նշան կլինի: Լուսնի բոլորտիքն երբոր բակ լինի և հարաւային հով փչէ, երկրորդ օրը անձրեւ գալու նշան է: Երբոր հովը հարաւային է, և լուսինը չորրորդ գիշերը միայն երեւի, ամսական առատ անձրեւի նշան է: Ապրիլի լուսնի լրումը, և օգոստոսի ծնունդը ու լրումը գրեթէ միշտ անձրեւ կբերեն:

Երբոր լուսնի բծերը լաւ են տեսնուում, լաւ օդի

նշան է։ Նոյնպէս լըմանը ժամանակ, երբոր չորս կողմը փայլի։ Օդը միշտ լաւ լինելու նշան է, թէ որ լուսնի լրումից առաջ և փոփոխումից երեք օր յետոյ իր սկաւառակը պայծառ տեսնուի։ Լուսնի ամեն մի ծնունդից կամ լրումից յետոյ գրեթէ, եթէ փոքր անձրև գայ, յետոյ շատ լաւ օդ կլինի։

Աստղերի վրայ.—Երբոր աստղերը խոշոր և տժգոյն երևին, անձրևի նշան է։ Ամառը, երբոր արևելեան հով փչէ, ու աստղերը սովորականից մեծ երևին, յանկարծական անձրևի նշան է։

Աստղերն երբոր բազմութեամբ մէկտեղ տեսնուին լուսաւոր պայծառ ու փայլուն, ամառը լաւ եղանակի, իսկ ձմեռը ցուրտ եղանակի նշան է։

Բուսոց վրայ.—Մկնականջ ասած խոտը, արնածաղիկը և ուրիշ մի քանի տեսակ բոյսեր, երբոր ծաղիկները փակեն, անձրևի նշան է։

Անձրևի կամ սաստիկ խոնաւութեան ուրիշ շատ նշաններ կան. օրօրինակ փայտերը կուռին, քարերն ու երկաթները քրտնածի պէս կթրջուեն. նուագարանների լարերը կկտրուին, պատկերների կտաւները կը թուլանան, աղը կթրջի, ճրագի լոյսի բոլորտիքը կլոր բակ կերևի, լճերը կպղտորին և այլն։

Կենդանեաց վրայ.—Անձրևի նշաններ են, երբոր ծիծեռնակները ջրի երեսին կթռչին. մանր թռչունները դէպի բոյները կփախչին, հաւերն ու աղաւնիները իրենց բնակարանը կքաշուին, ընտանի թռչունները հողի ու աւազի վրայ կթաւալին և թևերը կթափահարեն, արտոյտները և ճնճղուկները առաւօտուն կանուխ կսկսին երգել և այլն։ Եզները քթերի ծակը բացած, դէպի հարաւ կնային, գետին կփուին, և իրանք իրենց կլիզեն, ձիերը սաստիկ կխրխնջան և վեր վեր կթռչին, կատուները երեսներն ու ականջները կմաքրեն, շները գետինը կչանկռեն և փորերի մէջ ձայներ կլսուին. մկները սովորականից աւելի կը



վազվզեն, գորտերը լճերի մէջ կկռկռան, որդերը բազմութեամբ հողից դուրս կգան. մամուկները իրենց բունից վայր կընկնեն, ճանճերը կծանրանան և աւելի սաստիկ կկծեն։ Իսկ եթէ առաւօտուց մուները, իշամեղուները, մժեղները և պիծակները շատանան, մամուկները օդի մէջ կամ բուսոց վրայ սկսին պտտիլ, օդը լաւանալու նշան է։

Ցրտութեան և սառոյցի նշաններ.—Ցուրտ և սառոյց լինելու շատ նշաններ կան, թէ վայրի սագերը, կռունկները և ուրիշ տեղափոխ թռչունները, սովորական ժամանակից ճանապարհորդեն. փոքր թռչունները խումբ խումբ ժողովին, լուսնի սկաւառակի ճառագայթը պայծառ լինի և եղջիւր սրածայր, հիւսիսային կամ հարաւային քամիները փչեն։ Լուսնի փոփոխումից յետոյ, թէ երկնքի աստղերը փայլին, մանր ձիւն կգայ, այնպիսի ժամանակ որ ամպերը իրար վրայ դիզուած լինին։ Փորձուած է, որ եթէ աշունը սաստիկ ցուրտ լինի, յետոյ անձրև կգայ։ Սառոյց հանելու նշաններն էլ սորանք են, հարաւային քամիով խոշոր ձիւն գայ, սառերն տակից կոտրտելու ձայներ լսուին. արևը ջրով թրջածի պէս տեսնուի. լուսնի եղջիւրները սուր չերևին, քամին հարաւային դառնայ, կամ շուտ շուտ փոխուի։ Յայտնի է թէ ընդհանրապէս այս նշանները խոնաւութեան համար էլ են։ Փորձուած է որ եթէ Հոկտեմբեր ու Նոյեմբեր ամիսները ցուրտ ու ձիւնոտ լինին։ Յունուարը և Փետրուարը բարեխառն կլինին։

## Զորութեան Նշաններ.

Եթէ մի շաբաթ լաւ օդ լինի ու նոյն միջոցին հարաւային քամին միակ ցերեկները վեր կենայ, վերջ ընդհանրապէս սաստիկ չորութիւն կլինի։ Երբոր փետրւար ամիսը շատ անձրևոտ է Նոյնպէս կլինի գա-

րուՆն և ամառը. իսկ թէ որ պայծառ է, յետոյ չորութիւն կլինի։

## Կարկտի եւ ձեան նշաններ.

Ձեան եւ կարկտի նշանները սորանք են, երբոր ամպերը սպիտակ լինին ու կամաց կամաց դեղնին, և սաստիկ քամի լինի, նշան է սաստիկ կարկուտ գալու։ Թէ որ արևը ծագելէն առաջ, արևելեան կողմը դեղին և տժգոյն լինի և ճառագայթները բեկբեկին և թանձր արևի միջից երևին. այն ժամանակ կլինի մեծ փոթորիկ կարկտով։ Ամառը սպիտակ ամպերը կարկտի նշան են, իսկ ձմեռը ձեան. մանաւանդ երբոր օդը կակղացած լինի։

Երբ ամառը կէս օրից յետոյ ամպերը դեղին ու սպիտակ միմեանց վրայ լեռան պէս դիզուին և սաստիկ հովից ծանր ծանր շարժելով հորիզոնից վեր բարձրանան՝ կարկտի նշան է։

Ձմեռը և գիշերը շատ քիչ անգամ կարկուտ կը գայ։

Գարնան և ձմեռուայ մէջ, երբոր ամպերի գոյնը երկնագոյն սպիտակ է ու սաստիկ տարածուած են, մանր կարկուտ կգայ. որ սառած մշուշ է։

## Անձրեւի նշաններ.

Ծովի կամ լճի ջուրը՝ սովորականից աւելի անշարժ լինիլը, և առանց արևի տաքութիւնը՝ նշանակում են անձրև։ Առատ հոսած ջուրն եթէ չափից դուրս բարձրանայ, նշանակում է յորդ անձրև. Ձմեռուայ եղանակում եթէ ջուրը սակաւ լինի, նշան է գարնան ջրաւէտ լինելուն։ Եթէ երեկոյեանը միայն հիւսիսային կողմը փայլատակի՝ նշան է ապագայ անձրևի։ Ամառը խայթող, ծակող տաքութիւնը, նշան է անձ-



րևի։ Լուսինը եթէ սև եզրեր ունենայ, նշան է անձրևի։ Սպիտակ և թանձր ամպը իր վրայ դիզուած, նշան է որոտի և անձրևի։

## Քամիների նշաններ.

Բադը, սագը, և անգղը, եթէ ջրի մէջ շուտ շուտ ծածկւին և թևերը շարժեն, քամու նշան է։ Կարմրագոյն Աղեղը քամու նշան է։ Երեկոյեանը հիւսիսային կողմի փայլատակելը, քամու և ցրտի նշան է։ Կէս օրին փայլատակելն նշան է հարաւային քամու։ Պարզ գիշերը փայլատակելը նշան է քամու, այն կողմից, որ կողմից կփայլատակի։ Ծուխն, երբ դառնայ և դէպի գետին պտտի, քամու նշան է։ Պարզ երկնքի երեսին, երբ փոքր ամպեր տարածուած լինին, նշան է մեծ քամու։ Դլփին ձկները (Եօնուզ պալըխ) երբ խաղաղ ծովում խաղալով շրջին նշան է քամու այն կողմից որ կողմը նրանք շրջում են. լուսինն երբ սպիտակ և կարմիր շրջանակաւ երևի նշան է քամու։ Արևագալին, հիւսիսային, կամ հարաւային կողմի կարմիր ամպը, քամու նշան է, արևի կարմիր մուտքը, առատ անձրևից յետոյ և արևի մտնելուց յետոյ, կարմրագոյն ամպը քամու նշան է։ Կարմրացած, կամ ստուերամած լուսինը, նշան է քամու և անձրևի։ Թէ պարզ արևագալին ամպ երևի կամ առաւօտուն որոտայ, քամու նշան է։ Թէ լուսնի եղջիւրի հարաւային ծայրը սուր լինի հարաւից քամին կփչէ, թէ հիւսիսայինը հիւսիսից կփչէ։ Եթէ լուսնի երկու ծայրն էլ սուր լինին։ գիշերը քամի կլինի։ Աստղն որ կողմը ցոլայ, այն կողմից քամին կփչէ։ Լուսնի ծննդեան ժամանակ եթէ քամին մինչև երեք օր փչէ, գրեթէ մինչև լրումը կփչէ։ Արևը ձմեռնային կենդանակերպներումը մտնելու ժամանակ եթէ երկինքը որոտայ, տարին քամոտ կլինի։ Ամառը փայլատակից աւելի շուտ շուտ որոտալը, քամու նշան

է։ Երբոր հարաւը փչէ, չէ հարկաւոր ոչ սերմ ցանել և ոչ հերկել։ Սագերն եթէ դէպի հիւսիս թռչին, հարաւը կփչէ, իսկ եթէ դէպի հարաւ հիւսիսը կփչէ։ Երբոր մրջիւնները չաշխատեն, այլ մտնին բները և պահուին քամու նշան է։ Երբ ընտանի հաւերը, ջրի մօտ թռչին, նշան է քամու։

---

Գուշակութիւն զորքանութիւնէ լուսնոյն՝ թէ որպիսի իցէ ծնեալը, զերակ թողուլն կամ զարիւն յուզիլն։

Լուսնոյ առաջին օրւայ ծնածը լինում է կարճակեաց, հիւանդն երկիւղալի դրութեան մէջ կլինի 14, 21 և 25 օրերի ընթացքում յետ կառողջանայ, արիւն թողնելն դեղնութիւն կպատճառէ։

2. Այսօրւայ ծնածը երկարակեաց կը լինի հիւանդն մինչև 12 օր երկմիտ կլինի յետոյ կլաւանայ, արիւն յուզելն ջերմ և հիւանդութիւն կպատճառէ։

3. Այս օրւայ ծնածը կարճակեաց կլինի, հիւանդն տաղնապի, բայց յետոյ կառողջանայ, արիւն թողնել վնաս է։

4. Ծնածը թոյլ կլինի. հիւանդ մինչև 21 օր կը դժուարանայ, ապա կլաւանայ, արիւն յուզել միջակ։

5. Ծնած տղան կմեռնի. հիւանդի տկարութիւն կերկարանայ, յետոյ կլաւանայ արիւն թողնելը քոս կբերէ։

6. Ծնածը ցաւագար կլինի, հիւանդն կծանրանայ մինչև հետևեալ ամսի 5-ին կպարզւի, արիւնը շահաւէտ է։

7. Ծնածը երկարակեաց, հիւանդը երկմտի արիւնը վնաս է։

8. Ծնածը երիտասարդ հասակում կմեռնի, հիւանդը 14 օրից կմեռնի արիւնը վնաս է։

9. Ծնածը թուլամորմին կլինի հիւանդը կտագնապի բայց լաւանայ, արիւնը կքոսոտէ մարմին։



10. Ծնածը երկարակեաց կլինի հիւանդն մահաւիթ արիւնը դեղնացաւութիւն կբերէ։

11. Ծնածը վտանգաւոր. հիւանդը երեք օրից յայտնի կլինի. արիւնը վնաս է։

12. Ծնածը միջակեաց. հիւանդը 15 օրից կմեռնի, արիւնը շատ օգտաւէտ է։

13. Ծնածը կապրի. հիւանդը 18 օրից վտանգի. արիւնն վնասէ։

14. Ծնածը տկար, հիւանդ 15 օրից վտանգի յետոյ կպարզւի, արիւն թողնել հիւանդութիւն կը բերէ։

15. Ծնածը երկարակեաց հիւանդ չորս օրից հոգևարք լինի, արիւնը շահաւէտ է։

16. Ծնածը առոյգ. հիւանդը 28 օրից յետոյ կառողջանայ, արիւնը կվնասի։

17. Ծնածը առոյգ. հիւանդ մի օրից առողջանայ, արիւնը վնաս կբերէ։

18. Ծնածը երկբայ է. հիւանդը 3 օրից կառողջանայ արիւն թողնելը շահաբեր է։

19. Ծնածը անուժ, հիւանդը երեք օրից առողջանայ արիւնը հիւանդութիւն կբերէ։

20. Ծնածը յաղթանդամ. հիւանդը 7 օրից մահանայ արիւնը վնաս է։

21. Ծնածը կասկածելի. հիւանդ միւս ամսի 10-ին առողջանայ, արիւնը օգտաւէտ է։

22, Ծնածը միջակեաց. հիւանդը յետագայ ամսին յայտնի կլինի։ Արիւնը շահաւէտ է։

23. Ծնածը տկար, հիւանդը 12 օրից մահանայ, արիւնը շահ է։

24. Ծնածը կասկածելի, հիւանդը կառողջանայ, արիւն թողնել շահ է։

25. Ծնածը թուլամորթ հիւանդը հետևեալ ամսի 8-ին յայտնի կանի։ Արիւն թողնել շահ է։

26. Թէ ծնածը և թէ հիւանդը վտանգաւոր արիւն թողնել շահաւէտ է։

27. Ծնուածը միջակեաց. հիւանդը 10 օրից մահանայ արիւն թողալ վնասակար է.

28. Ծնուածը միջակեաց հիւանդը հետեւեալ ամսւ առաջին օր յայտնի կտնէ։ Կարելի է արիւն թողալ կամ երակ բանալ.

29. Ծնուածը վատ ուժ լինի, հիւանդ վտանգաւոր։

30. Ծնուածը թոյլ. հիւանդ վտանգաւոր արիւն թողնել կամ երակ բանալ վնասակար.

---

## Բնազննական գուշակութիւնք

Գլուխն, որ դէպի գագաթը (սլուր) սրածայր լինի, նա կլինի հաստատամիտ, նախանձոտ և անուսումն։ Գլուխն եթէ մեծ լինի, նա կլինի յիմար և տգէտ։ Միջակ կազմողութեամբ գլուխը, կլինի նրբամիտ, ուշիմ խորագէտ և սուր յիշող։ Գլուխն եթէ լինի փոքր բայց ոչ աւելի երկայն՝ նա կլինի հանճարեղ և խոհեմ։ Գլուխն եթէ լինի երկայն և կակուղ, նա կլինի զգոյշ և կարգադրող։ Գլուխն, եթէ լինի փոքր բայց երկայնավիզ. նա կլինի տարաբաղդ, սակաւախել և տկար։ Գլուխն, եթէ լինի տափակ, նա կլինի ցոփ և յանդուգն։

Մազերն եթէ սև ու խիտ լինին և չը ոլորուին. նա կունենայ քիչ խելք. բայց կլինի աշխատասէր և կարգապահ։ Երկայն և հարթ մազերը քաղցր բնաւորութիւն։ Խարտեաշ մազերը քնքշութիւն։ Սև, նուրբ ողորկ և փայլուն մազերը չարութեան նշան են, մանաւանդ եթէ նորանց գոյնը յօնքերի գոյնից տարբերուի։

Ճակատն, եթէ լինի, շատ մեծ, կնշանակէ ծոյլ և փոքրախելք։ Նեղ և փոքրագոյն ճակատը ցոյց կտայ անուսումն, տգէտ և շատակեր լինելը։ Բոլորակ ճակատը բարկացող և ապերջանիկ։ Բառակուսի և չափաւոր ճակատը կլինի իմաստուն և Առիւծի նման մե-



ծահոգի։ Երկայն ճակատը նշանակում է իմաստուն և ուշիմ։ Փոսորակ ճակատը ամօթխած և պարկեշտ։ Կնճռոտած ճակատը տխրութիւն և տրտմութիւն։ Մազոտ ճակատը կլինի Ցուլի և Առիւծի նման համարձակ, ինչպէս բրդոտ ճակատ ունեցող Շները լինում են շատ բարկացող. մազ չունեցողներն վախկոտ։

Յօնքերն՝ եթէ դէպի քունքը վայր ծուած լինին ցոյց կտան խարդախութիւն և դաւաճանութիւն։ Դէպի քիթը ծուած յօնքերը նախանձ, և վրէժխնդիր, Յօնքերն եթէ լինի կամարաձև և հասնին մինչև քիթը ցոյց կտան ուսումնասիրութիւն և նրբամտութիւն իսկ եթէ խիստ կպած լինին իրար սակաւ իմաստ և տըխուր։ Իմաստուններն ասում են, երբէք չհաւատաս այն մարդուն որ յօնքերը վայր ծուած իրար կպած կունենայ և միշտ ցածր կնայէ, այլ և նրան որ ի ծընէ շլանկատ կլինի ըստ մեծի մասին այսպէսները գըրեթէ բոլորն էլ նենգաւոր և խաբեբայ են։

Երեսն, եթէ վտիտ և նիհար լինի, կնշանակէ հոգ խնամ և եռանդն ունեցող։ Փոքր երեսը կապկի նման փոքրոգի կլինի։ Մեծ երեսը եզի և իշի նման ծոյլ և դանդաղկոտ կլինի։ Ստուար, թանձր և լիքը երեսը, փափկասէր և հեշտասէր կլինի։ Շատ բոլորակ երեսը, տգէտ։ Տգեղ երեսը հազիւ կարող է ունենալ բարի վարք և սովորութիւն։ Երեսն եթէ շատ անգամ փոքր ինչ շարժւելուց և աշխատելուց քրտնի ցոյց է տալ խորամանկ, քսու և շատակեր լինելը։ Երեսն եթէ ճակատից մինչև կզակը և կամ բերանը փոսորակ լինի. այսպէսը կլինի կաշառասէր, տոկոսառու, գող, և վատ վարք և բարք ունեցող։

Աչքերն որ շուտ շուտ և զանազանակերպ շարժուին և սրապէս տեսնեն, այլ և մէկ շարժին և մէկ կանգնին նշանակում են անհաւատարմութիւն, գողութիւն, նենգութիւն, և տեսակ տեսակ չարիք սրտում։ Փոքր աչքերն նշանակում է տգիտութիւն, փոքրոգու-

թիւն և արբեցողութիւն։ Մեծ եւ փոս աչքը նշանակում է գող և աւազակ։ Ջափաւոր աչքն որ փոքր ինչ դէպի կապտագոյնն է հակւում ցոյց է տալի բարութիւն, նուրբ իմացկանութիւն, հաւատարմութիւն, հետաքրքրութիւն, բարի բնութիւն և խաղաղասիրութիւն։ Խաժակն, (կապտագոյն) բայց փայլուն ցոյց է տալի յանդըգնութիւն և դէպի չարութիւն հակւիլը։ Զւարթ և քաղցրանկատ աչքը ցոյց է տալի երկարակեցութիւն։ Բոլորովին սև աչքը ցոյց է տալի երկչոտութիւն և շահասիրութիւն։ Իսկ եթէ միջումն երևին փոքր ինչ մեղուագոյն շիթեր (գծեր) ցոյց է տալի գերազանց բարք ունեցող։ Խոր ընկած աչքն որ այնպէս է թւում թէ ծածկւած է նշանակում է չարագործութիւն, բարկութիւն, վատ սովորութիւն, յանդգնութիւն, խստաբարոյութիւն, ստաբանութիւն, մոլասիրութիւն վաւաշոտութիւն, հպարտութիւն, դաւաճանութիւն և նախանձ։ Աւելի կոկոն, կարմրագոյն և փոքրիկ աչքը, ցոյց է տալի լեզւի անսանձութիւն և սրտի անհաստատութիւն։ Նեղ աչքը ցոյց է տալի անհաստատութիւն և բոլոր գործքերում դիւրափոխութիւն։ Դժւարահայեաց աչքն եթէ լինի գիճային, (խոնաւ թաց) ցոյց է տալի ճշմարտախօսութիւն։ Շատ կապտագոյն աչքը, ցոյց է տալի վատութիւն և խաբէութիւն։ Շուտ բացող և փակող աչքը ցոյց է տալիս երկչոտութիւն և թուլութիւն։ Մթնագոյն աչքը բըղջախոհութիւն և գինէսիրութիւն։ Վեր նայող աչքն, անձնանւիրութեան նշան են։ Բաց աչքն յանդգնութեան նշան է։

Ռունգն (պինչ, քիթ) եթէ մեծ և լայնանիստ լինի, նշան է, վաւաշոտութեան, նենգութեան, յանդգնութեան, նախանձու, ագահութեան, ստաբանութեան ժլատութեան, բթամտութեան և երկչոտութեան։ Մեծ ռունգն բայց ոչ լայնանիստ ցոյց կտայ բարեմըտութիւն և լաւութիւն։ Արծւառունգն մեծահոգի,



քաջակորով, և վաւաշոտ։ Բաց ռունգն երկու պնչեր բաց, կնշանակէ զւարթամտութիւն և կորովութիւն քաջութիւն։ Ծայրը սուր և բարակ ռունգը նշան է զայրացկոտութեան և կւարարութեան։ Ծայրը բոլոր եւ կլոր ռունգը նշան է մեծահոգութեան։ Երկայն ռունգը նշան է թեթևամտութեան և դիւրաշարժութեան։ Շատ փոքր ռունգը, գող է։ Դէպի մի կողմ շատ հակւած ռունգը անարդար է։ Ռունգը, որ հաւասար գծով կիջնի վայր առանց ունենալու բարձրութիւն եւ ցածրութիւն նշան է արիութեան եւ խոհեմութեան։

Ականջը եթէ լինի միջակ, ոչ մեծ և ոչ փոքր, նշան է համեստի և կրթւածի։ Մեծ ականջն որ դէպի վերի կողմն է բարձրացել, նշան է անխոհեմութեան, շատախօսութեան, պարզութեան յիշողականութեան և երկարութեան կենաց։ Մեծ ականջը ժլատութեան և անքաղաքավարութեան նշան է։ Փոքր ականջը խորամանկութեան ու խելքի նշան է։ Հաստ ականջը պարզութեան։ Բարակ, թափանցիկ ականջը պատւականութեան։ Գլխի վրայ թեքւած ականջը բթամտութեան և ծուլութեան։ Բոլորակաձև ականջը անհասկացողութեան։ Մազոտ ականջն, խելքի և հասկացողութեան։

Բերանը որ մեծ եւ լայն ձգւած լինի, նշան է շատակերութեան, համարձակութեան, պատերազմասիրութեան եւ անգթութեան։ Բերանն, որ փոքր լինի, նշան է փոքրասրտութեան։

Շրթունքն եթէ մեծ լինի, կլինի ազէտ, թանձրամիտ, և կւարար։ Կարմրագոյն շրթունքը նշանակում է մաքրութիւն, բարի և առաքինական կազմութիւն. Թառամած, նւազած և գունազուրկ շըրթունքը նշանակում է առաքինութեան և բարոյականութեան պակասութիւն. Հաստ եւ բերանից փոքր ինչ դուրս կախւած շրթունքը, նշանակում է անհաս,

դիւրահաւան, և անհաճելի վարք ունեցող: Նուրբ, վերի կողմը փոքր ինչ հաստ շրթունք և սրա հետ մեծ բերանը նշան է մեծասրտութեան, ուժեղութեան և իմաստութեան: Վեր ցցւած շրթունքը կուարար, չարաչք ինքնահաւան և լեզւագար: Չափաւոր շըրթունքը խորհրդապահ, խորագէտ, բարի եւ ուսումնասէր է: Նուրբ շրթունք ունեցող փոքր բերանը, եղեռնագործ և թուլասիրտ է.

Լեզուն եթէ թանձր և լայն է, նշան է բթամըտութեան և կոպտութեան: Սպիտակ լեզուն, աղքատ և ողորմելի: Կարմիր և բարակ լեզուն, սրամիտ և հարստացող:

Երկար և հաստ ատամները, նշան են արբեցողութեան և եղեռնագործութեան: Հաստ և լայն ատամներն որոնք դէպի դուրս և կամ դէպի ներս թեքւած են նշան են հեշտասիրութեան:

Ծնոտն եթէ փոքր և կարճ լինի՝ նշան է խստաբարոյութեան և նախանձոտութեան: Բոլոր և կլորակ ծնոտը՝ իգաբարոյութեան. երկար և սուր ծնոտը, բարկացողութեան. ներսի կողմից մաալի ծնոտը՝ բղջախոհութեան: Չափաւոր և քառակուսի ծնոտը, բարեբարոյ, հեզ և խոնարհ:

Մազերն եթէ խարտեաշ՝ կիսասև և կակուղ լինին՝ նշան է նրբամիտ և խոհական լինելու. գանգուր և գռուզ մազերը, հպարտութեան և աներկիւղութեան. դէպի ճակատ բուսած մազերը, ցոյց են տալի անզգամութիւն և գազանաբարոյութիւն: Շէկ և հաստ մազերը՝ անմտութիւն: Հաստ և խիտ մազերը՝ կամակորութիւն և ինքնահաւանութիւն. սպիտակ մազերը, վախկոտութիւն և ամօթխածութիւն. ճաղատ մօրուքը, բղջախոհութիւն. Բարեկազմ մօրուքը՝ բարեբարոյութիւն և համեստութիւն:

Ձայնն եթէ հաստ լինի, կլինի զօրեղ և արի: սաստ և բարձ ձայնը, համարձակ և ճոռոմաբան. բարակ և մեղմ ձայնը, ախուր, կասկածոտ և վախկոտ. միջակ, ոչ հաստ և ոչ բարակ՝ խոհեմ և ճշմարտախօս. ոչխարի և կամ այծի նման ձայնը, ագէտ. քթովը դուրս եկող ձայնը, ստախօս և չարակամ:



Ծիծաղկոտ մարդն անխոհեմ է: Հազիւ ծիծաղողը՝ նրբիմաց և ուշիմ: Բարձրաձայն ծիծաղողը՝ սրաբան և ստախօս: Առանց պատճառի ծիծաղողն և ծիծաղելուն հազայ կամ գլուխը շարժէ՝ անհաւան, անմիտ և անխելք է:

Վիզը՝ ոչ մսի գէրութեամբ այլ ոսկորների և ջիղերի մեծութեամբ հաստ ունեցողը՝ զօրեղ է: Հաստ և մսաւորը՝ բարկացող է: Երկայն և բարակ վիզը՝ համարձակ և յանդուգն՝ վերամբարձ վիզը՝ ապստամբ և յանդուգն է:

Իմաստուններն ասում են, պէտք է զգոյշ մնալ այն մարդկանցից՝ որոնք բնականաբար պակասութիւն կամ որ և է անդամների մէջ յայտնի տգեղութիւն ունենան, որովհետև նրանք բնութիւնից այն տգեղութեամբը նշանակւած են:

Թիկունքն եթէ լայն լինի, նա քաջ և կռուի կը լինի: Միջակ թիկունքը՝ գովելի անձն: Կարճը՝ ագահ և ընչասէր:

Լանջքն՝ այն է կուրծքը՝ եթէ մինչև փորը մազերով ծածկւած լինի, նա կլինի անհաստատ, անգութ և անկրօն: Միայն կուրծքը մազոտը՝ սրտոտ: Մաալի կուրծքն՝ անխելք և յիմար: Փորից երկար կուրծքը՝ անխոհեմ: Մեծ կուրծքը՝ մեծահոգի և համարձակ:

Ստինքը (ծիծ) եթէ կրծքից կախ ընկած լինի՝ հզօր և զօրաւոր: Մեծ փորը՝ հպարտ և ողջախոհ:

Բազուկն՝ եթէ այնքան երկար լինի, որ ձեռքը հասնի մինչև ծունկը՝ նշան է նրբիմացութեան, ուժեղութեան և իշխողութեան: Կարճ բազուկը՝ չարամիտ և չարախնդաց: Շատ մազոտ բազուկը՝ վավաշոտ:

Խօսելու ժամանակ միշտ ձեռքը և բազուկը շարժողը՝ նախանձոտ և շատախօս։ Խօսելուս ձեռքը և բազուկը՝ չտարածողը և չշարժողը՝ խելահաս, մեծախորհուրդ և խոհեմ է։

Ձեռքը՝ որ աւելի կարճ և փոքր է՝ նշան է ուղղութեան և հնարամտութեան։ Երկայն, բարակ և բարեկազմ ձեռքը, նշան է բարի սովորութեան, երկար կեանքի, ուղղասիրութեան, պատւասիրութեան և աստուածավախութեան։ Հաստ ձեռքը՝ եթէ չափից աւելի կարճ մատներ ունենայ նենգաւոր, դարանակալ և գող է։ Ծուռնումուռն ձեռքը՝ շատակեր և շատախօս է։

Երբ մէկի ձեռքը բան վերցնելիս դողայ՝ նա շուտով բարկութիւնից կիջնի, բնութեամբ բարի և ամօթխած է։

Մատներն եթէ կից և վայրակոր լինին, նշան են չարաբարոյութեան և ագահութեան։ Փոքր և բարակ մատները՝ յիմար և նուազախելք։ Փոքր և հաստ մատները՝ համարձակ և չարաչք։

Եղունգն՝ սպիտակ, տափակ, կակուղ, նօսր, կարմրագոյն և շատ փայլուն՝ նշան է ուշիմութեան և հնարամտութեան։ Կոր և դար եղունգը՝ յափշտակող և բթամիտ։ Շատ կարճ եղունգն՝ չարակամ և չարաչքն։

Սրունքն՝ ծնկից սկսած մինչև ոտքն եթէ բարակ լինի, նշան է տգիտութեան և մոռացկոտութեան։ Հաստ սրունքը՝ համարձակ և արի։ Ջղալից սրունքը՝ ուժեղ։ Կարճ և հաստ սրունքը՝ անբարոյական և տմարդի։

Ոտքն եթէ մսալից լինի, նա աւելի ցայտկող կը լինի։ Փոքր ոտքը՝ թեթևանձն։ Հաստ և կարճը՝ աւելի տկար։ Բարակ և ծայրերը վեր թեքւած՝ դարանակալ։ Արձակաքայլն՝ մեծասիրտ։ Արագընթացը՝ որ իրան դպչում է, երեսը կորացնում և բոլոր մարմինը կըծ-



կում՝ երկչոտ, ժլատ և աղւէսաբարոյ է։ Մանրաքայլ արագոտն՝ չարաբարոյ։

Սևամորթը՝ խորամարկ և խորագէտ է։ Սպիտակ և կարմիր գոյնը՝ ուժեղ և սրտոտ։ Սպիտակ գոյնը դեղնութեամբ՝ պակաս ուժեղն։ Հրային գոյնը փայլուն աչքերով՝ ձգտումն, մոլեգնութիւն, կատաղութիւն։ Սպիտակ և սևի մէջ միջակ գոյնը՝ բարեբարոյութիւն և ուշիմութիւն։

---

## ՄԱՐՄՆԱԽԱՂԱՑ ԻՆԳՆԱՏԻՈՍԻ

—

Թէ գագաթը խաղայ, բարի է, ամենից սէր կը վայելէ, մեծութեան և փառքի կհանդիպի, մեծ թագաւոր կտեսնէ, իշխաններից պատիւ կառնու, ճանապարհ կերթայ, կշահի կուրախանայ։ Ծոծրակը թէ խաղայ, չարից, հոգսից, նեղութիւնից և տանջանքից կազատւի։ Գլխի թէ աջ կողմը խաղայ, որին ատում է կը սիրէ. երկար ճանապարհ կերթայ, կը շահւի, բարւոյ կհանդիպի և բարով կդառնայ։ Գլխի թէ ձախ կողմը խաղայ, չարից կազատւի, կամ մեծութեան կհանդիպի։ Գլխի թէ վերի կողմը խաղայ, հոգսի մէջ կընկնի, բայց պատիւ կառնէ։ Գլուխը թէ ամբողջ խաղայ, լաւ է և շատ բարիքի կհանդիպի, մեծ բաղդի մէջ կընկնի. ծածուկ բան կտեսնէ և կլսէ։ Ճակատը թէ խաղայ, շատեր կպտուեն և ամեն բան, ինչ որ լսէ կը կատարւի. գանձ կգտնէ, դատաւորութիւն կվարէ, մեծերից կը բարձրանայ և փառքի կհասնի։ Աջ քներակն թէ խաղայ, իշխանից կմեծանայ, սուգից կազատւի, կանանց համար հոգսի մէջ կընկնի և կմեռնի։ Ձախ քներակը թէ խաղայ, լուութեան և ուրախութեան կը հանդիպի, պատւի և մեծութեան շնորհք կառնէ. կամ մարդու հետ կը կռւի։ Աջ ունքը թէ խաղայ,

կորուստը կգտնէ, թէ ձախը՝ լռութեան կհանդիպի, կամ հիւանդանալու նշան է։ Ունքամէջը թէ խաղայ, նեղութեան լուր կլսէ, անվայել բան կանէ, կտրտմի և կվիրաւորուի։ Աջ աչքի թէ առաջի աղբիւրը խաղայ, սրտնեղութեան, սուգի և տրտմութեան կհանդիպի, բարի կգտնէ, թշնամու հետ կկռուի, վէրք կստանայ կամ լաց կլինի։ Թէ ձախ աչքի՝ բարւոյ և առողջութեան կհանդիպի. հեռաւորը կը տեսնէ և կսրտնեղի։ Աջ աչքի թէ յետի աղբիւրը խաղայ, շատ բարւոյ կհանդիպի և իր հեռաւորը կտեսնէ ու կխնդայ. բանի կհանդիպի և կվայելէ։ Թէ ձախ աչքի՝ հարստութեան և մեծութեան կհանդիպի, կմօտենայ մեծի մօտ. ազգականները կտեսնէ կուրախանայ, բարութիւն կամ բան կընկնի իրեն, շատ թէ քիչ բան կը գտնէ։ Աջ աչքի թէ վերի կոպը խաղայ, հարստութիւն պատիւ է, բարձրանայ, կամ կարտասուի, բայց շուտով կազատուի։ Թէ ձախ աչքի՝ ատելութիւն և լաց է, բայց յետոյ բարի է, ուրախութիւն և խնդումն։ Աջ աչքի թէ ներքի կոպը խաղայ, հեռու ճանապարհ կերթայ, հեռաւորը կտեսնէ, բարի կգտնէ։ Թէ ձախ աչքի՝ շատ բարւոյ կհանդիպի և կուրախանայ, կամ աղգի ատելութիւն է, լացի և սուգի կհանդիպի։ Աջ պտուղն թէ խաղայ, սրտնեղութիւն է, ձախը՝ բարի։ Աջ ակն ամէնը խաղայ, բարւոյ կհանդիպի, կառողջանայ և ամէն դժւարութիւնից կազատուի. մեռնողներից իրան և իր ընտանեացը բան կընկնի հեռաւորը կգայ։ Թէ ձախը՝ շատ բարւոյ կհանդիպի, մեծերից կպատուի, գանձ կգտնէ, փառք և հարստութիւն կվայելէ։

Աջ վերի արտեւանունքը թէ խաղայ, իր հեռաւոր մարդը գայ, տրտմի և լայ, բայց իւր բանը ըստ կամացն լինի։ Թէ ձախը, առողջութիւն խնդութիւն և բարի է։ Աջ ներքի արտեւանունքը թէ խաղայ, լաց և սրտնեղութիւն կամ մեծ բաղդ է։ Թէ ձախը, լաց և հեռաւորն գայ։ Սկաւառակն թէ խաղայ, մեծ մար-



դուց պատիւ կառնէ։ Քթի թէ աջ կողմը խաղայ, քիչ կհիւանդանայ, նեղութիւնից կազատի։ Թէ ձախը՝ բան կընկնի կամ որդի կլինի, թշնամուն կյաղթէ և բոլոր գործերը յաջող կերթայ։ Քիթը թէ ամբողջ խաղայ, մեծամեծներից կօգտուի։ Քթի թէ ծայրը խաղայ, պարտքից կազատուի և կ՚արստանայ։ Քթի ծայրի թէ աջ կողմը խաղայ, ցաւի կհանդիպի. Թէ ձախը, յանկարծ մարդ կկռուի իրա հետ։ Քթափողի թէ աջ կողմը խաղայ, մարդու հետ սէր կկապէ։ Թէ ձախը, պարտքից կազատուի։ Քթի թէ օդը խաղայ, կհարստանայ, բայց իր կինը կմեռնի։ Այտն աջակողմի թէ խաղայ, տրտմի, ամաչէ, հիւանդանայ, բայց բժշկի, և գալիք կհանդիպի։ Թէ ձախը, որդի կլինի, բարի բարեկամից կուրախանայ, գանձի և լռութեան կհանդիպի։ Քներակն աջակողմի թէ խաղայ, սրտնեղութիւն է. խիստ կհիւանդանայ, բայց կապրի։ Թէ ձախ, գուժի ձայն կլսէ և կտրտմի, ճանապարհ կերթայ, բանը կյաջողի։ Երեսի թէ աջ կողմը խաղայ, առողջութիւն է, գանձ կգտնէ, տեղէցը կփոխուի ու կուրախանայ։ Թէ ձախը, կտրտմի, կվիրաւորուի, կհիւանդանայ և շուտով կմեռնի։ Կլափի (վերին և ստորին ծնօտ) թէ կողմը խաղայ, ճանապարհից կդառնայ, շատ բարի կլինի իրան և կուրախանայ։ Կզակի (ստորին ծնօտ) թէ աջ կողմը խաղայ, իր ազգի հետ կվիճի և կը կռուի, փոքր ինչ կտկարանայ, նեղութեան մէջ կընկնի, բայց Աստուած ցաւից և չարից կփրկէ։ Թէ ձախը, իր ազգից ճանապարհորդ կգայ, հեռու ճանապարհ կգնայ, փոքր ցաւից կբժշկուի և կուրախանայ։ Աջ կողմի ականջը թէ խաղայ, ազգականից համբաւ կլսէ, խնդութիւն և լռութիւն է. յանկարծ բարւոյ կհանդիպի, ամենից կսիրուի, կշահի, կուրախանայ, բայց կհիւանդանայ կամ ազգականը կմեռնի։ Թէ ձախը, հեռաւորը կգայ, բարին կյիշեն, բարի լուր կլսէ յանկարծ, խնդութիւն և մեծ ուրախութիւն է, մեծերի

աչքը վրան կքաղցրանայ, և կբաղդաւորի։ Աջ ականջի թէ դմակը (բլդակը) խաղայ, մարդու հետ կկռուի։ Թէ ձախը, բարին կյիշեն։ Աջ ականջի վերի կողմը թէ խաղայ, կտրտմի։ Թէ ձախը, յանկարծ գանձ կը գտնէ։ Աջ ականջի թէ տակը խաղայ, յոյս չունեցած տեղից բարի կգտնէ։ Թէ ձախը, լաւ չէ։ Բերանը թէ ամբողջ խաղայ, սրտով սիրած հեռաւոր սիրելուն կը համբուրէ և սիրելուցը կմեծարի։ Լեզուն թէ խաղայ, կռիւ է և խռովութիւն։ Լեզուն թէ ամբողջ խաղայ, մատնիչներից և զրպարտողներից պատրաստ կենայ։ Շրթունքների թէ վերինը խաղայ, չար լուր կլսէ, կը-ռիւ և խռովութիւն է։ Թէ ներքինը խաղայ կվիճի և կյաղթէ. և շատ բարի է։ Շրթունքների թէ երկու կողմը խաղայ, խօսք կլսէ և կվիճի. զաւակից կուրախանայ, մարդկանցից կբամբասուի, սուգ և տրտմութիւն է։ Վերի և ներքի շրթունքները թէ խաղան, սիրելուն կհամբուրէ։ Վերի շրթան թէ աջ կողմը խաղայ, չար է, կամ զաւակ կլինի և կուրախանայ։ Եթէ ձախը խաղայ, սէր, խնդութիւն է, զաւակից կուրախանայ, պարտքը կվճարէ և սիրելի բարեկամ կգայ։ Վերի շրթանց թէ մէջը խաղայ, կհամբուրէ, որին կամենայ։ Թէ ձախը, տրտմութիւն է։ Ներքի շրթան թէ կողմը խաղայ, կուրախանայ։ Թէ ձախը, կհարստանայ։ Բերանի թէ աջ կողմի կապը խաղայ, կբարձրանա և թշնամուն կյաղթէ։ Թէ ձախը, հեռու տեղ կերթայ, թշնամուն կյաղթէ և կմեծանայ։ Բերանի թէ վերի աջ կողմը խաղայ, գանձ կգտնէ, բաղդի և մեծութեան կհասնի։ Թէ ձախը, թշնամուն կյաղթէ, բարւոյ կհանդիպի, հեռաւորը կգայ և կզօրանայ։ Առաստաղը թէ խաղայ, տրտմութիւն է։ Առաստաղի թէ աջ կողմը խաղայ, կուրախանայ։ Թէ ձախը, կհիւանդանայ և շուտով կառողջանայ։ Թուշի թէ աջը խաղայ թշնամիներից պատրաստ կենայ։ Թէ ձախը, մեծ բարի կգտնէ։ Աջ ծիծը թէ խաղայ առողջութիւն



է։ Թէ ձախը, ուրախութիւն։ Շնչափողը թէ խաղայ, սրտնեղութեան զրոյց կլսէ։ Վզի թէ աջ կողմը խաղայ, կհարստանայ, մեծութիւն կառնէ, փառքի կտիրանայ և շատ կուրախանայ։ Թէ ձախը, գլխաւոր կը լինի, մեծութիւն կառնէ և շատ կհարստանայ, կամ անկարգ գործ կգործէ, աղջիցը և մեծիցը անախորժ զրոյց կլսէ։ Վիզը թէ ամբողջ խաղայ, շատ վատ է, զգոյշ կենայ։ Թիկնամիջի թէ աջ կողմը խաղայ, սրտնեղութիւն է։ Թէ ձախը, անարժան բան կգործէ։ Աջ կծիկն թէ խաղայ, որոգայթից պատրաստ կենայ, թէ ձախը ուրախութիւն է։ Թիկնամէջը թէ խաղայ, կհարստանայ։ Աջ անթատակը (անթ կռան տակը) թէ խաղայ, իր գործքովը կբաղդաւորուի։ Թէ ձախը, մեծութեան կհանդիպի և սիրոյ նշան է։ Բէճը (կռնակ-քամակ) թէ խաղայ, կը հարստանայ, բայց չարից պատրաստ կենայ։ Թէ ձախը, նոր կհագնի, բարի է։ Աջ արմուկը թէ խաղայ, սէր և բարի է, արքունի գործի մէջ կմտնի, փոքր ինչ կտկարանայ և շուտով կազատի։ Թէ ձախը բարի է, օտարներից զգոյշ կենայ։ Աջ բազուկը թէ խաղայ, մարդու կամ կնոջ կհամբուրէ, սէր և խնդութիւն կգտնէ, թէ ձախը մարդկանցից կը պատուի և կբաղդաւորուի։

Թէ աջ բազկի ձուկը խաղայ, գլխացաւի կհանդիպի, թէ ձախը բարի զրոյց կլսէ և բարի կլինի։ Աջ ձեռքի թաթը թէ խաղայ, ցաւոց և նեղութեան կը հանդիպի, թէ ձախը բանտ կմտնէ։ Աջ ձեռքի թաթը թէ խաղայ, ծեծ ու կռիւ է, մարդկանցից կվիրաւորուի։ Թէ ձախը բարի է, հարստութեան կհանդիպի։ Աջ ափն թէ խաղայ կռուի կհանդիպի։ Թէ ձախը, շատ բարւոյ կհանդիպի։ Աջ բութը թէ խաղայ, մեծերը կը սիրեն և կպատուեն, անկասկած բարի կգտնէ, մեծերից պարգև և մեծութիւն կառնէ։ Թէ ձախը հարստութիւն և փառք է, գանձի կհանդիպի, ինչ կամենայ կարող է անել, սուտ բան կասեն և ինքը կընկնի մեղ-

քի մէջ։ Աջ ցուցամատը թէ խաղայ, չարի կհանդիպի, գէշ խօսք կլսէ և մարդկանցից կամբաստանուի։ Թէ ձախը շատ բարի է. ինչ ուզենայ կյաջողի։ Աջ միջամատը թէ խաղայ, թշնամուն կյաղթէ, բարի կգտնէ, հարստութիւն և մեծից շատ մեծ օգուտ կգայ իրան։ Թէ ձախը կռիւ, սրտնեղութիւն է, թշնամուն կյաղթէ բան կգտնէ և կուրախանայ, տրտմութիւնից կազատուի և շատ բարիք կվայելէ։ Թէ աջը մատնէմատն խաղայ, շատ բարի կգտնէ, կհարստանայ, խնդրածը կկատարուի, հեռաւոր սիրելին կգայ, Աստուածածնից շատ բարի կգտնէ։ Թէ ձախը խաղայ, շատ բարւոյ կը հանդիպի և մեծերից կպարգևատրուի։ Աջ ճկոյթը թէ խաղայ, բաղդի և հարստութեան կհանդիպի, կամբաստանուի և կազատուի։ Թէ ձախը, կռիւ աղմուկ աղաղակ է։ Աջ ձեռքը թէ խաղայ, մեծերից կպատուի և կհարստանայ, կամ չարից պատրաստ մնայ։ Թէ ձախը, յոյս չունեցած տեղից բարի կգտնէ, մեծ մարդուց պատիւ կառնէ, թագաւորից պարգև և շատ կը հարստանայ։ Աջ ձեռքի բոլոր մատները թէ խաղան, կտրտմի, բայց յետոյ չարը կհեռանայ իրենից, Աստուած իրա հետն է։ Թէ ձախը, գանձի և պատուի կը հանդիպի։ Աջ ուսը թէ խաղայ առողջութեան նշան է և նոր հալաւ (շորեր) կհագնի։ Թէ ձախը, իրան վիճակ կընկնի և կուրախանայ, Աստուածածնից պարգև կառնէ, և մեծերից կպատուի։

Աջ ծիծը թէ խաղայ, կբաղդաւորի և կուրախանայ, ազգականները կզօրանան, սիրելիքը կբազմանան և ծանօթները կշատանան։ Թէ ձախը, հեռաւոր մարդ կտեսնէ, ընտանիքից կխնդայ, և մեծութեան կը հասնի։ Կուրծքի թէ աջ կողմը խաղայ, բարւոյ կհանդիպի, չարից կազատուի, բաղդի կտիրանայ և մեծութեան կհասնի, կամ վատ գործ կգործէ և շատ կզղջայ։ Թէ ձախը, ամենը նրան կսիրեն, գալու չարը Աստուած նրանից կհեռացնէ։ Կուրծքը թէ ամբողջ խաղայ,



սիրածը կառնէ, խնդութեան ձայն է. բարւոյ աւետիք է, կհարստանայ և սէր կը վայելէ։ Սրտի թէ աջ կողմը սիրելիքը կը շատանան և կուրախանայ։ Թէ ձախը, տրտմութեան կհանդիպի։ Սիրտը թէ խաղայ, յանկարծ տրտմութեան կհանդիպի։ Աջ թևի թէ ներքի կողմը խաղայ՝ օտար երկիր կերթայ։ Թէ ձախը, կհիւանդանայ և շուտով կառողջանայ։ Կողի թէ աջ կողմը խաղայ, շահի կհանդիպի, տեղից կփոխուի, ճանապարհ կերթայ, փոքր ինչ կտկարանայ, բայց շուտով կառողջանայ, Թէ ձախը, որդի կծնի, կամ տեղից տեղ կը փոխուի։ Աջ ողն թէ խաղայ՝ կին կառնէ, ուրախութեան զաւակ կլինի, մեծութիւն կգտնէ, Թէ ձախն, նոյնն է։ Ողան մէջը թէ խաղայ, բարի է։ Աջ մասնը (մսան՝ ողնաշարի երկու կողմի փափուկ մսերը, սուկի, խորովածացու) թէ խաղայ, կհարստանայ։ Թէ ձախը, նոյնն է։ Երկու մասնքը թէ խաղան հարստութիւն է իրան։ Աջ կողը թէ խաղայ, մեծութիւն կգտնէ, կին կառնէ. կբարձրանայ, Աստուածից ինչ խնդրէ կկատարուի։ Թէ ձախը, կին կառնէ, ուրախութեան զաւակ կը լինի, հոգսերից կազատուի. և մեծ կլինի։ Փորի թէ աջ կողմը խաղայ, կմեծանայ և կբաղդաւորուի։ Թէ ձախը շատ լայ և տրտմի։ Փորը թէ ամբողջ խաղայ, Աստուածից ինչ խնդրի կառնէ։ Պորտը թէ խաղայ, շահ կգայ իրան, բարիքը կշատանան, հոգսից կազատուի, կին կառնէ և կնոջից կխնդայ։ Փոքրափորի թէ աջ կողմը խաղայ, կհարստանայ։ Թէ ձախը, կբաղդաւորուի։ Փոքրափորը թէ ամբողջ խաղայ, բարի գրոյց կը լսէ ու կխնդայ, բարի կնոջ կհանդիպի, կհարստանայ և կմեծանայ։ Երանքը (միջաց ստորին մասը) թէ խաղայ, մեծ բարիք կլինի մեծերից, Աստուած խնդրածը կկատարէ, ինչ ուզէ կանէ և իրան արու զաւակ կլինի։ Երանքի թէ աջ կողմը խաղայ. կհարստանայ։ Թէ ձախը, կմեծանայ և կուրախանայ։ Թէ ծայրը կամ կամ տակը խաղայ, կմեծանայ։ Վարոցը թէ խաղայ,

ազգերը բարի կգտնէ, խնդութիւն և ուրախութիւն է։

Աջ ձուն թէ խաղայ, կհարստանայ և կծերանայ։ Թէ ձախը, օտար կնոջ կմօտենայ, շնորհաւոր որդի կը ծնի, պատիւ կառնէ, կգովւի, ուրախութեան կամ հարսանեաց տուն կերթայ։ Երկու ձուն իրար հետ թէ խաղան, շնորհաւոր որդի կլինի։ Աջ ձուատակը թէ խաղայ, յոյս չունեցած տեղից պարգև կառնէ, կամ իր գաղտնիքը կյայտնւի։ Թէ ձախը, կուրախանայ։ Ցայլքը (աճուկը) թէ խաղայ, կնոջ հետ կննջէ, խորհուրդը կկատարւի և իր բանը կյաջողի։ Աջ ցայլքը թէ խաղայ, գործքովը կբաղդաւորի։ Թէ ձախը, մեղքի մէջ կընկնի, չարից պատրաստ կենայ։ Նստատեղին թէ դէպի ձուն խաղայ, մեծ չարիք կհանդիպի, անպատճառ կտրտմի։ Նստատեղին թէ աջ կողմը խաղայ, կմատնւի, բայց Աստուած կազատէ, իր թշնամիքը կը մեռնին։ Թէ ձախը, իր վրայ սուտ կասեն, մարդկանց բարի կանէ և չի շահի, մեղքի մէջ կընկնի բայց շուտով կզղջայ և կուրախանայ։ Թէ երկուսի ներքևը խաղայ, բան կընկնի իրան յանկարծ կհարստանայ։ Աջը անդամը թէ խաղայ, բարի և ուրախութիւն է, տրտմութիւն էլ է։ Թէ ձախը, կուրախանայ, նոր կը հագնի, մարդ հետը կթշնամանայ, զգոյշ կենայ։ Աջ անդամի թէ դրսի կողը խաղայ, կմեծանայ և շատ կը բարձրանայ։ Թէ ձախը, շատ փառքի կտիրանայ։ Թէ աջ անդամի ներսը խաղայ սրտնեղութիւն է։ Թէ ձախը, սրտնեղութիւն է։

Աջ ծունկը թէ խաղայ, մեծի մօտ կերթայ մեծութիւն և պատիւ է. կամ վէճ է։ Թէ ձախը, մեծի մօտ կերթայ կբաղդաւորւի, և կամ վատ գրոյց կլսէ։ Աջ ծնկան թէ դրսի կողմը խաղայ իրան կմատնեն, բայց բարով կազատւի։ Թէ ձախը, իսկոյն կազատւի։ Աջ ծնկան թէ ներսը խաղայ, աւետիս կլսէ։ Թէ ձախը դատաստանից կուրախանայ։ Աջ սրունքը (սրունք, ծունկերը մինչև ոտքի կոճը) թէ խաղայ, հարստու-



թիւն է, մեծերից գովասանք կառնէ։ Թէ ձախը, հարըստութիւն է։ Աջ սրունքը թէ ամբողջ խաղայ, վախը կհեռանայ։ Թէ ձախը, բոլոր նեղութիւնից կազատւի։ Աջ ոլոքի (սրունքի) ներսը խաղայ, բարի գրոյց կլսէ և կուրախանայ։ Թէ ձախը, կճանապարհորդի։ Աջ կոճը թէ խաղայ, սգոյ և լացի կհանդիպի, իր մարդը կմեռնի և կտրտմի։ Թէ ձախը, իր վրայ խօսք կլինի, խնդութիւն է, սիրելիներից կուրախանայ, մեծից բարի կգտնէ, կհասնի ուրախութեան։ Կոճի թէ դրսի կողմը (աջ) խաղայ, մեռելի հետ կգնայ, թէ ձախը, խաղաղութիւն է։ Աջ կոճի թէ ներսի կողմը խաղայ, մեծ մարդուց պարգև կառնէ, թէ ձախը, ուրախութիւն է։ Աջ ոտքի թէ թաթը խաղայ, ուրախութիւն է, ճանապարհ կերթայ, լիքը և ուրախ կդառնայ, թէ ձախը, բարի է և շահ, բաղդը կշատանայ, մեծ մարդու քով կերթայ և կփառաւորւի, խնդութեան և բարձրութեան ճանապարհ է, արքունիք կմտնէ, շատ կխնդայ և կհարստանայ։ Աջ կրունկի թէ ձախ ջիլը խաղայ, օտար գրոյց կլսէ, թէ ձախը՝ հարստութիւն կգտնէ և կուրախանայ։ Աջ ոտքի թէ նրբանը խաղայ, ճանապարհ կերթայ, իրան վէրք կհասնի, իր ազգից կտրտմի, բայց յետոյ բարի կլինի, տրտմութիւնից կազատւի, մեծ օգուտ կգտնէ և կհարստանայ. Թէ ձախը, մեծերից իշխանութիւն և պատիւ կառնէ, իրա բանը կյաջողի, կմեծանայ և կը հարստանայ։ Աջ ոտքի թէ ամբողջ թաթը խաղայ, իրա ազգից կտրտմի և կհեռանայ, կամ ճանապարհ կերթայ, իշխանութիւն կգտնէ և կօգտւի. Թէ ձախը, ազգականներից կհեռանայ և կտրտմի, փոքր ինչ կը հիւանդանայ և կապրի, ճանապարհ կերթայ, պատիւ և իշխանութիւն կառնէ, կմեծանայ և կբարձրանայ։ Աջ ոտքի թէ վերի և ներքևի երեսը խաղայ, արդիւնաւոր ճանապարհ կերթայ, մեծութեան կհասնի, յանկարծ կը հարստանայ և կուրախանայ. Թէ ձախը իրան բոխ

կլինի, մեծից յանկարծ ոռճիկ կառնէ, ճանապարհ, սէր և բարձրութիւն է։ Ոտքի թէ մէջը խաղայ, կկուի և կծեծւի։ Աջ կրունկի թէ վերևը խաղայ, երկրիցը կօտարանայ և բարի զրոյց կլսէ. Թէ ձախը, չարեաց մէջ կընկնի։ Աջ կրունկը թէ խաղայ, մեծութիւն է բայց մեռելի հետ կերթայ, կմատնեն և բարով կպատուի. Թէ ձախը հարստութիւն է և բարի։ Աջ ոտքի թէ բոյթն խաղայ. տրտմութիւնը իրանից կհեռանայ, մարդկանցից կշահւի և կուրախանայ. Թէ ձախը, հեռաւորը կտեսնէ, սիրելքը կշատանան, կհարստանայ, կամ իրան ցաւ կհանդիպի և շատ սաստիկ կհիւանդանայ։ Աջ ոտքի թէ բթամատի մօտի մատը խաղայ, կհիւանդանայ, փորձանքի մէջ կընկնի, բայց կազատւի և իր գնացած մարդը կգայ. Թէ ձախը, հարստութեան, մեծութեան և խնդութեան կհասնի, կամ կվշտանայ և կտրտմի։ Աջ ոտքի թէ միջամատը խաղայ. տրտմութիւն, կռիւ և մեծ փորձանք է. Թէ ձախը, նոյնն է. և կամ շատ բարւոյ կհանդիպի։ Աջ ոտքի թէ ծագ մատը խաղայ, ուղածը կգտնէ, պատիւ և սէր է, կամ վէճ և տրտմութիւն. Թէ ձախը ազգիցը կհեռանայ, տանից և որդիներից կբաժանւի, ուրիշ տեղ կգնայ և շատ յաջողութիւն կգտնէ, կնիկների վերաբերութեամբ իրան կբամբասեն։ Աջ ճկոյթը թէ խաղայ, մեծութեան, հարստութեան և շատ բարւոյ կհանդիպի, կամ բան կկորցնէ. Թէ ձախը, տրտմութիւն, կռիւ և չար է, կամ առողջութիւն և բարի կը գտնէ։ Աջ ոտքի թէ ամեն մատները խաղան, ճանապարհ կերթայ, բարի խնդութիւն ու մեծ սէր կգտնէ, Աստծուց պարգև կառնէ, օտարի հետ կծանօթանայ, բարւոյ և պատուի կհանդիպի. Թէ ձախը շատ վատ է։ Տափողը (կոնակի տափակ տեղը) թէ խաղայ. խնդայ, ձի հեծնի և բարի ճանապարհ կգնայ։



## ԼՈՒՍՆԻ ՕՐԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Օրը բարի է ամեն բանի, Ադամը նոր ստեղծւեց, սերմանել, տնկել, ճանապարհ գնալ, հիմք դնել։ Նոյը տապանի սկիզբը այսօր արաւ, Մովսէսն այսօր ժողովուրդին Եգիպտոսիցն հանեց, Գաբրիէլն այսօր տւաւ ողջոյն Մարիամին, Սողոմոնն տաճարի սկիզբն այսօր արաւ, ծնածը կարճակեաց, հիւանդը 14, 21 և 28 օրից յետոյ կառողջանայ, կորածը կգտնւի, արիւն թողնելը դեղնութիւն և բորոտութիւն կբերէ. երազն բարի կկատարւի։

2. Օրը բարի չէ, նախաստեղծն այսօր ընկաւ, Կայէնն այսօր Աբէլին սպանեց. հիւանդը մինչև 12 օրը երկմիտ, յետոյ կլաւանայ, կորածը մինչև 40 օրումը կգտնւի. տունկ անել, նաւ ուղղել լաւ է, ծնածը կլինի երկարակեաց, խոնարհ և չնացող, արիւն թողնելը լաւ չէ. երազն երեք օրից կատարւի։

3. Օրն ամեն բանի բարի է, Հեղինէն խաչը այսօր գտաւ, Սողոմոնն այսօր ծնաւ։ Գնել վաճառել բարի է, կորածը կգտնւի, փախածը յետ կդառնայ, ծնածը շնորհալի և պատերազմող, բայց կարճակեաց կը լինի, արիւն թողնելը հիւանդութիւն և եռը կբերէ. երազն բարի կատարւի։

4. Օրը լաւ չէ, մի վաճառիր, մի գնիր, Նաբուգոդոնոսորն այսօր տաճարը քակեց, մոգերն այսօր ընծայ բերին, Հերովդէսն այսօր Մոգերից խաբւեցաւ, հիւանդը կմեռնի, ծնածը շնորհալի կլինի և մեծութեան կհասնի, արիւն թողնելը վատ է, երազը սուտ է.

5. Օրն ամեն բանի բարի է, մեղուն լաւ կգայ, սերմանել, տնկել, ճանապարհորդել, նաւ ուղղել, Նոյը այսօր մտաւ տապանը, Սողոմոնը տաճարը շինեց։ կորածը կգտնւի հիւանդը կառողջանայ, ծնածը երկայն հասակում կմեռնի, արիւն թողնելը բորոտութիւն կբերէ, երազը բարի կկատարւի։

6. Օրն ամեն բանի բարի է, Տէրն այսօր Առաքեալներին քարոզութեան ուղարկեց, մանուկներին ուսման տալ, գնել, վաճառել, տնկել և սերմանել, կորածը մինչև 40 օրը կգտնուի, հիւանդը կառողջանայ ծնածը հիւանդոտ, բայց բաղդաւոր կլինի, արիւն թողնելը շահաւէտ է, երազը տարին կկատարուի:

7. Օրը վատ է, Աստուած այսօր Ադամին և Եւային դրախտից դուրս արաւ, հիւանդը շատ կնեղանայ, ծնածը պիսակոտ, գող և երգարակեաց կլինի. արիւն թողնելը վնաս է, երազը սուտ է:

8. Օրը բարի է, լեզուներն այսօր բաժանուեցան, կորածը կգտնուի, հիւանդը կասկածաւոր է, ծնածը ձայնեղ կլինի և կծերանայ, արիւն թողնելը վնաս է, կերածը չի մարսի և սիրտը կդողայ, երազն 8 օրից կը կատարուի:

9. Օրը բարի է, Քրիստոս այսօր մկրտուեցաւ, գնել, վաճառել, ճանապարհորդել, երեխայ մկրտել, թագաւոր տեսնել, մեծի մօտ գնալ, դատաստան մըտնել բարի է, հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեաց, արիւն թողնելը բարութիւն կբերէ, երազը բարի կկատարուի:

10. Օրը բարի չէ, բան մի գործեր, ամեն բանից պատրաստ կաց, մի երդնուր, մազ մի հարթեր, փախածը կգտնուի, հիւանդը կառողջանայ, ծնածը երկարակեաց կլինի, արիւն թողնելը վնաս է, երազն երեք օրից կկատարուի:

11. Օրը բարի չէ, աշխարհը ջրհեղեղով կորաւ, մի գործեր, մի երդնուր, մի երդումն տար. ջուր մի մտներ, Կէտն այսօր Յովնանին կուլ տուաւ, Ադամն այսօր դրախտից դուրս եկաւ, հիւանդը կբժշկուի, ծընածը շուտ կմեռնի, արիւնը վնաս չէ, երազը օրը կատարուի:

12. Օրը չար է, մի երդնուր, մի երդուեցներ, ամեն բանից զգոյշ կաց, և աղօթիր, հիւանդը կմեռնի, ծնածը միջակեաց, արիւն թողնելը շահաւէտ է, երազն երեք օրէն կկատարուի:



13. Օրը բարի է, գործել, հիմք դնել, հարսանիք անել. հիւանդը 8-րդ օրը նեղութիւն կկրէ և կվնասուի. ծնածը իմաստուն կլինի և կայրի. արիւն թողնելը վնաս է, երազը բարին կկատարուի:

14. Օրը չար է, մի գործեր. հիւանդը մինչև 15-ը նեղութիւն կկրէ, յետոյ կլաւանայ, ծնածը թոյլ կլինի և չար մահ կունենայ. արիւն թողնելը կհիւանդացնէ, երազը 40 օրից կկատարուի:

15. Օրը բարի է, շինել, տնկել, վաճառել, բոլորը բարի է, Քրիստոս այս օրը դժոխքը աւրեց. կորածը կգտնուի, հիւանդը 4 օրից յետոյ կվնասի, ծնածը երկարակեաց և զօրաւոր կլինի, արիւնը շահաւէտ է, երազը օրը կկատարուի:

16. Օրը բարի է, սերմանել, տնկել, հարսանիք անել, երեխային ուսումնարան տալ, մեծի մօտ գնալ. կորուստը կգտնուի, հիւանդացածը 28 օրից կլաւանայ, ծնածը գեղեցիկ, երկարակեաց և մեծատուն կլինի, արիւնը կվնասէ, երազն երեք օրից կկատարուի:

17. Օրը բարի է, հիմք դնել, պատերազմել, հիւանդը 18 օրից յետոյ կլաւանայ, ծնածը կլինի զւարթ և գեղեցիկ. երազը նոյն օրը կկատարուի:

18. Օրը բարի է, հարսանիք անել, ճանապարհորդել, հիւանդը կառողջանայ, ծնածը կասկածաւոր և շատախօս կլինի, արիւնը օգտաւէտ է, երազը բարի է:

19. Օրը բարի է, սերմանել, տնկել, երեխային ուսումնարան տալ, մեծի մօտ գնալ. հիւանդը կմեռնի, ծնածը բաղդաւոր և հանճարեղ կլինի, բայց արբեցող, լեզուն վատ և ինքը շնացող. արիւն թողնելը վնաս է, երազը բարի կկատարուի:

20. Օրը բարի է, սերմանել, շինել, վաճառել, ճանապարհորդել, մեծի մօտ գնալ, հիւանդը կվնասուի,

ծնածը յաղթանդամ, խոնարհ և աղօթասէր կլինի. բայց կրակը կամ ջուրը կընկնի, միայն ողորմածասիրութիւնը կազատէ՝ եթէ ունի. արիւնը վնաս է, երազը սուտ է:

21. Օրը չար է, մի գործեր, մի վաճառեր, մի գներ, մի երդուիր և մի երդուեցներ, հիւանդը կմեռնի, ծնածը աղօթասէր կլինի, արիւնը շահաբեր է, երազը սուտ է:

22. Օրը չար է, մեղք չգործես՝ որ չյուզվիս, բայց հիմք դնել, վաճառել, գնել, մանուկ ուսման տալ լաւ է. հիւանդը կլաւանայ, ծնածը երկարակեաց և մեծերին սիրելի կլինի, արիւնը շահաւէտ է, երազը բարին կկատարուի:

23. Օրը բարի է, գնել, վաճառել, ճանապարհ գնալ, փախածը կգայ, կորածը կգտնուի, հիւանդը մահառիթ, ծնածը առատամիտ, բաղդաւոր և յաջողակ կլինի. արիւնը շահաւէտ է, երազն 30 օրից կկատարուի:

24. Օրը չար է, ամեն բանից պատրաստ կաց, ճանապարհ չգնալ, չվաճառել, չգնել, մեծի մօտ չգնալ, փախածը կվերադառնայ, հիւանդը կառողջանայ, ծնածը անօգուտ և անվաստակ կլինի, արիւնը շահաւէտ է, երազը սուտ:

25. Օրը չար է, մի երդնուր, մի երդուեցներ, տեղ մի գնա՛ր, փախածը կվերադառնայ, հիւանդը կմեռնի, ծնածը շէկ, շատամօրուս և ցանկացող կլինի, արիւնը շահաւէտ է, երազը սուտ:

26. Օրը բարի է, գործել, բայց մի երդնուր, փոխ տանել, ճանապարհ գնալ, սերմանել, հարսանիք անել բարի է, հիւանդը վնաս կկրէ, ծնածը շուտ կմեռնի, արիւնը շահաւէտ է, երազը բարի:

27. Օրը բարի է, վաճառել, գնել, կորածը կը գտնուի, հիւանդը կառողջանայ, ծնածը աստուածավախ կարգաւոր կլինի. արիւնը մահ կպատճառէ, երազը սուտ է:



28. Օրը բարի է ամեն բանի, մանուկ ուսման տալ, մեծի մօտ գնալ, հարսանիք անել, կորածը չի գտնուի, հիւանդը չի ապրի, ծնածը գեղեցիկ և շնորհալի կլինի, արիւնը վնաս է, երազը իրեք օրից կկատարուի:

29. Օրը բարի է, ամեն բան գործել, տնկել, շինել, հարսանիք անել, հիւանդը կմեռնի, ծնածը հանճարեղ և բաղդաւոր կլինի. բայց արբեցող լեզուով սիրելի, գործքով շնացող, արիւնը վնաս է, երազը լաւ է:

30. Օրը բարի է, կնքել, պսակել, հիմք դնել, ճանապարհ գնալ, կորածը կգտնուի, նաւ մի նստել, հիւանդը կառողջանայ, ծնածը բաղդաւոր՝ բայց արբեցող կը լինի, արիւնը վնաս է, երազը բարի է:

## ԵՐԱԶՆԵՐԻ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

### ԸՍՏ ԴԱՆԻԷԼ ՄԱՐԳԱՐԷԻ

### Ա.

Աստուած երազում տեսնելը ամեն չարից կազատուի, թէ աղքատ է կհարստանայ, թէ հիւանդ է՝ կառողջանայ: Աստուած իր տան մէջ տեսնելը, նորոգութիւն է: Աստղ տեսնելը լաւ է, իր տան մէջ տեսնել, բարիքը կաւելանայ, թէ օտարութեան մէջ լինի՝ խաղաղութեամբ տուն կվերադառնայ. Աստղեր տեսնելը ճանապարհ կերթայ և կօգտուի: Աստղերի երկնքից վայր ընկնել տեսնելը, մեծերի մահ և կորուստ է: Ասպար (վահան, ղալխան) տեսնելը, պատիւ և իշխանութիւն է: Արեգայ տեսնելը փառք և պատիւ է: Աքաղաղը, բարի կամ կուռի նշան է: Ագռաւներ, թշնամիքդ կյարձակեն քեզ վրայ: Աթոռը, մեծութիւն և բարձրու-

թիւն է։ Աթոռ նստելը, բարձրութիւն է։ Ալևոր իրեն տեսնելը հարստութիւն է։ Ալիւրն բարի է և ոյժ։ Ալիւրն ամանովը, հարստութիւն է։ Ականջը՝ աղջիկ-կնիկ և աւետիս է։ Աղաւնին, շնորհք է։ Աղուէսը՝ թշնամի է, թէ որսաս, թշնամուդ կյաղթես, թէ փախչի՝ պարտականդ կփախչի, թէ հետդ կռուի՝ զգոյշ կաց չարից. թէ հետը խաղայ գեղեցիկ կնոջ հետ կծանօթանայ։ Աղջիկ ծոցումը՝ խնդութիւն է. փոքր աղջիկը, շատ օգուտ է։ Աղջիկ երեխան, ցնորք է և նեղութիւն։ Աղջիկ տեսնելը ամենը լաւ է, և կին տեսնելը լաւ է և խնդութիւն և իր կամքը կկատարուի։ Աղբիւր տեսնելը և լուացուիլը շահ և օգուտ է, աղբիւրից ջուր խմելն օգուտ է, իսկ ջուր տանելը վատ է։ Աղն ու անանուխը, անուշ խօսք է և բարի։ Աղը, կսկիծ է, սպիտակ աղը, դրամ է և բարի, սևը վատ խօսք և տրտմութիւն է, կոտրածը, կռիւը խափանի։ Աղի ձուկը կսկիծ է։ Աղը, ապօրինի ռոճիկ է։ Աղեղը զրոյց և բամբասանք է։ Աղիւս հանելը տան շինութիւն է և լաւ է։ Աղքատին բան շնորհելը, Աստուծոյ պարգև, շահ և բարի է։ Ալ հալաւն, շատ ժամանակ ուրախութիւն և շնորհք է։ Ամանաթ (պահ տուածը) առնել և պահել և հաւատարմութեամբ վերադարձնելը՝ բաղդի և մեծութեան նշան է։ Ամբաստանեալ (մեղադրըւած մէկին տեսնելը, վնաս և շատ վատ է։ Արմաւը, (խուրմա) շատ բարի և անուշ-խօսք է։ Այծն և քոնն (որձ այծ՝ ճանապարհ է։ Այրւած հանդերձը, (շոր) երկիւղ և մահւան վնաս է։ Այրել և աւերել իր տունը, մեծ վնաս է։ Անձրևը, բարի ժամանակ է։ Անդաստան (այգիներով, արտերով, ծառերով և գիւղերով զարդարւած դաշտ) տեսնելը բարի ժամանակ և աշխատանք է։ Անասունը արդար աշխատանք է։ Անուշեղէն ուտելը անուշ խօսք է։ Անուշահոտ բանը. լաւ է և արդար աշխատանք։ Անկանիլ գետը, հարստութիւնից ընկնել է։ Աչքը, գանձի շատութիւն է։ Աչքեր շատ



տեսնելը, հարստութիւն է։ Աչք մեծ ունենալը, կեանքի յաւելումն է։ Աչք հանելը, կինը կամ որդին կմեռնի։ Ապարանջանը, կին է, տղամարդուն՝ պատիւ. եթէ կինը տեսնէ, թէ այրի է, մարդ կառնէ, թէ մարդ ունի, տղայ կլինի։ Ապրշումը, լաւ է։ Ապաշխարողը հաւատք է։ Առիւծը, թագաւոր կամ իշխան և կամ մեծ մարդ է, երկու առիւծի իրար հետ կռուելը, 2 թագաւորի իրար հետ կռուելու նշան է։ Առիւծի հետ կռիւը, մեծ մարդու հետ կռիւ է։ Առիւծի վրայ նստելը, մեծութեան հասնիլ է։ Առիւծից փախչել, իսկ առիւծի յետևից չգնալը ազատութիւն է։ Առիւծ դէմն ելնելը, մեծ երկիւղ է։ Առիւծի անամօթութիւնը, թշնամեաց յարձակումն է։ Առիւծի միս ուտելը, չարակամից բարւոյ նշան է։ Առու տանը մէջ տեսնելը, գանձ է և օգուտ։ Ատամների ամբողջ ընկնելը, մեծ գանձ գտնելու նշան է։ Առաջի ատամը ընկնելը, սուգ կամ ճանապարհ է։ Առաջի ատամների հանելը, որդւոյ մահ է։ Ատամների ներքինը հանելը, տրտմութիւն է. վերինը՝ ազգականի մահ է։ Ատամնարի մեծերը հանելը, մօտ ազգականի մահ է։ Ատամները սրբելը, ուրիշի աշխատանքն ուտել է։ Ատամները սևացած տեսնելը, հիւանդութիւն է։ Արեգակը, թագաւոր է, արեգակը ձեռքն առնելը, մեծութիւն է։ Արեգակը խաւար տեսնելը, այնտեղի մեծին չար է։ Արեգակը երկնքից վայր ընկած տեսնելը, այնտեղի թագաւորին մահ է։ Արեգակն ամպի մէջ տեսնելը, երկրի նեղութիւն է։ Արեգակի և լուսնի իրար հետ ընթանալ տեսնելը, թագաւորներ են, նշան է կռուի և հիւանդութեան։ Արեգակի և Լուսնի նորելը, երկրի բաժանել է։ Արծաթ մաքուր տեսնելը հաւատք է։ Արծաթը նեղութիւն և ծանրութիւն է։ Արմաւենին, ամեն ծառից լաւ նշան է։ Արիւն թափելը, մեծ վնաս է։ Արիւն տեսնելը կամ առնելը, շնորհք է։ Արծիւը, մեծ մարդ է, վրան նստելը, իշխանութեան հասնիլ է. հետը կռուիլը՝ մեծ մարդկանց

հետ կռւիլ է, թէ արծիւը զարկէ, մեծից վնաս և ահ է։ Արմաւներ և հաւերը, գեղեցիկ և շնորհալի կին է։ Արջը, վատ խօսք է, Աւետարանը արդար աշխատանք է։ Աւազը, արդար ռոճիկ է։ Աւագերէց մեռած կենդանացած տեսնելը, մեծ զրոյց կենդանանայ։ Աւազակը, կռիւ է զգուշացիր։ Իշխանը, բարի է։

Բ.

Բարձրանալը, օգուտ է և բարի։ Բարձրանալ և վայր ընկնելը, մահւան վնաս է։ Բարձր տեղից ընկնելը շատ չար է, պատւից ընկնել է։ Բարձր տեղերի վրայ քայլելը, մեծութեան հասնիլ է։ Բարբառելու և սազերի ձայնը անուշ խօսք է։ Բարև տալը կռիւ է։ Բազուկ ազնիւը օգուտ է։ Բազուկ կեղտոտը մեղք է։ Բաղանիքը հոգս է։ Բաղանիք գնալը, խաբէութեան մէջ ընկնիլն է։ Բաղանիքից դուրս գնալը, հոգսերից ազատւիլ է։ Բաղանիքում լուացւիլը, չարչարանքով աշխատանք է։ Բաղանիքում լուացւել կամ մնալը, մեծ նեղութիւն է։ Բադը, մեծ մարդ է։ Բակ շինելը կամ հիմք դնելը, բարութիւն է։ Բահը, լեզու է։ Բամբակը, արդարութիւն և սրբութիւն է։ Բանջարը օգուտ է։ Բանջարը աւեր, չար է։ Բևեռ տեսնել և ժողովել մեծ բարութիւն է։ Բերդը, իրաւունք է։ Բերդ մտնելը ամրութիւն և պարիսպ է։ Բերդ առնելն, նեղութիւնից ազատւիլ է։ Բերանը, ձեռնտւութիւն է։ Բերանի ցամաքելը, ռոճիկի պակասիլ է։ Բիրը, (ձեռքի փայտ) եղբայր է կամ որդի։ Բիր կոտրելն, եղբայրն կամ ազգականը մեռանի։ Բլուրը, երկրի շինութիւն և խաղաղութիւն է։ Բուն, նեղութիւն է։ Բուրվառ առնելն և շարժելը, լաւ չէ, կռիւ է։ Բուրդը սպիտակ, առողջութիւն, արդար աշխատանք և օգուտ է։ Բուրդը սև, սուգ և լաց է։ Բուքը, գուժի ձայն է։ Բոզ կնոջ հետ խօսիլը, վատ է։ Բոբիկ (բաց ոտք) իրան տեսնիլը վնաս է։ Բորոտ իրեն տեսնելը, գանձ և մեծութիւն է։ Բոքակ տեսնել և ժողովելը, կսկիծ է. Բողկ ուտելը,



առողջութիւն և օգուտ է։ Բրինձը բարի է, բերել կամ գործելը, մեծ բարութիւն է։

Գ.

Գառը, մեծ օգուտ է։ Գառներ մորթել, լաւ չէ։ Գառներ լւանալը, տրտմութիւն է։ Գազանը, կռիւ է։ Գազանը որ ձայն տայ, երկրի նեղութիւն է։ Գազանի հետ խաղալը, թշնամու հետ հաշտութիւն է։ Գազանի փախչիլը, խաղաղութիւն է։ Գանձը, օգուտ է։ Գարի, հարստութիւն է։ Գարի սերմանել և ժողովել ռոճիկ է։ Գայլը, թշնամի է, թէ սպանես՝ թշնամուդ կյաղթես։ թէ զարկես ու չսպանես, կնոջ հետ մեղք կգործես, բանդ բարին կյաջողի։ Գայլի միսը թէ ուտես, մարդուց վնաս կստանաս։ Գայլագուան, անհաւատ մարդ է։ Գաւազանը թշնամու դէմ ամրութիւն է։ Գաւազանը ափին։ լաւ է. ձեռին, որդի է կամ շահ։ Գաւաթը ձեռին. խնդման զաւակ է։ Գետ և հեղեղը, այլև անցնելը, հառաչել է։ Գետ յստակ նայելը, առատութիւն է։ Գետ պղտորը, լռութիւն է։ Գետում լւացւելը նեղութիւն է։ Գետն ի վայր գնալը, թշնամուց կյաղթւի։ Գերի տանելը, նեղութիւն է։ Գերի իրան տեսնելը, մեծութիւն և շահ է։ Գերանի կտրւիլը, տանտէրը կմեռանի։ Գերեզման բանալը, վնաս է։ Գերեզմանում իրան տեսնելը, վատ է։ Գեղեցիկ իրան տեսնելը, փառք է։ Գեղեցիկ պատկեր նկարելը, նոյնն է։ Գէշ հոտ, գէշ խօսք է։ Գէր իրան տեսնելը, տղաների աճումն է։ Գինի անապակ տեսնելը, խմելը կամ գնելը, ույժ է և շահ։ Գինի ջրով խմելը, հարամ ռոճիկ է։ Գինձը անուշ խօսք է. ուտել կամ ժողովելը, կռիւ է։ Գինդ ունելը, մեծ շահ է, ականջիցը հանելը, մահւան վնաս է։ Գիշերը ճանապարհ գնալը, նեղութիւն է. գիսաւոր աստղը, մեծութիւն և պատիւ է, գիրք կարդալը, ժողովք է. գիր գրելը բարի է. գլխատած իրեն տեսնելը, մահւան վնաս է. գլուխը մարմնից բաժանած տեսնելը, յօժարութիւն կգնայ. գլուխն կտրած

ձեռք առնելը զանձ կգտնէ. գլուխը գեղ քսելը անուշ խօսք է. ածիլելը, ամեն նեղութիւնից ազատուիլ է, ուրիշին ածիլելը, ցաւից դժւար ազատուիլ է, լւանալը վնաս է. գլուխը սպիտակ տեսնելը, յանկարծ մահ է. գլխաորը, ցնորք և աղքատութիւն է. գամեշը շահ է և ուրախութիւն. գամեշը գետում, բարի զրոյց է. գոմ շինելը ահ և ուրախութիւն է. գոյնզգոյն հալաւը խնդութիւն է. գորտը, հաւատացեալ մարդ է. գորտի ձայնը խնդութեան զրոյց է. գորտ սպանելը, հաւատացեալ մարդու հետ հաշտութիւն է. գդակ դնելը, պատիւ է. գրաւական տանից հանելը, մահւան վնաս է. գրողը, մահ է. գրիչը և կաղամարն, երէցին խելք կամ ճանապարհ է, գրչի ամանը, կին է։

## Դ.

Դահեկան (մի ղուրուշ կամ 8 կ.) տեսնելը կամ առնելը օգուտ է, կին կառնէ և տղայ կվաստակի. դամոնը հիւանդութիւն է. դանակ տեսնելը կամ գնելը վատ է. դանակ շինողը ցաւոտ մարդ է. դաշտը ահալի գործ կատարել է. դաշտից դուրս գալը նեղութիւնից ազատուիլ է. դատաւորը Աստուած է. դատաստանը մեղաց քննութիւն է. դարպաս (բաց դուռ, պալատ) տեսնելը հարուստ կին է. դարպաս լայն անցնելը մեծութիւն է, փակելը մեծ մարդու ընկնիլ է. դարբինը մեծ մարդ է. դարբնութիւնը լաւ տանուտէր է. դեկան (տասնոց) կորցնելը, նեղութիւնից կամ հիւանդութիւնից ազատուիլ է. դեկան կամ դրամ թէ աշնան տեսնէ, արիւնահեղութիւն է, թէ գարնանը՝ բոր և ծաղիկ է. դեղին սեխը, հալաւը, ձին հիւանդութիւն է. դեղինը բոլոր՝ վատ է. դևը նեղութիւն և մեղաց նշան է. դըդում ցանելը ջերմ է ուտելը հիւանդութիւն. դի տեսնելը բարի զրոյց է. դիպակ (ապրեշումեղէնից շոր, ըզգեստ) տեսնել և հագնելը մեծ պատիւ է. դմակ տեսնելը և ուտելը հիւանդութիւն և անհոգութիւն է. դուռ տեսնելը և առնելը պատիւ է մեծ մարդու հետ ծանօ-



թանալ. դուռ բանալը, բաղդի բացուիլն է. դուռ ձգելը մեծ մարդու ընկնիլն է, դուռը կոտրելը մահւան նշան է. դուռն ելնելը բարի չէ. դուրը՝ (փայտ փորելու գործիք է) պատիւ է. դրամ տեսնել կամ ժողովելը ապահովութիւն է. դրացուն բարև տալը կռիւ է։

## Ե.

Եզն տեսնելը ահը կգնայ. եզն նստած անհոգութիւն է, կամ մեծ աւետիս. եզի միս ուտելը լաւ է, ըստ ոմանց նեղութիւն և հիւանդութիւն է. եզներ և սայլեր հիւանդութիւն է. եզների կռւիլը երկրի ահ է կամ թշնամի. եզն մորթելը մահւան վնաս է. եկեղեցի շինելը փառք է. եզն ուտելը բարի է. եղնիկը տան մէջ տեսնելը զուգակից է, կամ սիրելի կգայ. եղջերուն երկրի նեղութիւն է. երգեհոնը տրտմութիւն է. երկիրը խնդութիւն է. երկանք աղալը կամ տեսնելը անհանգստութիւն է. երկաթ տեսնել կամ գըտնելը շատ վատ է և տրտմութիւն. երկաթով ծեծելը նեղութիւն և ցաւ է. երես լւանալը լաւ չէ. երակ առնելը սրբութիւն է. երակ կտրելը մահւան վնաս է. երեսը կարմիր, բանը բարի կլինի. երեսը դեղին մեղք է. երեսը գեղեցիկ մեծ փառք է։

## Զ.

Զանգակի ձայնը խնդումն և ուրախութիւն է. զաֆրանը (քրքում) հիւանդութիւն է. զինելը մեծ նեղութիւն է. զինւորը տրտմութիւն է. զմրուխտը լաւ է. զնդանը մեծ հոգս և սուգ է. զուռնան կամ ձայնը անձրև կամ կռիւ է. զրոյց տալը նեղութիւն, կամ չարութիւն է. զրահն պարոնութիւն է։

## Է.

Էրէցը մեռած՝ մեծ զրոյցի խափանումն է. էրէցը մեռած տեղից վեր կենալը, հին խօսքը կնորոգւի. էշերը նեղութիւն է. էշ խառն, նախանձ է. էշն անամօթ լաւ չէ. էշը մեղուների ծամելը թշնամեաց կորուստ է. էշը ճերմակ կամ օտար, բարձած կամ հեծած, բարի է և պատիւ։

Ը.

Ընդ (հետ) իշխանի խօսիլը, բարի է և յանկարծ շնորհք. մի ուրիշ մարդու հետ խօսիլը շահ է և փառք. ուրիշ կնոջ հետ խօսիլը տրտմութիւն է. աղբի հետ խօսիլը լաւ չէ. կոյսի հետ հաց ուտելը բարի է. բոզ կնոջ հետ ննջելը վատ է. գետոցն անցիլը լաւ չէ. ըղունք (եղունգ) ունենալը աղքատութիւն է. ընկոյզ ժողովելը լաւ չէ։

Թ.

Թագաւորի ողջունելը փառք է. Թախտը մեծութիւն է. Թախտը կանաչ ցաւ է. Թամբարարը իրաւաբար մարդ է. Թանաք եփելը լաւ է. Թանաք վերից թափելը վատ խօսք է. Թարախով իրան տեսնելը օգուտ և հարստութիւն է. Թարախը արիւնախառն մեղաց գործ է. Թաքստի իրան տեսնելը բարի է. Թևաւոր իրեն տեսնելը անհանգստութիւն է, Թթու մածուն ուտելը անարդար վաստակ ուտել է. Թզի ծառը լիրբ մարդ է. Թուզը դալար տեսնել կամ ուտել վնաս է. Թուզը չոր ուտել օգուտ է. Թուխ մօրուս այևորը, շահ է. Թուխ իրեն տեսնել, մեծութիւն է. Թռչիլը ուրիշ տեղ գնալ է. Թռչիլ շատ բարձր, պատիւ և մեծութիւն է. Թռչունը մարդու մօտենալը, երջանկութիւն է. Թռչուն արձակելը, մեծ բարութիւն է. Թռչունի փախչիլը, մեծ վնաս է. Թռչնոց կուիլը, մեծ վնաս է. Թռչունը թէ ում հետ խաղայ, նրան թշնամիքը կսիրեն։

Ժ.

Ժամատունը զարդարած, արքայութեան արժանանալ է։ Ժամ գնալը, կեանքը բարի կլինի։ Ժամատանը աղօթելը, լաւ բան անել է։ Ժամ անելը լաւ է։ Ժամհարը նեղութիւն է։ Ժողովքը աղմուկ է։ Ժամացոյցը օգուտ է։

Ի.

Իրան, մանուկ ժամանակին ալեոր տեսնելը, կենաց յաւելումն է։ Իրան, ալեոր ժամանակին մանուկ



տեսնելը, նոյնն է։ Իրան նաւ նստիլը, պատիւ է։ Իրա բարձր տեղ նստիլը, մեծերից պատիւ է։ Ինքը անապատում նստած, հիւանդութիւն է։ Ինքը ճերմակ կամ սև ձի թէ նստիլը և թէ վազելը բարի է և պատիւ, իսկ գնացող ձի կամ ջորի նստիլը, մեծերից օգուտ է, կառք նստիլը մեծ պատիւ է։ Գայլի վրայ նստիլը, նեղութիւն է։ Ինքը թէ բարձր տեղից ընկնի, պատւից ընկնիլ է։ Իրանից բան ուզելը պատիւ է։ Իրան գերեզմանում տեսնելը, դատաստանի և բանտի հանդիպիլ է։ Իրք մեռելներից ուզելը բարի է և շահ։

Լ.

Լոյս տեսնելը, աշխարհի խաղաղութիւն է։ Լոյսը հանգած, տրտմութիւն է առաջնորդներին։ Լուսինը և Արևը այգում տեսնելը ազգին վնաս է։ Լուսնի աստղը խիստ շահ է։ Լուսիններ շատ տեսնելը, աճումն է երկրի։ Լուսինը կարմիր, վնաս է։ Լուսնի խաւար, թագաւորի մահ է։ Լուսինը երկուս տեսնելը, երկու թագաւորի իրարու վրայ վեր կենալ է։ Լուն ռոճիկ է։ Լուծ գնելը վատ է։ Լուծը եզների, բարի է։ Լեառն բարձր, տրտմութիւնից ազատիլ է։ Լեհեպն (վերակ) հարուստ կին է։ Լիմոնը անուշ խօսք է։ Լաց նստելը նեղութիւն է։

Խ.

Խաչակնքելը մեծ պատուոյ նշան է։ Խաչն չարչարանք է։ Խաչափառը, դատարկ մարդ է։ Խաւարը նեղութիւն է։ Խաւիարն (ձկնկիթ) հիւանդութիւն է։ Խաղողը անձրև է։ Խաղողի սպիտակը, խնդութիւն, սև լաց է։ Խաղող ժողոված, գանձ է։ Խարդալը, օտար կին է։ Խարփիզակ (սեխ) սև, կամ սպիտակ, կամ կանաչը լաւ է, ուտելը հիւանդութիւն։ Խիարն (վարունգ) ուրախութիւն է։ Խմոր ուտելը շահ է։ Խնդալը լաւ չէ։ Խնձորը տղայ է, ուտելը շահ։ Խնձոր իրեն տալը աւետիս է։ Խնձորի ծառը, մեծ մարդ է։ Խուլը և համրը, շահ է։ Խունկ ծխելը հարստութիւն և անուշ

խօսք է։ Խորոված միս ուտելը, շահ է։ Խոզ մեծ տես-նելը, մահ է կամ օտար ազգ։ Խոզի միս ուտելը ազ-գականաց մահ է։ Խոտը, լաւ մարդ է։ Խոտ ժողովելը պատիւ է և փառք։

Ծ.

Ծաղկած անդաստանը (դաշտ՝ այգիներով, արտե-րով և տներով) շահ և ուրախութիւն է։ Ծաղիկը, ան-հոգութիւն է։ Ծաղիկ քաղելը, կին առնել է։ Ծաղիկը ծաղկած ծառը, բարի է։ Ծառ տնկելը, յիշատակ և բարի է։ Ծառը պտղով նոյնն է։ Ծառ կտրել կամ այ-րել վնաս է։ Ծառը թէ թուխ լինի լաւ չէ։ Ծառի տե-րև թափելը արիւնահեղութիւն է։ Ծառի ընկնելը մահ է։ Ծառի մեծը վայր գլորելը, մեծ մարդ կմեռնի։ Ծառի վրայ նստելը փառք է։ Ծառի վրայ գնալը նոյնն է։ Ծառ կանաչ, գանձ է։ Ծառ չոր, տրտմութիւն է։ Ծառը զուգելը, կին է։ Ծառան աւետիք է։ Ծարաւելը լաւ չէ։ Ծանր շալակելը, մեծ մեղք է։ Ծիծաղելը, տրտմութիւն է։ Ծիծը տղայ կամ մեծութիւն է։ Ծնա-նինիլ կնոջ, մեծ օգուտ է։ Ծունր դնելը բարի է։ Ծո-վը և պղտորը լաւ չէ։ Ծովը ցամաք, լիութիւն է։ Ծո-վում լւացւիլը շահ է։ Ծովային, մեծ թշնամի է։ Ծովն ի ներս երթալը, թշնամեաց առաջ արդարանալ։ Ծովը մարդու ներսը քաշելը, սպանուիլ է։

Կ.

Կառք նստել, մեծ պատիւ է. կամուրջ շինել շատ լաւ է. կայծակը խռովութիւն է. կանաչ ծաղիկը բա-րի է. կարկուտը երկրի նեղութիւն է. կարասը նոյնն է. կապուտը աւերումն է. կաղամբի տակ հանել, ըստ Դանիէլի վնաս է. կենդանի իրան գերեզմանում տես-նել, մեծ զրոյց է. կին առնելը մահւան վնաս է. կին համարձակ, նոյնն է. կին գեղեցիկ և զարդարած, եր-կիր կամ քաղաք է. կնոջ մազ կտրել մեծ վնաս է. կոյս իրան տեսնել մեծ շահ է. կուժը որդի է. կուժ ջրով, շատ մեծ բարիք է. կորեկ տեսնել և ուտել լի-



ութիւն է. կրակ ընկնելը, մահ և սով է. կտաւ հանե-լը լաւ չէ. կօշիկ տեսնել և հագնել ճանապարհ է։

Հ.

Հացը բարի է. հաւը, սիրամարգը մեծ իշխան է. հաւը ձուի վրայ, յանկարծ շնորհք է. հաւի խօսելը վնաս է. հաղորդ առնել, մեծ բարիք է. հասկ քաղելը, ըստ Պղատոնի, ուրախութիւն է. հարսանիքը, մեծ յոյ-սերի դռներ է. հայրապետը մեծ աւետիս է. հայրը մե-ռած կենդանացած, մեծ շահ է. հալւեն այրած, կնո-ջից օգուտ է. հանդերձ կորցնելը վնաս է. հանդերձ գոյնզգոյն ունենալը նոյնն է. հռետոր իրան տես-նել, շատ մեծ օգուտ է. հիմ դնել, հաստատութիւն է. հիմը հիմքի վրայ դնել բարի է. հիմքը շինուածքից դուրս, գերեզման է. հիւանդը, նեղութիւն իսկ պահե-լը մեծ բարիք է. հողը վեր առնել, լաւ չէ. հում միս ուտել զրոյց է. հոր փորել, նեղութիւն է.

Ձ.

Ձեռն լուանալը բարի է. ձեռն ճրագ՝ որդի լինի. ձէթ եփելն հիւանդութիւն է. ձիթով օծանիլ, շնորհք է. ձիթապտուղ ժողովել, բարի է. ձի նիստիլ, շատ լաւ է. ձու տեսնել և ժողովել, կռիւ է. ձոր տեսնել կամ անցնիլ ազատութիւն է. ձուկը ջրից հանել ամպ ձիւն, անձրև կամ ջերմ լինի. ձուկը կրակին, երկրի նեղու-թիւն է. ձուկը չար լեզու և վատութիւն է։

Ղ.

Ղան կամ սուլթանը, այնչափ լաւ է։ Ղեկովը գը-նալը, մեռածի հետ կգնայ. ղամպարը (ջահ) վառել, բարի է։

Ճ.

Ճանապարհ գնալ և յետ դառնալ, բարի է. ճա-նապարհ գնալ, ազատի նեղութիւնից. ծոպոնը երկար ճանապարհ է. ճառ տեսնել և լսել, հոգս է. ճնճղուկ տեսնել կամ ունենալ բարի է. ճրագ վառած, ծածուկ գործեր կյայտնուին. ճրագ հանգած, կործանումն է տան-

Մ.

Մանուկ մորուքով կամ ծեր, կենաց յաւելուած և շնորհք է. մատանի կամ պատմուճան տեսնել և չինել տալ, իշխանութիւն է. մատանի կոտրած վնաս է. մատանի գնելը օգուտ է. մատանի կորցնել. կինը կամ սիրելին կմեռնի. մատանի երկու ունենալ, 2 կին առնէ. մատանի արծաթի նեղութիւնից ազատութիւն է. մատակ ուղտի վրայ նստիլ, հիւանդութիւն է. մարգարիտ, մեծութեան նշան է. մարդու լերդ ուտելը. գանձ առնէ. մարդու ոսկոր ուտել, բանտ մտնի. մեծահասակ իրեն տեսնել, փառք է. մեռել տեսնել կամ մեռելից բան առնել և, կամ մեռել կենդանանալ, մեծ և աղմկալի անցանց զրոյցը կնորոգի. մեռած իրեն տեսնել շատ ապրիլ է. մեռելի խօսիլը, վատ է. մեռել գերեզմանումը չարը կխափանի. մեռածները շատ տեսնել վատ է. մեղր ուտել, մեղք է. միսը տեսնել և ուտել հիւանդութիւն է. մոմը վառած ուրախութիւն և որդի է. մորեխը հոգս է և աշխարհի նեղութիւն. մութը և մուկը չար է և վնաս։

Յ.

Յաթոռ նստիլն բարձրութիւն է. յաւազան ձեռք զարկել, մեծ մարդուց բան առնէ. յաղբիւրից ջուր խմել, բարի է. յամպից ճայթմունք լսել լաւ չէ. յարջից հալածուիլ, կուից ազատի, այլ թշնամուց պատրաստ կենայ. յեկեղեցի գնալ, ծանրութիւնից ազատի. յերկինք ելնել, մեծ պատիւ է. յերազում երազ պատմել, շատ լաւ է. յիւր երկրից դուրս գալը նեղութիւնից ազատութիւն է. յորսի գնալ, բարի է։

Ն.

Նախիր թէ գիւղը գայ, մեծ մարդ գայ. նախիր թէ շուրջ գայ, խռովութիւն է նապաստակ թէ ունենայ, իր նման տղայ կլինի. նաւ ոսկւոյ և արծաթոյ բարի է. նաւ նստել, շատ ժամանակ ապրի, նաւ երամով, հեռու տեղից շահ կգայ. նաւ գանձով, նեղութիւն է. նաւ կոտրած, մահւան նշան է, նոր բանը օտարութիւն է. նուռ, օտարից օգուտ է,



Շ.

Շապիկ սպիտակ տեսնել կամ հագնել արդարութիւն է, սևը տրտմութիւն, պատառը մեղք է. շեղջ ցորենի, կակիծ է. շէնք շինել, բարութիւն է, քակել վնաս. շերպէթ խմել խելքի յաւելուած է. շիշ իւղով, ռոճիկ է և շահ. շողն փառք է. շուք առնելն մեծ պատիւ է. շների իրար հետ կռուելն լաւ չէ. շան հաչելն և խածնելը չար լեզու է. շունը կամ թևաւոր գազանը, թշնամիներ են։

Ո.

Ոսկի խնձորն պատիւ է. ոսկին կամ արծաթն շահ է. ոչխարն սև սուգ և տրտմութիւն է. ոչխարն ճանապարհում հարստութիւն է. ոջիլ կոտրելն մաշումն է. ոսկի բերելն լաւ է. ուղտն մեծ մարդ է. ուղտն նըստած հաւատք է. 2 ուղտի կռուելը, 2 իշխանի կռիւ է։

Չ.

Չամիչն շատ վնաս է. չամանն կռիւ և աղաղակ է. չիրն քիչ օգուտ է. չոր ծառն մեռած մարդ է. չոր միսն ռոճիկ և շահ է. չուխան սպիտակ, արդարութիւն է. չուխան կանանչ, հարստութիւն է. չուխան սև, տրտմութիւն է։

Պ.

Պատարագն բարի է. պարտէզն արդարութիւն է. պաղ կոտրելն, չարն խափանի. պղպեղն կակիծ է. ուտելը վնաս. պսակուիլն, շատ լաւ է. պսակ զարդարւած նոյն է. պսակ արծաթի, հիւանդութիւն է. պսակ փշերից մեծ օգուտ է. պսակ բարեղէն մեծութիւն է։

Ջ.

Ջրհոր կամ գետ ընկնիլն նեղութեան մէջ ընկնի. ջրաղաց շինելն, մեծութիւն է. ջրաղացի ագուռն և ջրհուտի տակն, հիւանդութիւն են. ջհուտն, անհաւատ մարդ է. ջայլամը նեղութիւնից ազատութիւն է, ջուրն

յատակ, խմել շատ լաւ է, պղտորն տրտմութիւն է. ջուր տան մէջ լաւ չէ. ջուր գնացման տեսնելն, բարի է. ջրհորից կամ գետից և կամ ծովից դուրս գալն, պատիւ և ազատութիւն է, դուրս չգալն մեծ վնաս է. ջուր աղբիւրից առնելն բարի է։

Ռ.

Ռապատ մտնելն նեղութիւն է. ռեհանն բարի է. ռոճիկն շատ լաւ է. ռուսք մեծութիւն և պատիւ է կամ պայթումն գոյժ է։

Ս.

Սագն մեծ մարդ է. սալորն առողջութիւն է. Սաղաւարտն պատիւ է. սամիթն լաւ է, չորն լաւ չէ. սանդուղ կանգնած, մեծութիւն է և բարի, սանտրելն լաւ չէ. սենեակ քակելն կնոջից բաժանի. սիսեռն բարի է. սիւնն նեղութիւն է սխտորն, սոխն և սապոնը կսկիծ են. սոխ և սագի միս ուտելն, հիւանդութիւն է. սուգն, ուրախութիւն է.

Վ.

Վառած իրան տեսնելն հարստութիւն է. վանք և աբեղայ տեսնելն, ուրախութեամբ ուխտագնացութիւն է. վառած մարդ տեսնելն վնաս է. վարդ տեսնօղն կին կառնէ, վարդ քաղելն բարի է. վարտիքն բարի է. վիշապն նեղութիւն է. վայրենի գազանից փախչելն, մեծերից վնաս կկրէ։

Տ.

Տաճարն զարդարուած բարի է. տաճար այրելն խռովութիւն է. տաճիկ, թշնամի է. տախտ դիպակով բարի է. տանձ ուտելն, հիւանդութիւն է. տառեխն ճանապարհ է. տիկն ու տիկինը, տրտմութիւն է. տըղան գիրկ առնելն ցաւ և հիւանդութիւն է. տուն շինելն շատ բարի է. տուն աւրելն լաւ չէ, գանձի վնաս է. տունն, իրենը կամ ուրիշինը այրած տեսնելն լաւ չէ, անիրաւութիւն է տունն իրենը կամ ուրիշին արծաթի տեսնելն մահուան վնաս է. տունկ տնկելն ազգերի օրհնութիւն է։



Ց.

Ցեխը՝ վնաս է և լեզու։ Ցիցը՝ չար լեզու է։ Ցից հանելը՝ նեղութիւն է։ Ցորենը՝ ցնորք է։ Ցուլ բռնելը՝ լաւ է։

Փ.

Փայտ տեսնել կամ առնելը, շատ բարի է. փոխինդ ուտելը լաւ չէ։ Փող հարկանելը մեծութիւն է և բաղդի կտիրանայ. փուշ կտրելը թշնամեաց կորուստ է. փուշ ափումդ, չար ժամանակ է. փոքր մարդը շընորհք է.

Ք.

Քաղաք մտնելը բարի է. քաղցր բան ուտելը լաւ չէ. քար ձգելը լաւ չէ. քարեր ժողովելը լեզու է. քար հիմքը ձգել թշնամի է. քարի վրայ նստել մտածմունք է. քացախ խմելը, չարը խափանի. քղամիտը հագնիլ՝ խնդութիւն է. քահանայից խաչ առնելը լաւ չէ։

Օ.

Օձն թէ իր հետ խօսի, այնպիսի բան կանէ, որ ամեն մարդ և ամեն աշխարհ կզարմանայ. օձին թէ սպանէ, իր թշնամուն կյաղթէ. օձը թէ անկողնումը առնէ, կին կառնէ. օձը թէ խայթէ վնաս է. օձը թէ իր վրայ յարձակի, թշնամիներից պէտք է զգոյշ մընայ. օձը թէ փորը մտնի, թշնամիներից չար խօսք կըլսէ. օձին թէ անկողնումը սպանէ, կինը կմեռնի. օձը թէ տան մէջ առնէ, կինը իր հետ կթշնամանայ. օձին թէ երկու կտոր անէ, թշնամուցը իրեն օգուտ կգայ։ Օշինտրը՝ կռիւ է։

## ԵՐԱԶՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒ-ԹԻՒՆՆԵՐ

Երեւոյթները, որոնք ներկայանում են երազում պարզ և կենդանի ձեւով, առանց որեւէ խանգարմունքի և շփոթութիւնների, առանց ընդհատման միեւնոյն ժամանակ մի ուրիշ ցնորքով կամ երեւակայութեամբ, մանաւանդ երբ լինում են առաւօտեան արշալոյսին և արևի ծագման միջոցներում, ուղիղ են և անկասկածելի։

Երազները աւելի ճշմարիտ և հաւանական են ձմեռը և ամառը, իսկ գարնանը և աշնանը կասկածելի են, նրա համար, որ տարւայ այդ եղանակները հաստատուն և անփոփոխ չեն, այլ հողմային և մրրկալի, որոնք աննպաստ են ուղիղ երազների ստեղծման համար։

Առաւօտեան արշալոյսին և արևի ծագման ժամանակ եղած երազները նրա համար են ճիշտ համարւում գիշերւանից, որ այդ միջոցներին մարդկային սիրտը անդորր է լինում, հոգին խաղաղ, և երեւակայութիւնն պարզւած ու ուղեղը հանգստացած օրւայ լաւ ու վատ տպաւորութիւնից։

---

## ԲԱՂԴԻ ՎԻՃԱԿԱՑՈՅՑ

| | | | |
|---|---|---|---|
| Ա | Բ | Գ | Դ |
| Ե | Զ | Է | Ը |
| Թ | Ժ | Ի | Լ |
| Խ | Ծ | Կ | Հ |
| Ձ | Ղ | Ճ | Մ |
| Յ | Ն | Շ | Ո |
| Չ | Պ | Ջ | Ռ |
| Ս | Վ | Տ | Ր |
| Ց | Ւ | Փ | Ք |

## Ա.

Ամենասուրբ Երրորդութիւնն փրկէ զքեզ ամենայն փորձութենէ. փարատեցաւ ցաւ սրտի քումէ, և մեծ ուրախութիւն և շնորհ գտանես Աստուծոյ, և դու բարձրանաս մեծ պատուի: Իսկ յորժամ ընծայեցար ի ծնողաց քոց՝ մեծ հիւանդութիւն կրեցեր, և հալածական եղեցիր ընտանեաց քոց և ի բարեկամաց: Բայց պատրաստ կաց զանձն քո ի գազանաց և չարանենգ մարդկանց. զի փոթորիկ կայ առաջի քո, և չարախօսք քո շատ են. գնա աղօթք արա Աստուծոյ, որ փրկեսցէ ի նոցանէ. և զինչ զոր խնդրեսցես՝ կատարի քեզ ի բարին:

## Բ.

Բանն Աստուած անսկիզբն՝ որ ի հօրէ առաքեցաւ նա է յոյս նեղելոց, և փրկէ զքեզ ամենայն փորձութենէ. ի բաց մերժեցաւ նեղութիւն սրտի քո. և կատարեցաւ վիճակն քո ի բարին, զինչ բան զոր ըսկսեալ ես՝ Աստուած յաջողէ և ի բարին առաջնորդէ: Արդ արա զխորհուրդ քո. թէ վաճառ ունիս՝ շահիս, թէ ի ճանապարհ երթաս բարեաւ գաս, թէ ի հեռաւոր տեղիս մարդ ունիս բարով տեսանես, թէ հիւանդ ունիս՝ շուտով առողջանայ, զինչ կորուսեալ ես՝ գտանես:

## Գ.

Գնա՝ մի ինչ հարցաներ՝ զի բազում նեղութիւն ունիս. և տրտմութիւն կայ առաջի քո. և վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. և եհաս ի վերայ քո նեղութիւն մեծ, ոչ գտաւ քեզ բարեկամ քո և օգնական. ի հայրենական ժառանգութենէն զրկեցար, և այժմ տարակուսեալ ես վասն կենացդ: Արդ աղաչեա զԱստուած և ուխտ եա նմա, որ կործանէ զթշնամին քո, և հանէ զքեզ ի նեղութենէ ի հանդիստ, և զկամքն սրտի քո ի բարին կատարէ:



## Դ.

Դու ով սիրելի՝ վասն այդ բանիդ հարցանես և հոգաս հանապազ. բայց Աստուած փրկէ յամենայն նեղութենէ զանձն քո. և յանկարծակի հարստանաս յայնպիսի տեղեաց՝ ուստի ակն ոչ ունիս. և բանայ քեզ Աստուած դուռն բարի: Ի ճանապարհ երթաս, բարեաւ յետս դառնաս, և թշնամին քո յամօթ լինի. եթէ հեռաւոր ունիս՝ տեսանես. վիշտք մահու տրտմեցուցին զքեզ՝ բայց մոռանաս զայն. փոխել կամիս ի տեղւոջէ ի տեղի. սակաւ մի համբերեա և ապա փոխեաց. և բարի գտանես. մեծանաս և ուրախ լինիս. յուսա առ Աստուած՝ և ոչ երբէք հասանի քեզ վնաս:

## Ե.

Երանի է քեզ ով սիրելի՝ զի Աստուած է քեզ օգնական. բայց դու շատ ես աշխատեալ, և ոչ գտեր հանգստութիւն, և ոչ օգնական քեզ՝ ոչ եղբայր և ոչ սիրելի: Որպէս ի ծովու ծփիս յալեաց, և ոչ գտանես հանգիստ. ով սիրելի տուր փառս Աստուծոյ՝ զի ուրախութիւն հասանի քեզ ի նմանէ և առողջութիւն. թէ փոխիս ի տեղեացդ՝ բարոյ հանդիպիս, և ամենայն դժուարութիւն ի բարին դառնայ. ի յաւագաց պատրաստ կաց. որոգայթ երևի քեզ, ի յընկերաց և ի մատնողաց պատրաստ կաց:

## Զ.

Զարմացեալ եմ ով այր՝ զի երկմտեալ ես և ի թշնամեաց սասանիս, և խորհիս վասն մեծանալոյ, և ոչ խորհիս, առնել զաղաչանս Աստուծոյ. վասն այնորիկ եկն ի վերայ քո նեղութիւն մեծ, և թշնամին քո զօրացաւ ի վերայ քո: Գնա աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա՝ զի հանցէ զքեզ յամենայն նեղութենէ, և ազատիս յորոգայթէ, վաճառ ունիս՝ սիրով շահիս:

## Է.

Ո՛վ այր՝ առնուս զոր խորհիս և ուրախ լինիս և

ազատիս ի չարէ. գնա գոհացիր զԱստուծոյ, և Աստուած հանէ զքեզ յամենայն նեղութենէ և որոգայթէ. զի դու բարի կամիս՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ. զինչ բան զոր սկսեալ ես, յաջողէ քեզ Աստուած զոր ցանկաս տեսանես. զոր կորուսեալ ես՝ գտանես. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ, թէ տուն շինես կամ հաղորդութիւն առնես՝ բարի գայ և արդիւնաւոր լինի. ի կախարդաց պատրաստ կաց։

## Ը.

Ո՛վ մարդ՝ ժամանակ դժուարութեան եկն ի վերայ քո. և տրտմեցար յազգականաց քոց և ի բարեկամաց. և ազգն քո նենգաւոր եղեն քեզ. և եղև աւերումն տան քո. և շրջեցար դու ի վերայ երկրի։ Այլ գոհացիր զԱստուծոյ՝ զի գալոցէ քեզ ուրախութիւն մեծ. և զոր խնդրես՝ տեսանես. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով յետս դառնաս. զինչ բան առնես՝ յաջողէ քեզ Աստուած. զուխտն զոր խոստացեալ ես Աստուծոյ կատարեա. թէ վաճառ առնես՝ շահիս։

## Թ.

Ո՛չ յաջողեցար ի բարին. զոր ունէիր զրկեցար յայնմանէ. ոչ կայր քեզ օգնական, ոչ եղբայր և ոչ սիրելի։ Բայց դու անլսուրդ ես, և աղօթից ծոյլ. վաղըն այնորիկ եկն ի վերայ քո նեղութիւն, և դու շրջեցար յօտար երկիր՝ բայց ոչ վնասեցար։ Ապա թէ ոչ դառնաս ի կամս աստուծոյ, գայ ի վերայ քո բարկութիւն Աստուծոյ, և լինի յափշտակութիւն ընչից քոց և աւերումն տան քո. և գործք ձեռաց քոց՝ ոչ յաջողի. և զոր խնդրես՝ ոչ տեսանես. զոր կորուսեալ ես՝ ոչ գտանես։ Այլ թէ դառնաս ի կամս Աստուծոյ, նա փակեալ դուռ մի բանայ քեզ և յաւելու բարիս: Գնա աղօթք արա առ Աստուած, և ուխտ կատարեա. որ ազատիս ի տանջանաց։

## Ժ.

Զոր ինչ ի ձեռին քում բան ունիս՝ յաջողէ քեզ



Աստուած. և արա զխորհուրդ սրտի քո։ Աւետիս տուր անձին քո՝ զի ուրախանայ ի գործդ զոր ի ձեռին ունիս. մեծ օգուտ և շահ գտցես անտի, և բազումք կերիցեն ըզվաստակս ձեռաց քոց։ Այլ հիւանդացար շատ որ ի մահ մերձ եղեր, և Աստուած եհան զքեզ ի նեղութենէ և ապրեցոյց։ Ի հեռաւոր տեղեաց ուստի ակն ոչ ունիս՝ բարի գալոց է քեզ. և տրտմութիւն քո՝ յուրախութիւն փոխարկի. զի դու բարի կամիս՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ. և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ։ Գնա աղաչեա զԱստուած և ուխտ կատարեա նմա. զի ողորմութիւն նորա եկեսցէ ի վերայ քո. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս՝ և բարւոյ հասանիս։

## Ի.

Ո՛վ այր՝ մի ապաւինիր ի խորհուրդ քո և մի մոռանար զուխտն Աստուծոյ. և տրտմութիւն քո՝ յուրախութիւն փոխարկի. ի հեռաւոր տեղեաց՝ ձայն աւետեաց լսես, կամ հեռաւոր մարդ տեսանես. և յԱստուծոյ յաջողութիւն գտանես. և դարման ոսկերաց քոց ոչ պակասի. բայց ծնողաց քոց դիմադարձ մի լինիր. և զոր ինչ խնդրես յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած։ Եւ փոխիլ տեղոջէ ի տեղի բարի լինի քեզ. և յամենայն դժուարութենէ ազատիս. և զինչ խորհուրդ զոր ունիս և զինչ գործ կամիս առնել՝ գնա արա, շատ շահ և արդիւնս առնուս և վախճան քո ի բարի օր լինի։

## Լ.

Ո՛վ այր՝ ահա տեսանեմ զքեզ և զխորհուրդ քո որ նմանիս ալեաց ծովու. որպէս ճնճղուկ որ անկաւ ի ձեռս որսողաց, նոյնպէս և դու ի ձեռս բռնաւորաց։ Ապա թէ ոչ դառնաս ի կամս Աստուծոյ, գայ ի վերայ քո նեղութիւն, և լինի յափշտակութիւն տան քո և ընչից քոց։ Եւ դու հալածական լինիս և վիշտք մահու տրտմեցուցանեն զքեզ. և օտար երկիր վտարիս։ Գնա աղաչեա զԱստուած, և փրկէ զքեզ յամենայն որոգայ-

թէ և ի նեղութենէ, և բանայ քեզ դուռն բարւոյ և շահիս. և ինչ գործոյ ձեռն արկանես, յաջողէ քեզ Աստուած։

## Խ.

Ո՛վ մարդ՝ ողորմութիւնն Աստուծոյ լինի ընդ քեզ զամենայն աւուրս կենաց քոց. բայց ի յօտար աշխարհ վտարեցար. զոր խնդրես՝ տեսանես. զինչ կամիս առնուս· զոր կորուսեալ ես՝ գտանես. զի յԱստուծոյ շատ շնորհ ունիս. և զաւակ մի շնորհաւոր լինի քեզ։ Բայց վիշտք մահու տրտմեցուցին զքեզ. իսկ բան և խորհուրդ զոր ունիս՝ գնա արա, շահիս և բարի գտանես։ Եւ ի քո վաստակէն բազումք կերիցեն. և պարգևս ի յԱստուծոյ առնուս. ի յիշոցաց և ի կախարդաց պատրաստ կաց։

## Ծ.

Ո՛վ այր դու՝ նման ես գետոյ որ երթայ յերկար և ոչ կայ նմայ դադարումն։ Դու հալածական եղեր և ի հայրենական ժառանգութենէ զրկեցար. և ի ծնողաց քոց ոչ խնդացեր. զրաբախտ ես զի ամենայն մարդ զրկեալ է զքեզ։ Արդ աղաչեա́ զԱստուած և ուխտ կատարեա́ նմա, որ օգնէ քեզ և փրկէ յորոգայթէ։ Դու մի տրտմիր զի բանիդ դժուարութիւնն ի լոյս ելանէ. և քեզ ձայն աւետեաց գայ և դու խնդաս և ուրախանաս. յանկարծակի հարստանաս՝ ուստի ակն ոչ ունիս։

## Կ.

Ո՛վ սիրելի՝ կակղացո́ զբարքդ քո և պահեա́ զկամս Աստուծոյ. և տո́ւր հաց քաղցելոց և ջուր ծարաւեաց։ Ապա թէ ոչ դառնաս ի կամաց քոց· գայ ի վերայ քո նեղութիւն մեծ և յափշտակութիւն ընչից քոց և աւերումն տան քո. և ինչ գործոյ ձեռն արկանես, ոչ յաջողի· և որում ցանկաս՝ ոչ հասանիս. և զոր կորուսել ես՝ ոչ գտանես։ Ապա թէ դառնաս ի կամս Աստուծոյ և զպատուիրանս նորա պահես, ողորմութիւնն



Աստուծոյ հասանէ ի վերայ քո և յաւագաց մեծարիս. և յաւելու փառք քո։ Որպէս արեգակն ի վերայ արարածոց՝ այնպէս Աստուծոյ բարին հասանէ ի վերայ քո, և յաջողէ քեզ զոր ինչ դու կամիս· և տարին բարով գայ քեզ։

## Հ.

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ· զի դու բարի կամիս և Աստուած բարի առաջնորդէ քեզ. և տէր փրկէ զքեզ յամենայն որոգայթէ։ Լինիս ցանկալի ամենեցուն և ոչ լինի պակասումն ընչից քոց· և տայ քեզ Աստուած փառք և մեծութիւն։ Գնա́ աղաչեա́ զԱստուած և ուխտ կատարեա́ նմա որ ազատիս ի չարէն· զինչ խորհուրդ որ ունիս՝ արա́ և մի երկնչիր. զի որպէս կամիս դու, այնպէս կատարի գործք քո։

## Ձ.

Ո՛վ մարդ՝ ձայն ցնծութեան և ուրախութեան մատուցանեմ քեզ. զի դու սասանեցար յազգաց և ի բարեկամաց քոց· և ի շատ իրաց զրկեցար։ Տուն քո հայրենի՝ դարձաւ ի յաւեր· և դու շրջեցար ի վերայ երկրի· և սուգ մահու տրտմեցոյց զքեզ· այլ այժմ փառք տուր Աստուծոյ՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն մեծ. բազմանան ինչք քո, ոսկին և արծաթն։ Թէ հեռաւոր ունիս գայ· և զինչ խորհուրդ ունիս կատարի։

## .Ղ

Ո՛վ մարդ՝ պարգևեցաւ արձակումն կապանաց քոց· որպէս մոգքն որ ելին յարևելից և եկեալ առ Քրիստոս գտին զնա և ուրախ եղեն, նոյնպէս և դու ուրախանաս ի գործս քո և ի խորհուրդս զոր խորհիս։ Թէ ի ճանապարհ երթաս՝ բարով յետս դառնաս և բարի գտանես։ Որպէս Մովսէս յաղթեաց փարաւոնի և եգիպտացւոցն, նոյնպէս և դու յաղթես թշնամեաց քոց. և զինչ խորհեալ ես՝ գնա́ արա́, ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած.

Ճ.

Ո՛վ մարդ՝ զոր հարցանես՝ ասեմ քեզ. եղեր դու ի մանկութենէ քումմէ հալածական. և պանդխտութիւն կրեցեր զամենայն աւուրս կենաց քոց. և սատանեցար յազգաց և ի յանօրինաց։ Ո՛վ սիրելի մի երկնչիր՝ զի հասեալ է քեզ ուրախութիւն և կատարեցաւ վիճակն քո ի բարին. զինչ խնդրես ի յԱստուծոյ՝ տայ քեզ Աստուած. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս։

Մ.

Ո՛վ այր՝ նենգաւոր տեսանեմ զքեզ. արդ ի չարդ յիմարեալ ես և ընկերի քում չար առնես. և ամենեցուն վնաս խորհիս։ Ընկեա՛ զնենգութիւն ի մտաց քոց. և ընկերիդ չար մի խորհիր. որ չանկանիս մեծ նեղութիւն, և պատուհաս գայ ի վերայ քո։ Ոչ խնդացիր ի ծնողաց և ոչ ի զաւակաց. ինչ գործոյ ձեռն արկանես՝ ոչ յաջողի քեզ։ Ապա թէ դառնաս ի կամս Աստուծոյ՝ և ընկերի քում և ամենայն մարդոյ նենգութիւն ոչ առնիս, ծագէ Աստուած զողորմութիւն իւր ի վերայ քո և ոչ լինի պակասութիւն ընչից քոց. և մեծաւ պատւով վախճանիս։

Յ.

Ո՛վ մարդ՝ աւետիս տամ քեզ. զի կատարեցաւ վիճակն քո ի բարին. և դու խորհուրդ ունիս ի սիրտդ, և տարակուսիս, մի երկնչիր՝ գնա՛ արա. զի խորհուրդ քո ի բարին կատարեցաւ։ Որպէս լուսինն որ զխաւար գիշերն լուսաւորէ՝ այնպէս լուսաւորէ խորհուրդ քո զոր խորհիս. և հասանէ քեզ բարութիւն ի յԱստուծոյ. և ում ցանկաս հասանիս և յաւագաց բարի գտանես. և աւետեաց ձայն լսես և խնդաս, գնա՛ աղաչեա՛ զԱստուած որ խորտակէ զքո թշնամին։

Ն.

Ո՛վ մարդ՝ ահա ի նենգութիւն տեսանեմ զքեզ. զի մեծամեծ վտանգ կայ առաջի քո. և ի նեղութիւն անկանիս։ Բազումք խորհին քեզ չարիք, և դու ոչ



իմանաս զկորուստ անձին քո. և զի ոչ առնես զկամս Աստուծոյ՝ վասն այնորիկ եկն ի վերայ քո նեղութիւն. զինչ խորհուրդ ունիս՝ ոչ կատարի. թէ ի ճանապարհ երթաս՝ ոչ լինի քեզ բարի։ Այլ թէ դառնաս ի կամս Աստուծոյ և զուխտն զոր խոստացեալ ես՝ կատարես, յաջողութիւն գտանես, և յաւելու փառք քո։

Շ.

Ո՛վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի քո. առնուս պարգևս ի մեծամեծաց. ուրախանաս և բարեաց հանդիպիս. խնդաս ի զաւակէ և ի կնոջէ քումմէ. և լինիս յիշատակ ծնողաց քոց։ Եւ զինչ խնդրես ի յԱստուծոյ՝ առնուս. զոր կորուսեալ ես՝ գտանես. թէ հեռաւոր ունիս՝ գայ և տեսանես. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ. և օր քան զօր լաւ լինի քեզ։

Ո.

Ով մարդ՝ պա՛րտ է քեզ յամենայն ժամ գոհանալ զԱստուծոյ, զի թէպէտ տրտմեցար, բայց դարձեալ ուրախանաս, և շնորհն Աստուծոյ հասանէ ի վերայ քո։ Այլ պատրաստ կաց ի չարեաց. և պարգև և շնորհ ի յԱստուծոյ առնուս. և յորդւոց խնդաս. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասութիւն ընչից քոց։ Թէ փոխիս ի տեղւոջէ ի տեղի՝ բարեաց հանդիպիս. ձայն աւետեաց լսես. և հեռաւոր մարդ տեսանես. քո մահն ի բարի օր լինի. և երազն որ տեսեր՝ բարի է։

Չ.

Ո՛վ մարդ՝ փառաւորիս յամենեցունց. և առնուս բարի իշխանութիւն, և թշնամին քո յամօթ լինի. և յօտար երկիր գնաս, և առնուս պարգևս. և յամենայն դժուարութենէ ազատիս. և զոր խնդրես՝ բարով տեսանես. և ում ցանկաս հասանիս։ Գնա՛ աղաչեա՛ զԱստուած և ուխտ կատարեա՛ նմա, որ ազատիս ի չա չարէ և ի փորձանաց. և բանայ քեզ տէր Աստուած դուռն բարի։

**Պ.**

Պարգև բարեաց տացէ քեզ Աստուած. չարն հեռացաւ և բարին մօտեցաւ կամօքն Աստուծոյ։ Եւ դու ես իմաստուն որ խրատ տաս ամենեցուն. բայց պահեա զանձն քո ի չար կամաց. և զոր ինչ գործես՝ ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած։ Յաստուած ապաւինէ որ կործանէ զքո թշնամին. և հանէ զքեզ յամենայն որոգայթէ. և լինիս ցանկալի ամենեցուն. և ոչ լինի պակասութիւն ընչից քոց։

**Ջ.**

Ո՜վ մարդ՝ մեծ էիր և խոնարհեցար, զմտաւ ածես և ոչ կարես կալ ի վերայ միոյ խորհրդոյ. դու մի տրտմիր գալոց է քեզ ուրախութիւն մեծ՝ ուստի ակն ոչ ունիս. զի դու բարի կամիս՝ և Աստուած բարի առաջնորդէ քեզ։ Փոխանակ տրտմութեան՝ ուրախութիւն լինի քեզ. բարի և շնորհ ի յԱստուծոյ առնուս։ Գնա արա զխորհուրդ քո և մի տարակուսիր։ Թէ վաճառ առնես՝ շահիս. թէ ի ճանապարհ երթաս՝ բարով գաս. այլ ի վերայ բախտիդ քննութիւն առնես և հարցանես, Աստուած բանայ քեզ զդուռն բարոյ, և յաւելու փառք քո։

**Ռ.**

Ո՜վ մարդ՝ սասանեցար յազգաց և ի յանօրինաց. հասաւ ի վերայ քո տրտմութիւն, և եղև աւերումն տան քո ի բարեկամաց քոց. և խորհուրդ քո հանապազ ի կորուստ ելանէ։ Ո՜վ այր՝ մի հոգար զի շուտ գայ ի վերայ քո բարին. և տէր Աստուած հանէ զքեզ ի խաւարէ ի լոյս, և քո բաղձանացդ հասանիս։

**Ս.**

Ո՜վ մարդ՝ վասն կենաց քոց ընդէ՞ր հարցանես. զինչ յիմարեալ ես և չար խորհիս. և ամենեցուն վնաս առնես. ի տեղւոջէ ի տեղի փոխիս, և ուրեք ոչ հաստատիս. զոր կորուսեալ ես ոչ գտանես։ Ընկեա զնենգութիւն ի մտաց քոց. ընկերի քում և ամենայն մարդոյ



չար մի խորհիր. թէ չլսես՝ փորձանաց հանդիպիս. գնա աղաչեա զԱստուած որ ազատիս ի չարէ։

**Վ.**

Ո՜վ սիրելի՝ տուր փառս Աստուծոյ. զի գալոց է քեզ ուրախութիւն ուստի ակն ոչ ունիս։ Եւ ի քո վաստակէն շատ մարդ կերիցէ. և զաւակ մի խնդամիտ տեսանես և տայ քեզ Աստուած առողջութիւն. պատրաստ կաց ի չարէ որ չանկանիս ի փորձութիւն. և զինչ բան ունիս ի ձեռին՝ ի բարին առաջնորդէ քեզ տէր Աստուած. ի հեռաւոր տեղեաց ձայն աւետեաց լսես, կամ հեռաւոր մարդ տեսանես. գնա արա զխորհուրդ քո։

**Տ.**

Ո՜վ մարդ՝ ուրախութիւն մատուցանեմ քեզ, զի դու վարանեալ ես և տարակուսեալ. զրաբախտ ես, զոր ինչ տաս՝ կռւով առնուս. ում բարի առնես՝ նա քեզ չար առնէ։ Այլ աղօթից և աղաչանաց դու մի դադարիր. գալոց է քեզ ուրախութիւն ուստի ակն ոչ ունիս. հեռաւոր ունիս գայ. թէ աղքատ ես՝ հարստանաս. թէ հիւանդ ունիս՝ ողջանայ։

**Ր.**

Ո՜վ մարդ՝ ցնծութիւն և ուրախութիւն տամ քեզ. զի դու բարի ես և Աստուած բարի առաջնորդէ քեզ. և ինչ ցանկաս հասանիս. բայց թշնամիքն քո շատ են. այլ դու մի երկնչիր ի նոցանէ՝ զի Աստուած է քեզ օգնական։ Պատրաստ կաց որ չմտանես ի բանտ. անիրաւի տուգանք տաս, այլ իրք զոր կորուսեալ ես՝ գտանես։ Ի ճանապարհ կամիս երթալ, մի երկնչիր՝ գնա. ընդ որ երթաս՝ բարով գաս. զինչ բան և զինչ խորհուրդ զոր ունիս՝ յաջողէ քեզ Աստուած և ի բարին կատարէ։

**Ց.**

Ո՜վ մարդ՝ բազում բարիս տեսանեմ առաջի քո. առնուս պարգևս ի մեծամեծաց. ուրախանաս և բարւոյ հանդիպիս։ Խնդաս ի զաւակէ և ի կնոջէ քումմէ.

և լինիս բարի յիշատակ ծնողաց քոց. թէ փոխիս ի տեղեացդ՝ ոչ հաստատիս. զի ամենեքեան ննջաւորք են քեզ։ Եւ ի մարդոյ բախտ ոչ ունիս, այլ քո բարին ի յԱստուծոյ է. և տայ քեզ Աստուած զիւր ողորմութիւնն անչափ. և յամենայն դժուարութենէ ազատիս։

**Ի.**

Ո՛վ մարդ՝ չարն հեռացաւ ի քէն և բարին մօտեցաւ. այլ սասանեցար ի յազգաց և անօրինաց և ազգն քո ննջաւոր եղեն քեզ։ Պատրաստ կայ ի թշնամեաց քոց, որ մտօքն չար խորհին քեզ. և ի յընկերացդ փոթորիկ կայ առաջի քո. դատաստան ունիս կամ ճանապարհ կամ վաճառ՝ համբերեա։

**Փ.**

Անզգամ մարդոյ մի լինիր սիրելի՝ որ յետոյ չզղջասիս. և ի ձեռաց քոց իրք ես կորուսեալ, մի տրտմիր՝ ի քեզ դառնայ։ Զինչ խորհուրդ ունիս՝ կատարէ Աստուած. բայց սակաւ մի համբերեա. գալոց էր ի վերայ քո տրտմութիւն՝ բայց Աստուած խափանեաց. և բազում ուրախութիւն կայ առաջի քո։ Նման ես Աբրահամու, որ Աստուած զինքն սիրեաց և ի տրամութենէ ազատեաց. Նոյնպէս և դու ազատիս յամենայն չարէ։

**Ք.**

Ո՛վ այր՝ տեսանեմ զքեզ զի մարդ մի լեզուաւ և սրտիւ չար խորհի վասն քո, կամ հոր մի փորէ քեզ, այլ ոչ կարէ վնաս առնել քեզ։ Գնա ուխտ կատարեա Աստուծոյ՝ որ ի շատ չարէ փրկեցար. զի հասեալ էր քեզ նեղութիւն մեծ, այլ Աստուած դարձոյց չարն ի գլուխ թշնամւոյն քո։ Նման ես դու Իսահակայ, որ Աստուած օգնեց նմա և փրկեաց զնա, և բազում մեծութեան և փառաց հասաւ. Նոյնպէս և դու ուրախանաս կամօքն Աստուծոյ, և հասանիս բազում փառաց և պատուոյ։

## ՅՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ.

Շատերն անձամբ կրած կլինին այն անախորժութիւնները, որոնք աւթում են նորատի կանայքն իրենց մերձաւորներին, և որ երբեմն շատ ծանր հետևանքներ է ունենում։ Նորատի կանանցից ոմանք, անսովոր յղութեան նախնական շրջանի աննորմալ դրութեան, ըսկսում են անհանգստանալ, մանաւանդ այնպիսիները որոնց բարբերականն որևէ պատճառով առաջին ամսին էլ կրկնուում է։

Այդպիսի դէպքերում այդ անհանգստութիւնը ներքին որև է հիւանդութեան արդիւնք համարելով կամ անուշադիր են թողնում, և կամ զուր միջոցների ձեռնարկում, մինչև որ բնութիւնն ինքն երևան գալով, փոխում է նրանց սխալ կարծիք։ Բայց այդ դէպքումն էլ նրանք դժւարանում են իրենց յղութեան ճիշտ թիւ որոշել, որ շատ հետաքրքրական և կարևոր է անհրաժեշտ պատրաստութիւններ տեսնելու համար։ Ահա այդ պակաս լրացնելու համար մենք մէջ բերինք թէ վրացերէն և թէ հայերէն էֆիմերտէներում տպւած, յղութեան և ծննդեան աղիւսակ, որի միջոցով շատ հեշտ է, թէ ընդունելութեան և թէ ծննդեան թիւ որոշել, եթէ յղացող կանայք կարողանան ուշադիր հետևել մանկան առաջին շարժման։

## ՅՂՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԱՂԻՒՍԱԿ

| Յունուար 31 օր | | | Փետրուար 28 օր | | |
|---|---|---|---|---|---|
| Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի։ | Օր որդեծնութեան | Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի։ | Օր որդեծնութեան |
| Յունվար | Մայիս | Հոկտեմ. | Փետրվար | Յունիս | Նոյեմբ. |
| 1 | 10 | 7 | 1 | 10 | 7 |
| 2 | 11 | 8 | 2 | 11 | 8 |
| 3 | 12 | 9 | 3 | 12 | 9 |
| 4 | 13 | 10 | 4 | 13 | 10 |
| 5 | 14 | 11 | 5 | 14 | 11 |
| 6 | 15 | 12 | 6 | 15 | 12 |
| 7 | 16 | 13 | 7 | 16 | 13 |
| 8 | 17 | 14 | 8 | 17 | 14 |
| 9 | 18 | 15 | 9 | 18 | 15 |
| 10 | 19 | 16 | 10 | 19 | 16 |
| 11 | 20 | 17 | 11 | 20 | 17 |
| 12 | 21 | 18 | 12 | 21 | 18 |
| 13 | 22 | 19 | 13 | 22 | 19 |
| 14 | 23 | 20 | 14 | 23 | 20 |
| 15 | 24 | 21 | 15 | 24 | 21 |
| 16 | 25 | 22 | 16 | 25 | 22 |
| 17 | 26 | 23 | 17 | 26 | 23 |
| 18 | 27 | 24 | 18 | 27 | 24 |
| 19 | 28 | 25 | 19 | 28 | 25 |
| 20 | 29 | 26 | 20 | 29 | 26 |
| 21 | 30 | 27 | 21 | 30 | 27 |
| 22 | 31 | 28 | | | |
| | Յունիս | | | Յուլիս | |
| 23 | 1 | 29 | 22 | 1 | 28 |
| 24 | 2 | 30 | 23 | 2 | 29 |
| 25 | 3 | 31 | 24 | 3 | 30 |
| | | Նոյեմբեր | | | Դեկտ. |
| 26 | 4 | 1 | 25 | 4 | 1 |
| 27 | 5 | 2 | 26 | 5 | 2 |
| 28 | 6 | 3 | 27 | 6 | 3 |
| 29 | 7 | 4 | 28 | 7 | 4 |
| 30 | 8 | 5 | | | |
| 31 | 9 | 6 | | | |



| Մարտ 31 օր | | | Ապրիլ 30 օր | | |
|---|---|---|---|---|---|
| Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան | Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան |
| Մարտ | Յուլիս | Դեկտեմբ. | Ապրիլ | Օգոստոս | Յունուար |
| 1 | 8 | 5 | 1 | 8 | 5 |
| 2 | 9 | 6 | 2 | 9 | 6 |
| 3 | 10 | 7 | 3 | 10 | 7 |
| 4 | 11 | 8 | 4 | 11 | 8 |
| 5 | 12 | 9 | 5 | 12 | 9 |
| 6 | 13 | 10 | 6 | 13 | 10 |
| 7 | 14 | 11 | 7 | 14 | 11 |
| 8 | 15 | 12 | 8 | 15 | 12 |
| 9 | 16 | 13 | 9 | 16 | 13 |
| 10 | 17 | 14 | 10 | 17 | 14 |
| 11 | 18 | 15 | 11 | 18 | 15 |
| 12 | 19 | 16 | 12 | 19 | 16 |
| 13 | 20 | 17 | 13 | 20 | 17 |
| 14 | 21 | 18 | 14 | 21 | 18 |
| 15 | 22 | 19 | 15 | 22 | 19 |
| 16 | 23 | 20 | 16 | 23 | 20 |
| 17 | 24 | 21 | 17 | 24 | 21 |
| 18 | 25 | 22 | 18 | 25 | 22 |
| 19 | 26 | 23 | 19 | 26 | 23 |
| 20 | 27 | 24 | 20 | 27 | 24 |
| 21 | 28 | 25 | 21 | 28 | 25 |
| 22 | 29 | 26 | 22 | 29 | 26 |
| 23 | 30 | 27 | 23 | 30 | 27 |
| 24 | 31 | 28 | 24 | 31 | 28 |
| | Օգոստոս | | | Սեպտեմբ. | |
| 25 | 1 | 29 | 25 | 1 | 29 |
| 26 | 2 | 30 | 26 | 2 | 30 |
| 27 | 3 | 31 | 27 | 3 | 31 |
| | | Յանվար | | | Փետրվար |
| 28 | 4 | 1 | 28 | 4 | 1 |
| 29 | 5 | 2 | 29 | 5 | 2 |
| 30 | 6 | 3 | 30 | 6 | 3 |
| 31 | 7 | 4 | | | |

| Մայիս 31 օր | | | Յունիս 30 օր | | |
|---|---|---|---|---|---|
| Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան | Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան |
| Մայիս | Սեպտեմբ. | Փետրուար | Յունիս | Հոկտեմբ. | Մարտ |
| 1 | 7 | 4 | 1 | 8 | 7 |
| 2 | 8 | 5 | 2 | 9 | 8 |
| 3 | 9 | 6 | 3 | 10 | 9 |
| 4 | 10 | 7 | 4 | 11 | 10 |
| 5 | 11 | 8 | 5 | 12 | 11 |
| 6 | 12 | 9 | 6 | 13 | 12 |
| 7 | 13 | 10 | 7 | 14 | 13 |
| 8 | 14 | 11 | 8 | 15 | 14 |
| 9 | 15 | 12 | 9 | 16 | 15 |
| 10 | 16 | 13 | 10 | 17 | 16 |
| 11 | 17 | 14 | 11 | 18 | 17 |
| 12 | 18 | 15 | 12 | 19 | 18 |
| 13 | 19 | 16 | 13 | 20 | 19 |
| 14 | 20 | 17 | 14 | 21 | 20 |
| 15 | 21 | 18 | 15 | 22 | 21 |
| 16 | 22 | 19 | 16 | 23 | 22 |
| 17 | 23 | 20 | 17 | 24 | 23 |
| 18 | 24 | 21 | 18 | 25 | 24 |
| 19 | 25 | 22 | 19 | 26 | 25 |
| 20 | 26 | 23 | 20 | 27 | 26 |
| 21 | 27 | 24 | 21 | 28 | 27 |
| 22 | 28 | 25 | 22 | 29 | 28 |
| 23 | 29 | 26 | 23 | 30 | 29 |
| 24 | 30 | 27 | 24 | 31 | 30 |
| | Հոկտեմբ. | | | Նոյեմբեր | |
| 25 | 1 | 28 | 25 | 1 | 31 |
| | | Մարտ | | | Ապրիլ |
| 26 | 2 | 1 | 26 | 2 | 1 |
| 27 | 3 | 2 | 27 | 3 | 2 |
| 28 | 4 | 3 | 28 | 4 | 3 |
| 29 | 5 | 4 | 29 | 5 | 4 |
| 30 | 6 | 5 | 30 | 6 | 5 |
| 31 | 7 | 6 | | | |



| Յուլիս 31 օր | | | Օգոստոս 31 օր | | |
|---|---|---|---|---|---|
| Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան | Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան |
| Յուլիս | Նոյեմբեր | Ապրիլ | Օգոստոս | Դեկտեմբ. | Մայիս |
| 1 | 7 | 6 | 1 | 8 | 7 |
| 2 | 8 | 7 | 2 | 9 | 8 |
| 3 | 9 | 8 | 3 | 10 | 9 |
| 4 | 10 | 9 | 4 | 11 | 10 |
| 5 | 11 | 10 | 5 | 12 | 11 |
| 6 | 12 | 11 | 6 | 13 | 12 |
| 7 | 13 | 12 | 7 | 14 | 13 |
| 8 | 14 | 13 | 8 | 15 | 14 |
| 9 | 15 | 14 | 9 | 16 | 15 |
| 10 | 16 | 15 | 10 | 17 | 16 |
| 11 | 17 | 16 | 11 | 18 | 17 |
| 12 | 18 | 17 | 12 | 19 | 18 |
| 13 | 19 | 18 | 13 | 20 | 19 |
| 14 | 20 | 19 | 14 | 21 | 20 |
| 15 | 21 | 20 | 15 | 22 | 21 |
| 16 | 22 | 21 | 16 | 23 | 22 |
| 17 | 23 | 22 | 17 | 24 | 23 |
| 18 | 24 | 23 | 18 | 25 | 24 |
| 19 | 25 | 24 | 19 | 26 | 25 |
| 20 | 26 | 25 | 20 | 27 | 26 |
| 21 | 27 | 26 | 21 | 28 | 27 |
| 22 | 28 | 27 | 22 | 29 | 28 |
| 23 | 29 | 28 | 23 | 30 | 29 |
| 24 | 30 | 29 | 24 | 31 | 30 |
| | Դեկտեմբեր | | | Յունուար | |
| 25 | 1 | 30 | 25 | 1 | 31 |
| | | Մայիս | | | Յունիս |
| 26 | 2 | 1 | 26 | 2 | 1 |
| 27 | 3 | 2 | 27 | 3 | 2 |
| 28 | 4 | 3 | 28 | 4 | 3 |
| 29 | 5 | 4 | 29 | 5 | 4 |
| 30 | 6 | 5 | 30 | 6 | 5 |
| 31 | 7 | 6 | 31 | 7 | 6 |

| Սեպտեմբեր 30 օր | | | Հոկտեմբեր 31 օր | | |
|---|---|---|---|---|---|
| Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան | Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի | Օր որդեծնութեան |
| Սեպտեմբ. | Յունուար | Յունիս | Հոկտեմբ. | Փետրուար | Յուլիս |
| 1 | 8 | 7 | 1 | 7 | 7 |
| 2 | 9 | 8 | 2 | 8 | 8 |
| 3 | 10 | 9 | 3 | 9 | 9 |
| 4 | 11 | 10 | 4 | 10 | 10 |
| 5 | 12 | 11 | 5 | 11 | 11 |
| 6 | 13 | 12 | 6 | 12 | 12 |
| 7 | 14 | 13 | 7 | 13 | 13 |
| 8 | 15 | 14 | 8 | 14 | 14 |
| 9 | 16 | 15 | 9 | 15 | 15 |
| 10 | 17 | 16 | 10 | 16 | 16 |
| 11 | 18 | 17 | 11 | 17 | 17 |
| 12 | 19 | 18 | 12 | 18 | 18 |
| 23 | 20 | 19 | 13 | 19 | 19 |
| 14 | 21 | 20 | 14 | 20 | 20 |
| 15 | 22 | 21 | 15 | 21 | 21 |
| 16 | 23 | 22 | 16 | 22 | 22 |
| 17 | 24 | 23 | 17 | 23 | 23 |
| 18 | 25 | 24 | 18 | 24 | 24 |
| 19 | 26 | 25 | 19 | 25 | 25 |
| 20 | 27 | 26 | 20 | 26 | 26 |
| 21 | 28 | 27 | 21 | 27 | 27 |
| 22 | 29 | 28 | 22 | 28 | 28 |
| 23 | 30 | 29 | | | |
| 24 | 31 | 30 | | Մարտ | |
| | Փետրուար | Յուլիս | 23 | 1 | 29 |
| | | | 24 | 2 | 30 |
| 25 | 1 | 1 | 25 | 3 | 31 |
| 26 | 2 | 2 | | | |
| 27 | 3 | 3 | | | Օգոստոս |
| 28 | 4 | 4 | | | |
| 29 | 5 | 5 | 26 | 4 | 1 |
| 30 | 6 | 6 | 27 | 5 | 2 |
| | | | 28 | 6 | 3 |
| | | | 29 | 7 | 4 |
| | | | 30 | 8 | 5 |
| | | | 31 | 9 | 6 |



| Նոյեմբեր 30 օր | | | Դեկտեմբեր 31 օր | | |
|---|---|---|---|---|---|
| Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի։ | Օր որդեծնութեան | Օր ընդունելութեան | Օր առաջին շարժման երեխայի։ | Օր որդեծնութեան |
| Նոյեմբ. | Մարտ | Օգոստոս | Դեկտ. | Ապրիլ | Սեպտեմ. |
| 1 | 10 | 7 | 1 | 9 | 6 |
| 2 | 11 | 8 | 2 | 10 | 7 |
| 3 | 12 | 9 | 3 | 11 | 8 |
| 4 | 13 | 10 | 4 | 12 | 9 |
| 5 | 14 | 11 | 5 | 13 | 10 |
| 6 | 15 | 12 | 6 | 14 | 11 |
| 7 | 16 | 13 | 7 | 15 | 12 |
| 8 | 17 | 14 | 8 | 16 | 13 |
| 9 | 18 | 15 | 9 | 17 | 14 |
| 10 | 19 | 16 | 10 | 18 | 15 |
| 11 | 20 | 17 | 11 | 19 | 16 |
| 12 | 21 | 18 | 12 | 20 | 17 |
| 13 | 22 | 19 | 13 | 21 | 18 |
| 14 | 23 | 20 | 14 | 22 | 19 |
| 15 | 24 | 21 | 15 | 23 | 20 |
| 16 | 25 | 22 | 16 | 24 | 21 |
| 17 | 26 | 23 | 17 | 25 | 22 |
| 18 | 27 | 24 | 18 | 26 | 23 |
| 19 | 28 | 25 | 19 | 27 | 24 |
| 20 | 29 | 26 | 20 | 28 | 25 |
| 21 | 30 | 27 | 21 | 29 | 26 |
| 22 | 31 | 28 | 22 | 30 | 27 |
| | Ապրիլ | | | Մարտ | |
| 23 | 1 | 29 | 23 | 1 | 28 |
| 24 | 2 | 30 | 24 | 2 | 29 |
| 25 | 3 | 31 | 25 | 3 | 30 |
| | | Սեպտեմ. | | | Հոկտեմ. |
| 26 | 4 | 1 | 26 | 4 | 1 |
| 27 | 5 | 2 | 27 | 5 | 2 |
| 28 | 6 | 3 | 28 | 6 | 3 |
| 29 | 7 | 4 | 29 | 7 | 4 |
| 30 | 8 | 5 | 30 | 8 | 5 |
| | | | 31 | 9 | 6 |

# ՅՂԻ ԿՆՈՋ ԵՒ ԾՆՆԴԿԱՆԻ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

Յղի կնոջ համար հարկաւոր է ամենականոնաւոր կեանք, երեկոները երկար անքուն չմնալ, ժամանակին քնել, հոգեկան անհանգստութիւններից խուսափել. ամեն օր պէտք է չափաւոր կերպով զբօսնել մաքուր օդի մէջ. չպառկել ամբողջ օրերով բազմոցի վրայ ինչպէս անում են շատերը: Շարժողութեան բացակայութիւնը ևս շատ վնասակար է. նա առաջացնում է ստամոքսի անկանոնութիւն, անքնութիւն և մի քանի ուրիշ խանգարմունքներ:

Յղի կնոջ կերակուրը պէտք է զանազանակերպ լինի և բաղկացած գլխաւորապէս մսից, կանաչեղէնից. մրգեղէնից. կաթից և ձւից: Մրգեղէնը առանձնապէս օգուտ է, որովհետև նպաստում է մարսողութեանը: Ինչ վերաբերում է զանազան տեսակ հացերին և ուրիշ դժւարամարս կերակուրներին, հարկաւոր է կարելոյն չափ խուսափել նրանցից:

Յղութեան ժամանակ կանայք շատ անգամ անհանգիստ են լինում սրտախառնութիւնից և փսխողութիւնից: Այդպիսի դէպքերում հարկաւոր է չափաւորութիւն պահպանել ուտելու ժամանակ. իսկ փսխողութեանը լաւ օգնում է սելտերի և սօդայի ջուրը, նոյնպէս պաղ շամպանեան գինին:

Այն կինը որը մտադիր է ինքը կերակրել իր երեխային, որը բնական և ամենալաւ միջոցն է, պէտք է վերջին երեք ամսւայ ընթացքում պատրաստէ իր ծծերը կերակրելու համար: Պտուկների մորթը շատ քնքոյշ է, դորա համար հարկաւոր է նախապէս պնդացնել նրան: Այս նպատակով առաւօտ և երեկոյ հարկա-



ւոր է պտուկների վերայ 10 րոպէի չափ դնել հիգրոսկոպիական բամբակ (гигроскопическая вата) արաղով թրջած, լաւ է նոյնպէս սառը ջրով լւալը և նոյն բամբակով սրբել: Ներկայ կանանց անյարմար հագուստից այսինքն կորսետի սեղմելուց շատ անգամ պտուկները հարթ են լինում. Այս պակասութիւնը հեռացնելու համար հարկաւոր է վերջին ամիսներում ձեռքով դուրս քաշել նոցա մի քանի րոպէով:

**Ծննդկանի առողջապահութիւնը.** — Ծննդկանի խնամատարութիւնը մեծ նշանակութիւն ունի նրա ապագայ առողջութեան համար: Դեռ ծնունդից առաջ պէտք է հոգ տանել ծննդկանի սենեակի մաքրութեան մասին, որտեղ նա պիտի պառկի մինչև կազդուրուելը: Պէտք է ընտրել նրա համար աւելի ընդարձակ սենեակ, և այնտեղից հեռացնել բոլոր աւելորդ առարկաները. սենեակի տաքութիւնը պէտք է լինի ոչ պակաս 14°R., իսկ ծննդից յետոյ ոչ պակաս 16°R: Սենեակը մթնեցնելու առանձին կարևորութիւն չկայ, ինչպէս այդ անում են սովորաբար, սակայն լուսամուտները կապոյտ վարագոյրով ծածկել կարելի է, որ լոյսը չվնասէ նորածնի աչքերը:

Յետոյ հարկաւոր է առանձնապէս հոգ տանել սպիտակեղէնի և անկողնի մասին: Առաջուց պէտք է խնամքով թափ տալ, մաքրել անկողինը, բարձերը, իսկ սպիտակեղէնը ըստ հնարաւորութեան պէտք է պատրաստել մեծ քանակութեամբ և եթէ կարելի է ախտահանել նրանց (продезинфицировать): Ջուրը որը, պէտք է գործածւի ծննդեան ժամանակ. պէտք է եփած լինի, դրա համար պէտք է 1—2 մեծ շիշ եփած ջուր մշտական պատրաստի ունենալ, պէտք է նաև պատրաստի ունենալ տաք ջուր և հիգրոսկոպիական բամբակ (гнгроскопическая вата) և նրան խնամքով պահել ապակեայ ամանի մէջ:

Ծննդկանը հանգիստ պէտք է պառկի անկողնի

մէջ ամենապակասը ինն օր, իսկ եթէ հնարաւորութիւն կայ դեռ աւելի։ Առաջին երկու օրերը նա պէտք է պառկի մէջքի վրայ, իսկ երրորդ, չորրորդ օրերում նա կարող է զգուշութեամբ կարճ ժամանակ կողքի վրայ պառկել։ Առաջին 5—6 օրերում երեխային ծիծ տալու. կերակուր ուտելու համար և կամ այլ պատճառով նստելը միանգամայն վնասակար է և պէտք է արգելել.

Ծննդից յետոյ առաջին շաբաթում ծննդկանը պէտք է հեռու մնայ մտաւոր աշխատանքից և հոգեկան վրդովմունքից։ Պէտք է աշխատել որ ծննդկանի մօտ կողմնակի մարդիկ շատ չլինեն.

Ազատուելու չորրորդ օրը օգտաւէտ է ծննդկանին փորկապ հագնել, որ թեթև ճնշում գործ դնելով, օգնում է արգանդի փոքրանալուն։ Ծննդկանի ուտելիքը առաջին երեք օրերում պէտք է լինի հեղուկ կերակուր։ Կարելի է տալ կաթ, սուպ, բուլիօն. կաթով սուրճ կամ թէյ։ Եթէ ծննդկանը լաւ ախորժակ ունի կարելի է տալ շատ քիչ քանակութեամբ սպիտակ հաց և եփած պտուղ (КОМПОТЪ)։ Չորրորդ օրւանից կարելի է տալ աւելի սննդարար կերակուրներ իսկ 2—3 շաբաթներում փոքր առ փոքր անցնել սովորական կերակուրներին։ Իններորդ օրից սկսած ծննդկանը մի քանի ժամ տեղից պէտք է վեր կենայ, բայց մինչև երրորդ շաբաթը նա պէտք է խուսափէ ծանր շարժողութիւններից. չբարձրացնէ ծանրութիւններ և ընդհանրապէս հեռու պահէ իրան ամեն տեսակ ճնշումներից։ Չորս շաբաթից առաջ նա չպէտք է տանից դուրս գայ և միայն հինգերորդ շաբաթում նա պէտք է ձեռնարկէ իր սովորական աշխատանքներին։

**Ծծերի ճեղքուելը.**—Ծծերի ճեղքուածների վրայ հարկաւոր է իսկոյն դնել բորական (борная кислота) թրջած քաթան և անմիջապէս դիմել բժշկի օգնութեանը, որովհետև այդ ճեղքուածները երբեմն վարակւում են և մեծամեծ վէրքերի պատճառ են դառնում։



Բժշկի բացակայ եղած դէպքում գիւղում կարելի է գործ ածել աղաղի (таинъ) և քաղցրիտի (глицерина) խառնուրդ, կամ բիսմուտի օծանելիք։ Մինչև բժշկի գալը կարելի է յիշեալ միջոցով օգտուել, փոխելով իւրաքանչիւր 1/2 ժամ թրջած քաթանը, վերան դնելով մաքուր հիգրոսկոպիական բամբակ, որը պէտք է ամեն անգամ փոխել։

**Մօր կերակուրը.**—Երեխային կերակրելու ժամանակ թէև ուտելեղէնի մէջ խիստ պահեցողութիւն հարկաւոր չէ, սակայն կան մի քանի անհրաժեշտ գիտելիքներ որոնց պէտք է ի նկատի ունենալ, օրինակ վնասակար է գործածել լոբի, սխտոր, հում միրգ և կանաչեղէն. բայց եփած մրգեղէնի չափաւոր գործածութիւնը օգտակար է։ Լաւ է գինիներ գործածելուց հեռու մնալ, բայց եթէ մայրը թոյլ է և կարիք է զգում գինու, կարելի է գործածել, միայն թէ քիչ։ Արգելւում է նոյնպէս թթուն, աղին, դափնի տերևով և վանիլով պատրաստուած կերակուրները։

Եթէ կնոջ կաթը չէ բաւականացնում երեխային, օգտակար է չափաւոր աղի ուտելիքներ գործածել. օրինակ իկրա, սելեօդկա և այլն. այս կերակուրները սաստկացնում են ծարաւը և ջուր կամ այլ հեղուկ գործածելով շատացնում կաթը։ Առանց բժշկի թոյլտուութեան չի կարելի լուծողական ընդունել և ուրիշ դեղեր գործածել։ Եթէ բժիշկը դեղ գրել է կամենում, պէտք է նախապէս նրան յայտնել, որ հիւանդը ինքն է կերակրում երեխային։

**Ծծմայր.**—Երբ երեխային ծծմայրն է կերակրելու, նա պէտք է իր մարմինը տաք ջրով մաքուր լուանայ և ապա կերակրէ մանկանը։ Ծծմօր ուտելիքը պէտք է լինի իր սովորական կերակուրը և ըստ կարելոյն չափ յագեցնել նրա ցանկութիւնները, բացի գրգռիչ խմիչքներից, Նրան հարկաւոր չէ տալ սուր համով ուտելեղէն, պտուղներից յետոյ գարեջուր և առհասարակ

պէտք է խօսք տալ այն ամեն բանից, ինչ որ կարող է լուծ առաջացնել։ Ծծմայրը յոգնած, վրդոված և կամ քարկացած ժամանակ չպէտք է ծիծ տայ մանկանը։ Եթէ եղանակը վատ է և երեխային չի կարելի տանել բաց օդի մէջ, այն ժամանակ ծծմայրը յամենայն դէպս պարտական է մի քանի ժամ զբօսնել մաքուր օդի մէջ, որը շատ լաւ ազդում է նրա կաթի առատութեան և լաւանալու վրայ։ Պէտք է խստօրէն հսկել. որ ծծմայրը երեխայի վրայ գործ չդնէ զանազան քնացնող և թմրեցնող միջոցներ, դրանք միշտ վնասակար են և նոյն իսկ վտանգաւոր։

Ծծմօր ընտրութիւնը.—Ծծմայրը պէտք է առողջ և լաւ կազմուածք ունենայ. ազատ ամեն տեսակ հիւանդութիւններից, (խլախտից, արեան սակաւութիւնից, թոքախտից, սիֆիլիսից, աչքի վարակիչ հիւանդութիւնից և այլն)։ Ցանկալի է նոյնպէս առողջ ատամներ։ Ծծմայրութեան ամենալաւ հասակը 20—35 տարին է. լաւ կլինի եթէ ծծմօր երեխան հասակակից է իր նոր սանիկի հետ։ Ծծմայր չպէտք է վարձել այն կնոջը որ նոր է ազատուել, կամ ծննդից 6 ամիս արդէն անցել է։ Լաւ ծծմայրը պէտք է ունենայ առատ և լաւ կաթ։ Կաթի առատութիւնը կարելի է ստուգել երեխայի 15 րոպէ ծիծ ուտելուց յետոյ կրթելով ծծմօր ծծերը. իսկ կաթի յատկութեան վրայ մեծ ազդեցութիւն ունի ծծմօր կենցաղը և պահեցողութիւնը։

Ծծմօր փոխելը.—Եթէ երեխային ծիծ տալը յաջող է գնում, երեխայի ծնողները չպէտք է ոչ մի դէպքում փոխեն ծծմօրը, մինչև որ բոլորովին ծծից չկտրեն։ Եթէ ծծմօր հետ դաշտան է պատահում, և թէև դա անախորժ է կերակրելու ժամանակ, սակայն դրա համար ծծից կտրել պէտք չէ, թէև երեխան կարճ ժամանակով հիւանդանայ նոյն իսկ. Ամենից առաջ հարկաւոր է բժշկին դիմել, որովհետև շատ դէպքերում գերադասելի է թողնել ծծմօրը, քան թէ փոխել



երեխայի կաթը։ Իսկ եթէ երեխայի հիւանդութիւնը կրկնուի հետևեալ դաշտանների ժամանակ, այդ դէպքում հարկաւոր է անպայման փոխել ծծմօրը։

Կին բժիշկ Ն. Ա. Վոլկենստէյն

## ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԿԵՐԱԿՐԵԼ ԾԾԿԵՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Շատ յաճախ փոքր երեխաները հիւանդանում և մեռնում են փորլուծից մանաւանդ ամառ ժամանակ. դրա գլխաւոր պատճառն այն է, որ շատ մայրեր չեն իմանում իրանց մանուկներին կանոնաւոր կերպով ծիծ տալ։

Ամեն մի մայր, երբ նա առողջ է, պէտք է ինքը կերակրէ իր ստինքով (ծծով) իր մանուկին, որովհետև մօր կաթը երեխայի համար ամենաբնական և անդաբար կերակուրն է։ Բայց կրծքով կերակրելը ունի իր կարգ ու կանոնը, նայած երեխայի հասակին։ Այս պատճառով խիստ պահանջւում է հետևեալ կարգը պահպանել. մինչև վեց ամսական հասակը պէտք է ծիծ տալ երեխային ոչ աւելի քան ամեն երկու ժամից յետոյ, ընդամենը վեց անգամ ցերեկը և երեք անգամ գիշերը։ Իսկ վեց ամսից յետոյ՝ չորս անգամ ցերեկը և երկու անգամ գիշերը։

Մայրերը մի վատ սովորութիւն ունեն, մանկիկի բերանը ծիծ են դնում, հէնց որ նա ձայնը բարձրացնում է։ Շուտ—շուտ կերակրելը երեխային շատ վնաս է, դրանից նրանք փսխում են, նրանց փորը փքւում է, սաստիկ ցաւում և յաճախ լուծում։ Եթէ երեխէն անհանգիստ է և բղաւում է, այդ չէ նշանակում, որ նա քաղցած է։ Պէտք է նայել թէ արդեօք նրա տակը հօ թաց չէ, կամ կեղտոտած. մրսում է երեխէն, թէ տաքից նեղւում. չէ՞ սեղմում նրան բարուրը, կամ չէ կծում նրան բաղլինձը կամ մի ուրիշ միջատ։ Աճա

դեռ այս ամենը պէտք է կարգի դնել և չշտապել կերակրելու երեխային մինչև որոշած ժամը: Պէտք է ծիծը հերթով տալ—մէկ անգամ աջը և միւս անգամ ձախը: Ամեն անգամ թողնելու է ծծել ստինքը, մինչև որ երեխէն ինքը դադարի: Հիւանդ ծիծը երբէք չպէտք է երեխին տալ: Մանկան կերակրելիս մայրը պէտք է հանգիստ նստած լինի. երեխին վերցնի իր ծնկան վրայ և փոքր ինչ թեքելի դէպի երեխի բերանը—այս դիրքով նրան յարմար կլինի ծծելը: Կշտացած երեխին հարկաւոր չէ սաստիկ օրօրել կամ վեր—վեր անել. քանի որ դրանից կերակուրը կարող է յետ գալ: Չի կարելի քնած երեխին պահել ծծի վրայ, նոյնպէս մայրը չպէտք է քնի երեխային կերակրելիս:

Մայրը իր ստինքը (ծծերը) պետք է շատ մաքուր պահի.—Ամեն ծիծ տալուց առաջ մաքուր տաք ջրով լուանայ և կերակրելուց յետոյ մաքուր կտորով սրբէ պտուկները: Կեղտոտ ծծերից երեխէն կվնասւի (բերանումը դուրս կգան բշտիկներ, փորը կլուծէ), և մօր պտուկներն էլ կճաքճաքւին, որից կհետևի սաստիկ պտկացաւ և յետոյ կարող է առաջ գալ ստինքների բորբոքումն:

Եթե երեխան լաւ չի ծծում, պետք է իսկույն նայել երեխի բերանը.—Եթէ բերանումը սպիտակ բշտիկներ են բուսնած կամ մի ուրիշ հիւանդութիւն է երևում, դեռ պէտք է հոգ տանել բժշկին ցոյց տալու, իսկ մինչև այդ կատարելը, պէտք է վերցնել փափուկ, բարակովին մաքուր քաթանի կտոր, փաթաթել մի մատին (ճկոյթին), թաց անել մաքուր ջրում կամ անշաքար չայում և այն մատով սրբել երեխայի լնդերքը, լեզուն և թշերի ներսի կողմերը:

Երբ մայրն իր կրծքով է կերակրում երեխային, պէտք է ինքն էլ լաւ սնունդ ունենայ. օգտակար է ուտել կաթ, ձու, միս, շիլախաշիլ: Մայրը պէտք է հեռու մնայ այնպիսի կերակուրներից որոնք սովորա-



բար նրան վնասում են և ստամոքսը խանգարում:

Ծիծ տւող մայրը բոլորովին չպէտք է գործածէ ոգելից խմիչք (գինի, արաղ), որովհետև դրանք բոլորն էլ վնասում են երեխային: Մինչև վեց ամսական հասակը երեխային ոչ մի ուրիշ բան չի կարելի տալ, բացի մօր կաթից.—մինչ այդ ժամանակ նորածինը թոյլ է և ամեն ուրիշ կերակուր. մանաւանդ պինդ կերակրեղէն նրան անշուշտ կվնասէ: Վեց ամսից յետոյ, եթէ երեխէն առողջ է, կարելի է քիչ—քիչ տալ նրան կովի եփած կաթ, թերխաշ ձու, բրնձէ կաթնապուր կամ շիլա:

Երեխայի կերակուրը պետք է անպատճառ տաք լինի եւ ոչ սառը.—Պինդ կերակրեղէն, օրինակ՝ սև կամ սպիտակ հաց, բաքսմաթ, գետնախնձոր (կարթոֆիլ) կարելի է տալ, երբ երեխէն կունենայ գոնէ ութը ատամ, այսինքն մէկ տարեկան հասակում: Գիշերները յիշածս կերակուրները տալը աւելորդ է:

Երեխային կարելի է ծծից կտրել, երբ երեխայի մեկ տարին լրանայ.—Մի տարուց աւելի երեխային ծիծ տալու հարկ չկայ. այդ միջոցին մօր կաթն էլ առաջւայ պէս չի կշտացնում և օրէցօր պակասում է, մայրն էլ ոյժից ընկնում է ու նւաղում:

Ծծից պետք է կտրել կամաց—կամաց, այն է աւելի ուշ—ուշ ծիծ տալ և փոխարէնը ուրիշ կերակուրներ տալ: Եթէ երեխէն հիւանդ է, մանաւանդ եթէ փորլուծ ունի, այլ ժամանակ չի կարելի մօր կաթից զրկել, շատ շոգ ժամանակ ծծից կտրելը նոյնպէս վտանգաւոր է, որովհետև երեխային փորլուծ կպատահի: Երբ երեխային ծծից կտրեցիր, պէտք է նրան տալ նոյն կերակուրը, որ քիչ առաջ էլ տրւում էր. նախ ջրալի և ապա պինդ բաներ, ինչպէս խաշած-կարտոֆիլ, լաւ թխած տանու հաց, ձու: Քաղցրեղէնից ամենից լաւն է շաքարը, որովհետև զանազան կանֆէտները, մանաւանդ ներկածները շատ անգամ

վտանգավոր են: Երրորդ ամսումը երեխային կարելի է չափաւոր կերպով տալ այն կերակուրները, որ մեծերն են ուտում սովորաբար:

Երբ կարճատև մայրը հիւանդ է, պետք է անշուշտ բժշկի դիմէ, որ կարող է բացատրել թէ այդ հիւանդութիւնով կաթ տալը երեխային և իրան վնասակար չէ՞ արդեօք:

Լա՞ւ, ինչ անել այն դեպքում, երբ բժիշկը չթոյլ տայ մօրը ծիծ տալ, երբ մօր կաթը ցամաքել է, կամ Տէրը մի արասցէ, մայրը վախճանուել է թողնելով քաղցած ծծկերին: Ամենից լաւը կլինի դիմել մի առողջ կինարմատի՝ ծծերում կաթ ունեցողի, որ նա ծիծ տայ երեխին գոնէ այնքան ժամանակ, որ սա ամրանայ. պէտք է այնպիսի ծծմօր դիմել, որի երեխէն էլ նոյն հասակի լինի: Այս բանը շատ կարևոր է մանաւանդ երեխայի առաջին երեք ամիսներում: Եթէ այդ էլ չյաջողուի պէտք է ուրեմն երեխային կերակրել կովի կաթով:

Բայց դրա համար հետևեալ զգուշութիւնները են հարկաւոր.— Մի բաժակ կովի կաթին պէտք է խառնել եփ տուած ջուր և մի թէյի գդալ շաքարի մանրուք: Ջրի խառնուրդը պէտք է լինի այս հաշւով՝ մէկ շաբաթական երեխայի համար մի թաս կովի հում կաթին պէտք է աւելացնել երեք թաս ջուր և եփ տալ: Երկու և երեք շաբաթական երեխայի համար պէտք է մի թաս (բաժակ) կաթին աւելացնել երկու թաս ջուր: Չորս—հինգ—վեց շաբաթական երեխային կարելի է տալ կովի կաթը կիսով չափ ջրախառն: Եօթներորդ շաբաթից մինչև 3 ամսուայ հասակը երկու թաս կովի կաթին պէտք է աւելացնել մի թաս ջուր: Իսկ չորս ամսական երեխային կարելի է արդէն սնունդել անխառն հում կաթով տաքացրած և քիչ շաքարով քաղցրացրած:

Պետք է կաթ տուող կովի վրայ առանձին ուշադրութիւն դարձնել.— Նրան պէտք է մաքուր պահել.



բաւական խոտ տալ՝ չոր թէ կանաչ. մաքուր ջուր խմացնել խառնուած թեփով և ալիւրով, քիչ էլ աղ աւելացրած: Կովին չպէտք է տալ կեղտոտ ջուր, զանազան տանու մնացորդներով խառնուրդ բաներ:

Կովը կթելուց յետոյ առաւօտ եւ երեկոյ կաթը պետք է լաւ եփել եւ մինչեւ երեխային տալը պետք է պահել (մաքրուած եւ կրակի վրայ բռնած ամանով) սառը տեղում: Երեխային պէտք է տալ կաթը միշտ տաքացրած և այնքան անգամ, որքան վերը յիշուած է մօր կաթի համար: Այս կարգին պէտք է աւելի հետևել, քանի որ չափից աւելի կովի կաթը աւելի վնաս կտայ, քան թէ մօր կաթը:

Պէտք է կաթը տալ երեխային այնքան, որ նա կուշտ լինի և զգուշալով յետ չբերէ աւելորդը: Կովի կաթն ու ջրալի կերակուրը երեխային պէտք է տալ ապակէ ծծակով. որովհետև պղնձի (կոտոշի) և երկաթի կամ անագեայ ծծակները շուտ են կեղտոտւում. Թէկուզ քիչ թթուած լինի կաթը, չպէտք է տալ երեխային, որովհետև դրանից կսկսի փսխել և լուծմունք կստանայ: Արհեստական ծծակները ռետինից լինելու են: Թէ այդ ծծակները և թէ կաթի շուշէն (ապակէ ամանը) պէտք է մաքուր լուանալ տաք ջրով ամեն կերակրելուց յետոյ:

Երբեք գործածելու չէ կեղծ ծծակ երեխայի բերանը դնելու, որ պատրաստում են մայրերը ծամած հացից. տրորած գազարից կամ կարճախաւիծից: Ոչ մի օգուտ նրանցից չկայ. բայց վնասը շատ մեծ է, նրանցից երեխայի բերանը բշբշտում է, լուծ և փորացաւ է առաջ գալիս: Երեխաները լղարում են և թուլանում: Ոչ մի դեղ այդ դէպքում երեխային չի օգնում, մինչև մայրը ձեռք չվերցնէ երեխի բերանը դնելու անպէտք սուտ պտուկները:

Ինչ որ այստեղ գրուած է, պետք է կատարել միշտ մանաւանդ մեր պատկերներին պետք է խիստ հետևել

շոգերի ժամանակ, ամառուան եղանակին երբ սովորաբար երեխէքն աւելի շատ են տկարանում և մեռնում լուծից։ Անհասարակ փորլուծի դէպքում, մանաւանդ աւելորդ դեղեր երեխային տալու, լաւ է տանել նրան հէնց սկզբից բժշկի մօտ, ուր որ կայ։

Քանի այդ շուտ կատարուի, այնքան աւելի լաւ կլինի։

Թարգմ. Տիկին Ս. Բաբայեան

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

### ԹԵԹԵՒԱԳԻՆ ԳԱՂՏՆԻՔ

— Ով որ վարդենու արմատ իր մօտ պահէ, օձ նրան չի կծի։

— Եթէ կատաղած շունը որևէ մէկին կծի թթենու տերև ծեծել և դնել կծած տեղի վրայ։

—

Եթէ ցանկանում էք որ որևէ տեղի վրայ մազ չբուսնի 1. ագռաւի ճրագուով օծիր, 2. աղւէսու լեղին ուր որ քսես մազ չի բուսնի, 3. շան կաթ ուր որ քսես մազ չի բուսնի 4. այծի լեղին նշադիրով շաղախել և ուր որ քսես մազ չի բուսնի. 5. կատուի չորացած աղբ փոշի արա և մաղիր թունդ քացախի հետ խառնիր այնպէս որ լինի թանձր շաղաղ և դրանով շփիր մազոտ տեղեր, որոնք թափելուց յետոյ էլ երբեք չեն բուսնի։

### ՄԱԶ ԲՈՒՍՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Եւշան եփիր կաթով, և քսիր կամ լւայ ուր որ ուզում ես մազ կբուսնի։ 2. Սագի կամ խոզի իւղ ուր որ քսես մազ կբուսնի։

## ՏՆԱՅԻՆ ՄԱՏՉԵԼԻ ԲԺՇԿԱՐԱՆ

Հազի դէմ միջոց, Սխտոր խորովել և պճեղ պճեղ մեղրում թաթախելով ուտել, կամ ուղղակի սխտորը մեղրով եփել և ուտեցնել հիւանդին։ Խորոված բողկ տաք-տաք մեղրով կերցնել։ Կամ վարդը գինին և մեղր իրար խառնել և ուտեցնել հիւանդին։ Կամ նուշն աղա և մեղրով խառնիր առաւօտ և երեկոյ մի-մի դգալ ուտեցնել հիւանդին, մինչև երեք օր։

Ճիճւի դէմ. Դեղձ և նրա տերևն քամիր ջուրն վերցրու, առաջ հիւանդին խմեցրու կաթ որ ճիճուն սկսի ուտել, յետոյ խմեցրու քամուած ջուր, որից կթափեն երկայն, բոլոր ու տափակ ճիճուները։

Քթի արիւն չդադարելու դէպքում մարմար քար մանր ծեծել և փոշին քաշել քիթ։

Մալասիյի դէմ. Ուղտի շեռ երեք անգամ անօթի ժամանակ խմեցնել հիւանդին՝ օգուտ է և կլաւանայ։

Օձահարի դէմ. Կաղտրկուռն (եզան լեզու) ծեծել և դնել վէրքի վրայ։ Երկրորդ պանիր թունդ քացախի մէջ թաթախել և դնել վէրքի վրայ։ Երրորդ մատուտակ, որ է քաղցր մարոխ, ծեծել և դնել վէրքի վրայ։ Չորրորդ խնձորի տերևն ծեծել և երեք անգամ դնել վէրքի վրայ։

Թունաւորութեան դէմ միջոց.—Թունաւորուածին պէտք է տալ 15 հաւկթի սպիտակուցից պատրաստած մի հեղուկ, որին պէտք է աւելացնել մի քիչ ջուր և որքան կարելի է լաւ խառնել։ Համ տալու համար կարելի է շաքար էլ խառնել, Բացի սրանից հիւանդին ամեն կէս ժամից յետոյ երկու կամ երեք անգամ պէտք է լուծողական տալ, որից կառաջանայ սաստիկ փսխում, որ անհրաժեշտ է։ Սրա հետ լաւ կլինի տալ

ելի մի բաժակ ջրումը բաց արած մանանեխի (գորչիցի) փոշի թէյի գդալով:

**Ամենակտրուկ դեղ հարբուխի համար.**—Մի անգլիացի բժիշկ առաջարկում է հետեւեալ անվնաս միջոցը—լիմոնի հիւթը քամել և քթի ծակերով վեր քաշել այնպէս որ բերանից թափւի, քանի սաստիկ լինի հարբուխը, այնքան աւելի պէտք է կրկնել այդ: Այսպէս 2—3 անգամ կրկնելուց յետոյ ամենախիստ հարբուխն անգամ անցնում է:

**Հարբուխի դէմ կտրուկ միջոց,**—Գազարի արմատը (МОРКОВЪ) լաւ ծեծիր, մաքուր շորով քամիր և ստացւած հեղուկը քթածակերում ներս քաշիր: Մի երկու անգամ այսպէս կրկնելուց յետոյ հարբուխը բոլորովին կանհետանայ:

**Խորհուրդ խոլերայի դէմ.**—1) Եռացած ջուր խմիր: 2) Բանջարեղէններ և պտուղներ առանց եռացրած ջրի մէջ ածելու չուտել: Փորը տաք պահել: 3) Առաւօտները անօթի տնից չդուրս գալ: 4) Կանոնաւոր կեանք վարել և աւելորդ բաներից հեռանալ: 5) Ոգելից ըմպելիքներ չափով ընդունել: 6) Ամեն տեղ մաքուր պահել, 7) Բազմամարդ տեղերից և հիւանդներից խոյս տալ:

**Դիֆտերիտի դէմ միջոց.**—Վարշաւայում հրատարակւող Լեհական թերթերի ասելով, Ռուժէ բժիշկը երկար ժամանակ է, որ դիֆտերիտի դէմ գործ է ածում լաւ ռոմ: Ռուժէի դիտողութիւններից երեւում է, որ ռոմի գործածութիւնը շատ լաւ հետեւանքներ է ունենում, և նա իր բժշկական գործունէութեան միջոցին, ոչ մի դիֆտերիտով հիւանդ չէ ունեցել որ ռոմով բժշկած չլինի: Նա այդ նպատակով տալիս է մի տարեկան երեխային, ամեն մի երկու ժամից յետոյ թէյի կէս գդալ ռոմ, 2—4 տարեկանին մի թէյի գդալ, իսկ 12 տարեկանից վեր՝ սեղանի մի գդալ ռոմ: Հիւանդ-



ները նշանակեալ չափով ռոմ խմելուց յետոյ՝ հանգիստ քնում են և աստիճանաբար առողջանում են:

**Հարբուխի դէմ.**—Մի սեղանի գդալ քափուրի փոշին մի աման (չաշկա) եռացրած ջրի մէջ լուծելով և նրանից բարձրացող գոլորշին 10—20 րոպէ հոտոտելով՝ անմիջապէս թեթեւութիւն է զգում: Եթէ երկրորդ անգամ այս միջոցը կրկնւի, հարբուխը բոլորովին կորչում է:

**Անքնութեան դէմ նոր միջոց.**—Եգեր պրոֆէսօրը հաստատում է, որ ուղտի մազը ջղերի վրայ այնպիսի հանգստացնող ազդեցութիւն է անում, որ անքնութեամբ տանջւողները հեշտութեամբ այդ ցաւից կազատւեն, եթէ ուխտի կաշուց և մազից պատրաստած բարձ գործածեն:

**Դողի դէմ նոր միջոց.**—Թարմ կիտրոնը մանրացնելով, ջրի հետ ածում են կաթսան և այնքան ժամանակ եփ են տալիս՝ մինչև որ մի երրորդ մասը մնայ. յետոյ այս եփւածքը սառցնելով՝ անօթի խմում են:

**Գիրանալու հնարք.**—Առաւօտները անօթի սեղանի մէկ գդալ հաճարի փոշին՝ խառն մէկ բաժակ անարատ կաթի հետ խմելով, սկսում է մարմինը գիրանալ:

**Փորացաւի կամ փորհարութեան.**—Վայրի դաղձից (պիտնա) թէյի շինիր և խմիր:

**Հեւոցի-ընչարգելութեան դէմ.**—Դեղին կոճը փոշիացրու թէյ շինէ և շաքարով խմիր:

**Ծննդկան կինը՝** երբ մրսի և փորը սկսէ ծակոցներով ցաւիլ դդումը փռի կամ թոնրի մէջ լաւ խորովէ. և անհալ մեղրի հետ շաղախէ (առանց կորիզի) արա ինչպէս (մահլամ). մաքուր կտաւի վրայ՝ բաց արա, և ամբողջ փորը իգական անդամովը փաթաթէ. մնայ վրան երկու կամ երեք ժամ. կրկնէ այս գործողութիւնը օրը երեք անգամ, հիւանդին կերցնել անհալ մեղր. ծակոցը կկտրէ և բոլոր ապականութիւնը կըմաքրէ:

Բաջալի.—Տօրոնը փոշիացրու, մեղրի հետ խառնէ և դիր գլխին։

Փորձարի.—Բրինձը՝ կարմիր կովի կաթով եփէ և ուտել։

Բերանից արիւն թափելուն.—Հում ձուի վրայ շիբ ցանէ և խմէ, կամ այծի (պլոճիկի) ճարպը կաթի հետ միացրած խմէ։

Դեղնութեան.—Զորացրած ծիրանը եփէ և մի քանի օր առաւօտները շարունակ կեր, ջուրը խմէ։

Գլխացաւի.—Պառաւած պրասը ծեծէ, ջուրը քամէ. այն ջրի հետ միաչափ շիբ և հինայ՝ և որ և է կենդանու լեղի շաղաղէ դիր գլխին և 24 ժամ պահէ։

Ջերմութեան.—Կոնեակ լից մի փոքր բաժակի մէջ՝ և մի ձուի դեղնուց նրա հետ խառնէ և լաւ հարէ. մի գիշեր մնայ առաւօտը խմէ։

Քորի. Կտաւատի ձէթը եռացրու, մէջը 3 պճեղ սխտոր. լաւ եռ գալուց յետոյ, հովացրու և քոր եկած տեղը քսէ։

Կանանց արիւնհոսութեան.—Ղուլինջանից մի քառորդ գրւանքայ փոշիացրու և լից մի շիշ սպիրտի մէջ և բերանը պինդ փակէ մինչև 30 օր՝ տաք արևի կամ վառարանի առաջ մնայ. յետոյ ծծան թղթով քամէ և պահէ. սորանից մի փոքր բաժակ (ռումկայ) լիքը տուր հիւանդին, թէ չօգնէ՝ կրկնէ,

Փայծեղի տալաղի.—Մի ձուի դեղնուց լաւ հարէ, յետոյ սեղանի մի գդալ Թունդ քացախով բաց արա և խմէ, մի ամիս շարունակ։

Մարդոյ փորը եւ ամբողջ անձը՝ թէ ուռած լինի.—Առ հինայ որքան կամենաս, բաժանէ 3 հաւասար մասի. առ մի մասի չափ էլ շիբ (պաղլեղ) խառնէ իրար հետ. 3 մասը հինան և մէկ մասը շիբը կարմիր կովի շեռով շաղաղէ. մի գիշեր դիր բաց երկնքի տակ, յետոյ միւս օրը քաթանի կամ կտաւի վրայ բաց արա և դիր ուռոյցքի վրայ. մնայ մէկ ժամից աւել, յետոյ



բաց արա, եթէ ուռոյցքը իջնելու նշան ցոյց տայ՝ մի քանի անգամ շարունակէ, եթէ իջնելու նշան ցոյց չտայ՝ անօգուտ է։

— Եթէ մէկին օձը կամ ուրիշ թունաւոր կենդանիները կծեն, առ հրակի մի կտոր՝ բռնիր կծած տեղի վրայ, մինչև որ թոյնը մի տեղ ժողովի և ուռելով պատռի և ժահրը դուրս գայ, որով թունաւորուածը կազատուի։

— Դարձեալ, եթէ մէկին թունաւոր զեռուններ կծեն, առ Թորթիկ խոտը, կամ ծաղիկը և կամ նրա արմատը, որն և պատրաստի գտնուի, ծեծիր և դիր խայթած տեղի վրայ, որ իսկոյն ժահրը քաշելով, դուրս կթափէ։ Սա կոչւում է մեղրածծուկ, որի ծաղիկը մեղուն շատ է ժողովում։

— Եթէ կուզես իմանալ անծնելութեան պատճառն արուն է թէ էգը, առ երկուսի մէզը ջոկ-ջոկ ամանի մէջ ածիր լից նրանց մէջ մի քիչ թեփ և 9 օր ծածկած պահիր ապա բաց և տես, որի ամանում որդերնք կամ ուրիշ ժժմունք, գտնւում են անծնելութեան պատճառը նա է։

Տեռատես կանանց, որոնց արիւնը կապ լինի.—Առ չորնապիլ խոտն, և տուր խմել հիւանդին չափ տեղ, և նրա հետ խառնիր փոքր ինչ զաֆրան. շատ կօգնէ և արիւնը կարձակէ։ Բայց հարկաւոր է իրան տաք պահել, մանաւանդ ոտքերն աւելի ևս հարկաւոր է։

Կանանց ծիծը երբ ուռոյց պատահի.—Առ բաւականին զաֆրան և ջրով եփիր, որ սպեղանու պէս թանձրանայ, կտաւի վրայ քսիր և դիր ուռածի վերայ, ուռոյցքը կքաշէ և կբժշկէ։ Այլ և թէ ծծի վրայ խոց բացւի՝ զաֆրանը բարակ ծեծիր և խոցի վրայ ցանիր, կբժշկէ։

## ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆ

### ԳՆԴԱԿՈՎ ԿԱՄ ՍԻՍԵՌՈՎ

Այս գուշակութիւնը բաղկացած է չորս բաժանմունքներից, այն է Ա. հարցերից, Բ. բաղդի աղիւսակներից, որոնց ամեն մէկը 9 վանդակներից է կազմւած; Գ. միջնորդող աղիւսակից, և վերջապէս Դ. ճակատագրի պատասխաններից։

Այս գուշակութեան համար պէտք է ունենալ մի փոքրիկ գունդ (шарикъ) ոսկորից կամ հացից, կամ վերջապէս մի այնպիսի բան, որ լինի կլոր և գնդաձև, և կամ վերցրէք մի հատ սիսեռ։

Ամենից առաջ կարդացէք հարցերը և ընտրեցէք ձեզ համար նրանցից մէկը, նրա վրայ գցեցէք գնդակը, այնպէս որ նա կանգնի աղիւսակի 9 վանդակներից որև է մէկի մէջ, այն ժամանակ նկատի ունեցէք գնդակ գտնւող վանդակի թիւ և բառը, և բացէք միջնորդող աղիւսակ, որտեղ բացի ձեր ունեցած թիւ և բառից, կգտնէք նաև մի ուրիշ թիւ և անուն, որով և ճակատագրի պատասխանների բաժանմունքում, կգտնէք ձեր պատասխան։

## ՀԱՐՑԵՐ

1. Կհարստանա՞մ թէ ոչ։
2. Նա ինձ սիրում է՞, որին ես սիրում եմ։
3. Այրի՞ մնամ, թէ՞ գնամ մարդի։
4. Արդեօք նա ինձ չէ՞ խաբում։
5. Ամուսնանա՞մ թէ ոչ։
6. Կարելի՞ է յոյս դնել նրա վրայ։
7. Ընտանեկան կեանքում բաղդաւոր կլինե՞մ։
8. Կորածը կգտնուի, թէ ոչ,
9. Վիճակախաղում բաղդ կունենա՞մ թէ ոչ։

# ԲԱՂԴԻ ԱՂԻՍԱԿՆԵՐ

## 1. Կհարստանամ թէ ոչ։

| | | |
|---|---|---|
| 1<br>Աստեղք<br>102 | 2<br>Երկինք<br>103 | 3<br>Երկիր<br>104 |
| 4<br>Աշխարհ<br>105 | 5<br>Վիճակ<br>106 | 6<br>Բաղդ<br>107 |
| 7<br>Խելք<br>108 | 8<br>Արեգակ<br>100 | 9<br>Լուսին<br>101 |

## 3. Նա ինձ սիրում է որին ես սիրում եմ։

| | | |
|---|---|---|
| 1<br>Խելք<br>108 | 2<br>Արեգակ<br>100 | 3<br>Լուսին<br>101 |
| 4<br>Աստեղք<br>102 | 5<br>Երկինք<br>103 | 6<br>Երկիր<br>104 |
| 7<br>Աշխարհ<br>105 | 8<br>Վիճակ<br>106 | 9<br>Բաղդ<br>107 |



## 3. Այրի մնամ թէ գնամ մարդի

| | | |
|---|---|---|
| 1<br>Արեգակ<br>100 | 2<br>Լուսին<br>101 | 3<br>Աստեղք<br>102 |
| 4<br>Երկինք<br>103 | 5<br>Երկիր<br>104 | 6<br>Աշխարհ<br>105 |
| 7<br>Վիճակ<br>106 | 8<br>Բաղդ<br>107 | 9<br>Խելք<br>108 |

## 4. Արդեօք նա ինձ չէ՞ խաբում

| | | |
|---|---|---|
| 1<br>Երկինք<br>103 | 2<br>Երկիր<br>104 | 3<br>Աշխարհ<br>105 |
| 4<br>Վիճակ<br>106 | 5<br>Բաղդ<br>107 | 6<br>Խելք<br>108 |
| 7<br>Արեգակ<br>100 | 8<br>Լուսին<br>101 | 9<br>Աստղեք<br>102 |

Ամուսնանամ թէ ոչ:

| | | |
|---|---|---|
| 1 Երկիր 104 | 2 Աշխարհ 105 | 3 Վիճակ 106 |
| 4 Բաղդ 107 | 5 Խելք 108 | 6 Արեգակ 100 |
| 7 Լուսին 101 | 8 Աստեղք 102 | 9 Երկինք 103 |

6. Կարելի՞ է յոյս դնել նրա վրայ թէ ոչ

| | | |
|---|---|---|
| 1 Վիճակ 106 | 2 Բաղդ 107 | 3 Խելք 108 |
| 4 Արեգակ 100 | 5 Լուսին 101 | 6 Աստեղք 102 |
| 7 Երկինք 103 | 8 Երկիր 104 | 9 Աշխարհ 105 |



7. Ընտանեկան կեանքում բաղդաւոր կլինեմ

| | | |
|---|---|---|
| 1 Աշխարհ 105 | 2 Վիճակ 106 | 3 Բաղդ 107 |
| 4 Խելք 108 | 5 Արեգակ 100 | 6 Լուսին 101 |
| 7 Աստեղք 102 | 8 Երկինք 103 | 9 Երկիր 104 |

8. Կորածը կգտնեմ թէ ոչ

| | | |
|---|---|---|
| 1 Լուսին 101 | 2 Աստեղք 102 | 3 Երկինք 103 |
| 4 Երկիր 104 | 5 Աշխարհ 105 | 6 Վիճակ 106 |
| 7 Բաղդ 107 | 8 Խելք 108 | 9 Արեգակ 100 |

9. Վիճակախաղում բաղդ կունենամ թէ ոչ

| | | |
|---|---|---|
| 1<br>Բաղդ<br>107 | 2<br>Խելք<br>108 | 3<br>Արեգակ<br>100 |
| 4<br>Լուսին<br>101 | 5<br>Աստեղք<br>102 | 6<br>Երկինք<br>103 |
| 7<br>Երկիր<br>104 | 8<br>Աշխարհ<br>105 | 9<br>Վիճակ<br>106 |

## ՄԻՋՆՈՐԴԻ ԱՂԻՒՍԱԿ

| | | |
|---|---|---|
| 102<br>Աստեղք<br>10 Պտղոմէոս | 103<br>Երկինք<br>11 Պլուտարքոս | 104<br>Երկիր<br>12 Պոմպէոս |
| 105<br>Աշխարհ<br>13 Տակիտոս | 106<br>Վիճակ<br>14 Տրայանոս | 107<br>Բաղդ<br>15 Մեկենաս |
| 108<br>Խելք<br>16 Քսերքսես | 100<br>Արեգակ<br>17 Յուդիթ | 101<br>Լուսին<br>18 Նեստոր |

# ՃԱԿԱՏԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

## 10 ՊՏՂՈՄԷՈՍ

1. Ցիմարները միշտ հարուստ են լինում։
2 Միամիտ կաց, կորածը էլ չես գտնի։
3. Մէկ հօ ունես, եօլա գնայ էլի, քասաա տարէ է. ինչ անենք որ գաղտնի է։
4. Հարկաւոր չէ այդպիսի բաների մասին մտածել։
5. Անպատճառ կտանես։
6. Նա այնքան էլ վստահելի չէ, մի յուսար։
7. Այո, միայն երկրորդ ամուսնութեանդ ժամանակ։
8. Ամուսնացիր, միայն նրա հետ որին սիրում ես։
9. Նա ազնիւ է, ամօթ է նրա մասին կասկածել։

## 11 ՊԼՈՒՏԱՐՔՈՍ

1. Նա քեզ միշտ էլ խաբում է։
2. Կլինիս, եթէ լատարիայում 200,000 տանես։
3. Յոյս ունեցիր, բայց շատ ուշ։
4. Ամօթ է. քեզ չի սազ գալ, որդոցդ խնամիր։
5. Նա քեզ վրայ սիրահարուած է։
6. Ո՛չ, չես տանիլ։
7. Ոչ բոլորովին, նա գիտէ մէջէ-մէջ խաբել։
8. Ցիմարները միշտ բաղդաւոր են լինում։
9. Խորհուրդ չեմ տալ, նախ բժշկւիր։

## 12 ՊՈՄՊԷՈՍ

1. Կարող ես ամուսնանալ։
2. Մինչև մազերիդ ճերմակիլ նա քեզ կխաբէ։
3. Դու այդ ինչեր ես մտածում։
4. Կորածը կորած է. էլ մի ման գալ։
5. Մի քիչ համբերիր դեռ միջոց ունես։

6. Սիրում է միայն այն ժամանակ, երբ քեզ տեսնում է։
7. Քեզնից աւելի բաղդաւորներ կան, հերթ նրանցն է։
8. Չի կարելի նրան հաւատալ, նա ոտից գլուխ ստութիւն է։
9. Այո, եթէ քո բնաւորութեան համապատասխան ամուսին գտնես։

## 13 ՏԱԿԻՏՈՍ

1. Ամուսնուդ արարմունքից մեծ նեղութիւն կկրես։
2. Այդ վաղուց հարկաւոր էր։
3. Ոչ... Նա քեզ շատ անգթօրէն է խաբում։
4. Առաջ քեզ նայիր, ապա հարստութեան վրայ մտածիր։
5. Չէ, մի կարծիր որ գտնես։
6. Չես ամաչում, ով որ չգիտենայ ես հօ գիտեմ քո գաղտնիքը։
7. Քեզ այնպէս է սիրում, ինչպէս շունը փայտին։
8. Այո, մեծ գումար կտանես, գնա սկզբից մաղարիչ գնիր։
9. Երբէք, ոչ մի ժամանակ։

## 14 ՏՐԱՅԱՆՈՍ

1. Թէ նրա վրայ յոյս դնես, լաւ հացի կհասնես։
2. Այո, եթէ միայն ընտանիք ունենաս։
3. Օր ծերութեան ամուսնանալդ էր պակաս։
4. Խաբելուց զատ ուրիշ գործ չունի նա։
5. Ինչի՞դ է հարկաւոր. առանց էն էլ դու հարուստ ես։
6. Կորած իրդ ոչինչ է, չարժէ այդքան ման գալ։
7. Թէ մարդ գտնես, գնայ մի մնալ։
8. Նա քեզ վրայ իսկի ուշադրութիւն էլ չի դարձնում։
9. Երբէք, բաղդ ունենայիր աղջիկ կլինէիր։

---



## 15 ՄԵԿԵՆԱՍ

1. Այո, եթէ բոլոր տոմսակներ գնես։
2. Աւելի քեզ վրայ յոյս ունեցիր, քան թէ նրա,
3. Խելօք մարդ ամեն տեղ և ամեն ժամանակ բաղդաւոր է։
4. Հարկաւոր է, ժամանակդ է։
5. Չէ, չի խաբում։
6. Դու առանց էն էլ հարուստ ես։
7. Մի տարի յետոյ կգտնուի։
8. Նախ բաժինքդ պատրաստիր յետոյ մտածիր։
9. Առաջ սիրում էր, իսկ այժմ ատում է։

## 16 ՔՍԵՐՔՍԵՍ

1. Սիրում է չափազանց, իր կեանքից աւելի։
2. Դու այդպիսի բաներում բաղդ չունես։
3. Յոյս ունեցիր, թէև կասկածելի է։
4. Ոչ չես լինիր։
5. Մեր գլուխ եղոտել է, ամուսնացիր քոն էլ թող մեղրոտի։
6. Սատանային կխաբի, ուր մնաց թէ քեզ։
7. Տեսէք ինչեր է մտածում։
8. Երբէք։
9. Դու հօ մէկ փորձել ես, էլ ինչ կանես, եօլա գնայ։

## 17 ՅՈՒԴԻԹ

1. Գնայ մարդի։
2. Չէ, չի սիրում։
3. Դու երբէք չես տանիլ։
4. Յուսացիր, նա շատ ազնիւ է։
5. Ընտանեկան կեանք միայն քեզ համար չէ։
6. Ամուսնութիւն ինչ կանես։
7. Եւ ինչու չպիտի խաբի, չէ որ դու էլ նրան ես խաբում։
8. Միամիտ կաց, կհարստանաս։
9. Ոչ, էլ չես գտնիլ, յոյսդ կտրիր։

## 18 ՆԵՍՏՈՐ

1. Կզտնէի, թէև շատ ուշ։
2. Այրի մնալ քեզ համար աւելի լաւ է,
3. Լաւ կանես առաջ հայելուն նայես, ապա սիրոյ մասին մտածես։
4. Փուչ մարդի համար հարստութիւն, և բաղդ ինչ նշանակութիւն ունի։
5. Այո, կարելի է։
6. Հագիւ թէ։
7. Ամուսնացիր. թէև վերջը մխ ու վմխդ անպակաս կլինի։
8. Եթէ դու նրան չխաբես, նա քեզ չի խաբի։
9. Երբ ժառանգութիւն ստանաս այն ժամանակ կըհարստանաս։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна

Арм.
Б-3901

## ՄԵՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ուսեալ պանդուխտ, Տ. Ամիրճանեանի. . . . 15 կ.

Ծաղրածու, հետաքրքիր և ծիծաղաշարժ անեկդոտների ընդարձակ ժողովածու, որն իր մէջ պարունակում է Մոլլա-Նասրէդդինի, Պըլը-Պուղու, Հօքուսի և այլ բազմաթիւ հին եւ նոր առակախօսների ամբողջ առակներ և զւարճալի անեկդոտները. . . . . . 50 կ.

Ծաղկեփունջ, երգերի ժողովածու, Դ. տպագր. 50 կ.

Էֆիմերտե. . . . . . . 70 կ.

Ցանկացողները կարող են դիմել «ՅՈՅՍ» գրախանութ, Բազարնայա փողոց № 5։ Գումարով գնողներին մեծ զիջում ճանապարհածախս գնողի վրայ։ Օտար քաղաքներից պէտք է դիմել՝ Тифлисъ, Базарная ул. № 5. Книжная торговля „УЙСЪ“ Х. Теръ-Оганесянцъ.

2861
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0067252

12-390/2